Օրէնք մը մեկնութեան կարօտ է երկու դիպաց մէջ: 1. Երբ օրինաց բարեբը դժուարիմաց են, եւ 2. Երբ օրէնսդրին դիպումն օրինաց Գարաշուրեան նկատմամբ երկբայական է:

1. Երբ օրինաց բարեբը դժուարիմաց են, իբրեւ սկզբունք կ'արժէ՝ թէ միշտ դժպհեաց վրայ խնդիր եղած ատեն, սրպիտի են դատակնիքներն, օրէնքն ապաշխարողին նպաստաւոր իմաստով պիտի մեկնուի, ուստի պիտի ամբիօփուի, ըստ իրաւագիտական սկզբան՝ «Ի

¹ Consuetudo est optima legis interpres.

պարիշ մեղմոցոյն ըլլալու է մեկնութիւնը»,¹: «Գլխաւէն ամբիօփուէլու է»,²: Իսկ եթէ խնդիրը նպաստաւոր իրի մը վրայ է, պէտք է ընդլայնել՝ ընդարձակագոյն իմաստով մեկնել, ըստ սկզբանս՝ թէ «Նպաստաւորներն ընդարձակելու է»²:

2. Երբ խնդիրն օրինաց Գարաշուրեան վրայ է, պէտք է օրէնսդրին՝ օրէնքը տուած ատեն ունեցած դիպումը, վախճանը փնտուռել: Եթէ մթին ու երկբայական կը մնայ, պէտք է հետեւիլ սկզբանս՝ «Ոչինչ պարիշ ստանց օրինաց»³: «Երկբայական օրէնքը չի պարտաւորել»⁴.

Սակայն այս ընդհանուր կանոններն ունին իրենց բացառութիւններն. ինչպէս՝ 1. Երբ իրաւաբանից եւ բարոյագիտաց սովորական եւ ընդհանուր կարծիքն ու վարդապետութիւնը բառին անձուկ նշանակութեան տարբեր ըլլայ, այնպէս որ կանոնը ձգտել պահանջէ: 2. Երբ յայտնի այլանդակութիւն եւ հակասութիւն յառաջ գայ: 3. Երբ մասն ամբողջին մէջ բովանդակեալ ըլլայ:

Այսպէս ուրեմն, օրէնք մը մեկնելու ժամանակ աչաց առջեւ ունենալու է՝ սովորութիւնը, պէտք է իրաւաբանից է- Բարոյագիտաց վարդապետութիւններն ու կարծիքները կըսել, դիպումներն իրաւագիտական սկզբանց մեկնել, եւ յերկբայականս՝ եթէ բարոյագիտութիւնն մը կայ, անոր հետեւիլ:

Սակայն ի մասնաւորի Սահմանադրութեանս մեկնութեան դալով՝ հարկ է նաեւ ինչ ինչ իրաց մտադիր ըլլալ, որպէս զի օրինաց մեկնութեան սոյն կանոնները Սահմանադրութեանս նկատմամբ անսխալ գործածուին:

Սահմանադրութեանս մէջ երէք տեսակ դատակնիք կայ:

¹ In poenis benignior est interpretatio facienda. Կան. Իրաւ. 49, առ 6:
² Odiā conuenit restringi, et fauores ampliari. Կան. Իրաւ. 14, առ 6:
³ Nulla poena sine lege. Օր. 19, Ասան պարտաւ. բանից:
⁴ Lex dubia non obligat.

1. Այնպիսի դատակնիքներ, որոնք հին կանոնաց հետ ըստ ամենայնի միաբան են:

2. Այնպիսիներ, որոնք հնոյն հետ ըստ մասին միայն կը միաբանին: Աւերջապէս

3. Այնպիսիներ, որոնք ստոյգ չի գիտցուիր թէ հնոյն հետ ըստ իմիք միաբան են, եթէ ոչ:

Արդ, այն ամէն տեղ, ուր մեր Մահմանադրութեան դատակնիքներն հնոյն հետ ըստ ամենայնի կամ ըստ մասին միաբան են, իրենց հեղինակութիւնը նաեւ հին կանոններէն կ'ընդունին, եւ անոր համար ալ յերկբայական առ իրաւագէտս առ հասարակ բնկալեալ մեկնութեան համաձայն պիտի մեկնուին, ըստ սկզբանս՝ «*Պէտք է քիչ քիչ քիչ ելնել ինչ որ մշտ սոյնք մեկնութիւնն ունեցած է*»¹: Իսկ երրորդ դէպքին մէջ, վերոյիշեալ մեկնութեան կանոնաց եւ սկզբանց համաձայն, եւ Աւստրիայ Մահմանադրութեան մեկնաց մեկնութեան հետեւելով պիտի մեկնուին. այս մեկնութիւնն ալ այնչափ կ'արժէ, որչափ ապացոյց ունի: Իսկ ուր երկբայական իրի մը նկատմամբ Հռոմէական ժողովոց որոշումը կայ, բնականապէս նոյնն, իբրեւ բարձրագոյն հեղինակութիւն, պիտի ըլլայ ամէն երկբայութիւն ըստ կանոնն:

Այսպիսի պատրաստութեամբ ահաւասիկ Մահմանադրութեանն իւրաքանչիւր դատակնիքաց մեկնութեան միջամուխ ըլլալ ուզած ժամանակնիս, Մահմանադրութեանն յառաջաբանը քիչ մ'ատեն ալ զմեզ կը կասեցնէ, եւ կը պահանջէ որ իւր վրայ ալ մտադրութեան հայեցուած մ'արձակուի:

Բարեյիշատակ Պիոս Թ. Մեծ Քահանայապետն իւր այս Մահմանադրութիւնը կը սկսի յառաջաբանով մը², որով կը յայտնէ իւր Մահմանադրութեան 1. Աւստրիայ, եւ 2. Տարածութիւնը:

1. *միայնակ Մահմանադրութեանն*: Պիոս Թ. ի Աւստրիայն Աւստրիայ Մահմանադրութիւնը դեռ

¹ Non sunt mutanda, quae interpretationem semper certam habuerunt.
² Տես էջ 3, 5:

յերեւան չելած, գիտութեանց շրջանին մէջ չկար այնպէս շփոթութեամբ եւ անորոշութեամբ լին մաս մը, ինչպէս ի կանոնական իրաւունն՝ տուեալ վճռոյ դատակնիքներն, որոնք այլեւայլ Քահանայապետներէ ու ժողովներէ ի դարս դարս արուած, եւ այնու՝ անթիւ բազմութեամբ աճած էին: Ասոնցմէ շատերն, որոնք իւրաքանչիւր ժամանակ առաւել տիրող այս ինչ կամ այն յանցանաց համար արուած էին, ժամանակաց փոփոխութեամբն անօգուտ, կամ դոնէ անգործագրելի եղած էին. սմանք արդէն իսկ ջնջուած, կամ դէթ ստոյգ չէր գիտցուեր՝ թէ են արդեօք տակաւին ի զօրութեան, եթէ հակառակ սովորութեամբ՝ օրինաց զօրութենէ զրկեալ են: Ասոր բնական հետեւութիւնն այն եղաւ, որ թէ հոգ հոգուց ունեցող կղերականաց եւ թէ իւրաքանչիւրոց հոգւոյն մէջ տարակոյց, անձկութիւնը եւ խայթք խղճի կը յառնէին, որով ամէնքն անորոշութեան ծովու մէջ կը ծփէին: Այս անորոշութեան եւ տարակուսանաց վախճան տալ ուղեց բարեյիշատակ Պիոս Թ. Մ. Քահանայապետը սոյն այս Մահմանադրութեամբս: Իւր Աւաքելական իշխանութեան զօրութեամբը կը սահմանէ, որ յուճ եւ պէտ անձէ երբէք արուած տուեալ վճռոյ ձեւով եւ նովին դործով անկանելի (բանադրանաց, կախակայութեան, արդելմանց) սրեւիցէ դատակնիքներէն այսուհետեւ անոնք միայն ի զօրութեան մնան, զորոնք ինք իւր այս Մահմանադրութեան մէջ կը մուծանէ եւ կը կարգէ. եւ որոնք իրենց օրինաց զօրութիւնն ոչ միայն ի հեղինակութենէ հնոց կանոնաց առնուն, հապա նաեւ իւր այս Մահմանադրութեանէն ալ, եւ այն այնպէս, իբրեւ թէ «*առաջին անգամ*», ասկէ արուած ըլլային¹. այսինքն, այն դատակնիքներն՝ որ ի հին կանոնաց առնուած եւ Մահմանադրութեանն մէջ դրուած են, ըստ հին մեկնութեաննոյն դատակնիքաց՝ պիտի հասկըցուին. բայց միայն՝ եթէ այս Մահմանադրութեամբս փոփոխութիւն մը կրած են, այն հաստատուն մնայ: Եթէ

¹ Փր. Հայեր, Եկեղեցական քառասունք. Փատերպոսն, 1884, էջ 24:

երբէք հին կանոնի մ'իմաստն այս Սահմանադրութեան
իմաստին հետ չմիաբանի, Սահմանադրութեանս իմաստը
նախամեծար պիտի ըլլայ, այնպէս՝ իբրեւ թէ այդ կանոնն
առաջին անգամ այս Սահմանադրութենէն կը տրուի¹:

Ըստ այսմ այս Սահմանադրութեան վախճանն է՝
այլեւայլ ժամանակներ արուած գատակնըաց ինքնուրու-
ղէցընէլ, զանոնք լրասարել, սահմանաորել, եւ անոնց
բնագիրն այնպիսի կերպարանաց բերել, որ անորոշու-
թեան եւ տարակուսանաց վերջ տրուի: Ըսինք ի մէջ
այլոց՝ սահմանաորել, ասիկայ յընդհանուրն միայն կ'ար-
ժէ, այսինքն՝ նկատմամբ դատակնըաց թուոյն, օրի-
նաց զօրութեան եւ տարածութեան: Բայց չի կրնար
ըսուիլ՝ թէ է այս Սահմանադրութեամբ ամէն մէկ առ-
անձինն դատակնըի նկատմամբ ալ սահմանաւորում
մ'եղած ըլլայ: Մանաւանդ թէ ի դէպս ինչ դատա-
կնիքներն, ինչպէս դեռ պիտի տեսնենք, նաեւ տարա-
ծութիւն ընդունած են:

2. Տարածութիւն Մանուսկրիթեան: Սահ-
մանադրութեանս տարածութեան նկատմամբ ըսուե-
լէքներն երկու կէտի կրնանք ամփոփել, այն է՝ Ա. Տե-
ղական տարածութիւն, եւ Բ. Պարունակութեան տա-
րածութիւն:

Ա. Տեղական տարածութիւն: Թէ մեր այս Առաք. Արեւոյ Սահմանադրութիւնը բովանդակ Եկեղեցւոյ
համար իրաւանց եւ օրինաց զօրութիւն ունի, ինքնին
իսկ յայտնի է, եւ ամենեւին հոգ չէ՞ թէ արդեօք
թեմի մը մէջ հրատարակուած է, եթէ ոչ: Մի ան-
գամ ի Հռոմ բովանդակ Եկեղեցւոյ համար իբրեւ
օրէնք հրատարակուած է, եւ այնու իւրաքանչիւր կա-
թոլիկէ քրիստոնէի խիղճը կը պարտաւորէ, եթէ տա-
կաւին Եկեղեցւոյ վերաբերիլ կ'ուզէ²:

¹ Պ. Աւանցինի, Մեխակոն-իւն Առաք. Արեւոյ Սահման-
ադրութեան, Հռոմ, 1872, էջ 64:

² Ս. Ժողովն Քննութեան, 15 Յունիս, 1870: 'Նոյն Ս.
Ժողովոյն (1 Փետր. 1871) առ հարցուածս Եպիսկոպոսի մը
առեւած Հրահանգին մէջ, ի մէջ այլոց զայս ինչ կ'ընթեանունք
նկատմամբ Առաք. Արեւոյ Սահմանադրութեան. 'Այսպիսի
նոր օրինաց ադիտութիւն' ընդհանրապէս խօսելով, չի կրնար
ընդունուիլ. վասն զի այս Սահմանադրութիւնս թէ բովանդակ

Բ. Պարունակութեան տարածութիւն: Ասոր նկատ-
մամբ միտ պէտք է դնել, որ

1. Քահանայապետական տուեալ վճռոյ դա-
տակնիքներէն միայն անոնք իրաւանց զօրութիւն ու-
նին այսուհետեւ, որոնք կը գտնուին Առաք. Արեւոյ
Սահմանադրութեան մէջ, յորմէ իրենց զօրութիւնը
կ'առնուն, եւ այն այնպէս իբրեւ թէ "առաջին անգամ"
արուած ըլլային: Այլ ամենայն դատակնիքք՝ այսու դա-
դրած են. նաեւ անոնք՝ որոնք պարզապէս իբրեւ պատիժ
կամ զրկում արուած էին: Ապա ուրեմն Սահմանադրու-
թեանս ամէն դատակնիքներն այն տեղերն՝ ուր հա-
կառակ սովորութեամբ մը բարձուած էին, ասով վե-
րըստին իրաւանց զօրութիւն կը ստանան, երբ նոյններն
ամբողջ կամ ըստ մասին այս Սահմանադրութեանս
մէջ կը գտնուին:

2. Եթէ տարակոյս մը ծագի՝ թէ արդեօք այս
ինչ դատակնիքն տակաւին իրաւանց զօրութիւն ունի,
պէտք է նախ եւ յառաջ յայտնապէս ցուցնել՝ թէ
նոյր մեր այս Սահմանադրութեան մէջ բովանդա-
կուած է, եթէ ոչ: Ասկէ կը հետեւի, որ բաց ի տուեալ
վճռոյ դատակնիքներէն ոչ այլ ինչ ի վճռոյ հին իրաւանց
փոխուած է. եւ նոյն իսկ բարձուած դատակնըաց
նկատմամբ ալ՝ Եկեղեցւոյ արդէլըք նկատմամբ նոյն
յանցանաց, դեռ միշտ ի հաստի կը մնայ, եւ իբրեւ
այնպիսի ի խղճի կը պարտաւորէ, թէ եւ զանցառու-
թիւնն Եկեղեցական դատակնիք մը հետը շունենայ:
Իսկ ամէն յատկապէս պարթիւք, եթէ տուեալ եւ եթէ
տալի վճռոյ, որոնք այս Սահմանադրութենէն յառաջ
իրաւանց զօրութիւն ունէին, նոյնպէս ամէն ոչնչա-
ցոցմունի եւ բարձրունի իրանց եւ անտարակոնիւնի,
տակաւին այնպէս հաստատ կը մնան, իբրեւ թէ այս
Սահմանադրութիւնս երբէք արուած չըլլար: Բայց ի
բաց կ'առնուին նաեւ յայսմ մասին՝

Ա. Ամէն տուեալ վճռոյ կախակայութիւնի եւ ար-

Եկեղեցւոյ համար ի Հռոմ հրատարակուեցաւ, եւ թէ յամ-
նայն մասունս Եկեղեցւոյ արդեամբ արածուած, եւ արդէն
իսկ ընդ բնաւ ծանօթ է,:

էլեւն-նէ, որոնք զըկման ձեւով կամ իբրեւ պատիժ արուած էին¹:

բ. Որովհետեւ իրաւունքը չ'ընդունիր, որ մէկը միեւնոյն յանցանաց համար միեւնոյն ատեն շատ պատժական օրինաց տակ իյնայ, պէտք ենք հաստատել, թէ նաեւ այն յանցանաց նկատմամբ՝ որոնց վրայ այս Սահմանադրութիւնս առաջին անգամ տուեալ վճռոյ դատակնիք դրած է, էն պարբէթ ջնջուած են: Աերջապէս՝

գ. Աւանց երկմտութեան է՝ թէ այս Սահմանադրութիւնս տէրութեանց հետ դրուած դաշնադրութեանը բառեալ չէ ուզած, թէեւ մէկը կարծէ թէ այդ դաշնադրութիւնք Առաքելական Աթոռոյ կողմանէ արածութիւնք են, կամ երկակողմանի դաշնք ըստ անձուկ նշանակութեան բառին:

Սկսինք հիմնց Սահմանադրութեանս դատակնիքաց շղթայն:

¹ Միեւն-մէն Առաք. Աթոռոյ Սահմանադրութեան, Գ. Տպագրութիւն, հրատարակեալ հրամանաւ Եպիսկոպոսի Փերուճիայի Ռիեզի (հին՝ Ռէադէ) քաղքին, էջ 18, Թ. 22: Ասկէ յառաջ բերուած կտորները՝ վասն համառոտութեան՝ սյուսահետեւ ըկ Ռիեզի կ'անուանենք:

Ա. Դ Ա Ս

ԱՌՆՆՁԻՆՆ ԿԵՐՊՈՎ ՎԵՐՊՊԵՆԵԼ ԲՆՆԱԳՐՆԵՔՆԵՐ

Հոռմայ Բահուսնայարայետին առանձինն կերպով՝ վերարարկեալ տոռեալ վճռոյ բահարսնաց տակ ինկած են՝

Ե.

«Այն լավներն՝ որ քրիստոնէական հաւատքը կ'ուրանան եւ ամէն ու իւրաքանչիւր հերետիկոսք, որով անուամբ որ անուանին, եւ որ աղանդէ որ ըլլան. եւ որոնք որ անոնց կը հաւատան, եւ զանոնք կ'ընդունին, կ'օգնեն, եւ ընդհանրապէս ամէնքն՝ որ զանոնք կը պաշտպանեն»,²

Այս առաջին կանոնն որ եկեղեցական դատակնիքաց հնագոյնն³ է, եւ յաճախ կը հանդիպի, մանաւանդ մեր ատենները, ինքնին երեք մաս կը բաժնուի, ըստ որում երեք խումբը յանցաւորաց այս բանադրա-

¹ Առանձինն կերպով Հոռմայ Բահանայարայետին վերապահեալ տուեալ վճռոյ դատակնիքները գրեթէ նոյն են ընթերցող կոնդակին մէջ բովանդակելոց հետ: Անոր համար, քննութեան Ս. Ժողովոյն (4 Ապր. 1871) տուած վճիռը կը սահմանէ, թէ ի ձեւս իշխանութեանց, զոր Ս. Ժ. Տար. Հաւատոյ տալ սովոր է, ուր որ ընթերցող կոնդակին մէջ վերապահելոց վրայ յիշատակութիւն կ'ըլլայ, փոխանակուին Առաք. Աթոռոյ Սահմանադրութեան մէջ առանձինն կերպով Հոռմայ Բահանայարայետին վերապահեալ դատակնիքներն, ի բաց ատեալ զմէզ սակիցն ի զազիր մեզս արձակելը, որ չէ թէ առանձինն այլ ամենառանձինն կերպով վերապահեալ է (Հմմտ. Առանձինն կերպով վերապահելոց Ժ. կանոնը): — Իսկ առանձինն կերպով վերապահեալ բառին նշանակութիւնը, տես յետոյ Առանձինն կերպով վերապահելոց վերջարանին մեկնութեան մէջ:

² Ի կոնդակէ ընթերցող Թ. 1: — Տես էջ 7:
³ Բ. Թեոք. Բ. 11: Ա. Տեոք. Ա. 19. 20: Տեոք. Գ. 10, 11: Բ. Յոգ. 9, 10:

Եթէ ուրացութիւնը զքրիստոնէութիւն քաղաքովն ուրանալու վրայ հաստատուած է, ապա հերետիկոսութիւնը ճշմարիտ հաւատքն ըստ Տասնն ուրանալն է: Ուստի հերետիկոսութիւնն, տա հասարակ աստուածաբանից եւ իրաւագիտաց սահմանին համաձայն, է՝ Քրիստոնէի մը կաթողիկէ Եկեղեցւոյ հասարակ էր ըստ վարդապետութեանց մէջ քրիստոնէամբ եւ յամառութեամբ մտրելը¹: Արդ, որպէս զի քրիստոնէայ մը հերետիկոս կարենայ ըսուիլ, եւ ըստ հետեւորդի այս բանադրանաց տակ իյնալ, բացարձակապէս կը պահանջուի, որ

1. Կաթողիկէ Եկեղեցւոյ հաւատոյ մի կամ շատ վարդապետութեանց մէջ մտրելն ըլլայ կերպական մտրութիւնն. այսինքն՝ Աստուծոյ յայտնեալ եւ ըստ բաւականի ծանչցուած ճշմարտութիւն մը գիտութեամբ եւ աղատութեամբ չուղուի յառն առնուլ: Ուստի, որպէս զի կարենայ մէկն ըստ յատուկ նշանակութեան բառին՝ «հերետիկոս», ըսուիլ, պէտք է քրիստոնէի որ ինք մտրած է, հաւատոյ վարդապետութեան մը վրայ իւր ունեցած կարծիքը կաթողիկէ Եկեղեցւոյ վճռեալ վարդապետութեան հետ չի միաբանիր, այլ կը հակառակի, եւ ըստ հետեւորդի պէտք է նաեւ ի մտրութեան մնալ ուղեւ. միով բանիւ՝ մտրութեան վրայ պիտի յամառէ: Ըստ այսմ, ո՞վ որ տգիտութեամբ, թէպէտ պարզապէս ծանր կամ թանձր եւ վեհերոտ տգիտութեամբ ի բարի միտս է, չի գիտեր թէ Եկեղեցւոյ հաւատոյ վարդապետութեան մը նկատմամբ ի հակառակութեան է, ըստ մտաց այսր կանոնիս հերետիկոս չէ, հետեւապէս բանադրանաց տակ չ'իյնար: Ասան զի յամառութիւնն չկայ, չկայ կաթողիկէ վարդապետութեան ընդգիմակաց հաւատոյ

¹ Հերետիկոսութիւնը ներքին կը կոչուի, երբ մտաց մէջ է տակաւին. արտաքին՝ երբ բանիւ կամ գործով կը յայտնուի: Արտաքին հերետիկոսութիւնը կրնայ ըլլալ քրիստոնէի, երբ ոչ ումք կամ սակաւուց ծանօթ է, հոս պարտական էրբ շատերուն ծանօթ է:

վարդապետութեան մը վրայ գիտութեամբ եւ յամառութեամբ պինդ կենալ¹:

2. Գիտութեամբ վրան յամառած մտրութիւնը կերպով մը յայտնուի, բանիւ կամ գործով, կամ ուրիշ արտաքին, ազատ եւ ծանր մեղանչական գործով մը, որ կարենայ զհերետիկոսութիւնն իբրեւ հերետիկոսութիւն յանդիման կացուցանել. ուստի կը պահանջուի արտաքին հերետիկոսութիւն: Յորչափ մտրութիւնն ի ներքս կը մնայ, կամ քնոյ, թմբութեան մէջ է, կամ ուրիշէ մը խորհուրդ խնդրելու գիտմամբ կը յայտնուի, բանադրանաց տակ չ'իյնար մէկը: Ասան զի այդ թեթեւ մեղանչական գիտաւորութեամբ յայտնուած մտրութիւնը՝ տակաւին ներքին յանցանք մըն է, որ արտաքին պատժով մը, որպիսի է բանադրանքը, չի կրնար պատժուիլ: Բայց մտրութիւնը յայտնեալ ըլլալու համար չի պահանջուի բնաւ, որ բոլորովն յայտնի խօսքերով կամ նշանաւ յայտնուածն ուրիշ մէկն արդեամբք եւ իրօք իմանայ կամ հասկընայ, բաւական է եթէ կրնար նոյնը ըսուիլ կամ հասկըցուիլ, երբ մէկն առաջիկայ գտնուէր կամ մտադիր ըլլար: Այս ամէն գիպաց մէջ մտրութիւնը թողեալ զներքինն՝ արտաքին կերպարանք առած է²:

3. Մտրութիւնն՝ Եկեղեցւոյ վնասէ հասարակ վարդապետութեան մը, ուստի կաթողիկէ վարդապետութեանց (dogmata catholica) դէմ ըլլայ: Անոր համար չէ հերետիկոս՝ ով որ Եկեղեցիէն դեռ չվճռեալ վարդապետութիւն մը կը մերժէ³:

4. Մտրեալն իբր մտրած ըլլայ. այսինքն՝ Եկեղեցւոյ վճռեալ վարդապետութեան վրայ իւր մտօքը սխալ դատաստան մ'ըրած ըլլայ⁴. Չոր օր. ով որ բացասապէս կը կենայ, ո՞չ ընդդէմ եւ ո՞չ ի կողմն անսխալականութեան Քահանայապետին է, ո՞չ կ'ու-

¹ Ռիեզի, էջ 22, թ. 30:
² Ռայֆֆենսթուէլ, Աննուան իրաւունք, Հատ. Լ. 246:
³ Ռիեզի, 22, թ. 30:
⁴ Անդ:

բանայ այս հաւատոյ վարդապետութիւնն եւ ոչ նոյնին կը հաւանի, վասն զի տակաւին մոօք դատաստան մը չէ բաժն, դեռ հերետիկոս չէ, հետեւապէս բանադրանացս տակ չ'իյնար: Յայտնի է թէ պլլազդ պէտք ենք բաւել, եթէ մէկը դրապէս երկբայի Եկեղեցւոյ հաւատոյ վարդապետութեան մը ճշմարտութեան վրայ այսինքն՝ եթէ մէկն ի մէջ հաւատաարու եւ չհաւատաարու կենայ, եւ անորոշ բլլայ ու չդիտնայ՝ թէ պէտք է արդեօք ուրանակ եթէ հաւանիլ: Այսպիսին՝ եթէ այդ երկմտութիւնն արտաքուստ ալ յայտնէ, ըստ սկզբանա, թէ՛ «Երկեքն է հաւատս անհատար է 1», հերետիկոս է: Վասն զի այնպիսին իրօք դատաստան կ'ընէ, թէ ապահովապէս ճշմարիտ չէ այն՝ զոր Աստուած յայտնած է եւ ի ձեռն կաթողիկէ սուրբ Եկեղեցւոյ մեր առջեւ հաւատաարու դրած է. ասով այնպիսին հաւատոյ եւ բարոյից վարդապետութեան նկատմամբ աստուածային եւ եկեղեցական հեղինակութիւն չ'ընդունիր: Անոր համար առանց երկբայութեան է, թէ այսպիսին Եկեղեցւոյ վարդապետութեան կը հակառակի, եւ այն պատճառաւ իբրեւ հերետիկոս վերոյիշեալ բանադրանայ տակ կ'իյնայ՝:

Ծ. Հաւատոյ վարդապետութեան վրայ եղած արտաքին մնջրութիւնը զնէրդն հերետիկոսութեան իբրեւ հիմ պիտի ունենայ, ինչպէս յայտնի է. վասն զի առանց ներքին հաւանութեան՝ լրացեալ մեղք մը չէ կրնար բլլալ: Բայց ասիկայ կ'արժէ միայն ի ներքին ատենի: Վասն արտաքին ատենի, այն անձն՝ որ արտաքուստ մնջրութիւն մը կը դաւանի, հերետիկոս կը համարուի եւ իբրեւ նոյնպիսւոյ հետ կը վարուուի. եւ կարելի չէ բնաւ հաւատք ընծայել իւր խօսքին, թէ՛ «Ինք միայն արտաքուստ հերետիկոսութեան մը կը հաւանի. իսկ ի ներքուստ Եկեղեցւոյ վարդապետութեան հաստատութեամբ յարեալ է»: Ինչու որ յարտաքին ատենի՝ միայն ըստ արտաքին երեւութին կը դատուի, ցորչափ հակառակը չէ ցուցուած: Սակայն

1 Dubius in fide infidelis est. Կ. 1. Վասն հերետիկոսաց: 2 Ուեդի, 22, թ. 30:

նկատմամբ ներքին ատենի հնար չէ զայնպիսին բանադրեալ համարել, եւ ըստ այնմ վարուիլ՝:

Ասիկէ յայտնի է որ արդէն ի հաստի եղող աղանդի մ'անցումն կամ նոր աղանդ մը հաստատեն հերետիկոսութեան էութենէն չէ: Անոր համար կանոնիս մէջ կ'ըսուի «ամէն եւ իտրաքսանչիոր հերետիկոսք», առանց մէկն բնաւ ի բաց առնուլ, «որո՞վ անուանի որ անուանուի եւ ո՞ր աղանդի որ ըլլաւ»: Ուստի, «ամէն եւ իտրաքսանչիոր», ին մէջ կը բովանդակուին ոչ միայն ամէն աղանդաւորք, հապա նաեւ առանձնական հերետիկոսք:

Այս է Ընկերաց կոնդակին՝ որմէ մեր այս կանոնն առնուած է, առ հասարակ ընկալեալ մեկնութիւնը, որմէ մենք ալ չենք կրնար հեռանալ՝:

3.

Վերոյիշեալ ուրացողաց եւ հերետիկոսաց գործակից են, որոնք որ հրապարակաւ կամ ի ծածուկ անոնց կը յարին: Այսպիսի են՝

1. «Հառաւացողք», այսինքն այն ամէնքն՝ որոնք հերետիկոսի մը խօսքը վարդապետութեան արտաքին կերպով մը կը հաւանին եւ անոնց կը յարին: Ուրացողաց եւ հերետիկոսաց, եւ «անոնց հառաւացող» այ մէջ եղած տարբերութիւնն յայնմ է, որ անոնք կ'երպապէս հերետիկոսական վարդապետութիւն մը կը դաւանին, իսկ ասոնք առանց յամառութեան մը կամ ըստ բաւականի ծանօթութեան, եբրեւ կողմակից, հերետիկոսաց յարող ի մէջ կու գան՝: Ըստ այնմ «հառաւացողք» ըսելով՝ չենք իմա-

1 Սուրբեղ, Վասն բանադր. Հատուած Բ. Թ. 30: Բենեդ. Ժ. Գ. Վասն Թեմ. Ժող. Ա. Կան. Է. Ժ. Թ. 4:
2 Ծանօթութեան Առտ. Արեւոյ. Սահմանադրութեան, տպեալ ի Քլեմենտ-Ֆերրան. էջ 28, Թ. 65: Այսուհետեւ ասիկայ Քլեմ. ով կը նշանակենք:
3 Չոլլե. 38, Թ. 69: Ս. Ալբ. Լիդ. Է. 306: Խնդրքդ Վասն հանաքութեան Առտ. Արեւոյ հրատարակեալ հրամանաւ Եպիսկոպոսին Բատուայ, Բ. Տպագրութիւն, էջ 48, Թ. 110: Ասիկայ այսուհետեւ Բար. ով կը նշանակենք:

նար զանոնք, որ գիտութեամբ եւ յամառութեամբ հերետիկոսական վարդապետութիւն մը կը դաւանին. վասն զի այսպիսիք թէեւ աղանդոյ մ'անդամ չհամարուին, իրօք հերետիկոս են: Հապա կ'իմանանք այն ամէնքն՝ որ բանիւ, նշանաւ կամ գործով՝ յայտնապէս կամ լռելեայն, ի մասնաւորի կամ յընդհանուրն, հերետիկոսական վարդապետութեան մը կը հաւանին, զոր օր. անով՝ որ նոյն վարդապետութիւնն իբրեւ առողջ եւ բանաւոր կը ցուցնեն. կամ յայտնապէս կը խոստովանին՝ թէ իրենք ալ ընդհանրապէս նոյն կարծիքն ունին, եւ թէ իրենք ալ ճշգիւ այն կ'ընդունին ինչ որ հերետիկոսք կը հաւատան կամ հաւատացած են, առանց մտրութիւնը ճշգիւ ճանչնալու կամ ըստ բաւականի հատկընտրու, ուստի եւ առանց կերպապէս անոնց աղանդէն ըլլալու: Ասոնք թէեւ ներքին ատենի համար իբրեւ բուն հերետիկոս չկարենան նկատուիլ, բայց միայն իբրեւ «անոնց հաւատացողք», չեն կրնար առանց առանձինն իշխանութեան եւ ոչ ի խոստովանահօրէ ու մեքէ արձակուիլ¹: Գործակից են՝

2. «Ղնդռոնոյք», այսինքն անոնք՝ որ ուրացելոց կամ հերետիկոսաց տեղի ապաւինի կամ ապաստանարան մը կու տան, կամ զիրենք կը թագուցանեն այնու գիտմամբ՝ որ անոնք հերետիկոսութեան պատժէն ազատին, եւ այնու անհաւատութեան եւ մտրութեան մէջ յարատեւելու յորդորուին. հաւասարապէս՝ եթէ ապաստանարանը տրուի իշխանէ կամ հպատակէ մը, իբրեւ պաշտօնէէ կամ առանձնական անձէ մը, իր սեպհական կամ օտարին տան կամ երկրին մէջ: Վասն զի, ուր օրէնքը զանազանութիւն չընեն, մենք ալ չունինք իրաւունք զանազանութիւն ընելու²: Բայց պէտք է միտ գնել, որ

Ա. Այսպիսի «Ղնդռոնոյք» (նոյնը կ'արժէ «օգնողներոս եւ պաշտպանողներոս» համար ալ) այն ատեն միայն ընդ պատժով բանադրանաց կ'իյնան, երբ գիտութեամբ եւ կամօք ուրացելոյ կամ հերետիկոսի

¹ Բլբ. էջ 29, թ. 67:
² Չօլի, էջ 39, թ. 69:

մը՝ իբրեւ ուրացողի եւ հերետիկոսի ապաստանարան կու տան: Անոր համար ազատ են ի բանադրանաց այն ամէնքն՝ որ ուրացեալ կամ հերետիկոս մը՝ ոչ վասն ուրացութեան կամ հերետիկոսութեան իւրոյ, հապա վասն այլ ինչ պատճառի կ'ընդունին, զոր օր. վասն ազգականութեան կամ բարեկամութեան, կամ՝ երբ հերետիկոսը վասն գողութեան եւ ոչ վասն հերետիկոսութեան կը հալածուի: Ասիկայ գրեթէ միաբան վարդապետութիւն է աստուածաբանից¹: Բայց չի պահանջուիր որ այդ ուրացողք կամ հերետիկոսք հրապարակական ըլլան, որպէս զի զանոնք «Ղնդռոնոյք» («օգնողք, պաշտպանողք») այս բանադրանաց տակ իյնան: Բաւական որ ստուգութեամբ իբրեւ ուրացող կամ հերետիկոս ճանչցուին. վասն զի կանոնիս մէջ հրապարակական կամ գաղտնի հերետիկոսի զանազանութիւն չ'ըլլուիր: Ուստի ցորչափ որ կերպով մը ստոյգ է, թէ մէկն ուրացեալ կամ հերետիկոս է «անոնց հաւատացողք, Ղնդռոնոյք...» այս բանադրանաց տակ կ'իյնան²:

Բ. Այսպիսի «Ղնդռոնոյք» (նոյնն իմանալու է մէկաշնորուն համար ալ) այն ատեն միայն բանադրանաց տակ կ'իյնան, երբ արդէն ընդունելութեան ընթացից ըլլայ: Եթէ ընդունին առանց արդեանց մնայ, ըստ կարծեաց բազմադոյն աստուածաբանից բանադրանքը տեղի չունի: Վասն զի մէկ կողմանէ բանադրանաց վախճանը՝ հերետիկոսութեան տարածումն արգելուին, այն ընդունելութեամբ ի գերեւ չ'ըլեր՝ եթէ ապաստարանն այնպիսի հիւրի օգուտ մը չընէ. միւս կողմանէ զժպհի իրի մը վրայ է խնդիրը, յորում մեղմագոյն կարծեաց չէ թէ միայն կրնանք, այլ եւ պէտք ենք հետեւիլ³: Գործակիցք են՝

3. «Սղնողք», որոնք ուրացութեան կամ հերետիկոսութեան օգնութիւն մը կը մատուցանեն:

¹ Ս. Լ. Բ. Լի. Է. թ. 307: Բլբ. էջ 30, թ. 67: Բատ. էջ 50, թ. 113:
² Առանց. առ. Գ. 3:
³ Պոնախնա, Վիճ. 1. խ. 2. Գ. 3. թ. 2: Սանքէզ, թ. 9: Ֆորովոյ. էջ 29: Հմմ. Փր. Հայնէր, էջ 21:

Ատիկայ երկու օրինակաւ կրնայ ըլլալ. Ա. Չանցա-
թեմք իրի մը, զոր պարտական էր մէկն ընել. եւ
Բ. Յանցաթեմք:

Ա. Օգնող զանցառութեամբ են ամէնքն՝ որ յան-
ցաւոր կերպով զանց կ'առնուն պատժել հերետիկոս-
ները, արդէրու էլ ջնջել անոնց գրքերը. համառօ-
տիւ՝ որոնք ընդդէմ չեն կենար հերետիկոսութեան
տարածման, երբ կարելի էր եւ զօրութեամբ իրենց
պաշտօնին՝ նաեւ պարտք ալ կար: Անոր համար, այն
էպիսկոպոստներ, ժողովրդապետք եւ իշխանք յան-
ցաւոր կ'ըլլան բանադրանաց, իբրեւ «օգնողք» հե-
րետիկոսաց, որոնք իրենց թեմին, ժողովրդապետու-
թեան կամ երկրին մէջ հերետիկոսութեան ըստ հա-
ճոյս գործելու թոյլ կու տան, առանց անոր դէմ կե-
նալու, երբ կարելի էր: Իսկ՝

Բ. Յանձնառութեամբ օգնող հերետիկոսաց կ'ըլ-
լայ մէկն, եւ ըստ հետեւորդի բանադրանաց տակ կ'իյ-
նայ, եթէ բանիւ կամ գործով, ինչպէս՝ գովելով,
խորհրդով, դրամական օգնութեամբ, դպրոց կամ
եկեղեցի շինելով, լրագրով եւ կամ սլաքով հերետի-
կոսաց պաշտպանութիւն կամ օգնութիւն կը մատու-
ցանէ, այնպէս որ հերետիկոսութիւնը կամ անպատիժ
մնայ կամ ի տարածումն եւ ի կիրարկութիւն աւելի
միջոց եւ ճամբայ գանէ, եւ կամ ինքնին հերետիկոսք
ի մեղս իւրեանց առաւել հաստատին: (Տես նաեւ
վերը՝ 2. Ա. Բ.): — Աերջապէս գործակիցք են՝

4. «Պաշտպանողք», որով կ'իմացաւին անոնք՝
որ կերպով մը՝ բռնութեամբ կամ նենդութեամբ,
խօսքով կամ գրով կամ հերետիկոսին անձն իբրեւ
հերետիկոս, կամ անոր մուրբութիւնը կամ գրքերը կը
պաշտպանեն, եւ կամ արդելք մը կը դնեն որ հերե-
տիկոսութեան դէմ չձգնուի, կամ հերետիկոսի անձն
իբրեւ նոյնպիսի յարգար պատժոց զերծանի: 2: Հերե-
տիկոսութիւն պաշտպանողաց համար տրուած այս բա-
նադրանքն այն ատեն ալ տեղի ունի, երբ այս պաշտ-

1 Փորձիզ. էջ 29: Բատ. էջ 48. թ. 110:
2 Ս. Լիգ. թ. 306: Բատ. անդ:

պանողք՝ հերետիկոսաց վարդապետութեան ամենեւին
հաւան չըլլան: Պաշտպանութիւնն՝ զոր անոնց կը
մատուցանեն, եւս եւ եթէ մի անգամ միայն ըլլայ,
բաւական իսկ է այս բանադրանաց տակ իյնալու: Ասան
զի անոնք ասով կը հանդուրժեն յանցաւոր կերպով,
որ հերետիկոսութեան թոյնը կարենայ արմատ ձգել,
ածիլ եւ ընդ բնաւ ծաւալիլ: Եւ նոյն իսկ այն ատեն
ալ բանադրանաց տակ կ'իյնան, եթէ իրենց պաշտպա-
նած անձն բանադրանաց տակ ինկած չըլլայ, միայն նիւ-
թական հերետիկոս ըլլալուն համար: Ատիկայ իմա-
նալու է նաեւ «ընդունողներու եւ օգնողներու» հա-
մար ալ: (Տես նաեւ վերը՝ 2. Ա. Բ.):

Թէ մինչեւ յարդ յիշեալ ամէն պատժապարտ-
ներու տեսակներէն՝ բանադրանաց տակ իյնալու հա-
մար յաճախութեամբ կը պահանջուի, այսինքն՝ թէ
մեղքը գործուած պիտի ըլլայ կերպական արհամար-
հութեամբ Եկեղեցւոյ այդ պատժական օրինաց, կամ
դոնէ գիտնալով՝ թէ Եկեղեցին այսպիսի գործի մ'ա-
մէն յանցաւորաց վրայ պատիժ դրած է, ինքնին իսկ
յայտնի է:

Իբրեւ վերջ մեկնութեան Ա. կանոնիս, վասն
գործնական հարկաւորութեան կը յաւելունք ուրա-
յութեան եւ հերետիկոսութեան

ՎԵՐԱԳՆՀՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՉԱԿՄԵՆ ՎՐԱՅ ԻՆՉ ԻՆՉ
ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

Հաւատոյ ուրացութիւնն ու հերետիկոսութիւնը,
թէպէտ յանցանքն հրապարակական ըլլայ թէպէտ
գաղտնի, առանձին կերպով Քահանայապետին վերա-
պահեալ են: Բայց ուրացութեան եւ հերետիկոսու-
թեան յանցանաց ընդ յատեան ելելը, ինդիրը կը
փոխուի. այսինքն այս դէպքիս մէջ Ընթերցող կոնդակն
իրաւանց լի գօրութիւն կ'ունենայ: Ուստի ամէն ու-
րացողք եւ հերետիկոսք, թէպէտ իբրեւ նոյնպիսի
ճանցուած՝ թէպէտ գաղտուկ մնացած ըլլան, ընդ
արդեւ արեւ Եպիսկոպոսի ելլին՝ ըլլայ կամաւ ըլլայ
ակամայ, կրնան նաեւ այս Եպիսկոպոսն՝ նոտարի

1 Սուարեզ, 21. 2. 8: Ռիեզի, էջ 24. թ. 32:
2 Փր. Հայնէր, էջ 20:

մը եւ երկու վկայից առջեւ հրաժարումն ընելէն ետեւ, զօրութեամբ կարգաւոր իշխանութեան նորա անձամբ իրմէ կամ յանձնարարական պաշտօնէէ մը, նախ յարտաքին ատենի, եւ յետոյ նաեւ Ապաշխարութեան Ս. Խորհրդեան մէջ արձակուել, առանց Հռոմ գիմելու հարկաւորութիւն ունենալու:

Այն ուրացեալք եւ հերետիկոսք, թէեւ ուրացութեան կամ հերետիկոսութեան յանցանքնին հրապարակական կամ գաղտնի ըլլայ, որոնք յեպիսկոպոսական ատենի ոչ կամաւ եւ ոչ բռնութեամբ կ'երեւան, հապա միայն յատենի Ս. Ապաշխարութեան կ'ուղեն ներկայանալ, որ դէպքն առ գաղտնի հերետիկոս սովորական է, առանց յայտնի իշխանութեան Առաքելական Աթոռոյ եւ ոչ մէկ խոստովանաչօրէ մը կրնան արձակուել: Սակայն Ապաշխարութեան Ս. Ժողովոյն Գահերեցը, երեք տարի զօրող վճռով մը յայտնապէս իշխանութիւն կուտայ Եպիսկոպոսաց յատենի խղճի մտաց, նաեւ արտաքոյ ատենի Ս. Ապաշխարութեան, իւրաքանչիւր խոստովանողը հարկէ հերետիկոսութեամբ յառաջ եկած ամէն դատակնիքներէ եւ յեկեղեցական պատժոց արձակելու. եւս եւ եթէ հերետիկոսութիւնն ուրիշի առջեւ յայտնեալ ըլլայ, բայց միայն գաղտնի մնացած ըլլայ եւ հրապարակեալ չըլլայ: Եպիսկոպոսունք այս իշխանութիւնն ուրիշ խոստովանահարց միայն վասն խորհրդական ատենի կրնան տալ: Իսկ հերետիկոսք, թէպէտ ուսուցանողք (dogmatizantes) ըլլան թէպէտ ոչ, առանց առանձինն իշխանութեան Առաքելական Աթոռոյ չեն կրնար մէկէ մ'արձակուել¹:

Բ.

«Այն ամէնքն որ առանց իշխանութեան Առաքելական Աթոռոյ նոյն ուրացելոց եւ հերետիկոսաց հերետիկոսութեան պաշտպան գրքերը, նոյնպէս որեւիցէ հեղինակի Առաքելական թղթով յանուանէ արգելեալ գրքերը գիտութեամբ կ'ընթեր-

¹ Տե՛ւ վէքքիոյ, Առաքելական թղթի Բ. Գլխի Գ. Թ. 3:

նուն. եւ որոնք որ նոյն գրքերն իրենց քով կը պահեն, կը տպեն, եւ որով եւ իցէ օրինակաւ կը պաշտպանեն»¹:

Եկեղեցին որուն պաշտօնն է հաւատացեալներն անարատ վարդապետութեան ճշմարտութեան մէջ անխախտ պահել, ի սկզբանէ անտի² կը դատապարտեր մուրբելոց հետ նաեւ իրենց գրքերը, եւ կ'արգելար անոնց ընթերցումը: Արդէն առաջին Տիեզերական Ժողովներու մէջ հերետիկոսաց գրքերն ընթերուել, պահելն ու բնօրինակելը նորովիք արգելեալ էր: Իսկ տպագրութեան գիւտէն ետեւ, մանաւանդ մեր ժամանակները, երբ մոլոր եւ կրօնաւեր մատենից հեղեղն աշխարհս սողոկեց, ստիպուեցաւ Եկեղեցին յայսմ մասին առաւել արթուն եւ խստադոյն ըլլալ, եւ արգելեց ընթերուել ոչ միայն հերետիկոսաց գրքերն, այլ եւ ամէն չար ու վնասակար գրքերը: Իսկ հերետիկոսաց եւ ուրացելոց, ինչպէս նաեւ յանուանէ դատապարտեալ գրոց դեմ աւելի խոտութեամբ վարուելով՝ բանադրեց անոնց ընթերցումը, տպելը, պահելն ու պաշտպանելը, եւ այս կանոնիւս այդ բանադրանաց արձակումն ալ առանձինն կերպով վերապահեց Հռոմոյ Քահանայապետին:

Այս կանոնս յինքեան երեք մաս կը բովանդակէ: Ա. Մասին մէջ այնպիսի գրոց ընթերցումն ընդ բանադրանօք կ'արգելուի, որոնք յարացելոց կամ ի ներեպիկոսաց գրուած են եւ ներեպիկոսութեան պաշտպանութիւն մը կը բովանդակեն: Բ. Մասին մէջ կ'արգելուի այնպիսի գրոց ընթերցումն, որոնք որեւիցէ հեղինակէ ալ գրուած ըլլան, սակայն յանուանէ եւ յայտնապէս՝ Առաքելական թղթով մ'արգելեալ են: Իսկ Գ. Մասին մէջ կ'արգելուի թէ յուրացելոց եւ ի հերետիկոսաց գրեալ հերետիկոսութեան պաշտպան, եւ թէ Առաքելական թղթով յանուանէ արգելեալ գրքերը տպելը, տպելն ու պաշտպանելը:

¹ Ի կոնդակէ Ընթերց. 1: — Տես էջ 7:
² Գործք. Առաք. ժ. Թ. 19:

Պանոնիս Ա. մասին մէջ բանադրանաց տակ կը ձգուին « ընթերցողը », այսինքն այն ամէնքն՝ որ ուրացելոց եւ հերետիկոսաց գրած հերետիկոսութեան պաշտպան (կամ՝ Առաքելական թղթով յանուանէ արգելեալ) գրոց ընթերցման արգելեալ ըլլալն ու նոյն արգելից զանցառութեան համար տրուած բանադրանքը թէեւ գիտեն, սակայն առանց օրինաւոր իշխանութեան՝ սեպհական աջօք նոյները կը կարդան, եւ այնպէս անոնց բովանդակութիւնն անձանց կը սեպհականեն, թէեւ իւրաքանչիւր բառերը շեթամբ արտաբերած ըլլան կամ ոչ¹: Եւ որովհետեւ այսպիսի գրոց ընթերցման արգելմանը վախճանն է՝ խոտորելու վտանգը հեռացընել, ինքնին իսկ յայտնի է թէ այս ընթերցումը քարոյակա՞ն պիտի ըլլայ. չի բաւեր այս բանադրանաց տակ իյնալու համար ըսկ ինթական ընթերցում մը, ինչպէս եթէ մէկը գիրք մը կարդալու զբաղել, որուն ընդուն ամենեւեկն չի հասկընար²:

Ըսինք՝ որոնք «եպհակա՞ն աջօք կը կարդան». վասն զի անձամբ ընթերցողներն առանց հակառակութեան բանադրանաց տակ կ'իյնան: Իսկ եթէ մէկն այսպիսի գրոց ընթերցման ունկնդիր ըլլայ միայն, ըստ Ս. Լեգուրեայ³ եւ այլոց՝ հաւանականաբար չ'իյնար բանադրանաց տակ: Բայց եթէ ունկնդիրն անձամբ հրաման կամ խորհուրդ տալով սոյն գրքերն իւր առջեւ կարդալ որայ, կ'իյնայ նոյնպէս այս բանադրանաց տակ: Ս. Լեգուրի⁴ եւ այլք ընդդէմ քանի մ'աստուածաբանից կը հաստատեն՝ թէ առանց տարակուսանաց կ'իյնայ բանադրանաց տակ: Վասն զի՝

1. Առջեւ կարդալ տալն միշտ բարոյական ընթերցում մըն է, բոլորովին հաւասար թէ մէկն այս ընթերցումը սեպհական աջօք ընէ, կամ ըսենք՝ վասն

¹ Օ. 1. Վասն ջնջ. կտակ.:
² Սուարեզ, Վասն հաւ. 20, 2, 18; Չոլի, էջ 44, թ. 73:
³ Այլ առաջիկան, Հատ. Թ. Թ. ԳՂ. Բ. Թ. 59:
⁴ Է. Թ. 292:

գիւրութեան, ուրիշ անձի մը ձեռօք կատարէ: Եւ միթէ սովորական խօսակցութեան կերպ չէ՞ ըսելը՝ «կարդացի այս գիրքը», թէեւ անոր բովանդակութիւնն առջեւ կարդալ տալով ստացած ըլլայ: Անոր համար այսպիսին հաւասար է անձամբ ընթերցողին, ըստ իրաւագիտական սկզբան՝ «Ուրիշ մը յետօ գործողն իբրեւ անձամբ գործող է¹»:

2. Այսպիսի գրոց արգելման վախճանն է՝ հեռացընել մուրեքու վտանգն, որ հերետիկոսական գրոց ընթերցմանէն կը ծագի: Արդ այս վտանգն ստուգիչ հաւասարապէս կը գտնուի այսպիսի գիրք մը թէ առջեւ կարդալ տալու եւ թէ անձամբ կարդալու մէջ. իսկ «Ուր նոյն է պարտաւար, նոյն է եւ իրաւանց որոմադրուիւնը»²:

3. Եթէ ենթադրենք որ այս բանադրանաց տակ իյնալու համար բաց ի բարոյական ընթերցմանէ, նիւթականն ալ կը պահանջուի, այն ատեն գրոց արգելման այդ օրէնքն անօգուտ կ'ըլլար. վասն զի իւրաքանչիւր ոք կրնար յեկեղեցական պատժոց զանձն այնու իսկ ազատել, որ հերետիկոսական գիրք մը պարզապէս առջեւ կարդալ կու տար. եւ այսպէս կրնար իւրաքանչիւր ոք օրէնքը ճաղրական ընել:

Բայց ով որ կը պատուիրէ կամ խորհուրդ կու տայ ուրիշն՝ արգելեալ գիրք մ'ընթեռնուել, բայց ինքն ընթերցման առաջեկայ չի գտնուիր, բանադրանաց տակ չ'իյնար: Վասն զի այսպիսի պատուէր կամ խորհուրդ տալը կանոնիս մէջ չի յիշատակուիր: Եթէ այդ պատուէրը կամ խորհուրդը տուող գիտէ անով զմիւսն հերետիկոս ընել, կամ եթէ միւսն ընթեռնելով իրօք հերետիկոս ըլլայ, որուն ինք կանխատես եղած ըլլայ, այն ատեն այդ հրամանատուն կամ խորհրդատուն իբրեւ «օգնող» հերետիկոսութեան, Ա. կանոնին մէջ տրուած բանադրանաց տակ կ'իյնայ: — Այս

¹ Qui facit per alium, est perinde ac si faciat per seipsum. Վան. Իրաւ. 72. առ. 6:
² Ubi eadem est ratio, eadem est juris dispositio. Վան. Իրաւ. առ. 6:

չափս « ընթեռնող » բառին կանոնիս մէջ ունեցած իմաստին վրայ :

Որպէսզի այսպիսի « ընթերցողը » բանադրանաց տակ իյնան, կը պահանջուի՝

Ա. Ընթերցողին կողմանէ, որ

1. Գրքին այն մասը կարգացուի, որ բաւական ըլլայ մահաւոր մեղքի մը . վասն զի այսպիսի ծանր պատժոց համար, որպիսի է բանադրանքը, չի բաւեր թեթեւ նիւթ մը : Անոր համար, որպէս զի մէկը բանադրանաց տակ իյնայ, գրքին բաւական մէկ մասը կարգացած պիտի ըլլայ¹ : Սովորաբար երես մը կարգաւ բաւական մաս մը կը համարուի : Սակայն հաւատարման է եթէ մէկն արգելեալ գրքին ճիշդ այն տեղն ընթեռնու, որ արգելման պատճառ եղած է, եւ կամ ուրիշ մաս մը² : Գործնականի մէջ յայտմասին մեծաւ զգուշութեամբ պէտք է վարուիլ, եւ ընթերցման ծանրութիւնը կամ թեթեւութիւնն ոչ այնչափ բոտ քանակութեան ընթերցման, որչափ բոտ որպիսութեան պէտք է չափել . ինչպէս նաեւ Ս. Ղեզուորի³ կ'ըսէ . « Եթէ հերետիկոսական գիրք մը բանայրվ, ուղղակի հաւատոյ դէմ եղած վարդապետութեան հանդիպիս, կրնաս բանադրանաց տակ իյնալ, նաեւ եթէ քանի մը տող կարդաս . վասն զի այնչափի մէջ կրնայ մտրելու վտանգ ըլլալ » : Բնականապէս նոյն բան է, թէ մէկն արգելեալ գրքի մը բնագիրը կամ թարգմանութիւնը կարգայ, բարի (հերքելու դիտմամբ) կամ չար դիտաւորութեամբ մը կարգայ, կարծէ որ գիրքն իրեն վտանգաւոր է կամ ապահով ըլլայ որ չէ : Ասան զի խտորելու վտանգը միշտ կայ եւ զանցառութիւնն ալ մահացու մեղք է, որ բանադրանք հետն ունի : Իսկ եթէ մէկը հերետիկոսական գրքէ մը պատուաւ թուղթ մը կարգայ, բանադրանաց տակ չ'իյնար . վասն զի այնպիսին ոչ թէ հերե-

¹ Ս. Ղեզ. Է. 283, 284 :
² Սուրբ. անդ, Թ. 9 : Սանքեղ, Թ. 30, 35 : Ռիեդի, էջ 26, Թ. 36 :
³ Է. Թ. 284 :

տիկոսական գիրք մը, այլ գրքի մը հատակտորը կը կարգայ¹ :

2. Ընթերցումն ըլլայ, ինչպէս կանոնիս մէջ յայտնապէս կը գրուի, « գիտութեամբ », ուստի կատարեալ գիտութեամբ եւ կամօք : Այսինքն՝ ընթերցողը պիտի գիտնայ, որ գիրքը՝ 1. Աւեր ըսուած մտօք ուրացողէ կամ հերետիկոսէ մը գրուած է . 2. Հերետիկոսութիւնը կը պաշտպանէ, եւ 3. Ընթեռնուլ բանադրանք արգելուած է : Այս երեքն իմանալու է ոչ միայն ընթերցողայ, հապանակ պահանջու, տարդնեբու եւ պաշտպանողներու համար ալ² : Անոր համար բանադրանքէս կ'ազատէ ոչ միայն պարզապէս ծանր տգիտութիւնն, այլ նաեւ թանձրն ու վեհերտը³ . վասն զի նաեւ այսպիսի տգիտութեամբ ալ իրական գիտութիւն չկայ : Թէ արդեօք կամակար (անորժեալ) տգիտութիւնն ալ կ'ազատէ, մեծ խնդիր է : Որովհետեւ իրաւանց մէջ կամակար տգիտութիւնը միշտ իրական գիտութեան հաւատար կը համարուի, անոր համար ընդհանուր կարծիքը խնդիրը կը ժխտէ : Ընդհակառակն այլք նաեւ հակառակ կարծիքը հաւանական կը համարին . որովհետեւ տգիտութեան այս սեւակը տակաւին միշտ իրական քիտութեամբ ընթեռնուլ կ'արտաբոսէ⁴ : Անոր համար ի գործնականին կրնայ խտտովանահայրն այս մեղմագոյն կարծեաց հետեւիլ, մանաւանդ երբ կամակար տգիտութիւնը սաստիկ յանդուրձանութեամբ մը հետ միացեալ չըլլայ⁵ :

3. Այսպիսի գիրք մ'ընթեռնուլն, ինչպէս նաեւ պահելն, եւ այլն, ըլլայ՝ « սոսակց իշխանութեան Առաքելական Աթոռոյ » : Սահմանադրութեամբս արգելեալ այսպիսի գրքերն ընթեռնուլ, պահել, եւ այլն կարենալու համար՝ նոյն իսկ Աւարելական

¹ Կուրի, Բ. 982, 3 :
² Կուրի-Պալերինի, Արդարութեան Բարոյութեան, Հատ. Բ. Թ. 972, Բ. Ծան. Ա :
³ Ս. Ղեզ. Է. 4 :
⁴ Պոնաշ, Գ. Ախճ. Բ. Խ. 2. Մ. 4. Թ. 9 : Գրուա, Է. 34 : 345 : Սանք. Յայտ. Բ. 10. 38 : Ռիեդի, էջ 30, Թ. 40 :
⁵ Տես՝ Յաւելուած Բ. Բ. :

Աթուէն՝ իշխանութիւն տրուած պիտի ըլլայ, կամ անոնցմէ՝ որոնք յԱւարքելական Աթուոյ նոյն զբքերը կարգալու իշխանութիւն տալու իրաւունք ընդունած են: Բանադրանաց տակ չ'իյնար առանց իշխանութեան ընթերցող մը միայն սա դէպքին մէջ, երբ գիտնական մ'այսպիսի գիրք մը կարդայ առանձնական հերետիկոս մը հաւանեցընելու կամ դարձնելու համար, եւ հրաման առնլու համար ժամանակն երկարել կարելի չըլլայ²: — Իսկ

Բ. Նոյն գրոց կողմսնէ, կը պահանջուի որ

1. Ընթերցման առարկան ըլլայ « գիրք »: Գէրգէր սելով կ'իմացուին ամէն հրատարակութիւնք այնչափ ծաւալով, որ սովորական խօսակցութեան մէջ գէրգէր գաղափարին մէջ կ'ենթադրուին: Նաեւ մեծ թղթակազմներն ընդ գիրս կը հաշուին. ինչու որ ստանկապէս գէրգէր կրնան անուանուիլ: Ըստ կարծեաց Տասգոյն հեղինակաց 10 թղթի ծաւալ մը կը բաւէր ըստ մտաց օրինաց³ գէրգէր գաղափարին: Իսկ եթէ օրէնսդիրը նաեւ ուրիշ հրատարակութեանց վրայ ալ կ'ուզէ տարածել արգելքը, պէտք է զայն առանձին յիշել, ըստ սկզբանս՝ « Ինչ որ չ'այսպէս, համարելու է թէ չ'էր »: Ուստի միայն յատկապէս գիրքն այս կանոնիս տակ կ'իյնայ: Իսկ թէ գիրքը տպուած թէ ձեռագիր է, ամենեւին տարբերութիւն մը չ'ընէր: Հատորի մը մէջ ամբողջուած ձեռագիր կամ տպուած թղթերու քանակութիւն մը՝ ոչ միայն մարդկային սովորական խօսակցութեան մէջ գէրգէր կը կոչուի, այլ նաեւ եկեղեցական լեզուի մէջ. այսպէս, Մաշտոցին մէջ կ'ըսուի՝ Գիրք մկրտելոց, զբոյժելոց, եւ այլն: Եւ միթէ տպագրութեան գիւտէն յառաջ ամենեւին գիրք չկար: Եւ իրօք ալ, ինչ տարբերութիւն կայ արդեօք տպեալ եւ ձեռագիր գրքի մը մէջ, եթէ այս գրոց արգելման վախճանը գիտենք: Միթէ ձեռագիր գիրք մը, որովհետեւ այսօրեան օրս ցանցառ կ'երեւայ, այնու նուազ

¹ Կուրի-Պալլ անդ, « Եւրոպէի քահանայադէպիտէ », կ'ըսէ:
² Ս. Լիդ. Այր արտ. Հասուած ԺԹ. ԳԼ. Բ. Թ. 57:
³ Հմմտ. Սուար. 24. 7. 3: Ս. Լիդ. Ա. Յաւ. Գ. ԳԼ. 5. § 7:
⁴ Quod non expressit, noluisse censendum est.

վնասակար է քան զտպեալն, եթէ հերետիկոսէ մը գրուած ըլլայ եւ հերետիկոսութիւն պաշտպանէ: Ուստի անբժուներն է, թէ ինչպէս քանի մ'առտուածաբանք գէրգէր բառով կ'ուզեն միայն տպեալն իմանալ¹:

Իսկ փոքրագիր հերետիկոսական գրուածները, ճառերն ընթեռնուլու բանադրանօք արգելեալ չէ. վասն զի սովորաբար զասոնք գէրգէր չենք կոչեր: Անոր համար ազատ է ի բանադրանաց՝ կարգալ, պահել եւ տպել սակաւաթերթ թղթակազմ տետրներ, համառօտագրութիւններ, օրագիրներ, լրագիրներ, պարբերական թերթեր, եւ այլն. թէեւ այսպիսեաց ընթերցումն հաւատոյ եւ բարոյից յաճախ առաւել վնասակար կրնայ ըլլալ, եւ ինչպէս փորձը կը ցուցնէ եւ արգեամք իսկ է, քան հերետիկոսութիւն պաշտպանող չար գիրք մը: Անոր համար ամենեւին առանց երկբայութեան է թէ այսպիսի գրուածներ կարգալն ու պահելը, խոտորելու վտանգին պատճառաւ, իբրեւ հակառակ բնական օրինաց՝ միշտ ծանր մեղք է²: Եւ քանի՛ քանի խոտորվանհարք յայսմ մասին զանցառութեան մեղաց պարտապան կ'ըլլան, իրենց խոտորվանորդիքն ազատամիտ լրագիրներ, բարոյից վնասակար զբքեր կարգալէն ետ կենալու չտաիպելով, եւ եթէ յանձն չառնուն այդ պահանջումն, արձակումն իրենց չզլանալով: Այն լրագիրներն որ կրօնի վրայ կը խօսին, եւ հերետիկոսներէն հերետիկոսութիւնը պաշտպանելու համար գրուած են, եթէ քովէքով բերուին եւ կազմուին, սովորական անուամբ գէրգէր կը կոչուին. եւ անոր համար այսպիսի քահանայ ընթերցումն այս կանոնիս բանադրանացը տակ կ'իյնայ:

Եթէ գրքի մ'ընթերցումը բանադրանօք արգելուած է, նոյնին ամէն մէկ մասն ընթեռնուլն ալ արգելուած է. նաեւ այն մասունքն՝ որոնք վնասակար վարդապետութիւն մ'իրօք չեն բովանդակեր. վասն

¹ Տե՛լ Ա. էջ. Ա. էջ 356. Թ. 568: Ս. Լիդ. Է. Թ. 293: Բէր. էջ 38, Թ. 81:
² Բատ. Թ. 134: Ռիեդի, էջ 28, Դասն. 28, Եւ. սյն:

զե գիւրքն յամենայն մատենս իւր բարոյական ամբողջ մը կը կազմէ: Սակայն զբքի մ'այն մասն, կամ բաղմանհատոր գործքի մ'այն հատորն, որ բանադրանաց պատճառ եղաւ, եթէ ի բաց հեռացուի, այն ատեն մնացած մասն ընթեռնուլն օրինաւոր է. որովհետեւ այսպիսի գիւրք մ'այնուհետեւ չ'ըլլար նոյն գիւրքը, որ իբրեւ միասակար՝ բանադրանաց տակ դրուեցաւ¹:

2. Գրոյց հեղինակն ըլլայ « ուրացող կամ հերետիկոս » եւս առաւել հերետիկոսացեալ Թէ սրոնք են ուրացողք եւ հերետիկոսք զիրք² տեսանք: Ուստի այսպիսեաց հերետիկոսութիւն պաշտպանող զբքերն ընթեռնուլն ընդ բանադրանօք կ'արգելուի: Նկատմամբ ժամանակի հեղինակն գրոյց, երկրորդական բան մըն է թէ ուրացողը կամ հերետիկոսը հնադոյն դարօց կը վերաբերի թէ նորագոյն: Սակայն ի բաց առնուած են ըստ ընդհանուր կարծեաց՝ Տերտուղիանոս եւ Որիգենէս, որոնց զբքերն կամ սովորութեան օրինօք, կամ որովհետեւ անոնց ընթերցմանէն ալ ամենեւին վտանգ մը չկայ, օրինաւոր է ընթեռնուլ³: Իսկ նկատմամբ զբքերն գրուելու ժամանակն, կը պահանջուի որ այն ատեն գրուած եւ հրատարակուած ըլլայ, երբ հեղինակն արդէն իբրեւ ուրացող կամ հերետիկոս ճանչցուած էր: Ուստի ուրացութենէ կամ հերետիկոսութենէ յառաջ գրուած գիւրքն՝ ուրացողը կամ հերետիկոսի մը գործք չէ: Անանուն մատենանք՝ որ ի պաշտօնէ հերետիկոսութիւն կը պաշտպանեն, հերետիկոսի գրուած կը համարուին⁴:

Հոս խնդիր կը յուզուի, թէ արդեօք այն զբքին ընթերցումն ալ բանադրանօք արգելեալ է, որ հերետիկոսէ մը գրուած չէ, այլ անոր « հառաւադրող, ընդունող, օգնող եւ պաշտպանող » անձէ մը: Բազումք, ի մէջ այլոց նաեւ Աւանցիների⁵ խնդիրը կը

¹ Սուար. Թ. 9 : Սանք. Թ. 30. 35 : Ուիլի, էջ 26, Թ. 36 : Ս. Լիդ. Է. 283 :
² Ա. Կանոն, 1 եւ 2 :
³ Չորի. 43, Թ. 73 : Ս. Լիդ. Է. 282 : Սբաւինի, Բ. 830 :
⁴ Ս. Լիդ. Այբ Գրք. Հաս. ԺԹ. ԳԼ. Բ. Թ. 56 :
⁵ Ծան. 4 :

ժխտեն. վասն զի, կ'ըսեն, բուն հերետիկոսաց խումբն իրենց հաւատացողներէն, ընդունողներէն, եւ այլն, Ա. կանոնին մէջ յայտնապէս կը զանազանուի, այնպէս որ անձուկ մտօք առեալ՝ միայն այն առջն խմբին վերաբերողներն « հերետիկոսք » կրնան անուանուիլ, եւ ոչ՝ որոնք որ զանոնք կ'ընդունին, կը պաշտպանեն, եւ այլն, ցորչափ որ հերետիկոսութիւն մը չեն յայտներ, եւ այնու իրենք զիրենք իբրեւ հերետիկոս չեն ընծայեցներ. եւ ընդհանրապէս դժպհի նիւթի մը մէջ հետեւելու ենք սկզբանս՝ « Գժպհին ամբողջութեամբ »¹ : Բնականապէս, կ'ըսեն, իրն այլազգ կ'ըլլար, եթէ ուրիշ կողմանէ հաստատուն ըլլայ, թէ այսպիսիք իրական հերետիկոս են, կամ՝ եթէ հերետիկոսական մտքութիւնը պաշտպանելն իրենց զբքերուն մէջ այնպիսի ըլլայ, որ այս զբքերն իրենց հեղինակը նովին գործով իբրեւ ուրացեալ կամ հերետիկոս ցուցնեն² : Ասոր հակառակը կը պաշտպանէ Փր. Հայնէր³. « Եւ որովհետեւ, կ'ըսէ, ընդգիծակաց կարծիքն հաւանական է, կրնայ նաեւ անոր ետեւէն երթըցուիլ » :

3. Գիւրքն « հերետիկոսութեան պաշտպան » ըլլայ : Ուստի ոչ թէ ուրացողը կամ հերետիկոսի մ'ամէն զբքերն այս կանոնիւս կ'արգելուին. հապա այնպիսիներն՝ որոնց մէջ հերետիկոսութիւնը կը պաշտպանուի : Գիւրքն ոչ միայն հերետիկոսութիւն մը պիտի բովանդակէ, այլ զայն պիտի պաշտպանէ. այսինքն՝ հեղինակը պիտի ջանայ դիտմամբ եւ իբր ըստ կարի հերետիկոսութիւնը հաստատել, եւ այնու կաթողիկէ վարդապետութեան դէմ դնել, այնպէս որ այդ պաշտպանելն եւ անկէ յառաջ եկած կաթողիկէ վարդապետութեան ընդգիծադրութիւնը զբքին նկարագիրը պիտի կազմեն : Անոր համար չի կրնար ըսուիլ զբքի մը նկատմամբ թէ հերետիկոսութիւն կը պաշտպանէ, երբ մտքութիւն մը պարզապէս յառաջ կը բերէ, եւ միայն համառօտիւ եւ ի հարեւանցի իմն⁴ նոյնը ցուցնելու

¹ Odiosa sunt restringenda.
² Աւանց. էջ 62, Թ. 131, եւ այլն :
³ Ե. Գրք. էջ 67 :
⁴ Կուրի-Պալ. Բ. 972 : Ֆորմիզ. եւ այլն :

կը ձեռնարկէ: Հապա կը պահանջուի, որ նաեւ ընդ-
դէմ ուղղափառ վարդապետութեան պարսպապահէ,
կամ՝ եթէ այսպէս ըսել կարելի է, վիճական (pole-
mique) ձեւով գրուած ըլլայ, հաւասարապէս նոյն
մնալով՝ եթէ հեղինակն արդէն իբրեւ ուրացող կամ
հերետիկոս ճանչցուած ըլլայ, եւ կամ գիրքն հրատա-
րակէն ետեւ իբրեւ այնպիսի ինք զինք ընծայեցընէ:

2.

Այնտնիս Բ. մասին մէջ կ'արգելուի ընդ բանա-
դրանօք՝ այնպիսի գրոց ընթերցումն, որոնք սրեւէ
հեղինակէ ալ գրուած ըլլան, սակայն Առաքելական
Խորհով յանուանէ արգելեալ են: Ուստի, այս բանա-
դրանաց տակ իյնալու համար չի պահանջուիր, որ
հեղինակն ուրացող կամ հերետիկոս ըլլայ, հապա
յայտնապէս կ'ըսուի՝ «նրեւիցի հեղինակիս», ուստի բո-
ւրովին նոյն է՝ թէ գրողը կաթողիկէական մըն է կամ
բողոքական կամ անաստուած. ինչու որ հեղինակին
որպիսութեան վրայ խնդիր չկայ: Որպէս զի այսպիսի
գրքերն ընթերցողները բանադրանաց տակ իյնան, կը
պահանջուի՝

Ա. Թեթերցողիս կողմանէ, բաց ի վերն (Ա.
Մաս, Ա.) ըսուած առաջին (1.) եւ երրորդ (3.) պայ-
մաններէն, նաեւ գրքի մը Առաքելական Թղթով յա-
նուանէ արգելեալ ըլլալուն եւ առանձինն վերա-
պահեալ բանադրանաց պատժոյն գիտութիւնը: Իսկ
Բ. Գրքիս կողմանէ, կը պահանջուի, որ գիրքն՝

1. «Յանոսանէ» արգելեալ ըլլայ. այսինքն՝
գրքին արգելումը գրքին անունն ի մէջ բերելով ըլլայ,
այնպէս որ գրքին նկատմամբ ալ ամենեւին տարակոյս
մը չկարենայ ելլել¹: Անոր համար չի բանադրուիր այն
գրոց ընթերցումն, որոնք ընդհանուր անուամբ կ'ար-
գելուին. այսպէս՝ «Վարդելունք այն ամէն գրքերն»
որոնք Ա. Ա. Եպիսկոպոսին կարգընկէցութեան վճռոյն

¹ Կուրի-Պալլ. Բ. 972: Բատ. 63, Թ. 132: Չորի. 42,
Թ. 72:

դէմ ի ըյս ընծայուեցան կամ պիտի ընծայուին»,
Ուստի, իւրաքանչիւր գրոց անունն առանձինն պիտի
սրուի, որով այս ինչ գիրքն ուրիշէ մը կը զատուի, եւ
նոյնն իբրեւ այս ինչ որոշեալ գիրք կը ճանչցուի:

2. Այս արգելումն «Առաքելական Թղթով»
ըլլայ, կամ այնպիսի Թղթով, որ ուղղակի Հռոմայ
Քահանայապետէն կը տրուի¹: Առաքելական Թուղթը
կրնայ համառօտագրի, կոնդակի, շրջաբերականի ձեւ-
ով ըլլալ, կամ ուրիշ արտաքին կերպարանաց տակ,
ինչպէս ընդ ձեւովս՝ Լրո-Բեռմբ Առաքելական Իշխանո-
ւթեան Մերոյ, կամ՝ Առաքելական Իշխանութեամբ. ա-
մէն այսպիսի Թուղթը՝ Առաքելական Խորհի կը կո-
չուին: Ուստի Առաքելական Թուղթ չեն Ս. Ժողովոյ
Քննութեան կամ Ընդհանուր Ժողովոյ վաւերական
վճիռներն²: Իսկ Առաքելական Թղթով որոշեալ ժա-
մանակն նկատմամբ՝ յայտնի է թէ ոչ միայն Սահմա-
նադրութեանս երեւելէն ետեւ արգելուածներն ու
արգելուելիքներն այս բանադրանաց տակ են, հապա
նաեւ յառաջքան զ1869, երբ Առաք. Արհ. Սահմա-
նադրութիւն հրատարակեցաւ, Առաքելական Թղթով
յակննէ յանուանէ արգելեալ գրքերն ալ այս բանա-
դրանօք արգելուած են: Ասան զի այս Սահմանադրու-
թեանս հրատարակման ժամանակն արդէն Առաքելա-
կան Թղթով գիրք արգելելու սովորութիւնը կար. անոր
համար Սահմանադրութեանս մէջ ալ առանց սրոշեալ
ժամանակ մը յիշելու ընդհանուր կերպով կ'ըսուի՝
«արգելեալ գրքերն» ընթերցողք: Ուստի, այս կար-
գադրութիւնը նաեւ արդէն տրուած Առաքելական
Թղթերու վրայ ալ կը տարածուի, կ'ենթադրուի՝
եթէ բանադրանաց տակ իյնալու համար պահան-
ջեալք գտնուին³:

Առաքելական Աթուէն արգելուած գրքերէն
ոմանք Քահանայապետին վերապահեալ բանադրանօք
կ'արգելուին, ոմանք առանց ինչ վերապահութեան,

¹ Միւլլեր. Բար. Առք. Բ. § 11. 3:
² Պոնաչ. վ. 1. 9. 15. Մ. 1. Թ. 19:
³ Աւանց. էջ 15: Կուրի-Պալլ. անդ: Չորի, 44, Թ. 73:

ումանք ալ առանց բանադրանայ: Արդ, առանց երկ-
բայութեան է, թէ միայն Աստուծոյ թղթով մը՝
ընդ պատժովք ասանցնէ կերպով Քահանայապետին վե-
րապահէալ Բանադրանայ, յանուէէ արգելեալ գրքերն
այս կանոնիս տակ կ'իշխան, եւ ոչ այլք: Ասիկայ կը
հետեւի Սահմանադրութեանս վախճանէն, որ դատա-
կնիքները սահմանադրել կ'ուզէ. կը հետեւի պատժոց
մեծութենէն, որ առանց նոր առանձինն քահանայա-
պետական կարգադրութեան մը, առջի մեղմագոյն
պատժոց տեղ չի կրնար փոխանակուիլ: Իսկ ուրիշ
ամէն դատակնիքք, ինչպէս՝ կղերիկոսաց համար
տրուած կախակայութիւնք՝ որ յառաջագոյն արգե-
լեալ գրոց ընթերցման վրայ գրուած էին, մեր Աստու-
ծոց Սահմանադրութեամբ ջնջուած են. այնպէս
որ այսուհետեւ կամ միայն Քահանայապետին առան-
ձինն կերպով վերապահեալ բանադրանք կայ, կամ
բնաւ ամենեւին դատակնիք մը չկայ գրքի մ' ընթերց-
ման վրայ. ըստ որում՝ գիրք մը կամ քահանայապե-
տական թղթով յանուանէ արգելեալ էր, եւ ըն-
թերցումն ալ առանձինն կերպով Քահանայապետին
վերապահեալ բանադրանայ տակ ձգուած, եւ կամ ու-
րիշ կերպով մը, ուրիշ դատակնիքով մ' արգելեալ էր:

Բաց ի գրոց այս երկու տեսակէն՝ չկայ ուրիշ մը,
զոր ընթեռնուլը, տպելը, եւ այլն, այսօրուան օրս
բանադրանաց տակ ըլլայ: Միայն կրնայ յիշատա-
կուիլ հոս՝ առանց Վիճակաւորին հրամանին Ս.
Գիրք տպելու արգելքն, որուն զանցառութիւնն
ըստ Տրիգլենտեան ժողովոյ մէկու մը չվերապահեալ
բանադրանաց տակ կ'իշխայ, որուն վրայ խօսելու յե-
տոյ առիթ կ'ունենանք: Ուրիշ ամէն գրքերն, որ
այս գրոց երկու տեսակաց տակ չեն կրնար բովան-
դակուիլ, նոյն իսկ Քննութեան Ս. ժողովոյն ար-
գելածներն, այսուհետեւ ամենեւին դատակնիք մը՝
ընթերցողներու, պահողներու, եւ այլն, համար
չունին: Այսպէս Սահմանադրութիւնս այս նիւ-
թեան վրայ լոյս ու պայծառութիւն ծագեց: Իսկ
թէ նկատամք հիշոյ՝ զոր կը գործեն ընդհանրապէս

¹ Չուլի. անդ: Ռիեդի, էջ 30, Ծ. 32: Բատ. էջ 63,
Թ. 132:

արգելեալ գրքեր, լրագիրներ, եւ այլն առանց իշխա-
նութեան ընթերցողները, եւ ոչ մի ինչ փոխուած է,
ինքնին իսկ յայտնի է:

3.

Սանտինի Գ. մասին մէջ այն բանադրանայ տակ
կը ձգուին անոնք՝ որ կամ յառաջելոց եւ ի հերետի-
կոսաց զրեալ հերետիկոսութեան պաշտպան, եւ կամ
Առաքելական թղթով յանուանէ արգելեալ գրքերը
1. «Կը պահեն, 2. չը տպեն, եւ 3. Որով եւ իցի
օրինակուր կը պաշտպանեն»:

1. «Պահող» ըսելով՝ ըստ ընդհանուր կարծեաց
բարոյսագիտաց եւ իրաւաբանից, կ'իմացուին այն ամէնքն՝
որ սեպհականութեան կամ ստացման տիտղոսով կամ
սեպհական կամ օտարին տան մէջ, յանուն իւրեանց
կամ այլոց, բարի կամ չար գիտաւորութեամբ, բանա-
դրանօք արգելեալ վերոյիշեալ գրքերն ամբողջ, կամ
անոնց մէկ մասը գիտութեամբ, այն է՝ գիտնալով
նոյն գրոց արգելեալ ըլլալն ու վրան գրուած բանա-
դրանքը, առ ժամանակ մի քովերնին կը պահեն, փո-
խանակ նոյները բնաջինջ ընելու, կամ Վիճակաւորին՝
եւ կամ արգելեալ գրքեր կարգաւոր իշխանութիւն ու-
նեցողին տալու²: Վերջինս այն ատեն միայն օրինաւոր
է, երբ իշխանութիւն ունեցողին տալը միացեալ ըլլայ
պայմանով՝ որ ետ առնուլ մը տուողին կողմանէ ան
ատեն միայն պիտի ըլլայ կամ կրնայ ըլլալ, երբ ինքն
ալ արգելեալ գրքեր կարգաւոր կամ պահելու օրինաւոր
իշխանութիւն ընդունի³: Եթէ գիրքը բազմահատոր է,
իսկ մըլրութիւնն՝ որ գրոյն արգելման պատճառ եղած
է, իբրեւ յինքեան ամփոփեալ միայն մէկ հատորին մէջ
կը բովանդակուի, այն ատեն բնականապէս կը բաւէ
այն մէկ հատորը բնաջինջ ընել կամ իշխանութիւն
ունեցողին տալ⁴: Վերն ըսինք որոնք առ ժամանակ մի քո-

¹ Յանկ. Տրիդ. կան. 10: Սալմադ. ժ. Գ. 71:
² Քրուա, Զ. 336: Քորով. էջ 32: Չուլի, էջ 42, Թ. 72:
³ Ս. Լիդ. Է. 298:
⁴ Ս. Լիդ. Է. 283: Քրուա, Է. 330:

վերինն կը պահեն: Ասով իմանալու է՝ ըստ մեկնութեան իրաւագիտաց, երկու մինչեւ երեք օրուան ժամանակի միջոցը, կամ նոյն իսկ քիչ մ'աւելի՝ երբ մէկը միտքը դրած է գիբքն որչափ կարելի է շուտով դուրս տալ եւ միայն առ այս գիպող առթի մը կը սպասէ. կամ՝ երբ արգելեալ գրքեր կարգալու իշխանութիւնն արգէն խնդրած է եւ զայրտեսներ կը սպասէ¹: Իսկ եթէ մէկն ի սկզբան դիտաւորութիւն ունենայ գիբքը դուրս չտալ, բայց յետոյ իւր այս դիտաւորութիւնը փոխէ, այն ատեն՝ ըստ ընդհանուր կարծեաց աստուածաբանից՝ բանագրանաց տակ չ'իյնար, թէ եւ ի ծանր մեղաց չարդարանայ²:

Գահող՝ հետեւեալ դիպաց մէջ ազատ են բանագրանքէ. 1. Եթէ բանագրանք արգելեալ գրքերը տալը կամ բնաջինջ ընելն առանց ժամանակաւոր մեծ վնասու կամ վտանգի չի կրնար ըլլալ. վասն զի Եկեղեցւոյ օրէնքները ծանր վնասու չեն պարտուորեր³: 2. Եթէ նոյն գրքերը տալ կամ բնաջինջ ընել մտքերնին հաստատութեամբ կը դնեն, սակայն անփութութեամբ կամ անտարբերութեամբ առ ժամանակ մի կը յապաղեն. վասն զի այս դէպքիս մէջ յամուութիւն կը պակտի⁴: 3. Եթէ բարեմտութեամբ կը կարծեն թէ դատակնքօք արգելեալ գրոց ընթերցումը միայն բանագրանաց տակ է, եւ ոչ պահելը⁵:

2. «Ծղրոյ» են անոնք՝ որ նոյն գրոց տպագրութեան իբրեւ բարոյական կամ նիւթական պատճառաւորակի գործակից եւ օգնական կ'ըլլան⁶: Ըստ այսմ, բանագրանացս տակ կ'իյնան, բնականապէս ենթադրելով որ պահանջեալ ամէն պայմանները կան,

Ա. Գրքին նշանակն իբրեւ առաջին դրօշ, իբրեւ բուն պատճառ բովանդակ գործոյն⁷:

Բ. Հրատարակիչն այսինքն՝ գիբքն ի ըյս ընծայ-

¹ Սանք. թ. 56:

² Գրուա. թ. 348:

³ Բէր. էջ 50, թ. 83:

⁴ Նոյն, անդ:

⁵ Նոյն, անդ:

⁶ Սանք. թ. 57: Չորի, էջ 43, թ. 72:

⁷ Ռիեդի, թ. 27, կ'ըսէ. «Եթէ իւր խնամովը կը տպուի

գիբքը»:

եւր չօգն ու բովանդակ առաջնորդութիւնն յանձն առնողը:

Գ. Տպարանադէտն, այսինքն՝ մամուլին տէրը, որ իբրեւ տպող՝ տպագրութեան գործքն յանձն կ'առնու եւ կը կառավարէ, թէ եւ նիւթապէս գործակից չ'ըլլայ:

Դ. Նիւթական գործակցութեամբ՝ մամուլին քով տպագրութեան օգնողներն ամէնքը: Ասոնց կարգէն են՝ Գրաւարը, Իւրաքան, Բոնիւր Բրըդը¹, Իւրաքանի Գործողը. միով բանիւ՝ ուղղակի կամ մերձաւոր գործակցութեամբ տպագրութեան օգնողներն ամէնքը²:

Իսկ միայն անուղղակի գործակիցք, ինչպէս՝ Բեյնաւաճառը, սրբաբորոն, եւ այլն, այս բանագրանաց տակ չեն իյնար³. վասն զի Գրող զաղափարին մէջ չեն կրնար ենթադրուիլ: Բայց սրբագրողք իբրեւ «ընթերցող», կ'իյնան բանագրանացս տակ. վասն զի առանց կարգալու չի կրնար գիբք մը սրբագրուիլ⁴:

3. Արով եւ իցի օրինակաւ «պաշտպանողք» են ամէնքն՝ որ կամ վերոյիշեալ արգելեալ գրքերուն՝ իբրեւ նոյնպիսեաց համար, կամ անոնց մէջ բովանդակուած վարդապետութեանց համար կը կուսին, թէ եւ այս պաշտպանութիւնն ըլլայ Ա. Բարոյական կամ վարդապետական, եւ կամ Բ. Նիւթական եւ իբր մարմնական:

Ա. Բարոյապէս կը պաշտպանէ մէկը գիբք մը, երբ անոր մէջ բովանդակուած վնասակար վարդապետութիւնը գրով կամ բերանով, հրապարակաւ կամ ի ծածուկ կը դովէ, յարգելի կը ցուցնէ, կը ջանայ

¹ Ռիեդի, անդ:

² Կուրի-Պալլ. Բ. 972, կ'ըսէ «Կուրի-Վրետոնի, աստ ի Ծան. կ'ըսէ. Նկատմամբ ստորակարգեալ սատարաց կամ գործակցաց, այս դատակնքի տակ իյնալու համար, բաց ի պահանջեալ դիտութենէն, պէտք է նաեւ որոշել ի պարագայից՝ թէ արդեօք ասոնք այս ինչ դիպաց մէջ կերպական թէ նիւթական գործակիցք են. եթէ վերջինն է, վասն արդար եւ պատշաճական պատճառաց՝ գործակցութեան մեղքէն (յաւել, կ'ըսէ Պալլ. Գր. Գրքէն) կ'արգարանան արդեօք թէ ոչ»:

³ Սանք. անդ: Սուար. վասն հաւ. 21, 24:

⁴ Ռիեդի, էջ 27. Ծ. 25:

Հաւանեցընել թէ այդ գրքերն աղէկ են, եւ չեն ար-
ժանի արգելուելու. եւ կամ կը ճգնի մէջը բովանդա-
կուած խոտորնակ վարդապետութիւնը հաստատել եւ
ամէն բժէ ազատել¹, եւ կամ ուրիշ կերպով մը կը
պաշտպանէ²: Նաեւ գրուածին իմաստութեան եւ ազ-
նուութեան արուած գովութիւնն ալ՝ պաշտպանել
գաղափարին մէջ կը բովանդակուի, եթէ այդ գովու-
թիւնը գրքին նկատմամբ հաճութիւն, հաւանութիւն
մը բովանդակէ³: Իսկ

Բ. Նյիւթապէս կը պաշտպանէ մէկը գիրք մը,
երբ բռնութեամբ կամ նենդութեամբ կամ այլ որով
եւ է կերպով գրքին ջնջումն կամ Առաջնորդին տրուե-
լը կ'արգելու⁴:

Իրբեւ վերջ Բ. կանոնիս՝ կը յիշեցընենք իշխա-
նութիւնն, զոր Եպիսկոպոսունք Ապաշխարութեան
Ս. Ժողովէն երեք տարւան համար կ'ընդունին, եւ զոր
նաեւ իրենց հպատակ խոստովանահարց կրնան յանձն-
արարել, որով կրնան արձակել՝ «արգելեալ գրքեր
պահելով եւ կարդալով յանձն ձգուած դատակնիք-
ներէն, դնելով վրանին պատշաճական փրկարար
ապաշխարանք եւ խիստ պարտաւորութիւն՝ անյա-
պաղ, եւ եթէ հնար է՝ յառաջ քան զարձակումն,
եւ տալու արգելեալ գրքերն, եթէ խոստովանորդին
քովն ունի»⁵:

Գ.

«Հերձուածողք եւ անոնք՝ որ ժամանա-
կին Հռոմէական Քահանայապետին հնա-
զանդութենէն յամստութեամբ կը խուսնն
կամ կը զատուին»⁶:

Չկայ գործ մը՝ որ Աստուծոյ ու Եկեղեցւոյ
առջեւ այնպէս առելի, եւ Քրիստոսի Տեառն մերոյ
Եկեղեցին հաստատած ժամանակ դիտած վախճանին

¹ Հուկոն, վառն հաւ. վ. 21. Թ. 94:
² Սուար. անդ. Ռիէդի. էջ 27. Թ. 37. Ծ. 23:
³ Կուրի-Պալլ. Բ. 972:
⁴ Ս. Լիդ. Է. 285: Բրուա, Է. 358:
⁵ Վէրքիոյ, անդ. Թ. 6:
⁶ Ի կանդակէն Ընթերց. 1: — Տես էջ 7:

այնպէս հակառակ ըլլայ, ինչպէս հերձուածը: Այս է
այն անողորմ սիրան, այս է այն անգութ ձեռքն՝ որ
Քրիստոսի Տեառն մերոյ առանց կարանի հանդերձը,
Եկեղեցւոյ միութիւնը, կը ցեղու կը բաժանէ: Այս
պատճառաւ ալ Ս. Հարք միշտ անհանդուրժող եղած
են այս ծանր ոճրոյն դէմ, եւ Եկեղեցին ալ ծանր
պատուհասիւք նոյն յանցանաց առաջն առնուլ ճգնած
է եւ կը ճգնի:

Կանոնս, ինչպէս առջի հայեցուածին կ'երեւայ,
երկու մաս կը բաժնուի: Ա. Մասին մէջ ի մէջ կը բե-
րուին «հերձուածողք» ըստ յատուկ նշանակութեան
բառին: Իսկ Բ. մասին մէջ անոնք՝ որ առ ժամն իշխող
Քահանայապետին հնազանդութիւնն իւր զլանան:

1.

Հերձուածը կը կայանայ՝ կ'ընդհատուի Եկեղեցւոյ միու-
թեան բռնութեամբ իրայ՝ Եկեղեցւոյ միութիւնն երկու
կէտ ունի: 1. Անդամոց իրարու հետ ունեցած կապը.
եւ 2. Անդամոց Հռոմայ Եպիսկոպոսին, Եկեղեցւոյ
տեսանելի Գլխոյն, Քահանայապետին հետ ունեցած
կապը: Ըստ այսմ, Եկեղեցւոյ միութենէն բաժնուին
երկու կերպով կրնայ ըլլալ². կամ՝ 1. Միայն Գլխէն,
զոր օր. երբ Եպիսկոպոսունք առանց Քահանայապետին
Ընդհանուր Ժողով գումարեն. կամ՝ 2. երկուսն ալ ի
Տեսնէն, ուստի թէ Գլխէն թէ անդամներէն:

Արդ, կանոնիս Ա. մասին մէջ կը բովանդակուին՝
կարգաբարձ կամ կերպաբարձ «հերձուածողք» այսինքն
անոնք՝ որ բաժնուած են ոչ միայն ի միութենէ Եկե-
ղեցւոյ, որ մարմնայ անդամոցն իրենց տեսանելի Գլխոյն
հետ միութեան վրայ կայացած է, ուստի ոչ միայն
Հռոմայ Քահանայապետին պարտական եղած հնա-
զանդութենէն յամստութեամբ եւ կը կենան, հապա
նաեւ մարմնոյն անդամներէն ալ իրենք զիրենք բաժ-
նած են³: Վերջին կէտն՝ ամբողջական բաժանումն

¹ Ռայքֆֆ. Ե. 8. 2:
² Ս. Թովմ. 2. Ա. 2. Ա. Խ. 39. Ա. 1:
³ Լուկ. անդ. Ի. 35:

նաեւ ի մարմնոյ Եկեղեցւոյ, հերձուածին ըր-մն է. առ ալ հասարեալ հեքյո-ած (schisma perfectum) կ'ըլլայ՝ Հռոմէական Եկեղեցւոյ միութենէն բաժանեալ նոր պառնդ մը, (աղբային) եկեղեցի մը հաստատելով, կամ արդէն հաստատելոյ մը կամ նոյնին տածիչ եղող անձանց յարելով: Ուստի, «հէրոնաւոնոյր», ըստ յատուկ մտաց անոնք են, որ Քահանայապետէն անկախ եկեղեցական իշխանութիւն մ'անձանց կը սեպահանեն, միութեան կենդրոնէն բաժանեալ նոր եկեղեցիներ կը հաստատեն, ծածուկ կամ հրապարակաւ չարածողութիւններ կը դուժարեն, եկեղեցական իրաց վրայ արամադրութիւններ կ'ընեն, իբրեւ թէ անկախ եկեղեցական իշխանութիւն մ'ունենային¹: Հերձուածողաց այս դասուն կը վերաբերին ոչ միայն անոնք՝ որոնք յունական, ռուսական երկիրներու մէջ արդէն ի վաղուց Հռոմէական Եկեղեցւոյ միութենէն բաժանեալ յունական հերձուածական, եւ կամ էջմիածնական եկեղեցւոյ կը յարին, հապա նաեւ անոնք՝ որ Հռոմէական Աթոռէն անկախ նոր կրօնական ընկերութիւն մը կը հաստատեն, ինչպէս հին-կաթողիկէականք, արեւելեան-կաթողիկէայք, որոնք թէ Յիսուսի Քրիստոսի խորհրդական մարմնէն՝ Եկեղեցիէն, եւ թէ Եկեղեցւոյ Գլխէն, Հռոմոյ Քահանայապետէն բաժանեալ են: Հերձուածողաց այս Ա. դասը չի կրնար ընդ երկար հերետիկոսութենէ ազատ մնալ. վասն զի Քահանայապետին՝ իբրեւ այնպիսոյ՝ անհնազանդութիւնը բնականապէս հետը կը բերէ նոյն իսկ Առաքելական Աթոռոյն դէմ ապստամբութիւն մը, ինչպէս ցաւալի փորձը միշտ ցուցած է: Անոր համար ամէն ժամանակ ստուգուած է Ս. Յերոնիմոսի խօսքը. «Չկայ հերձուած, որ հերետիկոսութիւն մը չձնանի»,²: Եւ այս պատճառաւ իսկ կրնան այսպիսիք թէ հերձուածի եւ թէ հերետիկոսութեան կրկին բանադրանաց տակ իյնալ:

¹ Աւանց. Ծրան. 5: Չոլլի. էջ 49, Թ. 75: Ռիեդի, էջ 31, Թ. 43: Բատ. էջ 74, Թ. 139, եւ այլն:
² Nullum schisma est, quod non sibi aliquam haeresim confingat. Տես Ս. Թովմ. 2. 2. Խ. 39. Ա. 1. Գ. եւ Ծ. 3:

2.

Բաց ի կատարեալ հերձուածողաց՝ կը բովանդակէ կանոնս ուրիշ ապստամբաց խումբ մ'ալ, որոնք թէեւ արտաքուստ Եկեղեցւոյ մարմնէն բաժանեալ չեն, եւ ոչ Եկեղեցիէն դուրս, սակայն աստ եւ այժմ իշխող Քահանայապետին հնազանդութիւն կը զանան՝ անոր հնազանդելու յամառութեամբ ընդդիմանալով¹, եւ այդ իսկ է ահապար հեքյո-ածը: Որպէս զի ասիկայ իրական հերձուած մ'ըլլայ, որուն վրայ բանադրանքս կը դրուի, կը պահանջուի՝ որ

1. Այդ յանցաւորք «յամառութեամբ», յանաստութեան ընդդէմ Քահանայապետի պիտղ կենան, յարատեւեն. այսինքն՝ գիտութեամբ եւ կամօք Եկեղեցւոյ Գլխոյն՝ իբրեւ Եկեղեցւոյ Գլխոյ՝ հնազանդութիւն զընան, իր հրամանաց անսպ չուղեն, անոր իբրեւ Քահանայապետ ունեցած գերազոյն եւ աստուածային իշխանութիւնը ճանչնալ չուղելով: Ուստի, պարզ անհնազանդութիւնը բանադրանաց տակ չ'իյնար. հապա այն անհնազանդութիւնն՝ որ ժամանակին Հռոմոյ Եպիսկոպոսին իբրեւ Եկեղեցւոյ Գլխոյն իշխանութիւնը չընդունիլ մ'ալ յիւրեան բովանդակէ: Այսպէս, ով որ պահոց կամ օր մը տօնելու պատուէրը՝ զոր Քահանայապետը պատուիրած կամ դրած է, չի պահեր, թէեւ ծանր մեղանչէ՝ բանադրանաց տակ չ'իյնար: Ընդ հակառակն կ'իյնար բանադրանաց տակ, եթէ նոյն իսկ օրինաց հնազանդութիւն զընար՝ համարելով թէ օրէնքները թէեւ Քահանայապետէն դուրս ըլլան, սակայն իբրեւ նոյնպիսի ալ՝ պարտաւորիչ չեն: Ար պահանջուի՝ որ

2. Հնազանդութիւն զընանն արդէմօք՝ կատարուի: Լոկ դիտեալ զըացում մը՝ որ արդեամբք չի կատարուիր, չի բաւեր²:

Բայց այս անկատար հերձուածին էութենէն չէ, որ մէկն Առաքելական Աթոռոյ հեղեմակութիւնն

¹ ՀմԲ. Ռիեդի. անդ:
² Սուար. Ա. ԺԲ. 2. Ա. Թ. 5:

ուրանայ եւ այն պատճառաւ ալ անոր հնազանդութենէն խուսէ կամ զատուի: Բաւական է անկատար հերձուածին համար, որ «Ժամանակիս Հռոմեակոսն Քրիստոսայտոսն», որինք Պետրոսի Աթոռը նստողն հնազանդութիւն զլացուի: Անոր համար, այսպիսուայ մ'անօգուտ է, յաջորդ Քաջանայապետին հնազանդիլ խոտանալն¹: Աօիկայ կ'արժէ ոչ միայն զուտ հերձուածողաց նկատմամբ՝ որոնք թէեւ տակաւին հերետիկոսութիւն մը խառն չունին, բայց ժամանակին Քաջանայապետին հնազանդութեամբ պարանոցնին չեն խոնարհեցընեք՝ թէպէտ եւ անոր իշխանութիւնը չուրանան. հապա նաեւ նկատմամբ անոնց՝ որոնք Առաքելական Աթոռոյ իշխանութիւնն առ հասարակ չեն ուզեր ճանչնալ: Աէրջինք բայ ի հերձուածոյ՝ նաեւ հերետիկոսութեան յանցաւոր կ'ըլլան. որովհետեւ այսպիսիք կ'ուրանան աստուածային կարգադրութիւնն, ըստ որում Եկեղեցւոյ միութիւնը պիտի կայանայ՝ տեսնելէ Եկեղեցւոյ տիեզերական մէկ Հովուին, Եկեղեցւոյ ընդհանուր Հիման՝ որ Քրիստոսի բովանդակ հօսն արածելու պաշտօնն ունի, հնազանդութեան վրայ: Այսպէս, եթէ հերձուածող մը հաստատէ, թէ Քաջանայապետն Եկեղեցւոյ Գլուխ չէ, կամ՝ է, բայց պատուոյ գլխաւորութիւն միայն ունի, նաեւ հերետիկոս կ'ըլլար: Անոր համար, այսպիսիք կրկին՝ թէ հերձուածի եւ թէ հերետիկոսութեան բանադրանոց տակ կ'իյնան²: Նոյնպէս առաջինք չեն կրնար ընդ երկար աղատ մնալ հերետիկոսութենէ. վասն զի Քաջանայապետին՝ իբրեւ նոյնպիսոյ՝ չհնազանդիլը բնականապէս Առաքելական Աթոռոյ դէմ ապստամբութեան կը յանդի:

Մինչեւ ցարդ ըստածներէն կը հետեւի, որ հերձուածող չեն եւ հետեւապէս բանադրանաց տակ չեն կ'յնար՝

1. Հապա իսկ աշխարհական իշխանութեան Քաջանայապետին, որոնք չեն ուզեր զինքն իբրեւ իրենց աշխարհական իշխանը ճանչնալ: Վասն զի այսպիսիք

¹ Լուկոյ, անդ Ի. Ե. Թ. 37:
² Ժողով Ա. ատ. Կ. Գ:

Քաջանայապետին՝ ոչ իբրեւ Գլխոյ Եկեղեցւոյ՝ հնազանդութիւն ու հպատակութիւն կը զանան, հապա իբրեւ իրենց աշխարհական իշխանին¹:

2. Բանադրելու: Վասն զի ասոնք ոչ թէ կանխ հնազանդութենէ Քաջանայապետին իբրեւ նոյնպիսոյ կը զատուին, հապա ի պատիժ իրենց յանցանաց՝ Եկեղեցւոյ անդամնց հետ ունեցած հարորդութենէն կը կարուին. թէեւ բանադրանաց մէջ յամառութեամբ յարստեւելը սովորաբար ի հերձուած կամ ի հերետիկոսութիւն կը տանի:

3. Որոնք որ հնազանդութիւն կը զանան Քաջանայապետին, որովհետեւ պատճառ մ'ունին տարակուսելու, թէ որն է օրինաւոր Քաջանայապետը, (ինչպէս՝ Արեւմտեան մեծ հերձուածին ժամանակ) բայց պատրաստ են հնազանդելու անոր՝ զոր իբրեւ օրինաւոր Քաջանայապետ ճանչնան²:

Վասն դարձնականին շատ կարեւոր է մտադիր ընել հոս հերձուածողաց մէկ տեսակին՝ որ այսօրեան օրս աշխարհքիս չորս կողմն յաճախ կը բուսնի: Այս հերձուածողք՝ որ առաջ կաթոլիկալիս (catholici liberales) կը կոչուին, քաջանայապետական հրամանաց կամ կարգադրութեանց շատ կամ ամենեւին հոգ չեն ըներ, կամ նոյնեքը պահել յայտնապէս կը զանան, եւ առաջն ամենեցուն այնպէս կը վարուին, իբր թէ իրենք Քաջանայապետին չեն վերաբերիր, եւ թէ իրեն ամենեւին հպատակ չեն: Յայտնի է թէ ասոնք բանադրանաց տակ կ'իյնան: Այսպիսիք եթէ նաեւ ի ներքուստ ուրիշ կարծիք ունենան, յարտաքին ատենի հերձուածող կը համարուին: Վասն զի իրական հերձուած կայ. արտաքուստ արդէն իսկ խօսքով կամ նշանաւ ժամանակին Քաջանայապետին հնազանդութիւն կը զանան. ալ զինք չեն ընդունիր իբրեւ վերին օրենսդիր Եկեղեցւոյ, որ իրենց պատուէրներ տալու իշխանութիւն եւ իրաւունք ունի, եւ այնու՝ դիտութեամբ եւ կամքը Հռոմայ Քաջանայապետին՝ եւ ըստ հետեւորդի Առաքելական Աթոռոյ իշխանութիւնն արդեամբք կ'ուրանան: Իսկ թէ հերձուածական իշխանութեան մը յարին կամ նոյնպիսի իշխանութիւն

¹ Ռայֆֆ. Ե. 13, 5:
² Հմմ. Աւանց. Մէլիս-Բէն, էջ 75—77:

մը հաստատել ջանան, կամ ամէն կապէ ազատ կըլ-
ղեացեալ ուզեն մնալ, այն երկրորդական բան է: Հեր-
ձուած գաղափարին առաջին եւ հական կէտը կայ,
այսինքն՝ աստ եւ այժմ իշխող Քահանայապետին իշ-
խանութեան յամառութեամբ հնազանդութիւն զլա-
նալ, եւ այդ իսկ բաւական է աս բանադրանաց տակ
իյնալու¹:

Պ.

“Ամենայն եւ իւրաքանչիւր անձն՝ որ-
եւէ վիճակէ կամ՝ պաշտօնէ որ ըլլայ, որ
ի կարգադրութեանց կամ ի հրամանաց իւ-
րաքանչիւր ժամանակաց Հոռմէական Քա-
հանայապետաց յապագայ տիեզերական
ժողով կը ըողորէ. միանգամայն անոնք՝
որոնց օգնութեամբը, խորհրդովը կամ
պաշտպանութեամբը կը ըողորուի:”,²

Սակերնութաց կանոնին մէջ խօսուեցաւ հերձուա-
ծողաց եւ անոնց վրայ, որոնք գիտութեամբ եւ կամօք
ի հնազանդութենէ Քահանայապետին կը խուսեն կամ
կը զատուին: Որպէս զի ասոնք՝ յապագայ ժողով բո-
ղոքելու պատճառանօք, ընդդէմ վճռեալ Գլխաւորու-
թեան իշխանութեան, նոյն անհնազանդութիւնն ան-
պատուհաս գործելու շյանդոնին, հոս առանձինն
բանադրանք կը դրուի: Ուստի, այս կանոնն առաջնոյն
հետեւութիւնն է: Վասն զի աստ եւ այժմ իշխող
Քահանայապետին դէմ բողոքման մէջ՝ ի Գլխայ Եկե-
ղեցւոյ ապստամբութիւն մը կայ. ինչու որ չ'ուզուի
անոր վճռոյն ինք զինք հպատակեցընել, եւ այդ բո-
ղոքմամբ՝ Առաքելական Աթոռէն բարձրագոյն ատեան
մը գործնականապէս կ'ընդունուի: Թողունք որ ան-

¹ Վճիռ Ս. Ժ. Գնն. 12 Յունու. 1860. 5 Յուլ. 1865:
Բատ. 291ի, Ռիէդի, անդ:
² Ի կոնգակէ Լիբիւեայ, Բ: — Տես էջ 7:

մտութիւն ալ է բողոքել այնպիսի ատենի մը, որ իրօք
չկայ եւ ըլլալէքն ալ ոչ ոք կրնայ դիտնալ¹: Քահա-
նայապետին վճռոյն դէմ բողոքելը հերետիկսութիւն
մ'ալ իրապէս յինքեան կը բովանդակէ. վասն զի
անով կը հաստատուի, թէ Քահանայապետին իշխա-
նութենէն վերագոյն իշխանութիւն մ'ալ կայ, ուստի
Քահանայապետին իշխանութիւնն իբրեւ ամենաբարձր
չ'ընդունուի: Անոր համար կանոնն բանադրանաց տակ
կը ձգէ 1. Այս գլխաւոր յանցաւորները՝ Բողոքողներն,
եւ 2. Ասոնց գործակիցները:

1.

Անոնիս Ա. մասին մէջ բանադրանաց տակ կը
ձգուի “ամենայն եւ իւրաքանչիւր անձն” որ վիճակէ,
պատուէ կամ պաշտօնէ որ ըլլայ, ուստի առանց զա-
նազանութեան անձանց², “որոնք ի կարգադրութեանց
կամ ի հրամանաց իւրաքանչիւր ժամանակաց Հոռ-
մէական Քահանայապետաց” այսինքն՝ այն ամէն
կարգադրութեանց դէմ, որ ի Քահանայապետէ՝ իբրեւ
յայնպիսոյ կը հրամայուի, կը վճռուի կամ կը կար-
գադրուի³, հաւատարապէս՝ եթէ այդ վճիռն կամ
կարգադրութիւնն իրաւացի կամ անիրաւ ըլլայ⁴,
“յայտագայ տիեզերական ժողով կը ըողորէ”: Բո-
ղոքել է խնարհագոյն դատաւորի մը վճռէն առ վե-
րագոյն մը կոչումն, որպէս զի այս վերջինէն առաջնոյն
վճռոյն ընջում կամ փոփոխում մ'ընդունուի: Ըստ
այսմ, ով որ Եկեղեցւոյ Գլխոյն կարգադրութիւննե-
րէն, հրամաններէն կամ վճիռներէն՝ որոնք հաւատոյ
կամ բարոյից վարդապետութիւններ կամ ըկ բարե-
կարգութեան վերաբերեալ կրնան ըլլալ, յապագայ ընդ-
հանուր ժողով մը, եւ ոչ՝ արդէն դումարեալ ժողով
մը կամ ի յաջորդ Քահանայապետ մը, որուն վրայ բանա-

¹ Պօղոս Բ. կոնգակ Զարէլի, 19 Յունուար, 1460:
² Բատ. էջ 77, թ. 145: Զուլի, 51, թ. 78:
³ Հռեզին. թ. 263: Ռիէդի, 32, թ. 15:
⁴ Սուար. Վասն արդ. դատ. ԻԱ. 2. 15:

դրանք չկայ¹, բողոքելու՝ կոչում ընելու ըլլայ, անմի-
ջապէս նովին բողոքմամբ բանադրանաց տակ կ'իյնայ:

Եթէ մէկը Քահանայապետին մէկ վճռէն՝ զոր
անիկայ իբրեւ ծայրագոյն վարդապետ՝ բովանդակ էկե-
ղեցին պարտաւորիչ ձեւով մը՝ նկատմամբ հաւատոյ
կամ բարոյից վարդապետութեան տայ, յընդհանուր
Ժողով մը բողոքէ, այնպիսին կերպական հերետիկոս
կ'ըլլայ. որովհետեւ Հռոմայ Քահանայապետին հաւ-
ատոյ եւ բարոյից իրաց մէջ անսխալահանութեան հաւ-
ատոյ վարդապետութիւնը կ'ուրանայ: Անոր համար
այսպիսին նաեւ հերետիկոսութեան վրայ դրուած
բանադրանաց մէջ կ'իյնայ²:

2.

Բաց ի գլխաւոր գործողներէն՝ բողոքողներէն,
այս բանադրանաց տակ կ'իյնան նաեւ բողոքման նիւ-
թական կամ բարոյական գործակիցներն, երբ գործակ-
ցութիւնը բողոքմանէն յառաջ եղած է. վասն զի գործքը
կատարուելէն ետեւ գործակցութիւն չի կրնար ըլլալ³:

Ա. «Սգևողք»⁴

Բ. «Երդիրդատուք», այսինքն անոնք՝ որ խոր-
հրդով կամ յորդորանօք, պատճառներ ի մէջ բերելով,
եւս առաւել հրամայելով, զմէկը կը համոզեն կամ ի
գործ ինչ (հոս՝ ի բողոքել) կը գրգռեն, զոր առանց այս
խորհրդոյ պիտի չգործէր: Աւստի խորհուրդն այնպիսի
պիտի ըլլայ, որ մէկն յորդորուի գործելու գործք մը՝
զոր պիտի չգործէր: Ըստ այսմ՝ եթէ մէկն առանց այս
խորհրդոյ ալ նոյնը պիտի գործէր, խորհրդատուն ազատ
է բանադրանքէ⁵:

Գ. «Պաշտպանք», այսինքն անոնք՝ որ հաստա-
տելով, հաւանելով, գովելով կամ դէմ չլուռելով՝

¹ Պոնաչ. վ. Ա. 9. 3. Մ. 2. Թ. 5:
² Հմմ. էջ 52 - 55: Բատ. էջ 78, Թ. 147:
³ Սուար. անդ, Թ. 16: Ռիեդի, անդ:
⁴ Տես, էջ 57, 3:
⁵ Հմմ. Փր. Հայնէր, էջ 19: Փորմիզ, էջ 38: Բատ. անդ:

որուն ի պաշտօնէ պարտական էին, իրենք զիրենք բո-
ղոքման մեղաց մասնակից կամ մեղակից կ'ընեն¹:

Եթէ ի վճռոյ Քահանայապետին յապաղայ ընդ-
հանուր Ժողով մը բողոքումը բարոյական անձինքներէ
ըլլայ, ինչպէս համալսարանէ մը, ի Ժողովոյ կանոնի-
կոսաց կամ վանականաց, եւ այլն, այնպիսի ընկերու-
թիւնն աբէլճան դատակնքոյն տակ կ'իյնայ, ինչպէս
ետքէն² կը տեսնենք:

Ե.

«Այն ամէնքն՝ որ Սրբոյ Հոռմէական Ե-
կեղեցոյ Կարդինալները, Պատրիարքունքը,
Արքեպիսկոպոսները, Եպիսկոպոսները, եւ
Առաքելական Աթոռոյ Գաւառապետները
կամ Եուրոպական կը սպաննեն, կ'անդա-
մատեն, կը զարնեն, կը ձերբակալեն, կը
բանտարկեն, կը պահեն, կամ թշնամու-
թեամբ կը հալածեն, կամ իրենց թեմերէն,
Երկիրներէն, Տեղերէն կամ Կալուածներէն
ի ըսց կը մերժեն, նոյնպէս որունք որ այս
գործոց հրաման կու տան, կամ կը հաւ-
անին, կամ յայսպիսի օգնականութիւն,
խորհուրդ կամ պաշտպանութիւն կը մա-
տուցանեն:»,³

Այս կանոնիս վախճանն է՝ Եկեղեցոյ մէջ բար-
ձրագոյն արժանապատուութիւն ունեցող անձանց՝
«Կարդինալաց, Պատրիարքաց, Արքեպիսկոպոսաց,
Եպիսկոպոսաց եւ Առաքելական Աթոռոյ Գաւառա-
պետաց կամ Երոպական», մարմինն ու կեանքը, ազա-
տութիւնն ու պատիւը պաշտպանել ընդդէմ 1. Ե՛ն-

¹ Փորմիզ. անդ:
² Վերապահեալ արդեմունք, Ա. Կանոն:
³ Ի Կոնգակե Ընկերոյ, ԺԱ.՝ — Տես էջ 9:

Թախան, եւ 2. Բարոյական պարճաւաց, որոնցմէ կը ծագին կանոնիս մէջ յառաջ բերուած բանադրանքը արգելեալ յանցանքները: Ուստի յիշեալ անձինքներէն խոնարհազգոյն աւագութիւն մ'ունեցողներն, ինչպէս տակաւին չձեռնադրեալ Եպիսկոպոսունք Աբբայք, եւ այլն¹, այս կանոնէս չեն պաշտպանուիր. ինչու որ կանոնիս մէջ յայտնապէս չեն յիշուած²:

1.

Կանոնիս մէջ յիշուած յանցանաց նիւթակաւ պատճառ են անոնք՝ որ յիշեալ եկեղեցական Աւագաց Ա. Մարմնոյն միաս մը կը հասցընեն, կամ բոլորովին սնչչացընելով՝ «սպակոյ», եւ կամ մէկ մասին միասելով՝ «անդամատոյ եւ զարկոյ»: ³

1. «Սպակոյ» են ամէնքն՝ որ սրեւիցէ կերպով՝ զինուք, թուռով, անօթութեամբ, եւ այլն, վերայիշեալ եկեղեցական Աւագաց կեանքը կը բառնան:

2. «Անդամատոյ» են, որոնք որ մարմնոյն սրեւ է անդամն՝ որ սեպչական գործունէութիւն մը եւ պաշտօն մ'ունի, մարմնէն կը բաժնեն կամ երկարատեւ անգործունէութեան մէջ կը ձգեն:

3. «Զարկոյ» են ամէնքն՝ որ ձեռքը կամ ոտիւք կամ ուրիշ սրեւէ կերպով — զարնելով, կոխելով, քարկոծելով, եւ այլն — ուրիշին մարմնոյն բաւական անիրաւութիւն մը կը հասցընեն:

Բ. Ազարութեան վրայ յարձակում կ'ընեն, ձերբակալելով, բանտարկելով, պահելով⁴:

¹ Սուար. 21. 2. 60: Աէքքեյ, անդ, էջ 358: Ռիէդի, էջ 35, թ. 51:

² Սուար. 24. 2. 68: Բատ. էջ. 79, թ. 149: Ռիէդի, էջ 34, թ. 51: Անոր համար այս կանոնս պէտք չէ շփոթել պարզապէս վերապահեալ բանադրանաց Բ. կանոնին հետ: Անոր մէջ արուած բանադրանքը՝ պարզ, որոշին Վրէի մարմնն ու կեանքը, ազատութիւնն ու պատիւը պաշտպանելու համար է: Իսկ անսիկայ բաց ի կղերական պատուէն եկեղեցիէն առաջնորդութեան համար է, եւ անոր համար ասիկայ առանձինն կերպով, իսկ միւսը՝ պարզապէս վերապահեալ է:

³ Հռեգին. Գ. թ. 16 թ. 212, Գ. 5. §. 2. Վ. Զանգեր. 4 Ի Գր. Օր. 36:

1. «Զերդակաղոյ» են, որոնք որ բռնութեամբ կամ խաբէութեամբ մէկը թշնամաբար կը բռնեն:

2. «Բանտարկոյ» են, որոնք զմէկը հրապարակական կամ առանձնական տեղ մը բանտարկելով՝ անձնական ազատութենէ կը զրկեն:

3. «Պակոյ» են այն ամէնքն՝ որ զմէկը տեղ մը սենեակ, տուն, քաղաք եւ այլն, կը փակեն, այնպէս որ անսիկայ բոտ կամ զուրս ելլելու ազատութենէն կը զրկուի. ինչպէս՝ եթէ Եպիսկոպոս մ'իր տան մէջ պաշարման վիճակի մէջ դրուի, այնպէս որ չկարենայ բոտ կամի հեռանալ տնէն, կամ պաշարողներէն զգուշանալով միայն կարելի ըլլայ:

Գ. Պարտոյն կը միասեն կամ թշնամութեամբ հալածելով, եւ կամ զանոնք իրենց թեմերէն, երկիրներէն, տեղերէն կամ կալուածներէն արտաբսելով՝ Այսպիսի են՝

1. «Թշնամութեամբ հալածողք», այսինքն անոնք՝ որ եկեղեցական Աւագ մը կը հալածեն, իրեն՝ ի մարմինն եւ ի կեանս կամ յազատութիւնն միասելու դիտմամբ: Անոր համար ազատ է բանադրանքէս ով որ կը հալածէ վախցընելու կամ կողպտելու դիտմամբ²:

2. «Իրաց մերժողք», այսինքն անոնք՝ որ եկեղեցական Աւագ մ'իր գտնուած եւ բնակած տեղէն դուրս կը հանեն: Անոր համար, բանադրանացս տակ չեն իյնար որոնք որ չեն ուզեր զայնպիսին ընդունիլ, ինչպէս՝ երբ դուռն ընդդէմ փակելով չեն թողուր քաղաք մտնել³: Այս ի բաց մերժումը պիտի ըլլայ «Իրենց թեմերէն, երկիրներէն, ծեղերէն կամ կարողութեանէն»: Տեղի կամ կալուածներ ըսելով՝ կ'իմանան շատ աստուածաբանք ոչ միայն այն տեղերն՝ որոնց վրայ այդ եկեղեցական Աւագը իրաւաբանութիւն ունին, ինչպէս քանի մը բարոյագէտք եւ իրաւաբանք կը համարին, հապա նաեւ զանոնք՝ ուր բնակութեամբ կամ ծննդեամբ տեղացի եղած են: Վասն զի այս կանոնիս վախճանը չէ ասոնց

¹ Սուար. 22. 31: Պոնաչ. Վ. Ա. 9. 12. Մ. 1. թ. 7:
² Փաստեր, առ Կ. Վասն ապաշ. Ի Զ. Ռիէդի, էջ 33, թ. 49:
³ Ռիէդի, անդ: 20 ըլի, էջ 54, թ. 81:

իրաւաբանութիւնը պաշտպանել՝ որ յաջորդ կանոնին մէջ կը կատարուի, հապա մանաւանդ՝ մարմինն ու կեանքը, պատիւն ու ազատութիւնը պաշտպանել: Բայց նաեւ հակառակ կարծիքն հաւանական է, եւ այնու՝ օրէն է նաեւ անոր հետեւելը¹: Ուստի այդ վերոյիշեալ տեղերէն զերեւոր ի բաց մերժողք, առանց զանազանութեան առանձնական անձի կամ պաշտօնէի տեւրութեան, բռնութեամբ կամ սպառնալէօք եւ կամ պարզ հրամանաւ մերժելուն, այս բանադրանացս տակ կ'իյնան²:

2.

Վանոնիւս կը բանադրուին ոչ միայն այդ զխաւօր գործողներն, հապա նաեւ օրոնք որ ասոնց յայտ մտակն առանց ազիտութեան կամ ծանր երկիւզի գործակից կ'ըլլան: Այսպիսի յարոյշակն սրտանաւ են՝

Ա. «Հրամայողք», օրոնք մէկու մը՝ ազաշանաց կամ յանձնարարութեան ձեւով կը յանձնեն յանուն կամ փոխանակ իրենց վերոյիշեալ յանցանքները գործել³:

Բ. «Հառնողք», օրոնք վերոյիշեալ գործերէն մէկուն՝ յառաջ քան զկատարումը հաւանութիւն կուտան: Ըսինք յառաջ. վասն զի այն ատեն միայն կարելի է բարոյական պատճառ ըլլալ, երբ դեռ արդիւնք յառաջ չէ եկած: Գործքը կատարուելէն ետքը նոյնին տրուած պարզ հաւանութիւնն ընդ հանրապէս խօսելով չի բաւեր: Որպէս զի այդ հաւանողք բանադրանացս տակ իյնան հետեւեալ պայմանները կը պահանջուին⁴:

1. Այդ վերոյիշեալ յանցանքներէն մէկը յանոնեւ ի նպատակ հաւանողին պիտի գործուի, ըստ սկզբանա՝

¹ Աւանց. 80, Թ. 150: Գործք. Ս. Ա. Բ. Գ. 300. Դ.: Ռիեդի, անդ, 2^ր լի, եւ սյն:
² Պոնաշ. անդ, Թ. 19: Ռիեդի, էջ 34, Թ. 49:
³ Փր. Հայնէր, էջ 19:
⁴ ՀմԲ. Բատ. էջ 80, Թ. 151: 2^ր լի, էջ 53, Թ. 80: Ռիեդի, էջ 34, Թ. 50:

«Չի կրնար մէկը հաւանել այն բանին, որ յանուն էր չէ գործուած»: ¹

2. Հաւանութիւնն արդարեւ նշանաւ մը պիտի յայտնուի. վասն զի «Աստի ներքինս չի գործեր»: ²

3. Հաւանողը յանցանքին գործուած ժամանակն ի վիճակի պիտի ըլլայ, գոնեայ ունակաբար, նոյնինքնին գործելու կամ գործելու հրաման տալու, ըստ իրաւաբանական կանոնաց՝ «Հաւանութիւնը յետ. կը կուտի, եւ աներկբայ՝ հրամանին հաւասար է»: ³

Գ. Որոնք որ այս գործոց բարոյապէս կամ նիւթապէս «օգնողթիւն, խորհուրդ կամ սրտապակասութիւն կը մատուցանեն»: ⁴

Ուստի ատնը ամէնը, բնականապէս արդիւնքն յառաջ գալէն ետեւ⁵, բանադրանացս տակ կ'իյնան⁶:

9.

«Որոնք որ ներքին կամ արտաքին ատենի եկեղեցական իրաւաբանութեան գործադրութիւնն ուղղակի կամ անուղղակի կ'արգելուն. եւ այս բանիս համար աշխարհական ատեն կը դիմեն, եւ անոր հրամանագիրները կը հայթայթեն, կը հրատարակեն, կամ օգնութիւն, խորհուրդ կամ պաշտպանութիւն կը մատուցանեն»: ⁷

Այս եւ յաջորդ երկու կանոնաց մէջ եկեղեցւոյ ազատութիւնը կը պաշտպանուի: Ասիկայ կը խօսի եւ

¹ Non potest ratum quis habere, quod non suo nomine gestum est. Կ. 13. Վ. Կան. Իրաւ. Թ. 6:
² De internis non iudicat praetor.
³ Ratihabitionem retrotrahi, et mandato non est dubium comparari. Կ. Իրաւ. Գ. առ 6: Սուար. 21. 2. 71: ՀմԲ. Կուրի-Պալլ. Բ. 972:
⁴ Պոնաշ. անդ, Թ. 19: Ռիեդի էջ 34, Թ. 49: Տեւ էջ 57, 3. 84, Բ. 75. 3:
⁵ Պոնաշ. անդ, Թ. 19. 30:
⁶ Տեւ նաեւ յետոյ Պարզապէս վերապահեց Բ. Կանոնը:
⁷ Ի կոնգակէ Լիբերից, Ժ. 9. — Տեւ էջ 9:

կեղեցւոյ իրաւաբանութեան ազատ գործադրութեան վրայ, եւ ոչ Արքեի իշխանութեան գործադրութեան վրայ:

“Եկեղեցական իրաւաբանութիւն», ըսելով՝ կի- մացուի ընդհանրապէս՝ Եկեղեցւոյ իւր հպատակները յաւիտեանական փրկութեան վերաբերեալ իրաց մէջ կառավարելու օրէնսդրական եւ դատաւորական իշխա- նութիւնը¹: Այդ կառավարելու իշխանութիւնը կը տարածուի ոչ միայն քարոզելու, Խորհուրդ մատա- կարարելու իրաւանց վրայ, հապա նաեւ հրամայելու, արդելելու, կապելու եւ արձակելու, յաւիտեանական փրկութեան վերաբերեալ իրաց մէջ օրէնքներ տալու իրաւանց վրայ: Այս իրաւաբանութիւնն՝ որ կրնայ կարգաւոր կամ յանձնարարական ըլլալ, ի գործ կը դրուի ըստ մասին “ի ներքին ստեղծի», հաւատացելոց խիղճը՝ ներքին կամ ի ծածուկ անձամբ խոտովանելով յայտնեալ նիւթոց մէջ ուղղելու եւ կառավարելու համար, որ գլխաւորաբար Ապաշխարութեան Ս. Խոր- հրդոյն մատակարարութեան մէջ կը գործածուի, եւ ըստ մասին “յարտարիւն ստեղծի», հաւատացեալներն իբրեւ տեսանելի ընկերութեան մ’անդամներն ուղղե- րու եւ կառավարելու համար. եւ այս ի գործ կը դրուի հրապարակական եւ արտաքին գործերով, որպիսի են՝ օրէնք դնել, տնօրինում տալ, եկեղեցական պաշտօնի զմէկը կարգել, թեմերու այցելութիւն², քարոզիչ առաքել, Արդի իշխանութեան վերաբերեալ գործեր կատարելու իշխանութիւն տալ, վերջապէս այն ամէն իրաւանց գործադրութիւնն՝ զոր Եկեղեցին իբրեւ կա- տարեալ եւ անկախ ընկերութիւն կրնայ պահանջել³:

Արդ, կանոնս կը պաշտպանէ այդ իրաւաբանու- թիւնը նոյնը բռնաբարոյններուն դէմ, որոնք են՝ 1. “Արգելոյր», 2. Աշխարհական ատեան դիմելով “հրա- մանագիր հայթայթոյր», 3. Հրամանագրիւնները “հրա- տարակոյր», եւ 4. Ասոնց գործակիցները:

1 Գերբարիս, Ե. Իրաւաբ. Ա. 1. Թ. 2:
2 Վէբքիւյ, սնդ, էջ 359, Թ. 574: Գործիզ. էջ 43:
3 Հմմ. Ռիէդի, էջ 35, 36, Թ. 53—55:

1.

“Արգելոյր» են անոնք, որ ազատակամ եւ դիտ- մամբ կը գործեն գործ մը՝ որ եկեղեցական իրաւաբա- նութեան գործադրութիւնը կ’արգելու. հաւասարա- պէս՝ եթէ այդ արգելումն բռնաբար ըլլայ եւ եթէ վախցընելով, եւ կամ այլազգ¹: Այս արգելումն այն- պիսի պիտի ըլլայ, որ կղերական մը ստիպուի յակամայ կամս իրաւաբանութեան գործադրութեանէն ետ կենալ:

Արգելքը կրնայ դրուիլ “որոշակի կամ անորո- շակի»: Ուղղակի կ’արգելուի, երբ նոյն իսկ անձը կ’ար- գելուի գործ մը կատարելէն, զոր զօրութեամբ իրաւ- աբանական իշխանութեան սկսած էր կատարել: Ան- ուղղակի կ’արգելուի, երբ արգելքը թէեւ յայտնապէս նոյն անձին չի դրուիր, սակայն ուրիշ անձանց վրայ այնպէս մը կ’ազդուի կամ աղերսներ յառաջ կը բե- բուի, որ յառաջ եկած պարագայից պատճառաւ իրաւ- աբանութիւնն ի գործ գնելու անկարելիութիւն մը կը ծագի: Այսպէս Եպիսկոպոսի մ’իրաւաբանութեան գործադրութիւնն անուղղակի կ’արգելուէր, եթէ մէկն անոր պաշտօնէից գործունէութեան սրեւիցէ միջոցով արգելք դնէր, այնպէս որ Եպիսկոպոսը նոյն պատճառաւ չկարենայ իւր կարգադրութիւնները գործադրել²:

Բայց այս արգելքը միշտ անոր պիտի դրուի, որ իրաւաբանական իշխանութիւն ունի. այնպէս որ այս- պիսին իւր իրաւաբանութեան գործադրութիւնը կամ սկսիլ, կամ սկսեալն յառաջ տանիլ եւ կամ լնցընել չկարենայ³: Անոր համար ազատ է ի բանագրանաց այն անձն՝ որ կը ստիպէ զմէկն՝ սրեւէ իրի մը համար ի սկզբան անդ փոխանակ եկեղեցական դատաւորի դիմե- րու, աշխարհականի մը դիմել: Վասն զի եկեղեցական դատաւորը, ցորչափ դատն իւր առջեւը չէ ելած, յայտմ մասին տակաւին իրաւաբանութիւն մը չունի,

1 Սալմ. 10. 4. 95:
2 Բատ. էջ 85, Թ. 160: Չորիւի, էջ 55, Թ. 83:
3 Կան. 3. Վասն Ազ. Եկեղ. առ 6: Պոնաշ. Վ. 1. Խ. 17.
Մ. 1. Թ. 4:

Տետեւապէս արգելելու վրայ ալ խնդիր չի կրնար բլլ-
 լուիլ: Բայց ազատ չէ բանադրանքէ, եթէ դասն եկե-
 ղեցական աստեան ելլելէն եւ հոն սկսելէն ետքը, յան-
 կամս եկեղեցականին ստիպէր զնոյն անձն աշխարհական
 աստեանի դիմել¹: Այս եւ ասոր նման դժուարութիւն-
 ներ կրնան լուծուիլ, եթէ աչաց առջեւ ունեցուի սս
 սկզբունքը. Միայն գործադրուելու սկսած իրաւաբա-
 նութիւն մը կրնայ արգելուիլ. իրաւաբանութեան
 գործադրութենէն յառաջ եւ ետքը նոյնին արգելման
 վրայ խնդիր չի կրնար բլլալ: Արգելք զնեւ այդ ամէն
 դիպաց մէջ եկեղեցական իրաւաբանութեան գործա-
 դրութիւնն արգելելու դէպքս որոշելու պիտի գտնուի.
 ուստի գործադրութեան խափանումն ըստ պատահման
 միայն պիտի չըլլայ²:

2.

Այս յանցաւորաց երկրորդ դասուն կը վերաբե-
 ըին այն ամէնքն՝ որ «այս յաւնիս համար աշխարհական
 ատեան կը դիմեն եւ անոր հրամանագիրները կը հայ-
 թալայթ են»: Այսպիսի են ոչ միայն անոնք՝ որ իրենց
 աշխարհական իշխանութեամբը կրնան եկեղեցական
 իրաւաբանութեան ամբողջական կատարումը կամ ար-
 դիւնքն արգելուլ, հապա նաեւ անոնք՝ որ թէեւ ան-
 ձամբ բանի մը ձեռնհաս չըլլան, սակայն աշխարհական
 ատեանն օգնութեան կոչելով՝ եկեղեցական իրաւա-
 բանութեան գործադրութիւնն արգելելու կը ջանան:
 Արդէս զի ասոնք բանադրանացս տակ իյնան, ըստ մտաց
 կանոնիս երեք պայման կը պահանջուի:

Ա. Այդ դիմումը պիտի բլլայ առ «աշխարհական»
 իշխանութիւն մը, որ յաշխարհական ատեանի իրաւա-
 բանութիւն ունենայ³, եւ ոչ լոկ գործակալական իշ-
 խանութիւն (administratio):

¹ Ռիեդի, էջ 37, թ. 57:
² Պոնաչ, Մ. 2, թ. 4:
³ Կ. 10. Վասն մտ. բան. Գ. 54. Վասն իրաց դատու. Գ.
 Ի. Վասն դատ: Ռայֆֆ. Բ. 2. 4:

Բ. Աշխարհական ատեան դիմելն եկեղեցական
 իրաւաբանութեան գործադրութիւնն արգելելու եւ
 ոչնչացընելու դէպքս պիտի բլլայ¹: Ըստ այսմ, ով
 որ հոգեւոր դատաւորէ առ աշխարհական դատաւոր
 մը բողոքէ այն պատճառաւ՝ որ առջինը դատը կը յեր-
 կարէ կամ իրեն թշնամի է, բանադրանաց տակ չ'իյ-
 նար: Վասն զի եկեղեցական իրաւաբանութիւնն ըստ
 ինքեան ոչնչացընելու եւ ապարդիւն ընելու դիտում
 չ'կայ, հապա միայն ուրիշ պատճառներու համար այս
 ինչ անձին իրաւաբանութեանէն ինք զինք է բաց կը
 հանէ:

Գ. Այս դիմումն արգելութիւն միացեալ պիտի բլլ-
 լայ, ասով դիմողն իր նպատակին պիտի հասնի: Ինչու
 որ խնդիրը դժպէտաց վրայ բլլալով՝ պէտք է «են» ն
 անձուկ մտօք, զօգական իմաստով մեկնել², եւ ոչ բա-
 ժանական, ինչպէս ամանք կ'ուզեն³, այնպէս որ՝ որոնք
 որ «աշխարհական ատեան կը դիմեն եւ անոր հրամա-
 նագիրները կը հայթայթ են», իբրեւ մէկ տեսակ յան-
 ցաւոր հասկցութիւն: Աւստի պէտք է որ եկեղեցական
 իրաւաբանութիւն ունեցող անձի մը դէմ կարգադրու-
 թիւն կամ հրաման մը արուի եւ ի գործ դրուի, որով
 եկեղեցական իրաւաբանութիւնն արգելուի կամ ա-
 տեան կոչուի:

Եթէ աշխարհական ատեան դիմողն կըբրական է,
 բացի բանադրանացս՝ ըստ վճույ Կարտինոսի Ե. ի եւ Ին-
 նովիենտինոսի Ը. ի նաեւ եկեղեցական բարերարութիւնը
 կը կորսնցընէ:

3.

«Հրատարակողը» ըսելով կ'իմացուին հոս՝ դա-
 տաւորք կամ աշխարհական ատեանի որեւէ աշխարհա-
 կան պաշտօնեայք, որոնք որոշումներ կ'ընեն եւ կար-
 դադրութիւններ կը հրատարակեն, որով եկեղեցական

¹ Կոնգ. Ընթրեաց, § 16:
² Անդ: Ռիեդի, էջ 39, թ. 60: Կուրի-Պաւլ. Բ. 972:
³ Գործք Ս. Աթոռայ, Հատոր Է. էջ 290, Ծան. 1, Հատ.
 Ա. էջ 567, եւ այլն:

իրաւաբանութեան գործադրութիւնը կ'արգելուի: Աւստի, բանադրանաց տակ չեն կշնար նոտարը կամ գրագիրը, զուցատարը՝ որոնց ձեռքը հրամանագիրները կ'ընդունուին: Վասն զի ասոնք գործիք են հրամանագրոց հրատարակման, եւ ոչ հեղինակը հրատարակութեան¹:

4.

Վերջիշեալ գործոց իբրեւ գործակից՝ բանադրանաց տակ կը ձգուին անոնք՝ որ վերջիշեալ «օգնութիւն, խորհուրդ կամ պաշտպանութիւն կը մատուցանեն»²: Այս գործակցութիւնը պիտի ըլլայ՝

Ա. Գործառնեայ, վասն զի ինչպէս որ գլխաւոր գործողներու համար ըսինք՝ թէ միայն գործունեայ արգեամբք միացեալ արգելումն եկեղեցական իրաւաբանութեան գործադրութեան, բանադրանաց տակ կ'իյնայ, նոյնպէս ալ գործակիցը, եթէ եկեղեցական իրաւաբանութեան գործադրութիւնն իրօք արգելուի՝ բանադրանաց տակ կ'իյնան: Ասիկայ գրեթէ միաբան վարդապետութիւն է աստուածաբանից³:

Բ. Պիտի ըլլայ ծանր մեղանշական յանցանաց վրայ կը դնէ ծանր պատիժ, որպիսի է բանադրանքը:

Է.

«Որոնք որ արտարոյ կանոնական կարգադրութեանց եկեղեցական անձինքն իրենց ատենանը կոչելու համար աշխարհական դատաւորներն ուղղակի կամ անուղղակի կը ստիպեն. նոյնպէս որոնք որ ընդդէմ՝ ազատութեան կամ իրաւանց Ե-

¹ Ռիեդի, էջ 38, Թ. 59: Չոլլի, էջ 59, Թ. 84:
² Տես էջ 57, 3. 84, Բ. 75, 3:
³ Տես Փր. Հայնէր, էջ 86:

կեղեցոյ օրէնքներ կամ վճիռներ կը հրատարակեն:»,¹

Ճամանակիս պարագայից համար այս կարեւոր կանոնս երկու մասի կը բաժնուի: Առաջինը կը պաշտպանէ Արեւիկ արքան-իւնն (privilegium fori), ըստ որում եկեղեցականը նսնե աշխարհական իրաց մէջ ոչ թէ աշխարհական դատաւորաց, այլ իրենց եկեղեցական Առաջնորդին առջեւ իրենց անձնական դատը պիտի վարեն: Երկրորդը կը պաշտպանէ Եկեղեցոյ «գործառնեայ» - իրաւանքը:

1.

Արքեմն² եկեղեցական անձինքն աշխարհական ատենան կոչող ամէն դատաւորը այս բանադրանաց տակ կ'իյնային. բայց այս Սահմանադրութենէս ետքը միայն անոնք կ'իյնան՝ որոնք մէկէ մը շտախուրած՝ կամ անձամբ եկեղեցական անձինքն իրենց ատենանը կը կոչեն, եւ կամ ուրիշ դատաւորները կը ստիպեն նոյնն ընելու³, թէեւ առջիններուն նկատմամբ մեղքը միշտ մնայ: Աւստի, այն դատաւորը՝ որ կը ստիպուին կոչելու, բանադրանքէ ազատ են: Իսկ «ստիպողը» ըսելով՝ կ'իմացուին ամէնքն՝ որ բռնութեամբ կամ սպառնալեօք եւ կամ այլազգ այնպէս աշխարհական դատաւորի մը վրայ կ'ազդեն, որ ստիպայ յակամայ կամս կը ստիպուի կղերական մ'իւր ատենան հրաւիրել եւ վրան դատատանական գործեր կատարել: Աւստի ամենեւին զանազանութիւն մը չ'ըլլուիր, թէ այդ ստիպումը դատաւորի մը վրայ «ողողակի», թէ «ամողողակի» յառաջ կը բերուի. այսինքն՝ թէ մէկն անձամբ կը ստիպէ եթէ ի ձեռն այլոց, անմիջնորդաբար զդատաւորն կը ստիպէ եթէ զուրիշ մը՝ որուն հետ դատաւորը կապ մ'ունենայ, զոր օր. ազգական ըլլայ, այնպէս որ ասոր պատ-

¹ Ի Կոնգ. Ընդհանր. ԺԵ: — Տես էջ 9:
² Տես Կոնգ. Ընդհանր., § 15:
³ Վճիռ Ս. Ժ. Բռնութեան, 1 Փետր. 1871:

ճառաւ ստիպումն իրեն հասնի¹: Ըստ հաւանականա-
զոյն եւ գրեթէ ընդհանուր կարծեաց ստիպողք են
նաեւ անոնք՝ որ կղերական մը յաշխարհական ատենի
կ'ամբաստանեն, այնպէս որ դատաւորն այս ամբաստա-
նութեան պատճառաւ ի պաշտօնէ իւրմէ կը ստիպուի
ամբաստանեալ կղերիկոսն ի դատ կոչելու եւ ըստ օրի-
նաց ատենի դատելու²: Այսպիսիք եթէ եկեղեցականի
մը հետ դատ ունին, պէտք են Եպիսկոպոսին դիմել.
Եպիսկոպոսը կրնայ կամ անձամբ դատել, կամ իշխա-
նութիւն տալ աշխարհական ատենս դիմելու, որուն
Եպիսկոպոսունք յԱռաքելական Աթոռոյ յատուկ իշ-
խանութիւն կ'առնուն:

Որպէս զի այս ստիպողք բանադրանացս տակ
կ'յնան, կը պահանջուի, որ

Ա. Ստիպող դատաւորն «աշխարհական» ըլլայ:
Քայց աշխարհական բառով պէտք չէ իմանալ անձը,
հապա պաշտօնը: Անոր համար կրնայ նաեւ այսպիսի
դատաւորը կղերական ըլլալ³: Իսկ «դատաւոր» կը կո-
չուի այն՝ որ իրաւունք եւ կարողութիւն ունի յատենի
ուրիշն մը վրայ վճիռ մը տալու⁴: Ըստ այսմ դատաւոր
չեն՝ ատենակալք եւ ոստիկանք:

Բ. Աշխարհական դատաւոր մը ստիպուի «եկե-
ղեցական ակն» մը իր ատենը կոչելու: Եկեղեցական
ակն ըսելով կ'իմացուին այն ամէն կղերականք՝ որ յա-
տուկ իրաւաբանութեան արտօնութիւն ունին: Այս-
պիսիք են ոչ միայն անոնք՝ որ Խուզումն հերաց ըն-
դունելով իրենք զիրենք ի ծառայութիւն Աստուծոյ
նուիրած են, հապա նաեւ ամէն հրօնաորդ, թէպէտ
կարգի (Ordo) մը վերաբերին թէպէտ Առաքելական Ա-
թոռէն պարզապէս հաւանեալ Միաբանութեան (Con-
gregatio). հաւասարապէս եթէ այդ կարգի կամ Միա-
բանութեան մէջ զանուող անձինք հանդիսական ուխտ

¹ Օր. 8. ի վերջ Օր. 14. § Որ դոյն. 2. Չորսի, էջ 61.
Թ. 86. եւ այլն:

² Հմմ. Ռիեդի, էջ 42, Թ. 65. եւ Ծան. 10: Փր. Հայնէր,
էջ 91—93:

³ Փիլիուկ. ԺԶ. 10: Ռիեդի էջ 41. Թ. 65:

⁴ Օր. 1. վասն դատ. եւ Օր. 2. վասն կան, իրաւ.:

ունենան կամ պարզ, եւ կամ նոյն իսկ իբրեւ նորըն-
ծայ սպրինս¹:

Գ. Դատաւորն ստիպուի եկեղեցական անձինքն՝
իբրեւ եկեղեցական անձինք՝ իւր ատենը կոչել, իրենց
վրայ դոյն ընելու համար², այնպէս որ եկեղեցականն
իբրեւ ամբաստանեալ՝ յատենի պիտի երեւայ: Քայց
զանազանութիւն չ'ըլլուի ր ամբաստանութեան՝ յան-
ցանաց կամ քաղաքական իրաց վրայ, ծանր կամ թե-
թեւ ըլլալուն³: Ուստի, բանադրանաց տակ չ'իյնար,
ով որ կը ստիպէ զդատաւորն եկեղեցական մ'իւր առ-
ջեւ հրաւիրելու անոր հրաման, յանդիմանութիւն կամ
յորդոր մը տալու կամ կարծիքն իմանալու, վկայու-
թիւն առնելու համար. վասն զի ասոնք դատել չ'են:

Դ. Այդ ի դատ կոչումն «արտաքոյ կանոնական
կարգադրութեանց» ըլլայ: Կանոնական կարգադրութեան
ըսելով՝ կ'ուզուի իմացընել՝ 1. Ս. Աթոռոյն եւ աշ-
խարհական իշխանութեանց մէջ եղած դաշնադրու-
թիւնը⁴: 2. Եկեղեցական մ'ըստ օրինի կարգընկէց ընե-
լէն ետեւ աշխարհական ատենի ի պատու հաս մասնելն⁵:
3. Այնպիսի երկիրներն, ուր ատենի արտօնութիւնը
հակառակ սովորութեամբ եւ Առաքելական Աթոռոյ
լուելէպն հաւանութեամբն իբրեւ ջնջուած կը համա-
րուի⁶: Նայնպէս՝ եթէ տերութիւնն իր դաշնադրու-
թեան հակառակ նոյնը բարձած է, ցորչած Եկեղեցին
յայտնապէս չի պահանջեր այդ արտօնութիւնը:

2.

Կանոնիս Բ. մասը կը խօսի անոնց վրայ՝ որոնք
ընդդէմ աղատութեան կամ իրաւանց Եկեղեցւոյ օ-
րէնքներ կամ վճիռներ կը հրատարակեն:

Ա. «Աղատութիւն կամ իրաւունք Եկեղեցոյ»
ըսելով կ'իմացուի՝ Բրիտանի որոշման եւ կարգադրու-

¹ Հմմ. Ֆերրարիս, Ա. էջ 72, Թ. 64, 65:
² Մեկն. Հռոմ. 265: Ռիեդի, անդ:
³ Ֆորմիզ, էջ 46:
⁴ Չորսի, էջ 60, Թ. 85. եւ այլն:
⁵ Վէրբիոյ, էջ 360, Թ. 575:
⁶ Ռիեդի, էջ 41, Ծ. 1: Մեկն. Հռ. էջ 269: Չորսի, էջ 62:

Թեան համաձայն Եկեղեցւոյ աշխարհական իշխանութենէ ունեցած անկախութիւնը¹։ Ասոր կը վերաբերի ոչ միայն Ասորի, Իրաւաբանութեան եւ Ռուսացուածեան իշխանութիւնը, որպիսի են՝ ի մեծագոյն ստախճանս յառաջագութիւն, արտաքոյ եկեղեցւոյ թափօր ընել, եկեղեցի շինել, վանքեր հաստատել, եղբայրութիւններ հիմնել, բարեբարութիւններ տալ, քարոզութիւններ ընել։ Հապա նաեւ այն իրաւունքներն յինքեան կը բովանդակէ, զոր Եկեղեցին իբրեւ ընկերութիւն ունի եւ պահանջել կրնայ։ Ինչպէս՝ Ժառանգելու, տէրութիւն ստանալու իրաւունքը²։ Միով բանիւ՝ Եկեղեցւոյ աղապարհական եւ Երաւունք դադարեալն ընդարձակագոյն մտօք պիտի առնուի։ Ուստի, ով որ, եթէ կղերական եւ եթէ աշխարհական³, հեղինակ կամ գործունեայ հեղինակակից կ'ըլլայ այսպիսի օրինաց կամ վճռոյ, այս բանադրանացս տակ կ'իջնայ⁴։

Բ. «Սրէնը» ըսելով կ'իմացուի հոս՝ ընդհանուր եւ մշտնջենակարգ կանոն իրաւանց, որ հասարակութեան բարին հոգացող իշխանութենէ դրուած եւ ըստ օրինի հրատարակուած է⁵։ Իսկ օրէնդիր՝ ըստ պետութեան կառավարութեան տեղեաց այլեայլ է. միահեծան իշխանութեանց մէջ միահեծան տէրը միայն օրէնագրական իշխանութիւն ունի. սահմանադրական իշխանութեանց մէջ խորհրդանոցը միացեալ ընդ իշխանին։

Գ. «Վնիդը» են որոշմունք կամ կարգադրութիւնը՝ որոնք վերին իշխանին ստորակարգեալ պաշտօնեաներէն կը տրուին։ Այսպէս կրնան վճիռներ տալ՝ պաշտօնարանն իր իշխանութեան սահմանին մէջ բովանդակ երկրին համար. վերին գահերէջը, կառավարութեան գահերէջն իր դաւառին, շրջանին համար. գաւառապետն՝ իր գաւառին, թաղապետը՝ թաղին

¹ Պիոս Թ. Սելուպոս, § 22, 33, 45, 47;
² Վ. 5. Վասն անկախ. առ 6: Հռեգին, Թ. 358:
³ Պոնաշ. էջ 3. Թ. 1:
⁴ Վ. 49. Վասն Ս. Ե. եւ Հռ. Թ. 361:
⁵ Կան. ըն. իրաւ. § 11:

համար, քաղաքապետն եւ անոր խորհրդականքն իրենց քաղաքին համար, եւ այլն¹։

Գ. «Հրատարակողը» ըսելով չեն իմացուիր անոնք՝ որ օրէնքները կամ վճիռները կ'օրինակեն, ի լոյս կ'ընծայեն, յատենի ի գործ կը դնեն², թէեւ ասոնք կրնան նախընթաց կանոնին տակ մուծուիլ՝ եթէ ուղղակի կամ անուղղակի եկեղեցական իրաւաբանութեան գործադրութիւնն արդեւուն, կամ գոնէ եկեղեցական իրաւաբանութեան գործադրութիւնն արդեւողներու օգնութիւն եւ կամ պաշտպանութիւն մատուցանեն³։ Հապա կ'իմացուի այսպիսի օրինաց կամ վճռոյ բուն եկեղեցակը, եթէ սեպական եւ եթէ յանձնարարական իշխանութեամբ նոյնը գործէ։ Այսպիսի են օրէնք եւ վճիռ բառերուն մեկնութեան մէջ յիշեալ անձինք։ Իսկ կը պահանջուի որ այս օրէնքներն ու վճիռներն

1. Ընդդէմ ազատութեան կամ իրաւանց Եկեղեցւոյ ըլլան։ Այսպիսի չեն այն օրէնքներն ու վճիռները՝ որ ուղղուած են առանձինն եկեղեցական անձի մը՝ իբրեւ առանձնականի մը դէմ⁴։
2. Հրատարակուին։ Վասն զի օրէնքը հրատարակմանէն ետքը կը պարտաւորէ։ Ըստ այսմ, սահմանադրական տէրութեան մը մէջ թէ Ա. եւ թէ Բ. սենեկի անդամք, եթէ այսպիսի օրինաց կամ վճռոյ հաւանութիւն տուած են, ընդ հրատարակուիլ բանադրանացս տակ կ'իյնան։

Կանոնիս Ա. եւ Բ. մասին մէջ յիշեալ յանցաւորաց օգնութիւն, խորհուրդ կամ պաշտպանութիւն մատուցողք բանադրանացս տակ չեն իյնար. վասն զի Սահմանադրութեանս մէջ չեն յիշուիր⁵։

¹ Օր. 6. Վասն արգ.։
² Սուար. 21. 2. 79:
³ Տեւ էջ 91:
⁴ Սուար. 21. 2. 90: Ռեգի, էջ 4, 3, Թ. 66:
⁵ Ռեգի, էջ 44, Թ. 66: Այս է. կանոնին առջին մասն արդէն սպուած էր, երբ ձեռուրնիս հասաւ քննութեան Ս. Ժողովոյն 23 Յունուար, 1886ին տուած վաւերական յայտարարութիւնն՝ որով կանոնիս տարածութիւնը կամփոփուի։ «Ռորովհետեւ, կ'ըսէ Ս. Ժողովը, այս գլխոյս («Պոստը որ... կը ղարկայն...») մտաց եւ իմաստին վրայ յաճախ տարակոյս ելաւ, այս քննութեան Ս. Ժողովը շատ անգամ ծանոց թէ «Պոստը

Բ.

“Որոնք որ Առաքելական Աթոռէն, կամ անոր իրեւիցէ Ծուիրակներէն կամ Պատգամաւորներէն տրուած իրեւէ թղթերը կամ գործերն արգելելու համար աշխարհական իշխանութեան կը դիմեն, եւ անոնց հրապարակումը կամ գործադրութիւնն ուղղակի կամ անուղղակի կ'արգելուն, կամ անոնց պատճառաւ նոյն անձանց կամ ուրիշներուն կը վնասեն կամ ահաբեկ կ'ընեն:”²

Այս կանոն երեք մասի կը բաժնուի: Ա. մասը կը կազմեն “դիմողը”, Բ.՝ “արգելողը”, իսկ Գ.՝ “որոնք որ կը վնասեն կամ ահաբեկ կ'ընեն”: Սոյն մասանց մեկնութեան տակաւին միջամուտ չեղած՝ պէտք էնք ցուցնել, թէ ինչ կը նշանակեն Առաքելական Թողիւթ, Առաքելական Աթոռայ Գործք, Նախարարի Կարգաւորք:

որ... կը տնայեմ... զլուիք կը պատուհասէ միայն Օրկենդիւրներն եւ այլ իշխանութիւնները՝ որոնք արտաքոյ կանոնաւոր կարգադրութեանց նկատմամբ անձինքն իրեանց ատենար կոչելու համար աշխարհական պատասխաններն ուղղակի կամ անուղղակի կը տնայեմ: Իսկ այս յայտարարութիւնը Ս. Տ. Մ. Լեւոն ԺԳ. Քահանայապետը հաստատեց եւ ամրացուց:

Բայց աստի այն տեղերն ուր Ատենի արտօնութիւնը Ս. Քահանայապետին ձեռք բարձուած չէ, եւ ուր աշխարհական ատենի դիմելով միայն կարելի է բրաւունքը պահել, պարտական է իւրաքանչիւր որ նախ իւր կարգաւորէն իշխանութիւն լինի: Կղերականները յաշխարհական ատենի ամրատաններու կարգաւորք ալ նոյնն երբեք զգանան, մանաւանդ երբ երկու հակառակ կողմները միաբանելու ի զուր ջանացած են: Իսկ Եպիսկոպոսները նոյն ատենի կողմէ առանց Առաք. Աթոռոյ հրամանի օրէն չէ: Եւ եթէ մէկը յանդգնի կոչել առ աշխարհական դատաւորս զկղերականն առանց հրամանի կարգաւորէն, կամ զԵպիսկոպոսն առանց հրամանի Ս. Աթոռոյն, կարգաւորք իշխանութիւն ունին զայնպիսին, մանաւանդ երբ կղերիկոս է, պատժել պատուհասիւք եւ տալի վճար դատակիցք իրեւ զգոնարարող Արտօնութեան ատենի, եթէ այնպէս պատշաճ ի Տէր դատեն:”¹

¹ Ի կոնդ Լեւոնայ, ԺԳ. — Տէս էջ 9:

1. “Առաքելական Թողիւթ, կ'անուանին յանուն Քահանայապետի տրուած համառօտագրի, կոնդակի, շրջաբերականի կամ ուրիշ իրեւէ ձեւով թղթերը:”

2. “Գործք Առաքելական Աթոռոյ, կը կոչուին այն ամէն թուղթք, որ ի լոյս կ'ընծայուին այն գործոց վրայք, զորոնք Քահանայապետն անձամբ, եւ կամ ուղղակի իւր յանձնարարութեամբն ուրիշի մը ձեռք կը հոգայ:” Ըլլան ասոնք հոգեւոր կամ աշխարհական, արտօնութեան կամ արդարութեան իրաց վրայ: Միով բանիւ ամէն թուղթք, ինչ ձեւով ալ որ ըլլան, որոնք Առաքելական Աթոռէն անոր Նախարարներէն կամ Պատգամաւորներէն կը տրուին, Գործք Առաքելական Աթոռայ են:”

3. “Նախարարի կամ Պատգամաւոր, ըսելով՝ կ'իմացուին հաս”

Ա. Առաքելական Կարգաւորք (Legati a latere), այս ինքն այն կարգիւնայք՝ որ կարգաւոր իրաւաբանութիւն առած, առանձինն եւ կարեւոր իրաց մէջ մեծամեծ իշխաններու կամ Առաքելական իշխանութեան գաւառներու մէջ ուղղակի Քահանայապետէն պատգամաւոր կ'առաքուին:”

Բ. Նախարար Կարգաւորք (Legati missi, Nuntii Apostolici, Internuntii), որոնք կարգաւոր իշխանութեամբ՝ որ իրենց պաշտաման վճարողոյն մէջ Քահանայապետէն կ'որոշուի, յարբունիս կ'առաքուին:”

Գ. Գործակալ կամ յանձնարարական պատգամաւորք (Delegati), որոնց Քահանայապետը գործքի մը հոգն ու կատարումն առանձինն կերպով յանձնած է:”

Ըստ այսմ, ասոնցմէ չեն 1. Նախարար Կարգաւորք (Legati nati), որոնք այս անունն ԺԵ. դարէն ի վեր իրեւ տիտղոս կը կրեն, առանց հետն իրաւաբանութիւն մ'ունենալու: 2. Գործակալ Կարգաւորք (Legati nuntii seu missi), որոնք Քահանայապետն յանձնած է իւր պատուէրը կամ յանձնարարութիւնը տանիլ, առանց անով իրական իրաւաբանութիւն մ'ունենալու, հապա պարգապէս լոկ պաշտոն մը կատարելու համար: 3. Եղիւթագործք, որոնք ի զէպս ինչ “Իրեւ նուիրակ Առաքելական Աթոռոյ” (tamquam

¹ Տէս. Վասն յանց. խարդախ:
² Փեղիւկ. ԺՁ. 200: Ռիեդի, էջ 44, Թ. 68: Չուլի, էջ 67, Թ. 88:
³ Պոնաչ. Վիճ. 1. խ. 14. Մ. 1. Թ. 13:
⁴ Ֆէրրարիս, Թ. 136, 137:
⁵ Նոյն, անգ:
⁶ Ռայֆֆ. 1. 30, 5: Ռիեդի, էջ 45, Թ. 69:

legati Ap. Sedis) համարուել յընդհանուր իրաւանց շնորհեալ է, եւ անոր համար Էպիսկոպոսաց այս կարողութիւնն էք Էք Էք Էք Էք Էք Էք Էք Էք Էք Էք (quasi iurisdictio ordinaria) կը նկատէ եկեղեցական իրաւունքը¹ : — Գանք հիմայ իւրաքանչիւր մասանց :

1.

Գլխէլ է՝ մէկուն օգնութիւնն ընդդէմ ուրուք կամ իրէք խնդրել² : Ըստ այսմ, «*իմոնոյք*» են այն աւելներն, որոնք յաշխարհայինս իրաւաբանութիւն ունեցող անձի մը՝ իբրեւ այնպիսւոյ՝ օգնութիւնը կը խնդրեն ընդդէմ թղթոց եւ գործոց Առաքելական Աթուոյ կամ անոր Նուիրակայն ու Պատգամաւորացը, նոյններն անզոր եւ առանց աղբեցութեան ընելու, կամ սրեւէ կերպով ընդդէմ անոնց պաշտպանութիւն եւ օգնութիւն գտնելու դիտմամբ : Իսկ այս դիմման ընդձեւով բողբման, ամբաստանութեան կամ աղերսագրի ըլլալը խնդիրը չի փոխեր³ : Ըսուածներէն կը հետեւի որ դիմողներէն չի կրնար համարուել այն՝ որ յատեան կոչուելով՝ ի պաշտպանութիւն անձին ընդդէմ Առաքելական թղթոց յատենի երեւայ : Այսպիսի դէպք կրնայ հանդիպիլ, օրինակի աղաղաւ երբ մէկէ մը պահանջուի, որ իր վրայ դրուած թողալիս Առաքելական թղթի մը պատճառաւ վճարէ, եւ այն անձը ջանայ ցուցնել թէ նոյնը վճարելու պարտական չէ⁴ : Ուստի, միշտ պիտի դիտուի՝ ընդդէմ Առաքելական թղթոց աշխարհական իշխանութիւնը յօգնութիւն կոչել, որպէս զի այնու անզոր եւ առանց աղբեցութեան մնան⁵ :

Իսկ թէ այդ դիմումն այն ատեն բանադրանայ տակ կ'իյնայ երբ կը դիմուի, թէ արդիւնք մը յառաջ բերելէն ետեւ, այնպէս որ եթէ այդ դիմումն ապարդիւն մնայ՝ բանադրանք չըլլայ, ասուածաբանից մէջ խնդիր է : Վերջին կարծիքն ունի իւր բաւական պատ-

¹ Ռայֆֆ. անդ :
² Օր. 6. կ. Վասն բողբմ :
³ Ռիէդի, էջ 45, թ. 69 : Բատ. էջ 91, թ. 168 :
⁴ Չուլի, էջ 68, թ. 89 :
⁵ Փորփոգ. 54 : Չուլի, 66, թ. 88 :

ճառներն, անոր համար գործնականի մէջ ասոր ետեւէն երթալով դժուարաւ կը սխալուի¹ :

2.

«*Արգելոյք*» են անոնք, որ սրեւէյէ կերպով² ուղղակի կամ անուղղակի կ'արգելուն նոյն թղթոց կամ գործադրութիւնն, ինչպէս ըստ իրաւանց եւ սովորութեան կը գործադրուէր. այնպէս որ նոյններն արգելման պատճառաւ վախճանադուրի եւ ապարդիւն մնան նկատմամբ անոնց՝ որոնց կը վերաբերէին կամ որոնց համար տրուած էին : Եւ որովհետեւ կանոնիս մէջ արդէն տրուած քահանայապետական թղթոց արգելման վրայ է խօսքը, անոր համար այս բանադրանայ տակ չեն իյնար անոնք, որ ընդհանրապէս նոյն թղթերն ընդունիլ կամ հրատարակելը կ'արգելուն, կամ իրենք ուրիշներէ ընդունած ըլլալով չեն ուզեր հրատարակել, շուտով կատարել տալ կամ ի գործ դնել. վասն զի այսպիսի զանցումն, չուղելը, տակաւին դրոպէս արգելուլ չի կրնար ըսուիլ³ : Իսկ ըստ ընդհանրագոյն եւ հաւանականագոյն կարծեաց չի պահանջուիր, որ այդ արգելումը հրապարակական իշխանութենէ մ'ըլլայ. կը բաւէ եթէ ասանձնականէ մ'ալ ըլլայ : Եւ որովհետեւ ընդդիմակայ կարծիքն՝ որ աշխարհական էլիսանոնիս կը պահանջէ, շատ աստուածաբաններէն հաւանական կը կոչուի⁴, կրնայ գործնականին մէջ այս մեղմագոյն կարծեաց հետեւուիլ⁵ :

Այս արգելողներու համար պահանջեալ պայման է, որ արգելումն արդիւնք յառաջ բերէ, հրապարակումը կամ գործադրութիւնն իրօք արգելուի : Վասն զի այլազոյ անյանջող քորք մը կ'ըլլար մանաւանդ, եւ ոչ արգելուլ⁶ :

¹ Ռիէդի, 46, թ. 73 : Փր. Հայն. անդ, էջ 104 :
² Նոյն, էջ 100 :
³ Չուլի, 68, թ. 8 : Փր. Հայնէր, էջ 101 :
⁴ Հմմ. Պոնաչ, թ. 10 : Հուէդիս, թ. 328 :
⁵ Հմմ. Սուրի-Պալլ. Բ. 972 :
⁶ Մեկն. Հոմմ. էջ 288 :

3.

«վնասել» սովորական խօսակցութեան մէջ կը նշանակէ ոչ միայն մարմինը վերաւորել, ինչպէս ոմանք¹ կ'ուզեն, հապա նաեւ ուրիշ ժամանակաւոր բարեաց վնաս մը հասցընել, թէպէտ նիւթապէս ստացեալ իր ըլլան, թէպէտ աննիւթական բարիք, ինչպէս՝ պատիւ, բարի համբաւ²: Ուստի Ընթերցող կանգակը³ կ'ըսէ. «Վնասող են անոնք՝ որ կը բռնեն, կը զարնեն, կը վերաւորեն, կը բանտարկեն, տեղ մը կը պահեն, քաղաքներէն, տեղերէն, թագաւորութիւններէն կտրտաքսեն, ստացուածները կը յափշտակեն, կը սարսափեցընեն, կը սասանեցընեն եւ կը սպառնան»:

«Վնասել ընել» չէ լոկ վախ ձգել, թէեւ ծանր ըլլայ. հապա կը նշանակէ սարսափ, անձկութիւն պատճառել, կամ բռնաբարութեամբ մէկուն սպառնալ:

Այս վնասելը կամ ահաբեկ ընելը կրնայ կամ «նոյն ակնակց» ուղղուիլ, որոնք Առաքելական Աթոռէն կամ անոր Նուիրակէն պատասխանազիր մը կամ նպաստաւոր վճիռ մ'ընդունած են, կամ որոնք նոյն թղթերը կը հային. եւ կամ «որիցնեքոռն», որոնք նոյն Առաքելական թղթոց հետ յարաբերութեան մը մէջ են: Այսպիսի են ոչ միայն անոնք՝ որ նոյն թղթերը պիտի հրապարակեն կամ ի գործ դնեն, հապա նաեւ՝ որոնք որ առանձինն (ինչպէս՝ ազգականութեան) յարաբերութիւն մ'ունին անոնց հետ, որոնց նոյն թղթերը կը վերաբերին. ուստի «անոնց գործակալքն, ազգականքը, խնամքը, ընտանիքը, նոտարք, գործադիրք եւ երկրորդական գործադիրք թղթոց»⁴:

Սոյն վնասողներն ու ահաբեկ ընողներն ընդ վնասելը կամ ահաբեկ ընելը, թէեւ արդիւնքն՝ սրուն համար ըբին, յառաջ չի գայ, բանադրանաց տակ կ'իյնան⁵:

¹ Կուրի-Պալլ. անդ:

² Բէք. էջ 62:

³ § 13:

⁴ Կոնդ. Ընթերցող, § 13: Օր. 8, վերջ. Վասն պատճ. երկ:

⁵ Ռիեդի, էջ 46, թ. 73:

Այս երեք տեսակ յանցաւորք բանադրանաց տակ կ'իյնան հաւատարապէս՝ եթէ ըլլան աշխարհական եւ եթէ կղերական¹. նոյն իսկ այն ատեն, երբ դիմումն, արդելումը, վնասելը կամ ահաբեկ ընելն առժամանակեայ արդիւնք մը միայն յառաջ բերէ. վասն զի այդ գործքը միշտ Առաքելական Աթոռոյ իշխանութեան մեծ անարդանք է²: Նոյնպէս զանազանութիւն մը չըլլաւիր, թէ այդ դիմումն, արդելումը, վնասելը կամ ահաբեկ ընելն ինչ դիտամբ եղած է. հաւատարապէս նոյն է, թէ յատելութենէ կամ յարհամարհանաց ընդդէմ Առաքելական Աթոռոյ ըլլայ; եւ թէ կարծեալ վնասէ մ'ազատելու համար³. վասն զի Ս. Աթոռոյ ազատութեան դէմ միշտ յարձակում մը կայ: Եւս առաւել չ'օգտեր պատճառելը թէ՛ Պատասխանազիրը նենգեալ է կամ անիրաւ. վասն զի ասիկայ քննելը հոգեւոր դատաւորին գործն է⁴: Միայն սա դէպքը կրնայ բանադրանքէ ազատ մնալ, երբ քահանայապետական պատասխանազիրի մը գործադրութիւնը մէկու մը վնաս յառաջ պիտի բերէ, եւ միւս կողմանէ գործնականապէս հաստատուն ըլլայ, համոզուած ըլլայ, թէ նոյնը նենգեալ է, եւ այդ պարագայից մէջ եկեղեցական դատաւորի մը դիմելը հնարաւոր չըլլայ⁵: Վասն զի այս դէպքիս մէջ եթէ իրօք նենգեալ է, Առաքելական թուղթ չէ արդելումը. իսկ եթէ նենգեալ չէ, բարեմտութիւնը բանադրանքէ կ'ազատէ⁶:

Թ.

«Այն ամէնքն՝ որ կը խարդախեն հոռմայ Բահանայապետէն, կամ՝ Սրբոյ Հոռմական Եկեղեցւոյ Փոխան-Ատենադպիրներէն, կամ՝

¹ Պոնաշ. Մ. 1, թ. 26; Զուլի, 67, թ. 88:

² Հռեդի. թ. 322: Ռիեդի, էջ 46, թ. 72:

³ Պոնաշ. Մ. 2, թ. 19, 20; Զուլի, 66, թ. 88:

⁴ Ռիեդի, անդ:

⁵ Տրեդ. Բանադր. թ. 9:

⁶ Շմայցիլիւպեր, Ե. 20. 4:

անոնց Փոխանորդներէն, եւ կամ՝ Ծորին Հոռմայ-Քահանայապետին հրամանաւ ստորագրեալ Առաքելական թղթերը, թէ եւ Համառօտագրի ձեւով եւ շնորհքի կամ՝ արդարութեան վերաբերեալ աղերսագրի ձեւով ըլլան. դարձեալ որոնք որ ստուծեամբ Առաքելական թղթեր կը հրատարակեն, թէ եւ Համառօտագրի ձեւով ըլլան. նոյնպէս որոնք որ այսօրինակ աղերսագրոց՝ Հոռմայ-Քահանայապետին կամ՝ Փոխան-Ատենադպրին կամ՝ վերոյիշելոց Փոխանորդացն անուամբ՝ ստուծեամբ կը ստորագրեն:»,¹

Անոնս Առաքելական թղթերը խարդախողներուն դէմ ուղղուած է: Ըստ կանոնական իրաւանց խարդախող կը կոչուի այն՝ որ զճշմարտութիւնը կը փոփոխէ կամ կը բռնաբարէ, անով զուրիշ մը խաբելու դիտմամբ²: Այս խարդախեն այլեւայլ կերպով կրնայ ըլլալ: Կրնայ սկզբնագիրը նոյն մնալ, բայց հարազատ իմաստը փոխուիլ եւ կերպարանափոխ ըլլալ. եւ կամ կրնայ նոր Առաքելական թուղթ մը հնարուիլ եւ իբրեւ վաւերական, իբրեւ հարազատ հրատարակուիլ: Ըստ այսմ, կանոնս երկու մասի կը բաժնուի: Ա. մասին մէջ կը բանադրուին անոնք՝ որ հարազատ Առաքելական թղթեր կերպով մը կը փոխեն եւ կ'ապականեն, այնպէս որ ուրիշ իմաստ մը կ'ունենան, քան զոր Քահանայապետը կամ Փոխանակը նորա կ'ուզէին որ ունենան³. ասոնք կը կոչուին կանոնիս մէջ՝ «խարդախողներ»: Բ. մասին մէջ կը բանադրուին անոնք՝ որ թուղթ մ'իջբերին Քահանայապետէ կամ իրեն Փոխանակներէն տուեալ կ'ուզեն ցուցնել: Ասիկայ երկու կերպով կրնայ ըլլալ 1. Թուղթ մ'անձամբ դրելով եւ իբրեւ վաւեր քա-

¹ Ի Կոնգ. Բեթլեհեմ, Զ.: — Տես էջ 11:
² Սուար. 21. 2. 49:
³ Կ. 5. 6. վասն յանց. Օր. 2. Գ.: Սուար. 21. 2. 46:

հանայապետական թուղթ հրատարակելով¹. դասոնք կանոնս «խրատարակող» կ'անուանէ: Եւ 2. Քահանայապետին ուղղուած աղերսագրի մը ստուծեամբ ստորագրելով կամ կնիք դնելով, եւ այսպէս իբրեւ Հաճեալ հրատարակելով². ասոնք ալ կը կոչուին՝ «ստուծեամբ ստորագրող»:

1.

«խարդախողներն» այլեւայլ կերպով կրնան Առաքելական թղթոյ մ'իմաստը փոխել. զոր օր. ինչ ինչ բառեր ջնջելով, նախադասութիւններ աւելցնելով, եւ այլն: Նոյն իսկ ամենափոքր նիւթական փոփոխութիւն կը բաւէ բանագրանաց տակ իյնալու համար, եթէ թղթոյն իմաստն անով փոխուի եւ չար դիտաւորութեամբ եղած ըլլայ: Աւերջնա չէր գտնուէր օրինակի աղագաւ, եթէ մէկն Առաքելական թղթոյ մը մէջ եղած սխալ մը սրբագրէր, քերականական սխալ մ'ուղղէր, սխալ մտկանուն մը փոխէր, եւ այլն: Ասիկայ խարդախել չէ, մանաւանդ թէ ընդ հակառակն իմաստն ուղղել է³: Ըստ այսմ, որպէս զի մէկը «խարդախող» կարենայ ըսուիլ, եւ հետեւապէս բանագրանաց տակ իյնալ, կը պահանջուի, որ

Ա. Առաքելական թղթոյ մը հարազատ եւ յատուկ ծառայող փոխուի կամ բոլորովն խափանուի, որ գիր մը միայն ի բաց քերելով ալ կրնայ ըլլալ: Թղթոյ մը երկրորդական փոփոխութիւնքն առանց փոփոխութեան իմաստի, բանագրանաց տակ չեն իյնար. վասն զի այս յատուկ մտօք խարդախել չէ⁴:

Բ. խարդախելը՝ նենդելու չար դիտաւորութեամբ ըլլայ⁵:

Գ. խարդախեալ թուղթն՝ երբ ուրիշին ուղղուած է, ուրիշն մը մեծ փաս մը հասցնել կարենայ. եւ այն-

¹ Մեկն. Հռոմ. էջ 304: Ռիեդի, էջ 49, թ. 77:
² Ի § 7: Յուստ. Հրատ. Գատ. Կ. 8. վասն յանց. խարդ. Գ. 20:
³ Շմայցկրիւպ. Ե. 20. 43:
⁴ Նոյն, անգ:
⁵ Ռիեդի, էջ 47, թ. 75:

պէս ըլլայ, որ իրօք ալ զուրիշ մը խաբէլ կարենայ¹։ Իսկ եթէ է խարդախողին սեպհական է, սրբելիցէ կերպով խարդախելը բաւական է²։

Գ. Խարդախեալ թուղթն՝ «Առաքելական» ըլլայ։ Այսպիսի են՝ կոնդակի³, համառօտագրի ձեւով քահանայապետական թղթեր. նոյնպէս աղերսագրի ձեւով գրուածներ՝ որոնք Քահանայապետին ուղղուած են եւ որոնց պատասխանը տրուած է ստորագրութեամբ Քահանայապետի կամ Փոխան-Ատենագրի, կամ Փոխանորդի նորա, եւ կամ՝ յանձնարարութեամբ Քահանայապետի ուրիշ եկեղեցական Առաջնորդի մը։ Կանոնս այսպիսի աղերսագիրները կը զանազանէ յայնպիսի՝ որոնք իրաւանց եւ արդարութեան կը հային դատերու իրաւաստ ըլլալով կամ դատ ընելով։ Այս աղերսագրոց պատասխանը կը տրուի յատուկ պատասխանով, այն է՝ յիշելով խնդրուածքը, ասոնք կը կոչուին՝ Պարասխանաբեր վերաբերեալ (rescripta bis scripta). եւ կամ՝ լի ստորագրութեամբ անուան նոյն աղերսագրոյն տակ, կամ նոյնին վրայ կնիք դրոյձելով՝ ընդ բանիւքս, Եղեցի (fiat), Շնորհեալ (concessum), որ շնորհքի իրաց շնորհման սովորական է, եւ կամ Հաճոյ է (placet)⁴։

Ասկէ յայտնի է, որ բանագրանացս տակ չեն կոչուար Նուիրակաց կամ Հռոմէական Ս. Ժողովոց թղթերը խարդախողները⁵։ Նոյնպէս չեն կոչուար անոնք որոնք այնպիսի թղթեր կը խարդախեն, որոնք թէեւ Առաքելական Աթոռէն տրուած են, բայց տակաւին չեն ստորագրուած կամ կնքուած. կամ՝ նաեւ եթէ ասոնք ալ եղած ըլլան, բայց իրենց զօրութիւնն արդէն կորուսած ըլլան եւ հնար չըլլայ դարձեալ ստանալ. ինչպէս ամուսնութեան տնօրինման վերաբերեալ թուղթ մը, երբ երկու ամուսնա-

¹ Ռայֆֆ. Ե. 20. 1: Շմայ. Ե. 20. 6.:
² Կուրի-Պալլ. Բ. 972:
³ Լեւոն ԺԳ-ի (29 Գեկա. 1878) մէկ վճռոյն համաձայն՝ այսուհետեւ Կոնստանդնուպոլսի մեծ բարերարութիւն տալու, բաժնելու եւ հաստատելու համար, եւ հանդիսաւոր ու մեծամեծ գիտաց մէջ պիտի գործածուի:
⁴ Քէր. էջ 64:
⁵ Չուլի, 70, թ. 92:

ցեաներէն մէկը, որոնց այս թուղթը կը վերաբերեր, արդէն մեռած ըլլայ¹։

Խարդախման յանցանքը կայունցանող այս չորս պահանջները մէկը պակսելու ըլլայ, այս յանցանաց վրայ դրուած պատիժը տեղի չ'ունենար²։

2.

Ա. «Հրատարակող» են այս կանոնիս մէջ այն ամէնքն, որ գիտութեամբ իբրեւ Առաքելական կը հրատարակեն թուղթ մը, որ այնպիսի յատուկութիւն չունի։ Չանազանութիւն մը չ'ըլլալով թէ այս թղթերը նոյն իսկ իրենցմէ յորինուած են, թէ ուրիշէն. բաւական է բանագրանացս մէջ իյնալու համար՝ այսպիսի թղթերը գիտութեամբ եւ կամօք հրատարակելը, որ բաւական ըլլայ նոյները շատերուն ծանօթացնելու³։

Բ. «Մտոյթ եւամբ ստորագրող» են անոնք, որոնք կամ հարազատ աղերսագրոց սուտ կնիք, կամ անհարազատ աղերսագրոց հարազատ կնիք կը դնեն. եւ կամ հարազատ աղերսագրոց թէեւ հարազատ եւ վաւեր կնիք կը դնեն, բայց առանց յանձնարարութեան Քահանայապետի⁴։

Այս երեք տեսակ յանցաւորաց բանագրանացս տակ իյնալու Ժամանակն նկատմամբ՝ մտադրութեան արժանի են յաջորդքս։ «Խարդախողք» ընդ խարդախելը ըմնելը եւ իբրեւ դործք լրանալը կ'իյնան բանագրանաց տակ, նաեւ եթէ այս թուղթն ամենեւին չգործածուի⁵, եւ կամ զեղզման (obreptio) կամ սպրդման (subreptio) պատճառաւ անվաւեր ըլլայ։ Իսկ «հրատարակողք» եւ «ստորագրողք» անմիջապէս հրատարակելէն ետքը կ'իյնան. վասն զի ասոնց նկատմամբ խարդախելն այն ատեն լրացեալ գործ կ'ըլլայ⁶։

¹ Շմայ. Ե. 20. 28: Սուար. Ժ. 2. Բ. 42. 49: Ռիէդի. էջ 48, թ. 76:
² Ռայֆֆ. Ե. 20. 1: Շմայ. Ե. 20. 4:
³ Մեկ. Հռոմ. էջ 304:
⁴ Ռիէդի, էջ 48, թ. 77:
⁵ Նոյն, 49. թ. 78:
⁶ Պոնաչ. անդ. թ. 9: Ռիէդի, էջ 48, Ծ. 12: Չուլի, 69, թ. 91:

Աւստի, միայն այս երեք տեսակ յանցաւորք բանադրանաց տակ կ'իյնան, եւ ոչ՝ յօրինիչք, եթէ յօրինած թղթերն չեն հրատարակած, ոչ օգնականք, խորհրդատուք, յանձնարարողք եւ այլ եւս օգնականք, ինչպէս երբեմն կ'իյնային¹։ Իսկ այսպիսի խտրականք թղթերը գործածողներ Եպիսկոպոսին վերապահեալ բանադրանաց տակ կ'իյնան, ինչպէս ետքէն պիտի տեսնենք։

ժ.

“Որոնք որ զմեղսակիցն ի գազիր մեղս, նանս ի կէտ մնան՝ կ'արձակեն, երբ ուրիշ Բահանայ մը, թէպէտ խոստովանանք լսելու իշխանութիւն չունենայ, առանց ծանր վատահամբաւութիւն եւ գայթակղութիւն յառաջ գալու, կրնայ հոգեվարին խոստովանութիւնը լսել։”²

Որպէս զի Ապաշխարութեան Ս. Ատենան անօրինաց զրպարտութեան նշաւակ չըլլայ, եւ Ս. Խորհուրդն՝ որ ողորմութեամբն Աստուծոյ ի ջնջել զմեղս հաստատեցաւ, սրբապիղծ անօրէնութեամբ ի նպատակ զազիր մեղաց չըջնէ, Ս. Եկեղեցին կ'արդէլու զազիր մեղաց մեղսակիցն արձակել, բառնալով ամենայն իրաւաբանութիւն նկատմամբ այս մեղաց, ի բաց առեալ մահուան կէտը։ Այսպէս Բենեդիկտոս ԺԳ., ի Սահմանադրութեան Խորհուրդն Ապաշխարութեան։ Բենեդիկտոս ԺԳ. ի այս Սահմանադրութեան մէջ երկու գետք կայ վերապահեալ Քահանայապետին։ 1. Ի զազիր մեղս մեղսակիցն արձակելու յանդգնութիւնն, եւ 2. Ստութեամբ զեկուցանել զՔահանայից վասն հրապուրման։ Այս վերջինը մինչեւ ցայսօր առանց բանադրանքի մը Քահանայապետին վերապահեալ է։ Իսկ առաջինը

¹ Մէկ. Հռոմ. 301։ Ռիեդի, 49, Թ. 78։

² Ի Կոնգ. Բենեդիկտոսի ԺԳ. ի Խորհուրդն Ապաշխարութեան, 1 Յունիս, 1741։ — Տես էջ 11։

կանոնիս մէջ կը դրուի հանդերձ առանձինն կերպով վերապահեալ բանադրանք։ Այս առանձինն կերպով վերապահութիւնը միայն նկատմամբ այս մեղաց, այնպիսի է՝ որ ընդհանուր եւ ամենընդարձակ կերպով արուած Առաքելական Աթուոյ (նաեւ առանձինն կերպով Քահանայապետին) վերապահեալ մեղքերէն արձակելու իշխանութեանց մէջ, զոր Ս. Աթուռն ըստ հանգամանաց տեղեաց եւ ըստ պաշտամանց անձանց, ինչպէս առաքելութիւն ընողներուն կը շնորհէ, յայտնապէս ի բաց կ'առնուի, եթէ յատուկ եւ յայտնի բառերով այս բոլորովն առանձինն իշխանութիւնը չի յիշատակուիր¹։ Այս բացառութիւնը վերստին վճռեցաւ ի Ս. Ժողովոյ Քննութեան, 4 Ապր. 1871։ Անոր համար կրնայ բուռիլ, թէ այս բանադրանքը հիմայ *specialissimo modo* կերպով (specialissimo modo) վերապահեալ է²։

Այսպիսի բանադրանաց տակ կը ձգուին կանոնիս մէջ “արձակողք”, այսինքն այն խոստովանահարք, որ խոստովանանքը լսելէն ետեւ արձակման ձեւն ի զազիր մեղս մեղսակիցն վրայ կ'ընեն, արտաքոյ մահուան կէտին։ Ըստ այսմ, որպէս զի մէկն այս բանադրանաց տակ ինչայ կը պահանջուի, որ 1. Արձակում արուի, 2. Ի զազիր մեղս 3. Մեղսակիցն, 4. Արտաքոյ մահուան կէտին։ Տեսնենք կարգաւ։

1. Կը պահանջուի իրօք արշահում ասլ, ինչպէս կանոնիս մէջ կ'ըսուի, “որոնք որ կ'արձակեն”, եւ այն գիտութեամբ եւ մտադրութեամբ. այսինքն՝ մեղսակիցն արձակող խոստովանահարքը պիտի գիտնայ, որ ի զազիր մեղս մեղսակիցն արձակելն ընդ դատակնքօք արգելեալ է, եւ միանգամայն դիտակ պիտի ըլլայ, որ խոստովանողն՝ որուն վրայ արձակման ձեւը կ'ընէ, իր նոյն մեղաց այր կամ կին գործակիցն է³։ Եթէ մէկը պարզապէս խոստովանութիւնը լսէ առանց արձակելու, բանադրանաց տակ չ'իյնար⁴. նոյնպէս եթէ խոս-

¹ Չիտ. Ս. Ժողովոյ Քննութեան, 17 Յունիս, 1866։

² Աւանց. անդ, էջ 18։

³ Փր. Հայնէր, էջ 109։

⁴ Ս. Լիդ. 2. 566. է. 356։ Սուսար. ԺԱ. 3. 15։

տովանութեան իշխանութիւն չունեցող Քաճանայ մ'արձակում տայ. վասն զի այնպիսին խոստովանահայր չէ՜: Իսկ իշխանութիւն ունեցողն այսպիսի դիպաց մէջ նոյն իսկ եթէ արձակում տալ կեղծէ, կ'իյնայ բանադրանաց մէջ: Վասն զի Ապաշխարութեան Ս. Ժողովոյն հարցուեցաւ, թէ «Արդեօք խոստովանահայրն, որ ըստ մտաց Աստուծոյ կ'ունդակին ի զազիր մեղս սյր կամ կին մեղսակիցն արձակել ձեւացընէ, ինչպէս՝ աղօթք կամ ուրիշ խօսքեր ըսելով, կամ նաեւ լռելով, այնպէս որ միայն նշանաւ կամ ձեռքը շարժելով կարծուի թէ իրօք զխոստովանորդին կ'արձակէ ի մեղաց, այս Սահմանադրութեան մէջ դրուած առանձինն կերպով վերապահեալ բանադրանաց տակ կ'իյնայ»:», Որուն պատասխանեց Ս. Ժողովը, 1 Մարտ, 1878. «Ս. Ժողովն Ապաշխարութեան՝ առաջարկուած երկբայութիւնքն հասուն խորհրդով կշռելէն ետեւ կը պատասխանէ. Ի զազիր մեղս մեղսակիցին արձակումը ձեւացընող խոստովանահայրը Բենեդ. Ժ. Ի. ի Խորհ. Ապաշխարութեան կոնդակին վերապահեալ բանադրանքէն չեն ազատիր»¹:

2. Աը պահանջուի արձակում տալ ի զազիր մեղս մեղսակիցին: «Չազիր մեղս», ըսելով կ'իմացուի՝ Քահանային եւ ուրիշ անձի մէջ վեցերորդ պատուիրանի դէմ դործուած ամէն քանք, արքային եւ քրոջին մեղս: Արդ, զազիր մեղաց համար չորս բան կը պահանջուի:

Ա. Մեղքն Ատուծոյ վեցերորդ պատուիրանին դէմ ըլլալ: Ըստ այսմ, կրնայ խոստովանահայր մ'առանց բանադրանաց մէջ իյնալով վաւերաբար արձակել անձ մը, որուն հետ ուրիշ պատուիրանի մը դէմ մեղանշած է³:

Բ. Ծանր մեղս մ'ըլլայ: Ուստի զազիր մեղք չեն ըստ մտաց կանոնիս՝ ներելի մեղք անպարկեշտութեան, եթէ ըլլան ներելի վասն թեթեւութեան նիւթոյն, եւ եթէ առ ի չգոյց մտադրութեան եւ հաւանու-

¹ Չողի, 72, թ. 95:
² Հմմ. Լինց, Երասխայ քեդր, Գ. Տ. 1882, էջ 487. Բ. Տ. 1885, էջ 461:
³ Բենեդիկտ. Ժ. Ի. Արքային պատասխան: Չողի, էջ 72, թ. 85, եւ այլն:

թեան. նոյնպէս ոչ՝ կէս մահացուք: Նաեւ այս ծանր մեղքն ալ նարկաւոր չի խոստովանութեան պիտի ըլլայ: Եթէ արդէն նոյն մեղքն ուրիշ Քահանայէ մ'արձակուած է, եւ մեղսակիցը կ'ուզէ դարձեալ խոստովանիլ, ինչպէս ընդհանրական խոստովանութեան մէջ, այն ատեն այն մեղքը կ'առարկէ չի, զոր կրնայ նաեւ մեղսակից խոստովանահայրն արձակել, առանց բանադրանաց տակ իյնալու¹: Նոյնպէս կրնայ Քահանայ մ'առանց մեղաց եւ ըստ հետեւորդի առանց բանադրանաց, մեղսակիցն ուրիշ մեղքերէն արձակել, եթէ նոյն անձն իշխանութիւն ունեցողէ մը զազրակի մեղաց արձակումը վաւերաբար ընդունած է: Վասն զի ի զազիր մեղս մեղսակիցին զազրակի մեղքերն՝ եւ ոչ ուրիշներն արձակելու իշխանութիւնը բարձուեցաւ այսպիսի Քահանաներէն: Եթէ մեղսակիցն իւր մեղսակից Քահանային այս զազիր մեղքը միայն խոստովանի, թէ եւ յառաջագոյն ուրիշէ մ'արձակուած ըլլայ նոյն մեղքէն, չի կրնար այս Քահանան արձակել. վասն զի արձակելու նիւթ չկայ, եղածն ալ ինք չի կրնար արձակել: Իսկ եթէ արձակուած զազիր մեղաց հետ ուրիշ մ'ալ խոստովանի, կրնայ այսպիսի Քահանան զինք արձակել: Եթէ Քահանայի մ'առանձին վճռով արգելուած է ընդ մեղս իւր մեղսակիցն արձակելը, այսպիսի վճիռ մը թող ջնջուի, կ'ըսէ Ս. Ժողովն Սիւնհոգոսաց (2 Գեկտեմբեր, 1679)²: Բայց պատշաճ է որ թէ այսպիսի Քահանան յանձն չառնաւ մեղսակիցին խոստովանութիւնը, եւ թէ հաւատացեալները մեղսակից Քահանային խոստովանելէն զգուշացուին:

Գ. Արքային մեղս ըլլայ. այսինքն՝ արտաքուստ յայտնեալ եւ ոչ պարզապէս մտօք կամ բաղձնօք դործուած մեղք մը. վասն զի օրէնքը զարտաքինս միայն կը գատի: Արտաքին են ոչ միայն լրացեալ մեղք, հապա նաեւ անհամեատ շօշափմունք, լիտի համբոյք, անպարկեշտ հայեցումք, պղծաբան խառնխօսութիւնք, սիրահար թուղթք. միով բանիւ՛ ամէն արտա-

¹ Ռիէզի, 50, թ. 80: Չողի, 72, թ. 95: Աբալինի, Գ, 485:
² Հմմ. Կորիւ-Պաղ. Բ. 587:

քին ծանր պղծութիւն սուրբ անմեղութեան¹: Ուստի, ըստ մտաց կանոնիս զպղբ մեղք չէն բարբոսվին ներքին, կամ ոչ բարբոսվին արտաքուստ յայտնեալ մահացու մեղքերն:

Գ. Այդ մեղք քրիստոսի դործուած ըլլայ: Այսինքն, չի բաւեր որ մեղքը միայն Քահանային կողմանէ ծանր եւ արտաքին ըլլայ. հապա երկու կողմանէ ալ նոյնպիսի պիտի ըլլայ: Այսին զի մեղաւորութիւնը՝ փոփոխակի դործուած, երկու կողմանէ ալ կերպապէս մեղք կ'ենթադրէ. ուստի մեղքն երկու կողմանէ ալ ծանր եւ արտաքին պիտի ըլլայ, եւ մեղքը փոփոխ դործած ըլլալնին երկուքն ալ պիտի զիտնան²: Ըստ այսմ, եթէ այն անձն՝ որուն հետ Քահանայ մը մաքրութեան դէմ մեղք մը դործած է, արտաքուստ դէմ կեցած է, թէ եւ ի ներքուստ հաւանած ըլլայ, եւ կամ՝ եթէ Քահանայն (զոր օր. ծպտելով, զիմակաւորուելով) իւր մեղաւորէն չէ ճանչցուած, ան ատեն այսպիսի խոստովանահարմէ այնպիսի խոստովանորդւոյն արուած արձակումն անվաւեր չէ եւ նոյն արձակման համար բանադրանաց տակ չ'իյնար. վասն զի այս ամէն զիպաց մէջ կերպական մեղաւորութիւն չ'իլայ³: Նոյնպէս երբ խոստովանահարմը չի ճանչնար կամ կը տարակուսի թէ արդեօք խոստովանողն այն անձն է, որուն հետ ընդդէմ վեցերորդ պատուիրանի մեղանչեց, թէպէտ ըստ ընդհանրադոյն եւ ճշմարտադոյն կարծեաց անվաւերաբար կ'արձակէ⁴, բայց բանադրանաց տակ չ'իյնար. վասն զի կրնայ խոստովանահարմը՝ ստուգելու համար, այս բանին վրայ խոստովանորդւոյն հարցում մ'ընել⁵:

Յ. Ար պահանջուի արձակում տալ մեղաւորին:

¹ Ս. Լիդ. Չ. 554: Կորնի, Բ. Թ. 584 (Նոր տպ. Հոս.)
Սքաւ. Գ. 868: Զմբ. էջ 71, Թ. 94, եւ այլն:
² Ս. Լիդ. Չ. 554: Սքաւ. 368: Զմբ. էջ 71, Թ. 94:
Ռիէդի, էջ 50, Թ. 80, եւ այլն:
³ Հմմ. Ս. Լիդ. Չ. Թ. 554: Սքաւ. Գ. 485: Զմբ., 72, Թ. 95:
⁴ Հմմ. Զմբ., էջ 73, Թ. 96. Յր ընդ Յր: Փր. Հայն.
էջ 114:
⁵ Մեկն. Հո. էջ 333, 334: Ռիէդի, էջ 54, 81, եւ այլն:

«Մեղաւորից», ըսելով՝ հոս ամենեւին սեռի տարբերութիւն չ'ըլլաւիր. ուստի կ'իմացուի ոչ միայն կին, այլ նաեւ այր¹: Նոյնպէս զանազանութիւն չ'ընէր օրէնագիրը, թէ այս մեղաւորութիւնն ուր, երբ, ինչ պատճառանօք, ինչ առթի մէջ, որ հասակի մէջ², կամ խոստովանանքի մէջ թէ դուրս, եղած է: Բաւական է ի միտին մեղանչել ընդդէմ վեցերորդ պատուիրանի, թէ եւ յառաջ քան զՔահանայ ձեռնադրուելը³: Այսին զի օրէնքն ամենեւին զանազանութիւն մը չ'ընէր, մենք ալ իրաւունք չունինք ընելու⁴: — Արջայպէս

4. Ար պահանջուի, որ այսպիսի արձակումն արդարեւ ճանճան կեդրէն արուի: Ուստի, այսպիսի Քահանայի մ'առողջ մեղաւորին նոյն մեղաց համար տուած արձակումն ամենեւին չ'արժէր, եւ ինքն արձակել յանդգնելովը բանադրանաց տակ կ'իյնայ: Նոյն իսկ մահուան կէտին խոստովանահարմ մ'իւր մեղաւորիցը թէ եւ վաւերաբար, բայց ապօրինաւոր կերպով կ'արձակէ նոյն մեղքէն, եւ բանադրանաց տակ կ'իյնայ. ինչպէս կանոնիս մէջ կ'ըսուի «*Անտ ի կիս մաննո:*» Միայն հետեւեալ զիպաց մէջ կրնայ այսպիսի խոստովանահարմ մը մահուան կէտին վաւերաբար եւ առանց բանադրանաց արձակել:

Ա. Երբ ոչ խոստովանութեան իշխանութեան ունեցող եւ ոչ զանեցող Քահանայ մը կ'արեւայ գործուի: Եթէ խոստովանութեան իշխանութիւն չունեցող Քահանայ մը դանուի, մեղաւորից Քահանայէն նախաձեռնար պիտի ըլլայ, ինչպէս կանոնիս մէջ յայտնապէս կ'ըսուի: Բայց, եթէ մեղաւորից Քահանան ուրիշ Քահանայ մ'ամենեւին չ'զմտուած ատեն հոգեվար մեղաւորին խոստովանութիւնը լսելու արդէն սկսած է, եւ խոստովանութեան ժամանակ ուրիշ Քահանայ մը վրայ հասնի, կրնայ մեղաւորից Քահանան խոստովանութեան ունեցողութիւնը շարունակել եւ արձակում տալ: Այսին զի ընդհանուր զիւրու կրնայ նոյն խոստ

¹ Կորնի, Բ. 485:
² Ռիէդի, էջ 50, Թ. 80:
³ Լից, Երեւոյ տեղ, Գ. 1882, էջ 847:
⁴ Կան. Իրաւ. առ 6:

տովանահօր դէմ կասկած յարուցանել եւ համբար վտանդի մէջ դնել: Այսպիսի դիպաց մէջ ի զօրութեան է իրաւագիտական սկիզբը, թէ՛ «Ուր միանգամ ընդունուեցաւ դատարանը, նոն ալ կատարելու է՛:»

Բ. Երբ թէեւ կարենայ իշխանութիւն ունեցող կամ չունեցող Քահանայ մը գտնուիլ, բայց հասանալիս արանց ծանր է մեծ վրանքի վարանամբանութեան մեղաւորին է արանց բայթակղութեան չկարենայ բերուիլ²: Բայց այս վտանգն ու գայթակղութիւնն այնպիսի պիտի ըլլայ, որ չկարենայ բարձուիլ: Եթէ կարելի է գայթակղութեան վտանգը բառնալ, ինչպէ՞ս պատճառանօք մը մեկնելով, եւ բառնալու միջոցներն անփութութեամբ դանց կ'առնուին, այն ատեն մեղաւորի Քահանան վաւերաբար, բայց ապօրինաւոր կերպով³ արձակում տալով բանադրանաց մէջ կ'իյնայ⁴: Իսկ եթէ միջոցներն ի դորձ դրուին, եւ ուրիշ Քահանայ մը կոչելով՝ մեղաւորի Քահանային կամ հոգեվարին վատահամբաւութեան վտանգը չբարձուի, կրնայ նոյն մեղաւորի Քահանան հոգեվարին խոստովանութիւնը լսել եւ վաւերաբար արձակել:

Գ. Երբ թէեւ ուրիշ Քահանայ մ'ըլլայ եւ վերջիշեալ վտանգները չըլլան, բայց հոգեվարը քոչորձակապէս չ'ուզէր այդ ուրիշ հասանային խոստովանել, որովհետեւ ան Քահանան իր ազգականն է կամ թշնամին, այնպէս որ ընդդիմութիւն մ'ունի իրեն դէմ⁵:

Արդ, ընդ այս ամէն պայմանները գտնուիլը, իւրաքանչիւր Քահանայէն թէեւ բարձրատիճան ըլլայ, մեղաւորին խոստովանութիւնը լսելու իրաւաբանութիւնը նովին դորձով բարձուած է. այնպէս որ, ոչ գերզգծութիւն (epikia), ոչ ալ բարեմտութիւն խոստովանահօր կամ խոստովանորդույ կրնայ արձա-

¹ Ubi semel acceptum est iudicium, ibi et finiri debet. Օր. 30, վասն դատ.: Ս. 1. Ի. Գ. եւ այլն:
² Ռիեդի, էջ 51, թ. 81:
³ Միւլ. Գ. § 147, 3:
⁴ Բենեդ. ժ. Գ. Խորհ. Ապուլ.:
⁵ Ս. 1. Գ. Չ. 563: Հմմ. Փրուս. անդ, էջ 470, 471: Փր. Հայնէր, էջ 113:

կումը վաւեր ընել: Նոյն իսկ եւ ոչ ընդհանուր մտութեան ժամանակ իրաւաբանութիւնն Եկեղեցույ կողմանէ կը լրանայ, եւ ոչ իսկ յարելեան ներողութեան ժամանակ ի Ս. Աթոռոյ իրաւաբանութիւն կը տրուի: Եւ նոյն իսկ Քահանայի մ'այս նիւթիս նկատմամբ ունեցած թանձր ազիտութիւնը չի կրնար բանադրանքէ ազատել: Վասն զի Խորհուրդն Ապաշխարութեան կոնգակին «յանդէնեցաւ արշալէլ», ը Արտ. Արտոյ Սահմանագրութեան այս կանոնին մէջ չէ դրուած. ուստի բանադրանաց մէջ իյնալու համար բարձրագոյն աստիճան մը դիտութեան այսուհետեւ չի պահանջուիր¹:

ԺԱ.

«Որոնք որ եկեղեցական անձանց իրենց եկեղեցեացը կամ բարերարութեանցը պատճառաւ վերաբերեալ իրաւաբանութիւնն, ինչքն ու եկամուտքը կը յափշտակեն կամ գրաւ կը դնեն»,²

Սանտս կը բանագրէ զայն ամէնքն՝ որ եկեղեցական անձանց իրենց եկեղեցեաց կամ բարերարութեանց պատճառաւ վերաբերեալ իրաւունքն, ինչքն ու եկամուտքը կը յափշտակեն կամ գրաւ կը դնեն: Ուստի, կանոնիս երկու մասանցը՝ 1. Յափշտակողներու եւ 2. Գրաւ դնողներու վրայ խօսելու չսկսած, կանոնիս մէջ յիշուած էական բառերուն մեկնութիւնը տանք:

1. «Եկեղեցական անձինք», ըսելով՝ հոս ամենեւին զանազանութիւն մը չըլլուիր ի մէջ աշխարհական եւ կրօնաւոր կղերի³:
2. «Իրենց եկեղեցեաց կամ բարերարութեանց»
¹ Ռիեդի, էջ 51, թ. 80. Ծան. 14:
² Ի Կոնդ. Ընդհանր. եւ ի Տրիդ. ժողովոյ, Ն. Ի. Բ. Կ. 11. Վասն Բարեկ.: — Տես էջ 11:
³ Պոնաչ. Մ. 3. թ. 5:

պատճառաւ վերաբերեալ. բնէրով՝ կ'իմանայ կանոնս այնպիսի իրաւաբանութիւններ, ինչքեր եւ եկամուտներ, զորոնք եկեղեցական անձ մը Եկեղեցւոյ մէջ ունեցած դրոյց ու պաշտամանը պատճառաւ ստանալու եւ վայելելու իրաւունք ունի: Եւ որովհետեւ կանոնիս վախճանը կրկին է, այսինքն՝ մէջ մը եկեղեցական անձինքն իրենց եկեղեցւոյն կամ բարերարութեան ստացման մէջ պահել ու պաշտպանել, եւ երկրորդ՝ նաեւ եկեղեցական իրաւունքներն ու ինչքերը պահել ու պահպանել, անոր համար ըստ կարծեաց բազմազոյն իրաւաբանից եւ բարոյագիտաց՝ աթոռոյ դատարկութեան ժամանակ եկեղեցական բարերարութիւն մը յափշտակելը կամ գրաւադրելը նոյնպէս բանադրանացս տակ կ'իյնայ, եթէ բարերարութիւնն ընդհանրապէս եկեղեցական անձի մ'որոշեալ բարերարութիւն մը միայն է: Վասն զի ասիկայ թէեւ յափշտակութեան կամ գրաւադրութեան ժամանակ անտերունչ ըլլայ, միշտ Եկեղեցւոյն աչի՛ ՚ը վերաբերեալ Բարերարութիւն կը կոչուի: Բայց ընդդիմակաց կարծիքն ալ չէ անանց պաշտպանի եւ ունի հաւանականութիւն, անոր համար կրնայ նաեւ անոր ետեւէն երթըցուիլ¹:

Ըստ այսմ, այս բանադրանաց տակ չեն իյնար՝ 1. Որոնք որ այնպիսի ինչքեր կը յափշտակեն կամ գրաւ կը դնեն, որոնք եկեղեցւոյ շինութեան կամ պահպանութեան կամ ծախուց սահմանեալ են, նոյնպէս այնպիսի ինչքեր, զորոնք կղերական մը վարձած է կամ որոնք եկեղեցականի մը կը վերաբերին ոչ թէ իր եկեղեցւոյն կամ բարերարութեան պատճառաւ, հապա ուրիշ տիտղոսով մը²: 2. Որոնք որ հիւանդանոցաց, բարեպաշտական տեղեաց կամ հաստատութեանց, եղբայրութեանց կամ աշխարհական բարերարութեանց ինչքերը կամ եկամուտքը կը յափշտակեն կամ կը գրաւադրեն³: Թէպէտ աշխարհական բարերարութիւնը յափշտակելը կամ գրաւադրելը բանադրանաց տակ չ'իյնար, վասն զի բուն եւ յատուկ բարերարութիւն չէ⁴, (վասն զի եպիսկոպոսական իշխանութեամբ չէ հաստատուած որ բարերար-

¹ Հմմ. Ռիեդի, էջ 53, Ծ. 8. ուր ի թեր եւ ի դեմ հեղինակներ յառաջ կը բերուին:
² Պոնաչ. անդ. թ. 24, 26: Ռիեդի, էջ 53, թ. 85:
³ Պոնաչ. անդ. է. այլն:
⁴ Պոնաչ. անդ. թ. 18: Ռիեդի, էջ 53, թ. 85: Ա. անց. 2011, է. այլն:
⁵ 2011, էջ 80, թ. 99, 3: Ռիեդի, էջ 53, Ծ. 12: Բատ. եւ այլն:

ութիւն գաղափարին էպպէս կը պահանջուի) սակայն չի կրնար նոյնը նաեւ աշխարհական պաշտպանութեան (patronatus laicus) ընկից եւ եկամտից ալ մերձեցուի: Վասն զի ասոնք “նկեղեցական ուսմանց վերաբերեալ նկեղեցական ինչքեր”, են, թէեւ յարաբերութեան եւ կախման մը մէջ ըլլան պաշտպանին (patronus) հետ, որ բարերարութեան դատարկութեան ժամանակ առ այն մէկը կարգելու համար առաջարկելու իրաւունք, ինչ ինչ պատուոյ իրաւունքներ, եւ կարտուութեան ժամանակ օրապահելը պահանջելու իրաւունք ունի: Ինչու որ ասոնք եպիսկոպոսական իշխանութեամբ հաստատուած եւ զուտ եկեղեցական ինչքեր են, այնպէս որ պաշտպանն եւ ոչ գործածութեան մէջ խառնուելու իրաւունք ունի: Ուստի զասոնք յափշտակողը կամ գրաւադրողն, նաեւ եթէ պաշտպանն ինքնին ըլլայ, բանադրանաց տակ կ'իյնայ¹: 3. Անոնք որ վանքերու ստացուածներն ու եկամուտքը կը յափշտակեն կամ կը գրաւադրեն, ըստ ուղիղ եւ մի միակ հետեւելի կարծեաց²: Այս երեք տեսակ յանցաւորները՝ թէպէտ այս կանոնի տակ չեն իյնար, բայց Տրեղենտեան Մ. Ժողովէն տրուած եւ Առաջ. Առաջ. Սահմանադրութեան նորոգուած ոչ ումք վերապահեալ բանադրանաց տակ կ'իյնան³:

3. “նորոգուած, ինչպէս, նկատուողք...”:

Ա. Իրաւունք բնէրով հոս կ'իմացուի ամէն իրաւունք ու կարողութիւն, զոր եկեղեցական մ'իր եկեղեցւոյն կամ բարերարութեան պատճառաւ ունի, թէպէտ այս իրաւունքն յիրս կամ յանձինս հայի, հոգեւոր կամ աշխարհական ըլլայ, կամ կարողութիւնը կարգաւոր կամ յանձնարարական ըլլայ⁴: Բայց այս իրաւունքը յափշտակելը պէտք չէ շփոթել եկեղեցական իրաւաբանութեան զործադրութեան արգելման հետ, որուն վրայ Չ. կանոնին մէջ խօսուեցաւ: Հոն անոնք բանադրուեցան, որոնք եկեղեցական իրաւաբանութեան որեւէ կերպով խոչընդոտն կ'ըլլային. իսկ հոս անոնք՝ որոնք եկեղեցական անձի մ'իր եկեղեցւոյն կամ բարերարութեան ստացման պատճառաւ վերաբերեալ կարողութիւնն անձանց կը յափշտակեն, իբրեւ թէ իրաւանց տիտղոս մ'ունենային:

¹ Պոնաչ. անդ. Մ. 3. թ. 5: 2011, Ռիեդի, Ա. անց. է. 121:
² Հմմ. Փր. Հայեր, էջ 121: 2011, էջ 78, թ. 99:
³ Ռիեդի, Ա. Բարերար, Բատ. 3րդմ. է. այլն:
⁴ Տես Ա. Յաւելուած, Տրեղ. Ժողովոյ բանադրանաց շարքին մէջ:
⁵ Սուար. Վ. 23, 4. 95: Պոնաչ. Վ. Ա. թ. 18, թ. 2: Ռիեդի, էջ 52, թ. 85. է. այլն:

Բ. "Ունչք", ըսելով՝ կ'իմացունին ամէն ժամանակաւոր բարիք, ըլլան շարժական կամ անշարժ, ըլլան իրաւամբք առ իրն. վասն զի օրէնքն ընդհանուր կը խօսի, եւ անոր համար ընդարձակագոյն մտօք պիտի մեկնուի¹:

Գ. "Եկամուտք", են ամէն հասք, պտուղք, ծնունդք, միով բանիւ ամէն նիւթական շահ, զոր կղերական մ'իւր եկեղեցւոյն կամ բարերարութեանը պատճառաւ վերագոյնն ըսուած իրաւունքներէն եւ ինչքերէն շահել կարող է²: Բայց այսպիսի եկամուտք չեն անոնք զոր կղերական մը կ'ընդունի իբր վարձք կամ թոշակ կատարած գործին, ինչպէս՝ գաւազանապտուղք, աւուրջեայք կանոնիկոսաց, եւ այլն³: — Հիմայ գանք կանոնիս մէջ յառաջ բերուած երկու կերպ յանցաւորաց:

1.

"Յափշտակողք" են անոնք, որ եկեղեցական իրաւանց, ընչից եւ եկամտից բռնութեամբ տէր կ'ըլլան, իբր այն թէ այս ամենայն ինչք եւ եկամուտք իրենց ստացուածն ըլլային, եւ եկամուտներն ըստ օրինի իրենց վերաբերէին⁴, առանց զանազանութեան հրապարակական կամ առանձնական⁵ եւ կամ եկեղեցական⁶ անձի: Օրինակի աղագաւ, երբ եկեղեցական մ'իւր ժողովրդապետութեան խաղաղ ստացմանն բռնաբար մերժուի, եւ ուրիշ կղերական մ'առանց եկեղեցական հաստատութեան մը, ինչպէս՝ օգնականութեամբ աշխարհական իշխանութեան, ժողովրդապետութեան տէր ըլլայ, ժողովրդապետական բարերարութեան պտուղներն ընդունի, քարոզէ, մկրտէ, ամուսնութիւն օրհնէ, իբրեւ թէ օրինաւոր ժողովրդապետն ըլլար, եւ այդ ամէն իրաւունքն ու եկամուտն

¹ Օր. 37. Վ. Վասն իրաւ. Վաշխառ...
² Օր. 5. § 16-րդ. ուրեմն:
³ Պոնաչ. անդ, թ. 10: Ռիեդի, 53, թ. 85:
⁴ Սուար. Վասն գատակ. 22. 2. 96: Պոնաչ. 1. 9. 18. Մ. 1. թ. 3: Ռիեդի, էջ 54, թ. 86: Զյւլի, էջ 75, թ. 97: Բատ. էջ 104, թ. 188. Եւ այլն:
⁵ Օր. 7. § Վասն հրատ. Գ. 5: Պոնաչ. անդ, Մ. 3. թ. 2: Ֆերրարիս, Ե.: Պոնաչ. թ. 23. Եւ այլն:
⁶ Մեկն. Հոմ. էջ 366: Պոնաչ. Մ. 3. թ. 2: Հմմ. Փր. Հայներ, էջ 118:

ըստ իրնական իրեն վերաբերէին: Այսպիսի բռնաւոր մը կ'իլինայ այս բանադրանաց մէջ իբրեւ յափշտակող: Եթէ յափշտակութիւնն այսպէս երեւոյնէ՝ կամ արտաքինութիւնը չըլլայ, հապա արդեամբ ստացող եկեղեցականի մը ձեռքէն ապօրինաւորապէս առնուի առանց իրաւանց մէկ տիպողոյ, այն անեն ասիկայ ըստ մտաց կանոնիս յափշտակել չէր ըլլար: Անոր համար այս իմաստով յափշտակող չեն եւ ըստ հետեւորդի այս բանադրանաց տակ չեն իյնար՝

Ա. Գողթ կամ արտաքին, որոնք բռնութեամբ այս ինչքերն անձանց կը սեպհականեն. վասն զի ընդ երեւութիւ իրաւանց չեն յափշտակեր, ինչպէս՝ Քննութեան Ս. Ժողովն ալ հաստատեց (4 Ապրիլ, 1861, եւ 9 Մարտ, 1870):

Բ. Այն ամէնքն, որ այսպիսի յափշտակողէ մ'այս ինչքերն բռնութեամբ եւ կամ այլազգ՝ գնելով, իբրեւ պարզեւ, կամ սրեւէ դաշամբ մը կը սորանան¹:

Գ. Եկեղեցակիւթ, որոնք իրենց եկեղեցեաց կամ սեպհական բարերարութեանց ինչքերը կը խորեն: Բայց ասոնք երեքն ալ կ'իլինան Տրիդ. Ժողովոյ բանադրանաց տակ:

¹ Փր. Հայներ, էջ 117: Աւանց. Ծան. 11: Միւլեր, Գ. Յաւելուած: Սակայն Վուրի-Պալերինի Բ. 972, այսպէս կ'ըսէ. "Որովհետեւ կ'երեւայ որ այս կանոնիս բանադրանաց տակ յայտնապէս կ'իլնան միայն յափշտակողներն ու գրաւ դնողները, տարակոյս ծագեցաւ, թէ արդեօք նոյն բանադրանաց տակ կ'իլնայ եթէ մէկը վերոյիշեալները յափշտակողէն գնէ: Արդ, կ'իլնայ իբր սահմանաւ յիրաւանց ի բանախօսութենէ Պոսի թ. 1, 25 Յուլ. 1873: Յաւել Ս. Ժողովոյ Քննութեան պատասխանը (8 Յուլ. 1874). "Չկայ ամենիւն տարակոյս յափշտակողներն յափշտակուած եկեղեցական ինչքերը գնողներուն՝ Հոմայ Բաշնայպետին վերապահեալ բանադրանաց տակ իյնալուն վրայ: Վասն զի վերացնելով ի ինդոյ թէ վերոյիշեալ գնուին արդեօք կերպով մը Արտ. Արտ. Սահմանադրութեան ժԱ. 10-րդուածին տակ կ'երթայ, ոչ որ կրնայ տարակուսիլ Տրիդեան տեան Ժողովոյն Գլ. թ. Վասն Բարեկարգ. Կ. 22, ամենպէս սաւոր կարգադրութեան տակ երթալուն վրայ, Այսպէս Վուրի-Պալ: Սակայն որպէս կ'երեւայ, Ս. Ժողովն Քննութեան՝ Բաշնայպետին պարզապէս վերապահեալ բանադրանաց տակ իյնալը, ուստի Տրիդ. Ժողովոյն վճռոյն տակ իյնալը կը հաստատէ, զոր վերոյիշեալ երեք հեղինակներն ալ կը հաստատեն, եւ ոչ թէ արտաքին վերապահեալ այս ժԱ. կանոնին տակ իյնալը:

2.

“Գրառ ղևոյրք” ըստելով՝ ընդհանրապէս կ'իմացուին անոնք, որոնք շարժական կամ անշարժ¹ ինչք մը, որ վեճման տակ է, երրորդ որոշեալ անձի մը կը յանձնեն, որպէս զի վեճը, կռիւը լմնալէն ետեւ նոյնը յաղթողին տայ²: Աիճական իրի մ'ուրիշ երրորդի մը յանձնարարութիւնը կրնայ երկակողմանի միաբանութեամբ կուտողաց ըլլալ, կամ դատաւորական վճռով մը կատարուիլ³: Անոնիս մէջ խօսքը գրաւագրութեան այս երկրորդ տեսակին վրայ է. վասն զի առջինն երկու կողման ազատ կամօքը կ'ըլլայ. “Իսկ ոչողէն էւ հաւանողէն երբէ՛ս աներաւորութիւն չ'ըլլայ”⁴: Ըստ այսմ, գրաւագրութիւնն ըստ մտաց կանոնիս է՝ Անկոչ գատաւորի⁵ մ'ապօրինաւոր կերպով եւ առանց պատճառի⁶ եկեղեցական անձի մ'իր եկեղեցւոյն կամ բարերարութեան պատճառաւ վերաբերեալ իրաւունքը կամ ինչքը գրաւ դնելն, որով նոյն անձը նոյները վայելելու եւ գործածելու կ'արդէլուի⁷: Ասի յայտանի է թէ նախ աշխարհական կամ կղերական⁸ դատաւորն՝ որ նոյն ինչքը գրաւագրել կը հրամայէ, բանագրանաց մէջ կ'իյնայ: Աւան զի գրաւագրութիւնն իրեն ի հարկէ գործք մը չէ, այլ իւր ազատ կամքէն յառաջ կու գայ. նաեւ եթէ ուրիշ մ'առաջարկելու ըլլայ, հարկ մը չկայ ի գործ դնել. մանաւանդ թէ՛ յօրինաւոր դէպս միայն ամենաճանր պատճառաց համար կրնայ ընել⁹: Եւ որովհետեւ բանագրանքն ապօրինաւոր դատաւորի մը համար է, անոր համար դատաւոր մը չ'իյնար այն ատեն բանագրանաց տակ, երբ օրինաւոր է իրեն եկեղեցական անձ մ'իւր ատեանը

1 Օր. 2. Աւան գրաւ.:
 2 Փրոսեր, անդ. էջ 610:
 3 Ռիեդի, 55, թ. 87:
 4 Volenti et consentienti autem nulla fit injuria.
 5 Անդ. Ընդրեաց, § 17:
 6 Օր. ա. Կ. Աւան արդելմ. գրաւ.:
 7 Ռիեդի, անդ.:
 8 Պոնաչ, Կ. 3, թ. 17. Հմմ. Փր. Հայն. էջ 118:
 9 Կ. 2. 3. Աւան գրաւ. Օր. 5: Պոնաչ, Կ. 3, թ. 8. Եւ այլն:

հասնել¹: Աւան զի երբ օրինաւոր է եկեղեցական անձի մը վրայ վճիռ տալը, կրնայ նաեւ գործածել այն միջոցները, զորոնք իրաւունքն իրեն կու տայ իւր այս պաշտօնը կատարելու համար:

Եւ որովհետեւ գրաւագրութիւնը դատաւորական գործ մըն է, բանագրանաց տակ չէն իյնար անոնք, որ գրաւագրութեան ապօրինաւոր պատուէրն ի գործ կը դնեն, ինչպէս նոտարք, եւ այլն. վասն զի ատնք ազատ չեն գործեր, հապա ստիպեալ են առ այն²: Իսկ ամբաստանողք, դատախազք որոնց առաջարկութեամբն դատաւորը գրաւագրութեան ձեռնամուխ եղաւ, ըստ ուղիղ կարծեաց՝ բանագրանաց տակ կ'իյնան. սակայն խնդիրը տակաւին երկբայական կը մնայ, ինչպէս նոյն իսկ Պոնաչինա³ կը խոստովանի. ուստի կրնանք հակառակ մեղմագոյն կարծեաց ետեւէն ալ երթալ:

Պէտք է միտ դնել վերջապէս, որ կանոնիս բանագրանաց տակ կը ձգուին միայն յափշտակողներն ու գրաւ դնողները: Ուստի, ազատ են բանագրանքէս՝ որոնք նոյն յանցաւորաց խորհուրդ կամ օգնութիւն կը մատուցանեն, կամ ընդհանրապէս կերպով մ'այդ յանցանաց գործակից կ'ըլլան: Ահատմամբ եկեղեցւոյ իրաւանց եւ ընչեց վրայ եղած այս յարձակմանց՝ ի զօրութեան են Սահմանագրութեամբս նորոգեալ վճիռք Տրիդ. Ժողովոյ, յորում աֆէն բռնաբարութիւն եկեղեցական ստացուածոց կամ իրաւանց կը բանագրուի, ինչպէս վերջէն իւր տեղը պիտի տեսնենք:

ՓԻ.

“Ամէնքն որ Հոռմոյ եկեղեցոյն վերաբերեալ Բաղարաց, Երկիրներու, Տեղեաց կամ իրաւանց վրայ անձամբ կամ ի ձեռն այլոց կը յարձակին, զանոնք կ'ապակա-

1 Ռիեդի, անդ.:
 2 Ռիեդի, անդ.:
 3 Անդ. Կ. 3, թ. 10:

նեն, կը գրաւեն. կամ՝ անոնց վերին իշխանութիւնը կը յաւիշտակեն, կը վրդովեն եւ իրենց կը սեպակաւանեն. նոյնպէս որոնք որ իւրաքանչիւր վերոյիշեալ գործոց օգնութիւն, խորհուրդ ու պաշտպանութիւն կը մատուցանեն:»,¹

Այս բանադրանքն, ինչպէս Սուարեզ կ'ըսէ², Աւաքեւրական Աթոռոյ աշխարհական իշխանութեան առանձին պաշտպանութեան համար տրուած է: Եկեղեցւոյ աշխարհական իշխանութիւնն ի սկզբանէ անտի իւրմէ իբրեւ եկեղեցական ստացուած, իբրեւ ժառանգութիւն Ս. Պետրոսի եւ Հռոմայ Աթոռոյն նկատուած է: Երբեք Քաջանայապետներն իբրեւ աշխարհական իշխան անոնց տէրը չեն նկատուած եւ ոչ ալ իրենք զիրենք տէր համարած եւ իբրեւ այնպիսի վարուած են: Անոր համար ամէն յարձակում որ Եկեղեցւոյ աշխարհական իշխանութեան վրայ կ'ըլլայ, յարձակում մըն է ընդդէմ եկեղեցական ստացուածոց, սրբապղծութիւն մըն է: Եւ այս պատճառաւ ալ Քաջանայապետաց ծանր պարտքն է՝ «ինչպէս ուրիշ եկեղեցեաց ստացուածներն ու իրաւունքները, նոյնպէս ալ Հռոմայ եկեղեցւոյնը՝ որ միւս եկեղեցեաց առաջնորդն եւ ուսուցիչն է, ամէն հնարաւոր միջոցներով պահել, եւ անարատ յանձնել իրենց Յաջորդացը»³: Եւ իրօք ալ Քաջանայապետք միշտ նոյն պարտուց հաւատարիմ մնացած են, ամենախիստ պատիժներ դնելով աշխարհական իշխանաց վրայ, որ Եկեղեցւոյ այս ստացուածոց վրայ յարձակում կ'ընեն: Այսպիսի պատիժ մ'է այս ասանկէն կերպով վերապահեալ բանադրանքը: Ատոր տակ կ'իյնան երեք խումբը յանցաւորաց:

¹ Ի Կոնդ. Ընկրեաց, § 20: — Տես էջ 11:

² Վասն դատակն. վ. 1. Ե. 2. Բ. Թ. 105:

³ Կղեմէս Զ. Սահմ. Գ. Թեղեք Ըճարդն, 1346:

1.

1. «Յարձակողք», այսինքն անոնք, որ պատեւազմի դիտմամբ քաջանայապետական երկիրներու վրայ յարձակում կ'ընեն. հաւասարապէս՝ եթէ արշաւանքն երկիրներուն մէկ մասին վրայ ըլլայ, կամ բովանդակ Պետրոսի ժառանգութեան վրայ¹:

2. «Ապսիւանողք», այսինքն՝ քաջանայապետական երկիրներն աւերողները:

3. «Մտացողք», այսինքն այն ամէնքն, որ կամ անձամբ սեպակաւ իշխանութեամբ նոյն քաջանայապետական ստացուածները կը ստանան եւ կը մնան ի նմին ստացման, եւ կամ այս ոճրագործութիւնն ուրիշ ձեռք կը կատարեն: Թէ ինչ կերպով այս ստացողք նոյններն ստացան, պարզեւի, գնման, փոփոխութեան կամ ժառանգութեան տիտղոսով՝ ինդիր չ'ըլլուիր. բանադրանաց մէջ իյնալու համար բաւական է, եթէ ստացումն անիրաւութեամբ եւ թշնամաբար ըլլայ²:

2.

1. «Յաւիշտակողք», այսինքն անոնք, որ անիրաւութեամբ Հռոմայ Քաջանայապետին աշխարհական վարչութիւնը կամ վերին իշխանութիւնը, (որպիսի է իշխանութիւն կենաց եւ մահու, հարկ դնելու, պաշտօնեայ կայուցանելու, եւ այլն) անձանց կը գրաւեն իբրեւ թէ առ այն իրաւանց տիտղոս մ'ունենային:

2. «Խոռվողք», այսինքն անոնք, որ նոյն Քաջանայապետական իշխանութեան գործադրութեան արդէք կամ խոչընդոտն կը դնեն³, ինչպէս՝ թող չտարով նոյն տեղերն օրէնքներ հաստատուել, տուրք դնել, եւ այլն:

3. «Պակողք», այսինքն այն ամէնքն, որոնք անձամբ կամ ի ձեռն այլոց գրաւած քաջանայապետ

¹ Ռիեդի 85, Թ. 91: Բատ. էջ 114, Թ. 199, եւ այլն:

² Պոնաչ. 9. 21. Մ. 1. Թ. 18: Զոլի. Վէբբ. եւ այլն:

³ Ռիեդի, անդ:

տական երկիրներն եւ չեն դարձներ, հապա յափշտակածնին յստացման կը պահեն, եւ անոնց մէջ Քահանայապետին աշխարհական վերին իշխանութիւնն ի դարձ կը գնեն¹. այսպիսիք են ժառանգք յափշտակողաց:

3.

Ասոնց դարձակիցներն, այսինքն “որոնք որ օգնութիւն, խորհուրդ, պաշտպանութիւն կը մատուցանեն”²: Ասոնք որպէս զի բանադրանաց տակ իննան, կը պահանջուի կերպովն գործակցութիւն եւ իրական յարուստ, որ ըկ գիտաւորութեան վրայ չի կայանար, այլ դարձերն վրայ. ոչ ազիտութենէ կամ ծանր երկիւղէ յառաջ պիտի գայ, այլ յազատ կամաց, ինչպէս վերը Ե. կանոնին մէջ ըսուեցաւ, եւ կը հաստատուի նաեւ ի Պատասխանագրոյ Ս. Ժողովոյ Ապաշխարութեան³, 10 Հոկտ. 1860:

“Մինչև ցայս վայր յիշատակուած բանադրանաց արձակումն նոյն ժամանակին Հոռմայ Բահանայապետին առանձինն կեր-

¹ նոյն, անդ:

² Տես էջ 58:

³ Աւանց. Ծան. 12: Միւլ. Գ. Յաւ. : Հմմ. Փր. Հայն. էջ 123: Վարի-Պալլ. Բ. 972: Չոլլի. Ռիեդի. Բատ. Վէբք. եւ այլն: Բաց ի առանձինն կերպով վերապահեալ բանադրանաց այս թիւ. կանոններէն, Պիտ թ. 1873ին Օգոստ. 28ին տուած Հոռմայ Քահանայապետն Սահմանագրութեամբն աւելցուց երկու կանոն ալ, որուն վրայ նոյն Քահանայապետին 1874, Մայիս 13ին Ս. Ժողովոյ Սեփոսոսաց ձեռք տուած մէկ վճռովն ուրիշ մ'ալ աւելցաւ. վերջապէս 1876, Օգոստ. 4ին Ապաշխարութեան Ս. Ժողովը հաս մ'ալ աւելցուց որով առանձինն կերպով վերապահեց թիւը 16 եղաւ: Որովհետեւ այս վերջի երեքին վրայ ալ տեղեկութիւն մը տալ հարկաւոր է, եւ հոս Սահմանագրութեան թիւը կարելն ալ անյարմար է, եւ հոս Սահմանագրութեան թիւը կարելն ալ կը խօսինք:

պով վերապահեալ է եւ կը վերապահի. եւ այդ արձակումն համար Հոռմայ Բահանայապետին վերապահեալ ղիպուածներէն ու դատակնիքներէն կամ բանադրանքներէն արձակելու տրուած ընդհանուր իշխանութիւնն ամենեւին բնական չէ...: Իսկ առանց պարտուաւտշամ իշխանութեան... արձակել յանդձնողք զիսնան, որ Հոռմայ Բահանայապետին վերապահեալ բանադրանաց կապանօք կապեալ են, քայց միայն չըլլայ ի կէտ մնալու. եւ այս դէպքիս մէջ ալ Եկեղեցոյ հրամանը կատարելու պարտքն արձակուողներուն վրայ հաստատուն մնայ, երբ որ առողջանան:”¹

Սրբազան Քահանայապետն առանձինն կերպով վերապահեալ բանադրանաց շարք կը վերջացնէ, բառնալով ասոնցմէ արձակելու ամէն իշխանութիւն որեւէ եկեղեցականէ, եւ կը վերապահէ իրեն միայն եւ անոնց, որոնք այս վերոյիշեալ ղիպուածներէն արձակելու առանձինն իշխանութիւնն իրմէ մասնաւոր կերպով կ'ընդունին: Եւ այս այնչափ խտտութեամբ, որ եթէ մէկն արտաքոյ մահուան կէտին առանց իշխանութեան նոյններէն արձակել յանդգնի, կ'իյնայ Քահանայապետին վերապահեալ բանադրանաց տակ:

Այս վերջին բանադրանքն, որ Սահմանագրութեան դատակնիքաց առջի տեսակին պատկը կը կազմէ, որովհետեւ յայտնապէս վերապահութեան տեսակը չ'որոշուիր, ինդիին ալ դժպահ իրի մը վրայ է, եւ Ընթերեաց կոնդակին մէջ պարզապէս վերապահեց կարգը կը դասուի, պէտք ենք յաւելուլ Սահմանագրութեանս դատակնիքաց երկրորդ յաջորդ տեսակին վրայ, որով Քահանայապետին պարզապէս վերապահ-

¹ Տես էջ 13:

հեալ բանադրանքները կ'ըլլան 18¹. ըստ այնմ մեկնութեան պարտուպատշաճ տեղն ալ հոն է: Բայց որովհետեւ Սահմանադրութեան վերոյիշեալ խօսքերն ալ կարօտ են լուսաւորութեան եւ կապուած են այս բանադրանաց հետ, անոր համար հոս դնենք ամբողջին մեկնութիւնն ի միասին:

Այս բանադրանաց առարկան է **աղօրքնաւոր արշակունիքն**. այսինքն՝ առանց կարեւոր իշխանութեան՝ առանձինն կերպով Քահանայապետին վերապահեալ բանադրանքներէն արձակելը, որ, ինչպէս յայտնի է, ոչ միայն ապօրինաւոր է, այլ եւ անվաւեր: Բանադրանացս ենթակայ են ամէն կղերականք առանց բայաւաութեան, նաեւ Եպիսկոպոսուքը, կարդինալքը², թէեւ առանձինն արտօնութիւններ ալ ունենան. վասն զի ասոր նկատմամբ տրուած ամէն արտօնութիւն յետս կոչուած է Սահմանադրութեամբս, ինչպէս յայտնի է կանոնիս նախընթաց խօսքերէն: Նոյն իսկ անոնք, որոնք ընդհանուր իշխանութիւն ունին Քահանայապետին վերապահեալ ամէն դատակնիքներէն արձակելու, չեն կրնար **առանձինն կերպով վերապահելներէն արձակել**: Եթէ նաեւ այդ յանցանքները **քաղաքի ալ ըլլան**, չեն կրնար այսուհետեւ Եպիսկոպոսուք արձակել, ինչպէս երբեմն Տրիդենտեան Ժողովն այսպիսի դիպաց համար իրենց իշխանութիւն տուած էր³: Իսկ խոստովանահայր կերպարանելով այս բանադրանքներու արձակում տուող աշխարհականք՝ բանադրանացս տակ չեն իյնար, ինչպէս Պոնաչինա⁴ կը կարծէ. վասն զի այնպիսին արձակելու կարողութիւն չունի, ուստի չի կրնար «արձակել յանդգնող» ըսուիլ:

Այս բանադրանաց մէջ իյնալու համար հետեւեալ պայմանները կը պահանջուին:

1. Խոստովանորդին **առանձինն կերպով վերապահեալ բանադրանաց մէջ ստոյգ ինկած պիտի ըլլայ**: Եթէ առանձինն կերպով վերապահեալ բանադրանաց

¹ Ռիեդի, էջ 87, թ. 142: Բատ. էջ 257, թ. 373. եւն:
² Բատ. 258. Ի. 374, ընդ Բ.:
³ Ասոր վրայ տես Բ. Յաւելուած:
⁴ Վ. Ա. Խ. 22. Մ. Գ.:

տակ ինկած չէ, այլ ուրիշ նրբեւէ վերապահեալ բանադրանքի տակ, անոր արձակումը թէեւ ապօրինաւոր եւ անվաւեր է, բայց բանադրանացս տակ չ'իյնար: Նաեւ այն ատեն չ'իյնար, երբ վերապահութիւնն երկբայական է, կամ արձակման օրինաւորութեան եւ ապօրինաւորութեան հաւասար պատճառներ կան: Ասիկայ ուրիշ վերապահելոց արձակման համար ալ կ'արժէ¹:

2. Արձակումը խոստովանահայրմէն էրօ պիտի որոշէ, եւ այն՝ ոչ լոկ մեղաց արձակումն, այլ եւ բանադրանաց: Ուստի, խոստովանութիւնը լսել առանց արձակում տալու, ձեւացեալ արձակում տալ, միայն մեղքերն արձակել եւ ոչ բանադրանքն, այս ամենայն բանադրանացս տակ չեն իյնար: Նոյնպէս բանադրանք չկայ երբ արձակումը նկատմամբ արդեանց (quoad effectum) միայն տրուի. այսինքն՝ եթէ ստիպողական ատեն մ'արձակում տրուի, երբ Եպիսկոպոսի մը դիմել անհնար է, եւ վատահամբաւութենէ զգուշանալու համար արձակում տալ հարկ է: Այսպիսի դիպաց մէջ խոստովանահայրն ուղղակի բանադրանքը չ'արձակեր, հապա միայն մեղքը, բնակիւնապէս զխոստովանորդին պարտաւորելով, որ ըստ կարի շուտով օրինաւոր Առաջնորդին ներկայանայ²:

3. Խոստովանահայրն ստուգութեամբ պիտի դիտնայ, թէ այս բանադրանքներէն արձակելու ամենեւին իշխանութիւն չունի: Եթէ հաւանական իրաւաբանութեամբ արձակի, թէեւ միայն հաւանական իրաւաբանութեամբ տրուած այսպիսի արձակումն ապօրինաւոր է, բանադրանաց տակ չ'իյնար. վասն զի յանդգնութիւն չկայ: Ինչու որ կը պահանջուի

4. Որ խոստովանահայրն «յանդգնող» արձակել. այսինքն՝ դիտնալով որ այս դիպաց մէջ իշխանութիւն չունի, դիտութեամբ եւ կամօք արձակի: Յանդգնութիւնն, ինչպէս աստուածաբանքը կ'ըսեն, կ'ենթադրէ աստուիկ յամառութիւն, յանդուզն եւ Ժպիրհ զանցա-

¹ Բատ. անդ. ընդ Գ.: Ռիեդի, էջ 88, թ. 145:
² Հմմ. Պոնաչ. Վ. 1. Խ. 22. Մ. 3. թ. 6: Ս. Լիդ. 2. 265. 9. 2: Բատ. թ. 381. 382, էջ 265:

ուութիւն մը պատուիրանի: Անմտագրութեամբ, մուսուլմանութեամբ, ազիտութեամբ՝ նաեւ եթէ թանձր եւ վեհերոտ ըլլայ, բայց ոչ կամակար, տրուած արձակումը զետարանահայրը բանագրանաց մէջ չի ձգեր. վասն զի թէ գիտութիւն եւ թէ՛ յամուութիւն կը պակի, որ յանդգնութեան էութիւնը կը կացուցանէ¹: Եւ որովհետեւ յանդգնութեան համար նաեւ կամուոր զանցաութիւն պատուիրանի կը պահանջուի, յայտնի է թէ կ'արդարացընէ այս բանագրանքէ՝ արձակման համար ձգուած թէ՛ բացարձակ եւ թէ՛ յարաբերութեամբ շանք երկիւզն:

Թէ ամէն Քահանայ, նաեւ իրաւաբանութիւն չունեցողը, զամէնքը մահուան կէտին, այսինքն՝ երբ մէկը հաւանականաբար կենաց վտանգի մէջ կը գտնուի, ամէն բանագրանքէ, նաեւ առանձինն կերպով վերապահեալներէ կրնայ արձակել, աւելորդ է յիշատակել: Վասն զի այս դէպքիս մէջ ամէն վերապահութիւն կը դատուի, ինչպէս յայտնի է վերոյիշեալ խօսքէն՝ «բայց միայն չըլլայ ի կէտ մահուան»: Միայն թէ այս դէպքիս մէջ խոստովանահայրը զետարանագրին պիտի պարտաւորէ, որ եթէ առողջանալու ըլլայ, ապա շտապանք մ'ընդունելու համար Մեծին ներկայանայ, ինչպէս կանոնիս վերջի խօսքերէն յայտնի է²:

¹ Ռիեզի, անդ, ընդ այլ հեղինակս:

² Ասոր վրայ տես Բ. Յաւելուած:

Բ. Դ Ա Ս

ՊԵՐՉԱՊԷՍ ՎԵՐԱՊԵՆՆԵԱԼ ԲՆՆԱԴՐՈՆԵՐՆԵՐ

Հոռուց Բահաւանայապետին մերապահեաց տուեաց վճողոյ բաւադրանաց տակ կ'իյնան

Ա.

«Որոնք որ Առաքելական Աթոռէն ընդ պատժով տուեալ վճողոյ բաւադրանաց դատապարտեալ նախադատութիւնները հրապարակաւ կամ՝ առանձինն կ'ուսուցանեն կամ կը պաշտպանեն. նոյնպէս՝ որոնք որ խոստովանողէն իւր մեղսակցին անունը ինտրելն իրբեւ օրինաւոր գործ կ'ուսուցանեն կամ կը պաշտպանեն, ինչպէս որ դատապարտուած է ի Բենեդիկտոսէ ԺԳ. է ի Սամմ. Վերիս, 7 Յուլ. 1745, Այն ինչ, 2 Յունիս, 1746, Առ ի իշխոյ արմատարի, 28 Սեպտ. 1746:»,¹

Քահանայապետն՝ իրբեւ վերին հսկող հաւատոյ եւ բարոյից անարատութեան, պարտական է ոչ միայն յայտնապէս հերետիկոսական, այլ եւ հերետիկոսութեան մօտ եւ ընդդէմ բարոյից եղող վարդապետութիւնները դատապարտել: Եւ իբրք ալ յաճախ Քահանայապետք իրենց արթնութիւնը ցուցուցին, դատապարտելով ատեն ատեն երաժ մուր վարդապետութիւնները:

Արդ պարզապէս Քահանայապետին վերապահելոյ այս առաջին կանոնը կը պատժէ նաեւ նոյն դատապարտեալ նախադատութեանց կերպով մը պաշտպան

կեցողներնեքը, բանադրանաց տակ ձգելով յանցաւորաց երկու խմբերը: Ա. Խումբը կը կազմեն անոնք՝ որոնք Առաքելական Աթոռէն ընդ պատժով անուեալ վճույք բանադրանաց դատապարտեալ նախադասութիւնները հրապարակու կամ առանձինն կ'ուսուցանեն կամ կը պաշտպանեն: Ըստ այսմ բանադրանքն երկու տեսակ յանցաւորաց վրայ միայն կը դրուի, որոնք են 1. «Պատուցանողը», եւ 2. «Պաշտպանողը»: Այսուհետեւ բանադրանաց տակ չեն իյնար այն ամէնքն, ինչպէս Ա. Խ. Ա. Խ. Սահմանադրութենէն յառաջ կ'իյնային, որոնք այսպիսի դատապարտեալ նախադասութիւնները յայտնապէս կամ ըւելեայն հաստատել, ցուցնել, օգնութիւն մը մատուցանել կը ջանան, կամ ուրիշ օրեւէ կերպով իրենք զիրենք անոնց բովանդակութեան հաւան կը ցուցնեն¹: Բ. Խումբը կը կազմեն, որոնք որ խոստովանողէն իւր մեղաւորին անուեր խընդրելն իբրեւ օրինաւոր գործ կ'ուսուցանեն կամ կը պաշտպանեն:

1.

Պանոնիս Ա. մասին մէջ բանադրանաց տակ կը ձգուին՝

Ա. «Պատուցանողը», այսինքն անոնք՝ որ Առաքելական Աթոռէն տուեալ վճույք բանադրանօք դատապարտեալ նախադասութիւնները չէ թէ պարզապէս կը հաստատեն, կը տարածեն, իրենք զիրենք իբրեւ ի նոյն յարեալ կը հրատարակեն, հապա որոնք որ նոյնն այն դիտմամբ կը հաստատեն կամ կը տարածեն, որ ուրիշներն ալ անոնց տեղեակ ըլլան, իրենց հօգեկան ստացուածն ընեն, եւ իբրեւ ճշմարիտ եւ ուղիւ նախադասութիւններ ընդունին: Վանոնս զանազանութիւն մը չ'ըներ, թէ այդ գործն ի պաշտօնէ կ'ըլլուի, ինչպէս դպրոցաց մէջ, թէ առանձինն միայն, ինչպէս ընկերութեանց, ժողովոց, ընտանեաց մէջ, եւ կամ այլազգ: Միշտ ուսուցանել է, եթէ հրապարակախօսութեան կերպէն իմա-

¹ Ռիեդի, էջ 62, թ. 96:

ցուի, թէ ունինդրաց միտքը լուսաւորել, կամ դատապարտեալ նախադասութիւններն ընդունելու շարժել կը դիտուի: Նոյնպէս զանազանութիւն չ'ըլլաւիր, թէ ուսուցանելն հրապարակական է թէ դադոնի, շատերուն թէ մէկ հոգւոյ առջեւը, բերանացի թէ գրով, այս ամէն դիպաց մէջ գործն ըստ մտաց կանոնիս ուսուցանել է¹:

Բ. «Պաշտպանողը», ըսելով՝ կ'իմացուին անոնք, որ դատապարտեալ նախադասութիւններն իբրեւ ճշմարիտ, անսողիւտ, սակաւ ինչ սուգտանել կը ջանան ցուցնել, եւ այսպէս իրենք զիրենք իբրեւ պաշտպան դատապարտեալ վարդապետութեան կ'ընծայեցրնեն, հաւատարկութեամբ է թէ առիկայ հրապարակու կամ դադոնի, բանիւ կամ գրով ըլլայ²:

Արդ, որպէս զի այս երկու տեսակ յանցաւորք բանադրանաց մէջ իյնան, կը պահանջուի, որ

1. Ուսուցուածը կամ պաշտպանուածն ըլլայ «դատապարտեալ» նախադասութիւն: Առաքելական Աթոռէն յաճախ նախադասութիւնք կը մերժուին, յորս ոչ ամենայն ինչ մուլար եւ դատապարտել է, հապա, եթէ ճշդիւ իմացուին, տակաւին ճշմարտութեան բողբոջ մը կը բովանդակեն: Արդ, ով որ դատապարտեալ նախադասութիւն մը՝ ոչ բոլորովին այնպէս, ինչպէս է, կ'ուսուցանէ կամ կը պաշտպանէ, հապա այն մասը միայն, որ մուլարութիւն մը չի բովանդակեր. եւ կամ՝ ով որ դատապարտեալ նախադասութեանց այն մասերը միայն կ'ուսուցանէ կամ կը պաշտպանէ, որոնք իբրեւ ճշմարիտ կրնան ընդունուիլ, թէ եւ հեղինակը մուլար հասկըցած ըլլայ, բանադրանաց տակ չ'իյնար³: Բայց չի պահանջուիր, որ նախադասութիւն մը դատապարտութեալ ժամանակ յայտնապէս ի մէջ բերուի կամ անուանի, կամ միահաղոյն (in globo) դատապարտուի, ինչպէս՝ Աղեքսանդր Է. ի,

¹ Բատ. էջ 138, թ. 229: Ռիեդի, անդ:
² Նոյն, անդ:
³ Ս. Լիզ. Գ. թ. 700: Աւանց. Գործք. Ս. Ա. Խ. Սեպար 64, Գաւ. Գ.: Բատ. էջ 139, թ. 230:

Իննովկենտիս ԺԱ.ի եւ Աղեքսանդր Ը.ի դատապարտածներն¹:

2. Այս դատապարտուածը «նախարարութիւնն» պիտի ըլլայ: Ուստի, եթէ Առաքելական Աթոռէն տուեալ վճռոյ բանադրանոց դատապարտուածը զիրք մըն է, այն ատեն կամ (ուրացող, հերետիկոս) հեղինակին պատճառաւ, կամ Առաքելական Աթոռէն յանուանէ արդեւեալ ըլլալուն պատճառաւ, պաշտպանողը կամ ուսուցանողը առանձինն կերպով վերապահէրց Բ. կանոնին տակ կ'իյնան²:

Այսպիսի դատապարտեալ նախադատութիւններ չեն ուրեմն՝ Ու. Ընդհանուր Ժողովոց եւ Հռոմէական Ս. Ժողովոց դատապարտածներն: Դ. Այն նախադատութիւնը, որ Առաքելական Աթոռէն դատապարտուած են ընդ բանադրանոց եւ պատժով՝ որ արդէն յիրաւանց որոշեալ են: Այսպիսի են հերետիկոսաց եւ հերետիկոսութեան կասկածաւորաց վրայ դրուած բանադրանքներն ու պատիժները: Գ. Անոնք, որ անուղղակի բանադրուած են. այսպիսի են առանձինն կերպով վերապահեալ բանադրանաց Բ. կանոնին մէջ յիշուած զրոց մէջ գտնուած նախադատութիւններն:

Ուստի միայն հետեւեալ նախադատութիւնը դատապարտեալ են Առաքելական Աթոռէն՝ ընդ պատժով տուեալ վճռոյ բանադրանաց:

1. Զօղուածք 45 ԶովՏ. Վիկէֆի, եւ Զօղուածք 30 ԶովՏ. Հուսի: — Սահմանադրութիւն Մարտինոսի Ե.ի, Ի Բարձրագոյն Առաքելական Տուեալ Ի Հռոմ, 13 Փետր. 1420:
2. Մոլորութիւնը 41 Մարտ. Լուսերի: — Կանոնադակ Լեւոն Ժ.ի, Զարեհի, Տէր. 16 Մայ. 1520:
3. Նախադատութիւնը 79 Միք. Բայրսի: — Կոնդ. Ս. Պիոս Ե.ի, Յարեհի, 1 Հոկտ. 1567:
4. Նախադատութիւնը թղթով ընդունուած խորհրդական խոստովանութեան եւ արձակման վրայ: — Կղեմէս Ը.ի ձեռն Վճռոյ Ս. Ժ. Քննութեան. 20 Յուն. 1602:

¹ Ռիէդի, էջ 61. Ծ. 5:
² Տես էջ 75:

5. Նախադատութիւնը 45: — Աղեքս Ե.ի ձեռն Վճռոյ Ս. Ժ. Քննութեան. 24 Սեպտ. 1665, եւ 18 Մարտ, 1666:

6. Նախադատութիւնը 65: — Իննովկենտիս ԺԱ.ի ձեռն Վճ. Ս. Ժ. Քնն. 4 Մարտ, 1679:

7. Նախադատութիւնը 68 Միք. տր Մոլինոսի: — Սահմ. Իննովկ. ԺԱ.ի, երկուստէն Հոկտ. 20 Նոյեմբեր, 1687:

8. Նախադատութիւնը 2: — Աղեքսանդր Ը. 24 Օգոստ. 1690:

9. Զօղուածք 31: — Աղեքս. Ը.ի ձեռն Վճ. Ս. Ժ. Քնն. 7 Գեկտ. 1690:

10. Նախադատութիւնը 101 Բարք. Քուենելի: — Սահմ. Կղեմայ ԺԱ.ի, Միքէի. 8 Սեպտ. 1713:

11. Նախադատութիւնը 5: — Սահմ. Բենեդիկտոս ԺԳ.ի, Զարեհի. 10 Նոյ. 1752:

12. Նախադատութիւնը 85 Բիսոպոսեան Ժողովոյ: — Սահմ. Պիոսի Զ.ի, Զարեհի հոկտ. 28 Օգոստոս, 1794:

3. Այս դատապարտուած նախադատութիւնը «Առաքելական Աթոռէն» դատապարտեալ պիտի ըլլան: Ըստ այսմ, ժողովքէ մը, նաեւ եթէ Ընդհանրական ժողով ըլլայ, դատապարտուած նախադատութիւններն ուսուցանողը եւ պաշտպանողը բանադրանաց տակ չեն իյնար²: Իսկ եթէ տուեալ վճռոյ բանադրանոց դատապարտեալ նախադատութիւն մ'ուսուցանողը եւ պաշտպանողը Ընդհանրական ժողովէ մը կը բանադրուին, նոյնը ցարդ եւս կը մնայ եթէ Առաք. Սահմանադրութեան մէջ չէ ջնջուած, որպիսի են Տրիդենտեան Ս. Ժողովէն արուածներն, զորոնք Սահմանադրութիւնս անխախտ պահած է³: Նոյնպէս Հռոմայ Ս. Ժողովներէն դատապարտուածներն առանց բանադրանաց կրնան ուսուցուիլ կամ պաշտպանուիլ՝ վասն զի այդ ժողովներն յանձնարարական իշխանու-

¹ Այս ամէն նախադատութիւններն, եթէ կ'ուզես, տես Կուրի-Պալլ. Ա. էջ 1Ե.։ — Հմմ. նոյն Բ. 975, եւ Փր. Հայնէր, էջ 408, որ կը գնէ միայն թիւ 2—9 եւ 11. ուստի 1, 10 եւ 12ն ընդ բանադրանոց դատապարտեալ նախադատութիւններէն չի համարիր:

² Չողի. 89, Բ. 105:
³ Մեկն. Հռոմ. 460: Բատ. 143, Բ. 231: Ռիէդի, Բ. 96: Աւանց. եւ այլն:

Թիւն միայն ունին. իրենց վճիռները, Թէեւ բարձրադոյն հեղինակութիւն ունին, բայց օրինաց զօրութիւն չունին: Աւստի «Առաքելական Աթոռնէ», դատապարտեալ ըսելով՝ միայն ուղղակի Քահանայապետէն դատապարտուածները կ'իմացուին¹:

4. Այդ նախադասութիւններն «ընդ պատժով տոռեալ վճռոյ յաւանդարանաց», դատապարտուած պիտի ըլլան, Թէեւ այս բանադրանքը վերապահեալ ըլլայ կամ ոչ²: Աւստի, ասոնց տակ չեն երթար այն նախադասութիւնը, որոնք առանց այս բանադրանաց Քահանայապետէն բանադրուած են³: Այսպէս Պիոս Թիւս Սիլւստրոսն եւ Շրջաբերականն մէջ դատապարտուած նախադասութիւններն ուսուցանողը բանադրանաց տակ չ'իյնար. վասն զի հոն բանադրանաց վրայ ամենեւին չի խօսուիր, հապա պարզապէս կը մերժուին եւ կը դատապարտուին նախադասութիւններ, եւ միայն կ'ըսուի, Թէ՝ «Հաղիւ կրնայ կաթողիկէ Եկեղեցւոյ՝ Ս. Մօր բարի սրդի մ'ըլլալ այն անձն՝ որ Առաքելական Աթոռոյն հետ ամէն նախադասութիւնները չի մերժեր եւ չի դատապարտեր»,։ Բայց Սիլւստրոսն իւրաքանչիւր նախադասութիւններն ուսուցանել, պաշտպանել կամ յամառութեամբ անոնց վրայ պնդել առանց հերետիկոսութեան չի կրնար ըլլալ, եւ ըստ հետեւորդի այնպիսին առանձինն կերպով վերապահեալ տուեալ վճռոյ բանադրանաց տակ կրնայ իյնալ. վասն զի աներկբայելի է՝ Թէ Սիլւստրոսն եւ Շրջաբերականն յառաջ բերած նախադասութիւններէն շատերը հերետիկոսական են⁴:

Բայց չի պահանջուիր, որ դատապարտուած նախադասութիւնն աստուածաբանական դատակնքով (censura theologica) կնքուած ըլլայ⁵. բաւական որ

¹ Հմմ. Փր. Հայնէր, էջ 133:
² Բատ. 141, Թ. 232:
³ Չուլի. էջ 89, Թ. 105: Բատ. Ռիէդի. Վէբբիոյ, էւն:
⁴ Ռիէդի, էջ 61, Թ. 96: Չուլի, էջ 89, Թ. 105:
⁵ Առաջադասութիւնն որոշակապէս ըսելով՝ կ'իմացուի այն նշանն, որով նախադասութիւն մը դատապարտուած ժամանակ կնքուած կամ խարանուած է. այսպէս՝ կրնայ նախադասութիւն մը դատապարտուիլ, իրբեւ հերետիկոսական, ժող է հերետիկոսական, է հերետիկոսական րանսը, սխալ, ժամար, եւ այլն:

ընդ պատժով տուեալ վճռոյ բանադրանաց ըլլայ¹: Եթէ նախադասութիւն մը յայտնապէս իբրեւ հերետիկոսական դատապարտուած է, յայտնի է Թէ զայն ուսուցանել կամ պաշտպանել ոչ այս կանոնիս, այլ առանձինն կերպով վերապահեալ Ա. կանոնին բանադրանացը տակ կ'իյնայ. վասն զի այնպիսին, եթէ յամառութիւն ալ կայ, կերպական հերետիկոս է²: Ըսինք՝ եթէ յամառութիւն ալ կայ, այսինքն՝ եթէ այդ ուսուցանողը կամ պաշտպանողը դիտէ՝ Թէ այս նախադասութիւնն իբրեւ հերետիկոսական դատապարտուած է: Եթէ մէկը նոյնն իբրեւ այնպիսի չգիտնայ, հապա ընկիր-հերետիկոսական, կամ իբրեւ մոլոր կամ վտանգաւոր նախադասութիւն ճանչնայ եւ իբրեւ նոյնպիսի ուսուցանէ կամ պաշտպանէ, այն ժամանակ այս բանադրանաց մէջ կ'իյնայ, եւ ոչ Թէ հերետիկոսաց դէմ տրուածին մէջ³: Իսկ ով որ դատապարտեալ նախադասութիւն մը կ'ընդունի, կ'ուսուցանէ կամ կը պաշտպանէ, որովհետեւ կը կարծէ Թէ Քահանայապետն իրաւունք եւ իշխանութիւն չունի մոլոր ու չար կարծիքները դատապարտելու, կամ կը կարծէ Թէ Քահանայապետն յայսպիսի անսխալական չէ, ուստի կըրնար հաւատոյ կամ բարոյից վերաբերեալ նախադասութիւնները դատապարտելու մէջ սխալիլ կամ սխալած է, այնպիսին Քահանայապետին յայսպիսի իրս անսխալականութիւնը չընդունելուն համար հերետիկոս է⁴:

5. Թէ բանադրանաց մէջ իյնալու համար միշտ բաւական յամառութիւն կը պահանջուի, յայտնի է: Միայն մտադրութեան արժանի է, որ Սահմանադրութենէս ետքն՝ ալ Թանձր եւ վեհերոտ տգիտութիւնն, եւս առաւել կամակարը բանադրանքէս չ'ազատեր. վասն զի կանոնն ուսուցանողներն ու պաշտպանողները պարզապէս, առանց յաւելուածի մը, բանադրանաց տակ ինկած կը ծանուցանէ⁵:

¹ Ռիէդի, 64, Ծ. 5, ընդ այլս:
² Գործք. Ա. Աթոս. Ե. Չ. S. 65: Բատ. 142, Թ. 233, էւն:
³ Բատ. անդ:
⁴ Հմմ. Փր. Հայն. 134:
⁵ Բատ. 142, Թ. 234:

Վանանիս Բ. մասը զայն ամենքն՝ որոնք խոստովանողէն իւր մեղսակցին անունը խնդրելու չար գործն իբրեւ օրինաւոր կ'ուսուցանեն կամ կը պաշտպանեն, կը բանադրէ այնպէս, ինչպէս Բենեդիկտոս ԺԳ. դատապարտած էր: Այս Մեծ Քաջանայպետին Ժամանակ Փորթուկալի մէջ քանի մը խոստովանահարց սկսան մեղսակցին անունն, որուն հետ խոստովանողը մեղանչած էր, նոյն իսկ խոստովանողէն հարցընելով տեղեկանալ, եւ որ չարագոյնն է, կը ստիպէին զխոստովանորդին իւր մեղսակցին անունը յայտնելու, արձակումը զանալ սպառնալով, եւ կը զանային ալ: Այս վարմունքը, որ յառաջ կու գործ ոչ միայն զխոստովանողն այլ եւ մեղսակիցն ուղղելու կոյր եւ ստանուն եռանդէն, նաեւ քանի մ'աստուածաբանք իբրեւ օրինաւոր գործք սկսան ուսուցանել եւ պաշտպանել: Հոգևոյ վնասակար այս գործքը՝ Բենեդիկտոս ԺԳ. վէրջն Սահմանադրութեան մէջ խոստագրոյնս կշտամբէլէն ետեւ, Այն էնչ Սահմանադրութեան մէջ զատապարտեց, տուեալ վճուոյ բանադրանք դնելով՝ թէ իբրեւ օրինաւոր գործ նոյնն ուսուցանողներուն ու պաշտպանողներուն վրայ, եւ թէ նոյն սովորութեան հետեւող խոստովանահարց վրայ: Ան է ինչև արմարաթի Սահմանադրութեան մէջ ալ վճուեց, թէ առջեւ երկու Սահմանադրութիւնք ամէն տեղ եւ ամէն Ժամանակ ի զօրութեան պիտի մնան: Արդ, Առաջ. Ախորոյ Սահմանադրութիւնը նոյնը կը հաստատէ քիչ մը սահմանաւորելով: Վասն զի այսուհետեւ բանադրանացս տակ կ'իյնան անոնք միայն, որ այս վարմունքն սրբելիցէ պատճառաւ, ինչպէս՝ վասն ամբողջութեան խոստովանութեան¹, իբրեւ օրինաւոր կ'ուսուցանեն ու կը պաշտպանեն. իսկ խոստովանահարց նկատմամբ՝ մեղսակցին անունը խնդրելու արդեւէրը նովին խոստովանութեամբ, այսինքն՝ իբրեւ ընդ ծանու մեղքը պարտաւոր

¹ Բատ. էջ 159, Թ. 251:

րիչ արդեւէր մնաց, բայց բանադրանքը վերցաւ¹: Բայց ընդ մեղքը արդեւէրէն զատ, մնացնաեւ նոյն Քաջանայպետէն արուած՝ խոստովանութիւն լսելու պաշտամանէն տալի վճուոյ կախակայութիւնն, որ այսպիսի խոստովանահարց վրայ կը գրուի, եթէ

Ա. Յամարուինն ալ գանուի. այսինքն՝ եթէ զխոստովանութեամբ եւ կամքը ընդդէմ արդեւման գործուի:

Բ. Ոչ միայն պարզապէս մեղսակցին անունը խնդրուի, այլ նաեւ, եթէ խոստովանողն յայտնել յանձն չառնու, արշակում պարտէ²:

Անոր համար, ըստ ընդհանուր կարծեաց աստուածաբանից, այսպիսի խոստովանահարց մը ծանր կը մեղանչէ, հաւասարապէս՝ եթէ մեղսակցին անունը խնդրելն ըլլայ բռնաբար կամ արձակում զանալու սպառնալեօք, եւ եթէ վասն հետաքրքրութեան կամ սգիտութեան ուղղակի կամ անուղղակի իմանալ ջանալով. վասն զի միշտ Եկեղեցւոյ պատուիրանին ծանր զանցաութիւնն է: Բնականապէս առաւել ծանրագոյն է այդ մեղքն, որչափ մեծագոյն է խոստովանողին յայտմամբն եղած բռնութիւնը: Թէեւ Առաջնորդ մը չկարենայ կախակայել խոստովանահարց մը, որ այս արդեւման ծանրութիւնն ու մեծութիւնը չզխմայ կամ արձակումն իրօք զլացած չըլլայ, սակայն այսպիսի խոստովանահարց մը միշտ ծանր մեղք մը կը գործէ³:

Բայց ասով չ'ուղուիր բտել՝ թէ արդեւէրալ է նաեւ հարցընել խոստովանութեան կարեւոր պարագաներն, որոնք մեղաց տեսակը կը փոխեն, կամ՝ ինչպէս կըսէ Ս. Լեզուորի⁴. «Եթէ խոստովանահարցը հարցընէ, թէ մեղսակիցն Ա. թէ Բ. աստիճանի աղբական է, ուխտեալ, աղարկին է, միեւնոյն տունը կը բնակի, թէեւ անով մեղսակիցը ծանչնայ», շի մեղանչէր: Նոյնպէս եթէ խոստովանահարցն այնպիսի մեղսակցի մ'անունը խնդրէ, որ յայտնապէս վնասակար ըլլայ ընկերութեան, շի մեղանչէր, ինչպէս Բենեդ.

¹ Նոյն անդ:
² Նոյն, անդ, Թ. 252:
³ Նոյն, անդ, Թ. 251:
⁴ Չ. Վասն Ապաշ. Թ. 491:

ԺԳ. Այն էնչ կոնդակին մէջ կը յիշէ՝: Ուստի եւ այսպիսի դործ մ'իբրեւ օրինաւոր ուսուցանելն ու պաշտպանելը բանադրանաց տակ չ'իյնար: Աւերջապէս, չէն իյնար բանադրանացս մէջ այն ամէնքն՝ որ վերջիշեալ դատապարտեալ դործքն անմտութեամբ, միամտութեամբ կամ նոյն իսկ թանձր եւ վեհերոտ ազիտութեամբ իբրեւ օրինաւոր կ'ուսուցանեն կամ կը պաշտպանեն: Ասան զի Բենեդ. ԺԳ. ի Սահմանագրութիւնը կ'ըսէ «Ով որ այսուհետեւ ուսուցանել էր քահանայի», իսկ մեր Սահմանագրութիւնն ալ այն կերպով կը դատապարտէ այդ դործն, «իւնչպէս որ դատասարտուած է Բենեդիկտոս ԺԳ. Կ»²:

Եւ որովհետեւ այս կանոնս ըստ ամենայնի Բենեդ. ԺԳ. ին կանոնին համաձայն է, բանադրանացս մէջ իյնալու համար կը պահանջուի, որ ուսուցողի կամ պաշտպանուի թէ՛ Չէ թէ՛ միայն մեղաւորին անուէր խնդրելը, հապա նաեւ՝ եթէ խոստովանողն անուէն ըսել չուզէ, արձակումը զլսնայն ալ օրինաւոր է³:

Իսկ խոստովանողը, որոնց այս պատճառաւ արձակումը կը զրացուի, պարտական են, բայց առանց բանադրանքի մը, ոչ ալ ժամադրեալ միջոցի մը մէջ, ինչպէս յառաջ էր, Եպիսկոպոսին կամ Բննութեան Ս. Ժողովոյն այսպիսի խոստովանաչայրը զեկուցանել: Այս պարտքէն կրնան ազատ ըլլալ միայն վասն ամսթոյ, ինչպէս նաեւ երբ խոստովանաչայրը ազիտութեամբ բրած է, թէ եւ նոյն ատենն ալ Եպիսկոպոսը պարտական կը մնայ պատժել այսպիսի խոստովանաչարքը՝ «կախակայութեամբ ի լսելոյ զխոստովանութիւն, կամ ըստ յանցանաց ուրիշ կանոնաւորեալ օրինաւոր պատժովը»⁴: Ուստի, եթէ խոստովանաչայր մը խոստովանորդոյ մը հանդիպի, որ զեկուցման պարտք ունի, պարտական է ստիպել զինքն, որ որչափ կարելի է շուտով պարտքը կատարէ: Եթէ առանց պատճառի մը յանձն չառնուր, խոստովանաչայրը չի կրնար այսպիսի խոստովանորդոյ արձակում մ'տալ⁵:

¹ Բատ. էջ 161, Թ. 256:
² Չորեկ, էջ 90, Թ. 105:
³ Աւերբոյ, Բ. Թ. 725: Ռիէզի, էջ 63, Ծ. 11: Չորեկ, էջ 88, Թ. 104, բնդ Գ.:
⁴ Բենեդ. ԺԳ. Այն էնչ:
⁵ Նոյն, անդ:

Բ.

«Որոնք որ սատանայի սաղրանօր՝ Կղերիկոսաց կամ՝ երկու սևո՛ւ Միանձանց բռնաբար ձեռք կը մխնն. ի բաց առեալ վերապարտութեան նկատմամբ՝ այն ղիպուածներն ու անձինքն, որոնց համար Եպիսկոպոսի կամ՝ այլոմ՝ արձակել կը ներուի յիրաւանց կամ՝ յարտօնութենէ:»,¹

Այս կանոնս ի պաշտպանութիւն կղերականաց եւ կրօնաւորաց գրուած է Իննովկենտիս Բ. էն Լատերանեան Բ. Ժողովին մէջ, եւ ծանօթ է կանոնաւորութեան (privilegium canonis) անուամբ: Ասիկայ պէտք չէ շփոթել առանձինն վերապահելոց Ե. կանոնին հետ. ասիկայ Եկեղեցւոյ մէջ բարձրագոյն պատիւ եւ իշխանութիւն ունեցող եկեղեցականաց համար էր. ասիկայ նաեւ խոնարհագուցելի համար. հոն սպանողք, անդամատողք, եւ այլն, կը բանադրուին, հոս միայն «քոնաքար անք միտոյնըն...: Բայց եթէ Ե. կանոնին մէջ բովանդակեալ անձանց եղած բռնաբարութիւնն այնպիսի է, որ չկարենայ նոյն կանոնին տակ մուծուիլ, այն ատեն քոս կանոնիս տակ կ'իյնայ: Այսպէս, եթէ մէկն Եպիսկոպոսի մ'երեսը թքնէ, այնպիսին Ե. կանոնին բանադրանաց տակ չ'իյնար. վասն զի հոն այսպիսի յանցանք մը չի յիշուիլ. բայց կ'իյնայ այս բանադրանաց տակ:

Կանոնս իւր բովանդակութեանն առեալ երկու մասի կը բաժնուի: Ա. Մասին մէջ բանադրանք կը գրուի: Բ. Մասին մէջ վերապահութեան նկատմամբ եղած բացառութիւնք կ'որոշուին:

1.

Կանոնիս Ա. մասը կը բանադրէ զայն ամէնքն՝ որ «քոնաքար անք կը մխնն:» Այս կանոնս որովհետեւ ի նպաստ կղերականաց արուած է, ըստ վարդաւորութեան Բ. Ժողովոյ, Կան. 15, առ Իննովկենտ. Բ. էւ, յամբ 1139: — Տես էջ 15:

պետութեան ամենայն աստուածաբանից¹ յընդարձակ միտս պիտի մեկնուի: Ըստ այսմ, բռնաբար յեւեւ թեւ ըսելով կը հասկցուի՝ ամէն իրական անիրաւութիւն, բռնաբարութիւն, որ եկեղեցականի մը դէմ կը դործուի: Արդ, բռնաբարութիւն կրնայ կամ

Ա. Գործոյն ըլլալ, ինչպէս՝ եկեղեցականի մը ձեռքացի, բռնիցի, սրով, դաւաղանաւ կամ ուրիշ ազդեւելի կերպով մը զարնել, վիրաւորել, անդամատել, զետին ձգել, դարահոս ընել, կամ սրեւէ կերպով, ինչպէս՝ թունով, մարմնոյն կամ կենացը վնասել կամ վիրաւորել²: — Կամ

Բ. Ազատութեան ըլլալ, ինչպէս եկեղեցական մը բանա դնել կամ սրեւէ տեղ մը փակել³: — Եւ կամ

Գ. Պարտոյն ըլլալ, առանց մարմնոյն կամ առողջութեան վնաս մը հասցընելու: Այսպիսի են եկեղեցականի մը պատիւն անարդական եւ ծաղրելի ընող ամէն գործք. ինչպէս՝ եթէ մեկն եկեղեցականի մը ծաղրահասնութիւն զգեցընէ, բռնաբար կառք մուծանէ կամ ձի հեծցընէ աքտորելու համար, վրան ցեխտէ, թքնէ, թրջէ, փռշտէ, մազը մօրուքը խզէ, շունք վրան գուլութէ, բռնաբար բան մը յափշտակէ իրմէ, ինչպէս՝ խոյրը, քսակը, դաւաղանը, զգեստէն ձգելով պատուտէ, կամ այլազգ ինչ գործէ, սրով անձին հոգեւոր պատիւն իբրեւ առ ոտն կոխուի⁴: Այս ամէնն ահաւասիկ «*քռնալար անն վեւե*» դաղափարին մէջ կը բովանդակուին: Իսկ բերանացի անիրաւութիւնը՝ թշնամանադիր կամ ծաղրու անուն մը տալ, սպառնալ, զրպարտել, հայհոյել եւ այլն, այս բանադրանաց տակ չ'իյնար⁵:

¹ Ս. Լիդ. Ի. 273: Քրտա Ի. 301: Չուլի. էջ 90, թ. 106, ընդ Գ.: Աւանց. Գ. էջ 17, ընդ այլս:

² Օր. 1. § 1. վ. վասն անիրաւ.: Ս. Լիդ. Ի. 28: Սուար. 21. 1. 26:

³ Կ. 29. § 1. վասն Ս. Ի.:

⁴ Ս. Լիդ. Չ. 274: Շմայցիւր. Ի. 39. 226:

⁵ Սուար. 21. 1. թ. 23. 32: Ռիեդի 65, թ. 99: Չուլի, էջ 92, թ. 107 ընդ Ա.:

Արդ, բանադրանաց մէջ իյնալու համար կը պահանջուի, որ այն անիրաւութիւններն

1. «*Մաղրաւօք աւառանայի*» ըլլան. այսինքն՝ անիրաւութիւնն աղտոտ եւ չար կամքէ մը յառաջ պիտի գայ, այնպէս որ գոնէ ծանր մեղք մը պիտի ըլլայ¹: Ընդ հակառակն, ինչ որ ծանր մեղքէ կ'արդարացընէ, կ'արդարացընէ նաեւ բանադրանքէ²: Անոր համար, եթէ գործքը յառաջին բարկութեան գործուի, յորում մարդն անձին տէր չէ, կամ՝ եթէ ըստ պատահման կամ առ կատակ գործուի, կամ Եպիսկոպոսը, երեց եղբայրը, հայրն եկեղեցական մ'ուղղութեան բերելու համար թեթեւ մը ծեծէ, կամ ընդդէմ յարձակման եկեղեցականի ինք զինք պաշտպանելու համար, կամ առանց դիտնալու եկեղեցական ըլլալը գործուի, կամ վասն արդար պատճառաց (զոր օր. եթէ մեկը զարնէ եկեղեցականի մը՝ որ զարնողին մերձաւոր ազգականին հետ կը մեղանչէ), այդ ամէն դիպաց մէջ ոչ ոք կանսիս դէմ գործած կ'ըլլայ³:

2. «*Կղերիկոսաց կամ երկուս սեռի Միսանանց*» ըլլայ:

Ա. Կղերիկոս ըսելով կիմացուին ամէնքն՝ որոնք գէթ Խուզումն հերաց ընդունած են, թէեւ բանադրեալ, կախակայեալ կամ արգելեալ ըլլան⁴: Բայց ըսկ Խուզումն հերաց ունեցողներն ու Փոքր աստիճանաւորք այն ատեն միայն կը պաշտպանուին այս կանոնէս, երբ՝ 1. Կղերական հանդերձ եւ կուլակ կը կրեն, եւ 2. Եկեղեցւոյ մը կը վերաբերին, կամ գոնէ կղերանոցի մը մէջ կ'ապրին: Սակայն կղերական մ'այս կանոնական արտօնութիւնն այնչափ ատեն միայն ունի, յորչափ դատաւորական վճռով մը կամ յայտնի կանոնական օրինօք չէ կորսնցուցած: Արդ, ըստ կանոնական արտօնութիւնը՝

1. Ամէն կարգընկէցը: 2. Ամէնքն՝ որ եկեղեցական հանդերձն է բաց գնելով ահագին ոճրի մը, ինչպէս՝

¹ Վէրքիոյ, Ա. էջ 375, թ. 596: Գործից. էջ 70: Բատ. 2
² Բատ. էջ 165, թ. 260: Ռիեդի, էջ 65, թ. 100:
³ Կ. 4. վասն Ս. Ի. 275: Սուար. 22. 1. 38:
⁴ Չմմ. ֆերրարիս, Կան. Օր. Տիւ. Ի. եւ այլ իրաւաբանք:

աւաղակութեան, անիրաւ պատամբութեան կամ պատերազմի մասնակից կ'ըլլան: 3. Ամէնքն, որ կղերական հանդերձն ի բաց դնելով աշխարհական գործոց կը զբաղին, եւ Եպիսկոպոսին երիցս ազգարարութենէն ետեւ չեն ուղղուիր: 4. Անոնք, որ տարի մ'ամբողջ զուսանութիւն ձեռնածութիւն կամ դերասանութիւն կ'ընեն, կամ տարին չըրացած Եպիսկոպոսին երիցս ազգարարութենէն ետեւ ետ չեն կենար: 5. Անոնք, որ չհրապարակաւ մնալաճառութիւն, փերեղակութիւն կ'ընեն եւ ամուսնացած են, կամ եկեղեցական հանդերձն ի բաց դնելով Եպիսկոպոսին երեք անգամ ազգարարութենէն ետեւ նոյն գործէն ետ չեն կենար, կամ ետ կենայէն ետեւ դարձեալ սկսած են: 6. Երկամուսինք, այսինքն երկու անգամ ամուսնացեալք, կամ՝ այրւոյ կամ ապականեալ անձի մը հետ ամուսնացողք: 7. Ստորին կղերք, որոնք ամուսնացած են եւ կուրակ ու եկեղեցական հանդերձ չունին: 8. Ատենի արտօնութիւնը (privilegium fori) կորսնցնողները:

Բ. Միանշունչ ըսելով կ'իմացուին Քահանայապետէն հաւանեալ կամ ոչ հաւանեալ երկու սեռի կարգաց, Միաբանութեանց, եւ այլն, ամէն կրօնաւորներն ու կուսանքը, եթէ հանդիսական ուխտ ունենան եւ եթէ պարզ, նաեւ նորընծայք², եւ երրորդականք (tertiarii) իսկ³: Բայց կը պահանջուի որ հասարակաց կրօնաւորական կեանք մը վարեն, Աբբայի կամ Աբբատուհայ մը հնազանդութեան տակ ըլլան, եւ հասարակաց սքեմով մը աշխարհականներէն զատուին: Նաեւ ճգնաւորք (eremitae), միանձուներ են, եթէ 1. Եպիսկոպոսէն սքեմին կ'ընդունին. 2. Թեմին Վիճակաւորին հնազանդութեան տակ կ'ապրին, եւ 3. Եկեղեցւոյ մը կամ Ս. Տեղւոյ մը ծառայութեան սահմանեալ են, կամ դոնէ անակ մ'ունին, յորում մեկնեալ յաշխարհէ կեանք կը վարեն⁴: Ուստի շրջող ճգնաւորք (eremitae vagi) այս արտօնութիւնը չունին⁵:

¹ Հմմ. Փր. Հոյներ էջ 148, 8:
² Կ. 33, Վասն Ս. Ե. Հմայր. Ե. 39, 219:
³ Կուրի-Պալլ. Բ. 975:
⁴ Փակնանոս, Գ. Ի Կ. Վասն արտօն: Սուարեզ, Վ. Ժ. 2. 1. Թ. 22:
⁵ Փակն. Ե. անդ. Թ. 59: Ս. Լիզ. Թ. 271:

Ասոնց դէմ յանցաւոր գտնուողներ բանադրանաց տակ կ'իյնան, այր կամ կին, աշխարհական կամ եկեղեցական եւ կրօնաւոր, յորում վիճակի կամ պատուի որ ըլլան: Նաեւ տղաք, անջրթախք (impuberes) (արուն մինչեւ 14 տարին, էգ 12) բանադրանաց տակ կ'իյնան, եթէ ունենան այն հասակը՝ յորում կարենան մեղաց շարութիւնը ձանձալ, եւ հետեւապէս ծանր մեղանշելու ատակ ըլլալ¹: Բայց որովհետեւ կայ կարծիք ալ որ տղաքը բանադրանքէս ազատ կը համարի², խնդիրն երկբայական կը մնայ, ուստի եւ կրնայ մեղմագունին ետեւէն երթցուիլ: Իսկ թէ՛ որոնք որ այս իւրաց մէջ կը հրամայեն, խորհուրդ կու տան, օգնութիւն կամ պաշտպանութիւն կը մատուցանեն կամ կը հաւանին այսուհետեւ ալ բանադրանաց մէջ կ'իյնան թէ ոչ, ինչպէս յառաջագոյն կ'իյնային, բարոյագիտաց եւ իրաւաբանից մէջ մեծ խնդիր է: Փր. Հայնէր³, Աւանջինեայ⁴ եւ Բատուացի Մեկնչին⁵ հետ խնդիրը կը հաստատէ, իբրեւ հաւանախնայն, ընդդէմ այլոց⁶ հաւանախն կարծեաց, եւ կը յաւելու. Բայց որովհետեւ խնդիրն երկբայական կը մնայ, մինչեւ որ Ս. Աթոռը վճռական որոշում մը չտայ, չենք կրնար բնականապէս ընդգիմակաց մեղմագոյն կարծիքը բացարձակապէս մերժել, անոր համար կրնայ մէկն ի գործնականին անոր իբրեւ հաւանականի հետեւիլ:

2.

Սաննիս Բ. մասին մէջ Եկեղեցւոյ Առաջնորդաց դրական օրինօք կամ արտօնութեամբ մը տրուած՝ ինչ ինչ դիպուածոց մէջ վերապահութենէն արձա-

¹ Գլ. 1. Կանայք, եւ այլն. Կ. Վասն տղ. վճ. բանադր. Ս. Լիզ. Ե. Թ. 265:
² Վէրբ. Ա. 596. Ռիեդի էջ 66, Թ. 101: Հմմ. Հայնէր էջ 145:
³ Հմմ. անդ, էջ 146—148:
⁴ Ման. 14:
⁵ Թ. 263:
⁶ Կուրի-Պալլ. Բ. 975, Վէրբ. Ա. § 596: Գործք Ս. Աթոռ, էջ 474: Ռիեդի, էջ. 66, Թ. 101:

կելու իշխանութիւնը վերստին կը հաստատուի: Յառաջ քան այն դիպուածոց եւ այս արտօնութիւնն ունեցող Առաջնորդաց վրայ խօսելու, քանի մը կարեւոր նախադիտելիք հոս դնենք:

1. Ի կեղեցականի մ'եղած բռնաբարութիւնը կրնայ ըլլալ¹: Ահա՛ն է, երբ միացեալ ըլլայ ծանր վիրաւորմամբ, կուրացուցմամբ, անդամատուժեամբ, կամ սաստիկ արիւնհեղուժեամբ (միայն թէ՛ քթէն չըլլայ), կամ մեծամեծ անարգանք եւ թշնամանք²: Միջին կամ չափ, երբ հետը միացեալ է ակուայ մը թափել, հերաց մէկ մասն փետել, կամ ճմլումն³: Յետեւ, երբ բռնցի կամ տափաձեւն, դաւազանաւ, աքացի, քարկոծմամբ ծեծուի, բայց առանց բռնաբարութեան հետք մը մնալու. որպիսի է ուռեցք կամ արիւնհեղուժիւն³: Թէեւ այսպիսի բռնաբարութիւն մը թեթեւ կը կոչուի, այնու չուղուիր ըսել՝ թէ այս մեղքը ծանր չի կրնար ըլլալ: Վասն զի թեթեւ մը կրնայ ըստ պարագայից ծանր կամ ահագին ըլլալ. ինչպէս վասն բարձրագոյն աստիճանի բռնաբարելոյն, տարօրինակ անարգանաց, առանձինն մեծ գայթակղութեան, հանդիսատեսաց բաղմութեան, վասն պարագայից տեղեաց եւ ժամանակի, ինչպէս առ խորանի: Սուտի բռնաբարութեան մը ծանրութիւնը կամ թեթեւութիւնն ըստ պարագայից առողջ մտօք պէտք է դասուել: Յերկբայական աւելի ծանր կամ ահագին բռնաբարութիւն պիտի ընդունուի, քան թէ թեթեւ, ինչպէս յայտնի է Յիւր ընթերցանայ Վտարանդիքէն: Իսկ եթէ նոյն իսկ թեթեւ բռնաբարութիւն մ'ըլլալուն վրայ, վասն զի երկբայութեան չորքէն է, իսկ բանադրանքը յայտնի ծանր մեղաց վրայ կը դրուի:

2. Բռնաբարութիւնը կրնայ ըլլալ հրապարակաւ⁴: Երբ շատերուն ծանօթ ըլլայ, կամ հրապարակաւ երբ հաւանականաբար շատերուն ծանօթ չէ՛ կամ պիտի չըլլայ: Հրապարակականը կրնայ ըլլալ հրապարակաւ⁵ ինչքանայ, ըստ որում ատեան ելած է կամ դատարանական վճիռ մ'ընդունած է, եւ կամ հրապարակաւ⁶ հրապարակաւ⁷, ըստ որում այնչափ մարդկան ծանօթ է, որ ալ չի ծածկուիր:

¹ Բատ. էջ 170. Թ. 266:
² Նոյն, անդ:
³ Աբաւ. Ա. Թ. 866: Վտարանդիք Յիւր ընթերցանայ:

Արդ, կանոնիս մէջ յիշուած 1. « Գիպրոսսմանքն » ըստ յանցաւորաց վիճակին, սեռին, հասակին, եւ այլն, պէտքէն են, ինչպէս ըսուելիքներէն կ'իմացուի: Իսկ 2. Արտօնացեալ⁸ « աննիկք » են ա. Արտօնացեալ⁹ պարգաւստ¹⁰, որոնք Հռոմէն ելլելուն պէս՝ ընդ բնաւ իշխանութիւն ունին այս բանադրանքէն արձակելու, նոյն իսկ եթէ յանցանքն ահագին եւ հրապարակական ըլլայ²: Բ. Նորիքակ: Ասոնք առջիններուն պէս իշխանութիւն ունին, բայց միայն իրենց դաւառին մէջ³, Գ. Աբբայ⁴ հանդիսական ուխտիւ կրօնաւորաց՝ իշխանութիւն ունին ընդ բնաւ, բայց իրենց հպատակաց նկատմամբ միայն, եւ այլ սահմանաւորութեամբ ինչ: Դ. Իպոսիոպոստոն⁵ եւ կարգաւորք թեմի: Ասոնց այս իշխանութիւնը կը սահմանաւորի հետեւեալ դիպաց վրայ: 1. Երբ յանցանքը դաղանի է, թէեւ ահագին ըլլայ⁶: 2. Երբ թեթեւ կամ ծանր է⁵, թէեւ հրապարակական ըլլայ. առ այս սովորաբար վասն եռամեայ ժամանակի իշխանութիւն կ'ընդունին: 3. Երբ յանցաւորն կին է, նաեւ եթէ յանցանքը հրապարակական եւ ահագին ըլլայ⁶: 4. Երբ յանցաւորն հասարակաց կեանք կը վարէ, ինչպէս կղերանացի կղերք, բայց յանցանքն ահագին չըլլայ⁷: 5. Երբ մէկն յանցանք գործելու ժամանակ անչափահաս էր, եւ չափահաս ըլլալէն ետքն արձակուած կը խնդրէ⁸: 6. Երբ յանցաւորն չի կրնար Հռոմ արձակուած առնելու երթալ⁹: Եթէ երթալու արդէլքը մշտտուն է, կրնան Իպոսիոպոստոնը միշտ արձակել. եթէ երկարատեւ է, կրնան արձակել երգուրնցընելով՝ ի բառնալ արդէլքը Մեծին ներկայանալու, բայց ոչ՝ նոյն բանադրանաց մէջ վերստին իյնալու պատժով¹⁰: Եթէ արդէլքն կար-

¹ Տես վերն էջ 101:
² ԳԼ. Վասն բարձրութեան, վասն վճռ. բանադր.:
³ ԳԼ. Վասն պաշտ. Նորիքակի:
⁴ Տրիդ. ժողով. ԳԼ. Օրեն է. Նիկոս ԻԳ. Վասն Բարեկ:
⁵ ԳԼ. Հռոմէի. Վասն վճռ. Բանադր.:
⁶ Ս. Լիգ. Է. Թ. 279. ԳԼ. Առաջ, Վասն վճռ. բան:
⁷ ԳԼ. Բռնցի, Վասն վարուց եւ պարկ. կղերիկ:
⁸ ԳԼ. Տղա, Վասն վճռ. բան:
⁹ ԳԼ. Թեպետ, Վասն վճռ. բան:
¹⁰ Հմմ. Հայնէր, անդ, էջ 152:

ճատեւ է, չեն կրնար արձակել, բայց ստիպողական հարկի ժամանակ կրնան նկատմամբ արդեանց արձակել, այսինքն՝ վճռել թէ բանադրանքն թէեւ կը մնայ, բայց հոգւոյ մեծ վտանգէ, գայթակղութենէ եւ վատհամբաւութենէ խորշու համար օրինաւոր է յանցաւորին՝ մեղքերուն արձակումն ընդունիլ, հաղորդուիլ եւ այլն: Բայց այսպիսին միշտ պարտաւոր կը մնայ վերատին նոյն բանադրանաց մէջ իյնալու պատժով՝ որչափ կարելի է շուտով օրինաւոր Մեծէն բանադրանաց արձակումն առնելու¹: Ե: Գաւառացիք ալ եւ այլ կարգաց, որոնք կրնան նոյն իշխանութիւնը Մեծաւորաց յանձնարարել: Ուրիշ կարգէ անձ մը բռնաբարող կրօնաւորն, ըստ կանոնական իրաւանց երկու կարգին Առաջնորդներէն ալ պիտի արձակուի, եթէ բովանդակ գործը բռնաբարելոյն Առաջնորդին չի յանձնուիր: Եթէ փոփոխակի զերար բռնաբարեն, իւրաքանչիւրոց Առաջնորդը կ'արձակէ: Եթէ կրօնաւոր մը յառաջ քան վանք մտնելը կղերական մը բռնաբարած է, Քահանայապետէն կամ Եպիսկոպոսէն կրնայ արձակուիլ: Իսկ կուսանք վիճակաւորէն կամ իրենց Առաջնորդէն կրնան արձակուիլ, ըստ որում Եպիսկոպոսին տակ են, կամ կրօնաւորական կարգի մ'Առաջնորդին տակ ազատ յԵպիսկոպոսէ, եթէ Քահանայապետէն առանձին արտօնութիւն մը չունին²:

Այս բանադրանքէ չ'ազատեր ո՛չ թանձր եւ վէհերոտ եւ ո՛չ կամակար տգիտութիւնը. վասն զի « անորսնօր աստանայի » գաղափարը մեղաց ծանրութիւնը միայն կ'ենթադրէ, որ թանձր տգիտութեամբ ալ կրնայ ըլլալ³:

Գ.

« Որոնք որ մենամարտութիւն կ'ընեն, կամ պարզապէս ի նոյն կը կոչեն, կամ զայն յանձն կ'առնուն, եւ ասոնց նրբեւէ

¹ Ս. Լիգ. Է. Թ. 276: Սքաւ. Բ. ճառ. Դ. Թ. 868:
² Հմմ. Ս. Լիգ. Է. Թ. 276 — ընդ Պոնաշ. Սուրբ, եւ այլն:
³ Ս. Լիգ. Է. 271: 2ՊԵ. էջ 96. Թ. 108. ընդ 3:

գործակիցները, կամ նրբեւէ ծառայութիւն կամ օգնութիւն մատուցողներն. նոյնպէս՝ որոնք որ դիտմամբ հանդիսատես կ'ըլլան, եւ մենամարտելու թոյլ կու տան, կամ ըստ իրենց կարողութեան չեն արգելուր, նրբեւէ արժանապատուութիւն ալ ունենան, նսնել թագաւորական կամ կայսերական⁴:

Ըստ բարոյագիտաց եւ իրաւաբանից՝ Անտուան-Բուսիէն է՝ պայմանա չունչ տուել ճահաբէր վնասո՛ր քայն ընդ քայն կոտ⁵: Բուն եւ իրական մենամարտութեան համար, որ կանոնիւս կը բանադրուի, կը պահանջուի 1. Որ կռիւն ըլլայ երկակողմանի, այսինքն՝ ճակատ առ ճակատ կեցող երկու անձանց մէջ. ուստի մին ընդ միւսմ պիտի կուռի, թէպէտ ընդ միւսմ բազումք յաջորդաբար կուռին: Ուստի եթէ կռիւն միեւնոյն ատեն՝ ի մէջ բազմաց եւ բազմաց է, մենամարտութիւն չէ: 2. Կռիւն նախընթաց միաբանութեամբ պիտի ըլլայ. այսինքն՝ յառաջընէ ճակատատեղին, ժամանակը⁶, եւ զինուց տեսակը⁷ պիտի որոշուի. եթէ այս երեքէն մէկը պակի մենամարտութիւն չէ⁸: Նսեւ եթէ մենամարտիկը յայսմ միաբանին, բայց ի գործադրութեան տակաւին վիճէն մինչեւ առ զայրուցսն դուրս յարձակին եւ դիպող տեղ մը մահաբեր զինուք սկսին կուռիլ, այն կռիւն նախընթաց միաբանութեամբ չէ⁹: Անոր համար երբ պատերազմի մը վերջնական որոշում տալու համար երկու բանակներէն մէկ մէկ հոգի ճակատ առ ճակատ պատերազմին, կամ երբ երկու հոգի իւրարու հետ բանակուի ընելէն ետեւ այսպիսի բան մ'ըսեն. Ուրիշ անգամ զիրար կը տեսնենք, եւ երկրորդ օրը զիրար փնտռեն գտնեն եւ զինուք զիրար զարնեն, կամ երբ երկու հոգի միայն մենամարտել ձեւացընեն, այս ամէն դիպաց մէջ բանադրանացս տակ չեն իյնար:

¹ Ժող. Տրիդ. Վասն Բարեկ. Ն. ԻԵ. Կ. 19: Ի Սահմ. Այնտի, որտ Գիտսի Գ. Ի. Ի ԶԷԼ Գրեգ. Ժ. Գ. Ի. Փոխանալո՛ր Կղեմ. Ը. Ի, եւ Չորեքի Բեն. Ժ. Գ. Ի. Տես՝ էջ 15:
² Հմմ. Փառունէր, անդ 398, եւ այլն:
³ Ս. Լիգ. Գ. 401. Խ. 3:
⁴ Գրեգ. Ժ. Գ. § 1. Կղեմէս Ը. § 3, եւ այլն:
⁵ Ռայֆ. Է. 14. Խ. եւ այլն: Ռիեդի էջ 68. Թ. 103:
⁶ Ռայֆ. Է. 14. Թ. 10: Ռիեդի, էջ 68. Ժ. 12: Քլար. էջ 90. Թ. 175: Վճիռ Ս. Ժ. Սիւնհոգոսաց 5 Օդոսս. 1744:

3. Կռիւն վտանգաւոր եւ միեւնոյն զինուք պիտի ըլլայ¹: Այսպիսի զէնքեր են մանաւանդ սուր, ստորձանակ, նիզակ, եւ առհասարակ այնպիսի զէնքեր՝ որ կրնան գոնէ մահացու վերջ դնել: Ուստի բռնամարտ կամ անվնաս զինամարտ՝ բրամարտ, բռժ սուսերամարտ, մենամարտութիւն չէ², թէ եւ երկակողմանի միաբանութեամբ ըլլայ եւ նոյն իսկ մահ յառաջ գայ³:

Մենամարտութիւնը կրնայ ըլլալ հանդիմանի կամ հրապարակական, երբ մենամարտն առաջի վկայից կ'ըլլայ, եւ կամ առանձնական, երբ առանց այս վկայից կ'ըլլայ: Գարձեալ կրնայ ըլլալ հանգիստի, երբ մէկ կողման մահուամբը կը վերջանայ, կամ հանգիստի, երբ մէկ կողման արիւնտոմամբը կը վերջանայ, ուստի վերջ կամ անդամատութիւն մը միայն պատճառեցով⁴:

Այս նախագիտելիքները դնելէն ետեւ, գանք կանոնի մասանցը մեկնութեան:

Այս կանոնիս մէջ վերապահեալ բանադրանաց տակ կը ձգուին վեց տեսակ յանցաւորք, որոնք են՝

1. «Մենամարտութիւն ընողներ», այսինքն այն ամէնքն՝ որ ազատակամ՝ մենամարտին ճակատատեղիդն, ժամանակին եւ զինուոց տեսակին վրայ միաբանելէն ետեւ, ծանրութեամբ եւ ոչ առ կատակ մենամարտութիւն կ'ընեն վտանգաւ սպանութեան, անդամատութեան կամ ծանր վիրաւորման: Ըլլայ մենամարտն հանդիսական կամ առանձնական, մահաբեր կամ չմահաբեր, եւ կամ այլադո: Այս ամէն գիպաց մէջ բանադրանաց տակ կ'իյնան⁵:

2. «Մրտնք որ պարզասիս ի նոյն կը կոչեն», այսինքն անոնք՝ որ զուրիշն մենամարտի կը հրաւիրեն վերոյիշեալ պայմաններով: Ասոնք բանադրանաց տակ կ'իյնան նաեւ եթէ հրաւիրուողն հրաւերն չընդունի, եւ կամ՝ հրաւերն ոչ որոշ անձի մը, այլ յընդհանուր իմն ըլլայ⁶:

¹ Փիղիուկ. Ի. 107: Փիկնատ. Հար. Թ. Խորհ. 88. Թ. 87:

² Քար. Էջ 91. Թ. 175:

³ Կուրի-Պալ. Բ. 975:

⁴ Ռիէդի. Թ. 182:

⁵ Մեկն. Հոմ. Էջ 553. 554: Ռիէդի Էջ 69. 103:

⁶ Վրէմ. Փռննակի նորոք. § 6:

3. «Մրտնք որ զայն յանն կ'առնուն», այսինքն այն ամէնքն, որ մենամարտի հրաւերն սրեւէ պատճառաւ յանձն կ'առնուն, թէ եւ այլեայլ պարագայից պատճառաւ մենամարտը չգործադրուի: Այս վերջին երկուքին («կոչողներուն եւ յանն առնողներուն») նկատմամբ պէտք է միտ դնել, որ եթէ վասն սնապարծութեան միայն կը կոչեն կամ յանձն կ'առնուն առանց իրօք մենամարտելու կամբ ունենալու, կամ ստուգութեամբ գիտնալով՝ որ բարեկամաց միջնորդութեամբը խաղաղութեամբ ետ պիտի կենան, այն ատեն թէ եւ մահացու մեղք կը գործուի վասն գայթակղութեան, բայց բանադրանքն վասն ներքին ատենի տեղի չունի. վասն զի ընդդէմ օրինաց գործելու կամբ ու յամառութիւն չլիայ: Վասն արտաքին ատենի, պէտք են այնպիսիք ցուցնել՝ թէ իրօք մենամարտելու կամբ չունենին: Իսկ եթէ կոչուող միայն կատակաւ եղած է, յայտնի է թէ եւ ոչ իսկ մեղք կայ¹:

4. «Մրտնե գործակիցները, կամ սրտեռ ծառայողի իսկ կամ օգնողի իսկ մատուցողներն», Այսպիսի գործակիցք են, ըստ Աղեմայ Ա. Ի վկայք, խորհրդատուք, հրաւիրագիրը գործողք ու ամենողներ, կամ նոյնը գրելու խորհուրդ տուողներ, հրամայողներ, յորդորողներ. հրաւերը ծանուցողներ, ձի, զէնք եւ այլ ինչ մենամարտի համար հայթայթողներ, զանոնք փոխտուողներ կամ ծախողներ. միով բանիւ ամէնքն՝ որ մենամարտութեան կերպաւորման կամ նոյն իսկ մենամարտին մասնակից կ'ըլլան: Միայն ի բաց կը թողուին հաւանողներն, վասն զի եւ ոչ տեղ ժ'ատանց վրայ յիշատակութիւն կայ: Իսկ զինավաճառք եթէ գիտնալով որ մենամարտութեան պիտի գործածուի, զէնք ծախեն կամ փոխ տան, կ'իյնան բանադրանաց մէջ. վասն զի կերպապէս գործակից կ'ըլլան². Իսկ եթէ շէն գիտեր, յայտնի է թէ խնդիր չի կրնար ըլլալ³: Այս ամէն

¹ Մեկն. Հոմ. Էջ 561: Ռիէդի Էջ 69, Թ. 103: Փռնուներ, Էջ 400, ծան. 3:

² Կուրի-Պալ. Ա. Էջ 223. Վրէմ. գործիք:

³ Մեկն. Հոմ. Էջ 584:

գործակիցներն այն ատեն միայն բանադրանաց տակ կ'իյնան, երբ մենամարտն իրօք կատարուի¹:

5. «Որոնք որ ղիտմամբ հաւնդիստեսն կ'ըլլան: ՝ Հոս պէտք է մտադիր ըլլալ լիտմամբ բառին, վասն զի մենամարտին ամէն հանդիսատեսները բանադրանաց տակ չեն իյնար, հապա անոնք միայն, որոնք քրտմանելի տեսարանին հանդիսատես ըլլալու համար ճակատտեղին կ'երթան: Ասոնք մենամարտութեան պաշտպանները կ'ըլլան. վասն զի իրենց ներկայութեամբ գործքին հաւանած կ'ըլլան եւ մենամարտիկներն առաւել եւս կը գրգռեն ու կը գրգռեն: Անոր համար բանադրանաց տակ չեն իյնար՝ որոնք որ ըստ պատահման անկէ կ'անցնին եւ առ հետաքրքրութեան հարեւանցի մը կը նային, կամ հեռուէն կամ գաղտագողի կը դիտեն. վասն զի ասոնք մենամարտին զայրացման պատճառ չեն ըլլար, եւ ըստ հետեւորդի եւ ոչ իւրիք հաղորդ յանցանաց²: Իսկ թէ այն անձն՝ որ թէեւ գիտմամբ ճակատտեղին կ'երթայ, բայց ոչ հանդիսատես ըլլալու դիտմամբ, այլ ուրիշ դիտմամբ մը, ինչպէս՝ մենամարտութիւնն արգիլելու համար, բանադրանաց տակ չ'իյնար, ինքնին յայտնի է:

6. «Որոնք որ մենամարտելու թող կող տան կամ ըստ իրենց կարողութեան չեն արգելորդ ոճեր արժանապատուութիւն ալ ունենան, նաեւ թագաւորակալ կամ կայսերակալ: ՝ Ասոնք մենամարտութեան կերպով մը մասնակից են. այսպիսի են՝ որոնք որ մենամարտուելու յայտնապէս հրաման կու տան, մարտավայր կը շտրհեն իրենց երկրին վրայ, թող կու տան ընդհանրապէս որ մենամարտութիւն ըլլայ, թէեւ կըրնային իրենց իշխանութեամբն արգելուլ. այս ամէնքը լիտմամբ գործակիցք են: Սակայն կանոնն նաեւ լիտմամբ գործակիցները կը բանադրէ, որոնք թէպէտ կրնային կամ ի պաշտօնէ պարտական էին արգելուլ:

¹ Մեկն. Հո. էջ 561: Ռիեդի էջ 70. թ. 104: Հմբ. Հայ-նէր էջ 156:
² Վրէմ. Բ. Փոք. Զոր. § 3: Ս. Լիդ. Գ. 401. Խ. 3: Ռիեդի էջ 69 ճ. 21:

եւ սակայն մենամարտութեան կերպաւորումը կամ գործադրութիւնն ըստ իրենց կարողութեանը չեն արգելուլ: Այսպիսի են՝ Գլուխը պետութեան¹. Առաջնորդք², նկատմամբ իրենց հօտին. Առաջնորդք մամբ աշակերտաց, Ծնողք նկատմամբ որդւոց: Ասոնք ամէնը պարտական են ըստ կարի արգելուլ, եւ եթէ անկողիթ ըլլան կ'իյնան բանադրանաց մէջ³:

Այս բանադրանքէն չ'ազատեր ոչ թանձր եւ վեհերոտ, եւ ոչ կամակար տգիտութիւնը:

Բաց ի բանադրանացս, ուրիշ պատիժներ ալ կան այս յանցաւորաց վրայ, որոնք Առաջնորդք Սահմանադրութեամբ չեն բարձուած, թէեւ ոմանք չգործադրուին վասն անյարմարութեանս⁴:

Գ.

«Որոնք որ կը գրուին Մասնական կամ Բարալոնարեան կամ այլ նոյնպիսի աղանդոց՝ որ ընդդէմ Եկեղեցւոյ եւ օրինաւոր իշխանութեանց յայտնապէս կամ գաղտ կը մեքենայեն. նոյնպէս որոնք որ նոյն աղանդոց ոճերէ օգնութիւն կը մատուցանեն, կամ անոնց ծածուկ պարագլուխներն ու առաջնորդները չեն զեկուցաներ, քանի որ չեն զեկուցած⁵:»

Եկեղեցին՝ որ ըստ իւր բնութեանն ու առաքմանը յայտնութիւն եւ ըստ կը սիրէ, գաղտնի ընկերութեանց անդամ գրուելը միշտ խտտութեամբ պատուհասած է: Այսպէս նաեւ Պիոս Թ. 1846ին եւ 1865ին այսպիսի ընկերութեանց դէմ տրուած կոն-

¹ Ժ. Տիգ. Ն. Ժ. Գլ. 19. Վասն Բարեկ.:
² Վրէմ. Բ. անդ § 5:
³ Բատ. 179 ընդ Ի.: Զօր. էջ 96. թ. 109: Ռիեդի էջ 69. թ. 104. եւ այլն:
⁴ Տես Հայեր էջ 159:
⁵ Ի Սահմ. Ի Բարձրագոյն Վրէմ. Ժ. Բ. 28 Ապրիլ, 1838: Նախնական Բենեդիկտ. Ժ. Գ. Եւայլն: Տես էջ 17:

գակաները վերստին հաստատելն ետեւ, նոյն ընկերութեանց անդամ գրուողներն ալ կանոնիւս կը պատուհասէ:

Կանոնիս մէջ երեք խումբք յանցաւորաց բանադրանաց տակ կը ձգուին:

Ար բանադրուին “Որոնք որ կը գրուին Մատուենա (ազատարմաշէն) կամ Վարդապետեան¹ (ածխավաճառ) կամ այլ նոյնպիսի աղանդոց²”, որոնց վախճանն է եկեղեցական ու քաղաքական իշխանութիւնն ու կարգն ամէն հնարաւոր միջոցներով վերի վայր կործանել: Այսպիսի են՝ Գրական³, Կոստանդնուպոլսեան⁴, Ֆէնեան⁵, միով բանիւ՝ ամէն աղանդ, որ յայտնի կամ գաղտնի Եկեղեցւոյ եւ տէրութեան դէմ կը գործէ:

¹ Գաղանի յեղափոխական ընկերութիւն մըն է, որ Իտալոյ ազատութեան համար կը ձգնի:

² Աշուր (secta) բառով կ'իմացուի ընդհանրապէս ժողով մարդկան բաժանեալ յայլոց, որոնք իրենց գործոց եւ վարդապետութեանց մէջ առանձին սեպական ուղղութիւն մ'ունենին: Առտի, կրնայ թէ ի բարի եւ թէ ի չար միտ առնուիլ (աղանդ փիլիսոփայից, հերետիկոսաց, եւ այլն): Եկեղեցական լեզուաւ, մանաւանդ քահանայապետական թղթոց մէջ՝ աշուր բառով կ'իմացուի, ամէն ընկերութիւն, միաբանութիւն, ժողով, եւ այլն, որուն վախճանն է կերպով մ'ընդդէմ Եկեղեցւոյ կամ օրինաւոր աշխարհական իշխանութեան գործել, այնպէս որ այս պիտի ըլլայ ընկերութեան գործն ու պաշտօնն ալ: Առտի աղանդին ետեւներէն է, որ ըլլայ 1. Ընկերութիւն, եւ 2. Եկեղեցւոյ կամ Տէրութեան կարգաց դէմ գործէ: (Գործոց կամ աւագակաց ընկերութիւնն աղանդ չէ): Իսկ երկրորդական բանն է եւ նշանակութիւն չունի՝ որ անուն մ'ունենայ, երդմամբ լուել պարտաւորէ կամ ոչ, հրապարակաւ գործէ կամ ի ծածուկ, տէրութենէ ընդունուած ըլլայ կամ ոչ: Տես՝ Ռիէրի 70. թ. 106, ծ. 4: Կղեմ. ի. Բ. անդ: Ս. Ժ. Քննութեան 5 Օգոստ. 1846: Երջարերական 8 Գեկտ. 1864:

³ Պիոս Ի. 1 Յունիս, եւ 4 Սեպտ. 1816: Լեւոն ի. Բ. 3 Մայ. 1824: Պիոս Թ. Սահմ. Որ Բազմոց 1846: Գրականութեան լեզուի կը թարգմանեն խառնելով իրենց մտքորոշութիւններովն, եւ ընդ բնաւ ձրի կը բաշխեն:

⁴ Պիոս Թ. Երջարերական, 8 Գեկտ. 1849: Սահմ. Բազմարդի Լեւոն ի. Բ. Ունալիստ (nihiliste) կը կոչուի այն ընկերութիւնն որ բոլորովն նիւթակրօն ըլլալով՝ քաղաքական եւ ընկերական վեճակներու թշնամի է եւ ջնջել կը ձգնի:

⁵ Ս. Ժ. Քննութեան, 12 Յունուար 1870: Ֆէնեանց ընկերութիւնն Ամերիկա սկզբնաւորեալ յետոյ Իրլանտա անցած գաղտնի ընկերութիւն մըն է, որ զիրլանտա աղտելու համար ընդդէմ քաղաքական իշխանութեան գաղտնի կը մեքենայէ:

Որպէս զի այսպիսի աղանդոց գրուողներուն բանադրանաց մէջ ինչալու ժամանակն որոշուի, պէտք է յաջորդացս միտ դնել¹:

1. Եթէ այսպիսի ընկերութեան մ'անդամները հրապարակաւ առանց երդման կ'ընդունուին, գրուողներն ան ատեն կը մեղանչեն եւ կ'իյնան բանադրանացս տակ, երբ նոյն ընկերութեան վախճանն՝ իբրեւ Եկեղեցւոյ եւ տէրութեան թշնամի ճանչնալէն ետեւ՝ անմիջապէս նոյն ընկերութենէն ելած ըլլալին հրապարակաւ, եթէ դայթակողութիւն մ'եղած է, չեն յայտներ:

2. Եթէ ընկերութիւնն գաղտնի է եւ գաղտնի միջոցներով ու ծրագիրներով վախճանին հասնիլ կը ջանայ եւ անդամներէն երդում կը պահանջէ, անդամքն ընդ ընդունուիլն արդէն բանադրանաց տակ կ'իյնան²: Ասոնք նաեւ այն ատեն, երբ երդմանէն ետեւ զղջան, սակայն արտաքուստ գարծեալ անոնց հետ հաղորդին, չեն կրնար արձակուիլ³:

3. Եթէ ընկերութեան մը վախճանն ու գործունէութիւնը գաղտնի է, բայց անդամներէն գաղտնութեան երդում չի պահանջուիր, այն ատեն 1. ին մէջ բնաձնիս կ'արժէ⁴:

2.

Ար բանադրուին “որոնք որ նոյն աղանդոց նրեռն օգնութիւն կը մատուցանեն:” Այս խօսքս կը բովանդակէ յինքեան զայն ամէնքն, որ Քահանայապետաց վաղեմի կոնգակներուն մէջ յառաջ կը բերուին: Ասոնց մէջ իբրեւ յանցաւոր գործ կը յիշատակուին հետեւեալներն. Այսպիսի ընկերութիւնները “տարածել, օգնական ըլլալ, տունը կամ կայտած կամ այլուր ընդունիլ, թողուցանել, յարիլ, ընկերանալ, հօգ տանիլ, թողուլ կամ դիւրացընել տեղ մը ժողովուելու, անոնց բան մը մատակարարել, եւ կամ այլ-

¹ Ռիէրի, անդ:
² Ս. Ժ. Ապաշխարութեան 21 Օգոստ. 1880:
³ Հմմ. Կուրի-Պալլ. Բ. 975:
⁴ Հմմ. Փր. Հայն. էջ 167—169:

ազգ խորհուրդ, օգնութիւն կամ պաշտպանութիւն յայտնապէս կամ գաղտուկ, ուղղակի կամ անուղղակի անձամբ կամ ի ձեռն այլոց սրեւէ կերպով մատուցանել. նոյնպէս զօրիշնեքը յորդորել, հրապուրել, գրոգռել կամ համոզել որ այսպիսի ընկերութեանց գրուին, անոնց թուէն ըլլան, կամ անոնց սրեւէ կերպով օգնեն կամ նպաստ ըլլան¹:

3.

Ար բանադրուին որոնք որ «անոնց ծածոակի պարագոյններն ու առաջնորդները (որոնց հետ դատապարտելի հազարութեան մէջ են, եկեղեցական Առաջնորդաց՝ յանցաւոր կերպով) չեն զեկոյցաներ», երբ ստոյգ անոնց վրայ ծանօթութիւն ունին: Ասոնց նկատմամբ գիտելիքներն հետեւեալ կէտերու կ'ամփոփենք:

1. Ամէն հաւատացեալ այն ամէն տեղ, ուր զեկուցման եկեղեցական օրէնքն ի զօրութեան է², պարտական են զեկուցանել Եպիսկոպոսին³ . Այսպիսի ընկերութեանց ծածուկ պարագուելքն ու առաջնորդները, թէեւ արդէն ծանօթ ըլլան, ընդ պատժով վերապահեալ բանադրանաց: Բ. Նոյն ընկերութեանց անդամները կամ գործակիցները, ընդ մեզք միայն, եւ ոչ ընդ բանադրանօք, ինչպէս յառաջ էր:

2. Պարագլխոց եւ առաջնորդներու զեկուցումը 30 օրւան միջոցի մէջ պիտի կատարուի, սկսեալ այն օրէն, յորում զեկուցման պարտքը ճանչցաւ մէկն եւ

¹ Ս. Ժ. քնն. 5 Օգոստ 1846: Պիոս Թ. Բանաստեղծութիւն 15 Սեպտ. 1865:

² Աւանց, ծան. 16: Կրկնք, Գ. Գաւերուած:

³ Գեկուցման պարտքն անձնական է եւ դատարարական, եւ ոչ հայրական, ինչպէս յայտնի է Ս. Ժ. Քննութեան (1, Փետր. 1871) մէկ պատասխանէն, յորում յայտնապէս կ'ըսուի, թէ՛ Գեկուցումը «պիտի ըլլայ անոր, որ իւր հովուական պաշտամանը համար պարտական է հսկել եւ զգուշանալ, որ իրեն յանձնուած հօտն դայլոց վճիմակին շմանուի եւ ժանտ ախան շախտանայ: Ուստի անոնց, որոնք Եպիսկոպոսական կամ յառաքելութիւնս իւր-Եպիսկոպոսական պաշտօն ունին. որպիսի է Առաքելական Փոխանորդ կամ Վերակացու, կամ իրմէ առ այս Գանձնարարեալք»:

զեկուցանել կարող է¹. 30 ր լրանալուն պէս, եթէ պարտքը չէ կատարած, կ'իյնայ բանադրանաց մէջ: Իսկ անդամաց կամ օգնականաց զեկուցման զանցառութիւնը նոյնպէս 30 օրէն ետեւ մեզք յառաջ կը բերէ:

3. Խոստովանահայր մը ուրեմն, չի կրնար արձակել առջինները ցորչափ որ պարտքերնին չեն կատարեր, կամ գէթ չեն խոստանար կատարել. վերջին դէպքին մէջ նաեւ բարոյական ապահովութիւն պիտի ունեցուի, թէ մէկն իւր այս խոստումը կը կատարէ: Իսկ վերջինները չի կրնար արձակել եթէ զեկուցումն օգուտ մ'ունի եւ չեն կատարեր: Բայց ասիկայ յընդհանուրն միայն կ'արժէ. շատ անգամ հարկ կ'ըլլայ խոստմամբ միայն շատանալ: Իսկ եթէ զեկուցումն օգուտ մը բնաւ չունի, պէտք չէ վայրապար բեռնաւորել զխոստովանողն. վասն զի օրէնքն այն ատեն չի պարտաւորեր²:

Վանոնս չզեկուցանողները բանադրանաց տակ ձգելէն ետեւ, կը յաւելու «քանի որ չեն զեկուցած»: Ասով չ'ուզուի իմացընել՝ թէ զեկուցմամբ, նովին գործով բանադրանքէ կ'արձակուին. վասն զի բանադրանքը հոգեւոր կապ մըն է, իսկ ամէն կապ ընդհանրապէս խօսելով՝ արձակման խօսքերով կը քակուի: Այլ կ'ուզուի իմացընել, թէ զեկուցման պարտքը կատարողը կը կատարէ այն պայմանն, որ կարեւոր էր արձակում ընդունիլ կարելու: Եւ որովհետեւ երբ որ այս պայմանը կը կատարուի, կը դադրի վերապահութիւնն, վասն զի ֆահանայապետն յայտնապէս հակառակը չէ յիշած, անոր համար ամէն խոստովանահայր կրնայ այն ատեն այս բանադրանքէ արձակել³:

Այս զեկուցման պարտքը կը դադրի⁴, 1. երբ մէկն անձամբ զեկուցանել չի կրնար. 2. երբ անձամբ զանձն պիտի զեկուցանէ: 3. երբ յանցաւորները պատուհասեալու ամենեւին յոյս չկայ, կամ պատժէն դիւրաւ կրնան պրծիլ. վասն զի անօգուտ իրաց չէք որ

¹ Ս. Լիգ. Գ. Թ. 252:

² Հմմ. Բատ. էջ 191. Թ. 298—:

³ Ռիէդի էջ 72. Թ. 107: Աւանց. ծան. 16:

⁴ Ռիէդի. Թ. 84. 8:

պարտապան¹: Երբ այր մ'աներկիւղ առն կամ կին մ'արի կնոջ երկիւղն երկնչի. ինչպէս՝ երբ մէկը վախնայ որ այս պատճառաւ զինք պիտի սպաննեն կամ պիտի չարչարեն: Ուստի, ոչ ոք պարտական է զեկուցանել հաւանական վտանգաւ մահու եւ վատահամբաւութեան, եւ կամ՝ մեծաւ վատու անձին, հօր, մօր, կնոջ, եղբարց կամ արեան ազգականաց²:

Ե.

“Որոնք որ եկեղեցական սպաստանարանի անբռնաբարելիութիւնն յանդուզն համարձակութեամբ ըննաքարել կը հրաւայեն կամ կը ըննաքարեն³:”

Այս կանոնիս նկատմամբ գիտելիքներն հետեւեալ կէտերու կ'ամփոփենք. 1. Յորում է եկեղեցական սպաստանարանի անբռնաբարելիութիւնը: 2. Որոնք են եկեղեցական սպաստանարանի անբռնաբարելիութեան պատճառներն: 3. Որոնք են եկեղեցական սպաստանարանի անբռնաբարելիութեան պատճառներն: 4. Որոնք են այս բանադրանաց մէջ ինկոզններն ու իյնալու պահանջներն:

1.

Եկեղեցական սպաստանարանի “անբռնաբարելիութիւնն” ըսելով՝ կ'իմացուի նուիրական կամ կրօնական տեղեաց արտօնութիւնը հսն ապաւինող յանցաւորները պաշտպանելու. այնպէս որ 1. Ոչ ոք իրաւունք կամ իշխանութիւն ունի այս փախտեայքն անկէ հանելու, ի կեանսն պատուհասելու համար: 2. Ոչ ոք կրնայ արգելուիլ այս ապաւինողաց կենաց ապրուստը տալէն: 3. Ոչ ոք կրնայ եկեղեցի կամ կրօնական տեղեր մտնելը փախտեայքն արգելուլ կամ զլսնալ: 4. Ոչ ոք յանցաւոր, ցորչափ յապաստանարանի

¹ Սբաւ. Ճ. 8. Գ. Գ. Գ. 4. Յօդ. 2. § 1:
² Հմմ. Կուրի-Պալլ. Բ. 975:
³ Կոնդակը՝ Յորթոմ այլապէս Գրիգ. Ժ. Գ.: Յատուտայնայ մարտի Բենեդ. Ժ. Գ. եւ այլն: — Տես էջ 17:

է, կրնայ մահուան կամ ուրիշ պատուհասի դատապարտուիլ, եւ ոչ ալ 5. Հետն ունեցած սեպհական իրերէն կամ ստացուածներէն մերկացուիլ¹:

Եկեղեցական սպաստանարանի անբռնաբարելիութիւնն ըստ իմիք ի բնական օրինաց է վտան մեծարաց նուիրական տեղեաց, եւ այս պատճառաւ նոյն իսկ հեթանոսք ասիկայ ունէին. եւ ըստ իմիք ալ, մանաւանդ թէ բուն իսկ յեկեղեցական եւ յաշխարհական օրինաց²: Այս անբռնաբարելիութիւնը գրեթէ եւ ոչ տեղ մ'ամբողջապէս կը պահուի. բայց ասով չի կրնար վերցուած համարուիլ բոս գոյացութեանը, մանաւանդ երբ Աստ. Անուայ Սահմանադրութեամբ վերստին կը հաստատուի, թէ եւ ըստ որպիսութեանը տեղտեղ պէսպէս եղանակաւորում ընդունած ըլլայ: Ուստի եւ ոչ տեղ մը կրնայ ամբողջապէս բարձուիլ, թէ եւ “ըստ ամենայն հանգամանաց ի վաղուց հետեւ անդործածական եղած ըլլայ”, ինչպէս կ'ըսէ Քրիստոսութեան Ս. Ժողովոյն տուած մէկ պատասխանագիրը³ (22 Գեկտ. 1880):

“Եկեղեցական սպաստանարանի” անբռնաբարելիութիւնն ունին՝

- 1. Եկեղեցի, թէ եւ օծեալ չըլլան այլ միայն օրհնեալ⁴, նոյն իսկ եթէ պղծեալ ըլլան սրբէէ կերպով, եւ նոյն իսկ եթէ եկեղեցական արգելման տակ ըլլան⁵: Նոյնպիսի են նաեւ եկեղեցւոյ վերաբերեալ շինուածներն, ինչպէս՝ աւանդատուն, գաւիթ, տանիք, գետնակամարք, օսնդուիք եկեղեցւոյն, արտաքին դրան պատուանդանը, եւ այլն⁶, նաեւ եկեղեցւոյն շրջակայքն՝ 40 քայլ մեծ եկեղեցեաց համար, 30 փոքունց:
- 2. Գերեզմանատունը, հաւասարապէս՝ եթէ կից է եկեղեցւոյն կամ անջատեալ⁷:

¹ Հմմ. Փր. Հայն. էջ 172 առ 1:
² Հմմ. Նոյն 172—174:
³ Հմմ. Նոյն 178:
⁴ Կ. 9 վասն ազատ. Եկեղ. Կ. 4. վասն կրօն. տեղեաց:
⁵ Փիր. Գ. 49. 3:
⁶ Կ. 21. 35. 36. 17. 4: Կուրի-Պալլ. Ա. 258:
⁷ Կ. 6. Գ. 17. 9. 4. Կ. վերջ. վասն պալտ. Եկ. Ռայֆ Գ. 49. 41, եւ այլն:

3. Բնակարանի և Կարգինալայ եւ Եպիսկոպոսայ. նոյնպէս խորհրդապետանոցն, եթէ եկեղեցւոյն ստա- յուածքն է եւ ժողովրդապետը կը բնակի¹ :

4. Վանիքն եւ վանաց որմոց մէջ փակուած տե- ղերն՝ համբարանոց, պարտեղ. եկեղեցական կղերանոցք նաեւ հիւանդանոցներն ու աղքատանոցները, եւ ու- ըրիշ բարեպաշտական տեղերն, մատրուք՝ ուր Պատա- րադ կը մատուցուի. եթէ այս ամէնքն եպիսկոպոսա- կան իշխանութեամբ հաստատուած են² :

5. Թափօրն, երբ Սրբութիւն Սրբոց ի միասին է. վան զի, ինչպէս որ՝ Ուր Քահանայապետն է, հոն նաեւ Հոսով, նոյնպէս ուր Քրիստոս, հոն է նաեւ եկե- ղեցին³ :

Եկեղեցական ապաստանարանի անբռնաբարե- լիութիւնը կը պաշտպանէ այն ամէն յանցա- օրները, ու- ընք զբական օրինօք մը այս պաշտպանութեանէն շէն մերժուած: Ուստի, նաեւ բանադրեալք, հերձու- ծողք եւ հերետիկոսք, եթէ ասոնք բաց ի հերետիկո- սութեան ուրիշ յանցանաց համար հոն կ'ապաւինին. նոյն իսկ հրեայք, հեթանոսք եւ անհաւատք կրնան եկեղեցական ապաստանարանի անբռնաբարելիութեան պաշտպանութեանն ապաւինիլ: Վան զի այս արտօ- նութիւնն անձնական չէ, հապա տեղական, նուիրա- կան տեղեաց մեծարանաց համար դրուած է: Այս ար- տօնութեանն զրկուած են⁴ :

1. Ելուզակ եւ հուզկահար, երբ աւաղակութիւն մը սպանմամբ կամ անդամատուծեամբ կողպտե- լոյն կ'ընէ:
2. Ազարակները մարդաթափ ընող:
3. Եկեղեցւոյ կամ գերեզմանատան մէջ սպանու- թիւն գործող կամ անդամատող:
4. Եկեղեցական ապաստանարան ապաւինողն ար- գելող կամ մերժող:
5. Սեկնակազէն. նոյնը ստակով վարձող, նաեւ եթէ վարձքը չտայ:

¹ Բատ. էջ 200, Թ. 310:
² Ոսպի, անդ Թ. 47, Կ. 4. Վան կրօն. տեղեաց:
³ Քերբարի, Սահմ. կան. Բ. էջ 103:
⁴ Կոնգ. Գրիգորի ժ. Գ. Յ. Գ. Ե. Ե. յաւանդ: Բեն. ժ. Գ.

6. Կամօք եւ դիտմամբ մարդասպան:
7. Քրեական յանցաւոր:
8. Առաքելական թղթերը խարդախող:
9. Գրամանենգ եւ օգնակալք նորա:
10. Բարեպաշտական դրամաժողովոց վարչութեան մէջ գողութիւն ընող կամ խորոզ:
11. Հերետիկոս, հերետիկոսութեան կասկածա- որ, երբ հերետիկոսութեան պատժէն ազատելու հա- մար կ'ապաւինին, ուրացեալ, հրեայ որ քրիստոնէ- կան հաւատքն ընդունելէն ետեւ ի հրեութիւն դար- ձած է:
12. Քահանայապետին եւ տէրութեան դաշնա- դրութեան մէջ ի բաց առնուողներն:

2.

Վանսին մէջ յանուանէ բանադրանաց տակ կը ձգուին «որոնք որ իրենցարեղ կը հրամայեալ կամ կը իրենցարեղ եւ ոչ ուրիշ որեւէ օգնականները: Ասոնք կրնան բռնաբարել՝ 1. Նոյնը հրամայելով. 2. Ապաւինիլ շէտողով. 3. Ապաւինողին օրապահիկն չտալով կամ քովի ստացուածն առնով: 4. Ապաստա- նարանի մէջ բռնելով, կապելով, ձգձգելով, պաշար- մամբ անձնատուր բլլալու ստիպելով: Ասոնց թուէն են նաեւ ապաստանարանէն բռնութեամբ հանուած յան- ցաւորն ետ չգարձնող պաշտօնեայք եւ բանտապետք:

Որպէս զի ասոնք այսպէս բռնաբարելով բանա- դրանաց մէջ իյնան, կը պահանջուի, որ

1. «Բանդրողն համարանկալութեամբ» ըլլայ, այսինքն՝ առանց մէկէ մը ստիպուելու՝ կամօք եւ գի- տուութեամբ բռնաբարեն²: Ուստի, զինուորք, ոստիկանք, եւ այլն, որոնք իրենց մեծէն առ այն հրաման կ'ընդու-

¹ Սահմանադրութեան անօրինակ պաշտօնական հրատա- րակութեան մէջ սխալ մը սպրդած էր այս է. կանոնն մէջ: Վան զի հոն այս կանոնն այսպէս էր. «Որով որ իբեղցումն ապաստանարանի անբռնաբարելիութիւնը բռնաբարել էր հրամայե- թա՛ յանձնառն հատուցութեամբ ի բռնաբարել» ինչպէս է նա- եւ 1870 ին տարուած հայերէն թարգմանութիւնն: Բայց Ս. Դոգովոյ քննութեան Աժոճակցին առ Ս. Դոգովոյ Ապաւնա- րութեան գրած (10 Փետր. 1871) թղթովն վերը գրածնուս- պէս ուղղուեցաւ, այնպէս որ «Բանդրողն համարանկալու- թեամբ» ներկու յանցաւորաց ալ կը վերաբերի:
² Հրահանգ Ս. Դ. Քննութեան 1 Փետր. 1871:

նին, աղատ են. նոյնպէս որոնք որ կամաւ բայց չգիտալով որ այս ինչ տեղն ապաստանարան է, բռնաբարել կը հրամայեն կամ կը բռնաբարեն¹:

2. Բռնաբարութիւն պիտի ըլլայ, ինչպէս « յոնաթաւնը » բառը կը պահանջէ: Ուստի շէն բանադրուի խաբէութեամբ, խոստմամբ, եւ այլն դուրս հանելէն ետեւ՝ ձերբակալ ընողներն²:

3. Բռնաբարութիւնն էրօ՞ կատարուի: Ասիկայ կը պահանջուի հրամայողներու համար ալ. վասն զի Գրիգ. ԺԳ. ի Կոնդակին, ուստի կանոնս առնուած է, « փորձ » բառն ի բաց ձգուած է³:

Չ.

«Որոնք որ կուսանաց փակարանը կը բռնաբարեն, սրեւէ կարգէ կամ վիճակէ, սեռէ կամ հասակէ որ ըլլան, անոնց կուսաստանն անոնց օրինաւոր իշխանութեան մտնելով. նոյնպէս նաեւ որոնք որ զանոնք ներս կը մուծանեն կամ կ'ընդունին. նմանապէս այն կուսանք՝ որ արտաքոյ դիպուածոց եւ ձեւոյ, որ Ս. Պիոս Ե.էն ի Սահմանադր. Պայծառորթեան սահմաննալ են, փակարանէն դուրս կ'ելլեն⁴:»

Կանոնս կուսանաց փակարանը բռնաբարողները կը բանադրէ:

«Փակարան» ըսելով՝ ըստ Գրիգորի Նշանակութեան՝ կ'իմացուի վանքին սրմովը փակեալ բովանդակ միջոցն: Ուստի, նաեւ դաւելթն ու որմափակ վանակից պարտէղն: Նոյնպէս Եկեղեցւոյ դասն ու աւանդատուներ,

¹ Վէրք. էջ 379, Թ. 603:
² Ռիեդի, էջ 72. Թ. 110, եւ այլն:
³ Հմմ. Փր. Հայն. էջ 177: Աւանց. Թ. 16: Ռիեդի, էջ 73. Թ. 110:
⁴ Ի Սահմ. Վարդապետ. Բոնիփակ. Ը: Տրիգ. ԺԴԷ. Ե. Ին: Վասն ինչ. եւ այլն: — Տես էջ 17:

եթէ վերջնա որմածին մէջն է կամ ուղղակի վանքէն՝ ի պէտս կուսանաց մտնելու մի միայն դուռ մ'ունի. եւ թէ դրսէն Եկեղեցի մտնելու դուռ մ'ունի կամ որմածէն դուրս է, փակարանի չի վերաբերի¹: Իսկ Բարոյապետ առեալ՝ փակարան կը նշանակէ՝ օրէնք կամ պարտք, որով ոչ որ այս տեղերը մտնել եւ ոչ կուսան մը դուրս ելլել կրնայ²:

Այս փակարանը «կոռասնաց» պիտի ըլլայ: Այս բառով կ'իմացուին այն կարգէ կուսանք, որոնք հանգիսական ուխտ կը դնեն: Իսկ պարզ ուխտ ունեցող կուսանաց փակարանը, եթէ ունին, բռնաբարելը չի նար կանոնիս տակ, այլ կամ Եպիսկոպոսէն եւ կամ կրօնին Սահմանադրութեանէն դուրս բանադրանաց տակ, եթէ այսպիսի բան մը դրուած է³:

Փակարանն այլեւայլ օրինակաւ կրնայ բռնաբարել: Կանոնս նախ եւ յառաջ կը դնէ «մտնողները», այսինքն՝ ամէն կարգէ, վիճակէ, սեռէ եւ հասակէ անձինք, որոնք առանց օրինաւոր իշխանութեան, սրեւէ պատճառաւօք՝ թէեւ ոչ մեղանշական դիմամբ, փակարանէ ներս սար կը կոխեն: Ուստի, կանայք, մանկուք (7 տարին լրացեալ) դուքս, կոմս, իշխան, դքսուհի, կոմսուհի, իշխանակին, եւ կուսաստանը շինողն իսկ այս կանոնէս ի բաց չէ առնուած. եւ ոչ իսկ Եպիսկոպոսն՝ որ միայն տարեւոր այցելութեան եւ ուրիշ հարկաւորութեան ատեն կրնայ մտնել: Միայն ի բաց առնուած են՝ կայսր, թագաւոր, կայսրուհի, ուստերք, եւ գատերք նոցա, հանդերձ շքադրօք:

Փակարան կրնայ մացուիլ միայն «օրինաւոր իշխանութեամբ», որ ի հարկաւորութեան թղթով կը տրուի Եպիսկոպոսէն, 1. Բժշկաց, 2. Խոստովանահարց, 3. Ձեռագիրաց, պահելով զպահելին⁴:

Բանադրանաց տակ կը ձգուին նաեւ «որոնք որ զանոնք ներս կը մտնուեն կամ կ'ընդունին»՝ այս-

¹ Գրիգ. ԺԳ. Սահմ. Վասն ինչ:
² Հմմ. Պարպոզա, Բ. կ. 12, եւ այլն:
³ Հմմ. Փր. Հայն. էջ 180—182:
⁴ Հմմ. Փր. Հայնէր, էջ 182—184:

ինքն անոնք՝ որ իշխանութիւն չունեցող մէկը, նոյն իսկ 7 տարւոյնէ վար մանկուհիքը, (թէ եւ ասոնք մտնելով բանադրանաց մէջ չիյնան,) վանք կը մուծանեն, կ'ընկերանան, կը հրաւիրեն եւ այլն. միով բանիւ՝ ամէնքն որ ուղղակի կամ անուղղակի, դրապէս կամ ժխտականապէս մտնելուն գործակից կ'ըլլան¹:

Բանադրանաց տակ կը ձգուին նոյնպէս « քոնքս երդոյններն », այսինքն կուսանք՝ որոնք արտաքոյ այն դիպուածոց եւ ձեւոյ՝ որ յօրինաց սահմանեալ է, դուրս կ'ելլեն փակարանէ՝ յորում ուխտ դնելէն ետեւ կը գտնուին: Արդ, « Ի Ս. Պիոսէ Ե. և սանկուսայ դիպուածներն » են՝ 1. Մեծ հրդեհ. 2. Բարտութիւն. 3. Ժանտախտ, այսինքն՝ ամէն հաղորդական հիւանդութիւն, որ վանքի մէջ կը ճարակի եւ բնակչաց կենաց կը սպառնայ. եւ 4. Հեղեղ ջուրց, աւերել տան, յարձակել աւաղակաց, եւ ամէն դէպք որ հասարակաց կը վնասէ: Իսկ « ան » ն այն է զոր վերոյիշեալ քահանայապետն իւր Սահմանադրութեան մէջ կու տայ, այսինքն՝ « Այս ախտն (ժանտախտ) բաց յայլոց Առաջնորդաց Կարգին, որոնց վանքին հոգաբարձութիւնն յանձնուած է, նաեւ Եպիսկոպոսէն ճանչցուած եւ յայտնապէս թղթով հաստատուած պիտի ըլլայ », ի բաց առեալ բնականապէս՝ ամենատիպորդական հարկին պատճառաւ յապաղման անհնարաւորութիւնը²:

Է.

« Կանայք՝ որ կրօնատոր արանց փակարանը կը բռնաբարեն, եւ Մեծաւորը կամ այլք՝ որ զանոնք կ'ընդունին »³;

« Կանայք թաց կանոնին մէջ ամէն բաժնին իմանալու է նաեւ ասոնց համար: Ուստի 1. Նոյն է փակարանաց տեղը: 2. Կրօնաւորք հանդիսական ուխտ պի-

¹ Հմմ. Նոյն, 184—186:
² Հմմ. Նոյն, 186—189:
³ Սահմ. Ս. Պիոսի Ե. ի կրօնաւորաց, 1566: Վճիռ Հմմ. Բնականապէս, 1570: Ուր շնորհիւ, Գրիգ. Ժ. Գ. 1575. եւ այլն: — Տես էջ 17:

տի ունենան: Բայց 3. Կր բանադրուին միայն « կանայք », որ ի միտս են եւ 12 տարւան եղած, երբ փակարանէ ներս կը մտնեն առանց իշխանութեան, նաեւ հոն կրօնաւոր մը չեղած ատեն: Բնականապէս ի բաց առնելով՝ կայսրուհին, եւ այլն, ինչպէս վերը: Բայց կանայք, որ յերեսաց հալածանաց, սպանութեան, եւ այլն փակարան կ'ապաւինին, նոյնպէս ուրիշ ինչ ինչ դիպաց մէջ ազատ են բանադրանքէ: Իսկ 4. Ապօրինաւորապէս փակարանէ դուրս ելող կրօնաւորք չեն իյնար բանադրանաց մէջ, թէ եւ մեղանչեն եւ Կարգին Սահմանադրութեան բանադրանացը մէջ իյնան¹:

Ը.

« Որոնք որ իրենէ քարերարութեան մէջ իրական սիմոնիականութեան յանցաւոր կ'ըլլան, եւ անոնց զոճակիցները »²:

Այս եւ յաջորդ երկու կանոններն անօրէն սիմոնականութեան յանցանաց դէմ դրուած են, որուն դէմ Եկեղեցին ոչ սակաւ խստութիւն ի գործ դրած է ի սկզբբանէ անտի³: Մենք մեկնութեան միջամուխ չեղած, սիմոնականութեան էութեան եւ տեսակաց վրայ ինչ ինչ նախազիտելիք դնենք:

Սիմոնականութիւն է գնել կամ ծախել հոգեւոր բարիք մը կամ զգարակցեայն ընդ հոգեւորի փոխանակ ժամանակաւոր իրաց: Կր բաժնուի ի մէջ այլոց՝ Էրդէ կողմանէ՝ 1. Մտաւոր սիմոնիականութիւն (simonia mentalis), երբ մէկը ժամանակաւոր իր մը կու տայ դիտմամբ պարտաւորելու զուրիշ մ'իրեն հոգեւոր իր մը տալու, նոյնպէս ընդ հակառակն, բայց առանց միտքն արտաբոլստ յայտնելու. զոր օր. եթէ մէկն Եպիսկոպոսին ծառայութիւն մը մատուցանէ՝ դիտմամբ ի փոխարէն կանոնիկոսութիւն, ժողովրդապետութիւն ընդունելու, բայց զայն չյայտնէ:

¹ Հմմ. Փր. Հայեր, էջ 189—192:
² Սահմ. Բնականապէս, Պօղոս Բ. 1464, եւ այլն: — Տես էջ 17:
³ Գործք. Առաջ. Ը. 20—:

2. Դրաշնարարական սխմ. (s. conventionalis), երբ յայտնեալ դաշինք կայ, բայց առանց արդեամբք ի գործ դնելու. զոր օր. էթէ մէկը մատուցանելի ծառայութեան կամ արծաթոյ մասին միաբանի Պաշտպանին հետ յայտնապէս դաշինք դնելով, որ յարմար ժամուն բարերարութեան մը կոչուի:

3. Իրական սխմ. (s. realis), երբ դաշինքն երկու կողմանէ ալ արդեամբք ի գործ դրուի, կամ սկսուի ի գործ դրուիլ. զոր օր. վասն ծառայութեան կամ արծաթոյ բարերարութեան մը կոչուիլն իրօք ի գործ դրուի կամ սկսուի գործադրուիլ:

4. Մտերմական, կամ մտամուտեան սխմ. (s. confidentialis seu fiduciaria), որ բարերարութիւն մ'առանդ տարու ժամանակ կը գործուի, եւ այն չորս կերպով. ա. Յաւելումով (per accessum) երբ մէկն ուրիշին բարերարութիւն մը կը հայթայթէ այնու դաշամբ, որ յետոյ զայն նոյն իսկ հայթայթողին կամ անկէ սահմանելոյն թողու: Բ. Մտնուելով (per ingressum), երբ մէկն արդէն իրեն շնորհուած բարերարութիւնը տակաւին չստացած ուրիշին թողու այնու դաշամբ, որ ի սահմանեալ դէպս եւ ի ժամագիր ժամանակի ինքը նոյնին ստացման պիտի մտնէ կամ պիտի ստանայ: Գ. Վերդուելով (per regressum) երբ մէկն արդէն ստացած բարերարութիւնն ուրիշին թողու այնու դաշամբ որ ի ժամագրեալ ժամանակի եւ ի դէպս նոյնը վերստին դառնայ առնու պիտի: Դ. Պահանջով (stipulatione pensionis) կամ պայմանաւ պտղոց, երբ մէկն ուրիշին բարերարութիւն մը հայթայթէ, կամ իրենն անոր թողու կամ փոփոխէ այնու յուսով կամ դաշամբ, որ անիկայ իրեն կամ իրմէ սահմանելոյ մը բարերարութեան բովանդակ պտուղը կամ մէկ մասը պիտի տայ, կամ պտղէն թոշակ պիտի հատուցանէ:

Սիմոնականութեան վրայ եղած բանադրանաց վրայ լուսաւոր դաղափար մը տալու համար հետեւեալ կէտերը կը դնենք: 1. Մտաւոր սիմոնականութեան վրայ ամենեւին պատիժ մը չկայ. սրտազէտն Աստուած այս մեղքը կը դատէ: 2. Դրաշնարարական սիմոնականութեան վրայ ալ բնաւ պատիժ չկայ. վասն զի լրացեալ մեղք սիմոնականութեան կը պակսի: 3. Ամէն պատիժ իրական սիմոնականութեան վրայ միայն կը կուտուի: Բայց այս յանցանաց ալ ամէն մէկ տեսակը չի բանադրուիր, այլ անոնք մի-

1 Հմմտ. Փր. Հայնէր, էջ 193 — 196:

այն, որոնց վրայ օրէնքն յայտնապէս կը խօսի, ուստի բարերարութեան (Ը. եւ Թ. կանոն) եւ վանք մտնելու (Ժ. կանոն) նկատմամբ գործուածներն: Այս նախադիտելեաց վրայ խօսելէն ետեւ՝ անցնիմք կանոնիս մեկնութեան:

Այս կանոնիս մէջ բանադրանաց տակ կը ձգուին՝

1.

“Մտերմոր սիմոնականութեան մեջ իրական սիմոնականութեան յանցաւոր կ'ըլլան: , Այսպիսիք են՝ որոնք որ սիմոնականութեամբ բարերարութիւն մ'իրօք կու տան կամ տալ կը սկսին, թէեւ արգելքով մը գործքը բողբոջին չլրանայ. նոյնպէս զայն ընդունողն, ընտրողն եւ ընտրեալն, պաշտպանը եւ ներկայացուողն: Այս իրական սիմոնականութիւնը կրնայ գործուիլ “նրեռեկ շարերարութեան մեջ, , ըլլայ աշխարհական ըլլայ կրօնաւորական, (ինչպէս՝ արքայութիւն, դաւաճապետութիւն, վերակացութիւն, առաջակցութիւն, մեծաւորութիւն, վարչութիւն դպրոցաց.) ըլլայ բարձրագոյն կարգի, (ինչպէս՝ եպիսկոպոսութիւն եւ ուրիշ բարձր աստիճանք,) ըլլայ խոնարհագոյն կարգի (ինչպէս՝ պարզ բարերարութիւնք): Իսկ եթէ իրական սիմոնականութիւնը պաշտօն մը տալու կամ առնլու, (ինչպէս՝ պաշտօն Ընդհանրական փոխանորդի, պատգամաւորի եւ այլն,) կամ առժամանակեայ փոխանորդութեանց մէջ գործուի, թէեւ սիմոնականութեան մեղքը կը գործուի, բայց բանադրանք չկայ. վասն զի ասոնք բարերարութիւն չեն կոչուիր: ”

2.

“Անոնց գործակիցները, , այսինքն՝ որոնք որ վերոյիշեալ յանցաւորաց բարերարութեան մը նկատմամբ գործած իրական սիմոնականութեան գործակից կ'ըլլան: Այսպիսի են՝ որոնք որ կերպով մը յանցաւոր

1 Չոր. Մասն Գ. Թ. 121. 122: Բատ. էջ 212, Թ. 323. եւ այլն: 2 Ս. Լիդ. Գ. Թ. 112: Ս. բաւ. Բ. Թ. 152: Աւանց. Ժան. 20:

են սիմոնականութեան գործուելուն, կամ՝ ինչպէս Պօղոս Բ. ի կոնդակին մէջ կ'ըսուի, որոնք որ հօգացին կամ միջնորդ եղան, որ սիմոնականութիւն գործուի. հաւասար գոյով՝ թէ ասոնք նիւթապէս եթէ բարոյապէս օգնեցին, խոնարհագոյն թէ բարձրագոյն աստիճանի, վիճակի, պատուոյ անձինք են. ուստի նաեւ կարգինաւք, Պատրիարքունք, եւ այլն, ասոնց թուէն կրնան ըլլալ, ինչպէս վերոյիշեալ կոնդակին մէջ կ'ըսուի: Բաւական է բանադրանաց մէջ իյնալու, եթէ սիմոնականութիւնն արդեամբք ամբողջապէս կամ ըստ մասին կատարուեցաւ:

Իրական սիմոնականութեան յանցաւորք բաց այս բանադրանքէս՝ ուրիշ եկեղեցական պատժոց մէջ ալ կ'իյնան:

Թ.

“Որոնք որ իրելէ քարերարութեան մէջ մտերմական սիմոնականութեան յանցաւոր կ'ըլլան, ինչ արժանապատուութիւն ալ ունենան”:

Եւստիւթաց կանոնին մէջ “մտերմական սիմոնականութեան, ինչ ըլլալը տեսանք: Հոս նոյն բարերարութեանց նկատմամբ գործողներն բանադրանացս տակ կը ձգուին: Ուստի թէ՛ ընտրողն եւ թէ՛ ընտրուողն, թէ՛ առաջարկողն եւ թէ՛ առաջարկուողը, թէ՛ բարերարութիւն թող տուողն եւ թէ՛ այն՝ որուն համար կը թողուի³, բանադրանաց տակ կ'իյնան՝ ընդ երկու կողմանէ միաբանիլը. վասն զի այս միաբանութեամբ սիմոնականութեան մեղքը լրացած է, թէեւ չգործադրուի⁴:

Այս սիմոնականութեան մեղքն “որքեռե թուրարութեան մեջ”, ըլլայ, միշտ կը բանադրուի, թէեւ

¹ Բատ. Թ. 324: Աւանց. եւ այլն:
² Սահմ. Չ. 1569: — Տես էջ 17:
³ Ռիեդի, էջ 79, Թ. 122:
⁴ Պոնաչ. Ասան սիմոն. Ա. Ա. Խնդ. Ը. § 1. Թ. 8. 9:

այլեւայլ անուամբ կոչուի: Նոյնպէս յանցաւորք “իճճ արժանապատուութիւն ալ ունենան”, կ'իյնան բանադրանաց մէջ. ուստի նաեւ կարգինաւք, Եպիսկոպոսունք, եւ այլն:

Ասոնց համար ալ կան ուրիշ եկեղեցական պատիժներ:

Թ.

“Որոնք որ վանք մտնելու համար իրական սիմոնականութեան յանցաւոր կ'ըլլան”:

Արդէն կանոնի ժամանակաւ մեծամեծ եկեղեցական պատիժներ դրուած էին այն սիմոնականութեան վրայ, որ վանք մտնելու առթիւ՝ ընդունուելու համար ուղղակի կամ անուղղակի դրամ պահանջելով կը գործուէր: Եւ որովհետեւ ինչ ինչ տեղեր հակառակ սովորութեամբ բարձուած կը համարուէր այս բանադրանքն, Պիոս Թ. այս կանոնիւս վերստին հաստատեց: Այս բանադրանաց տակ կը ձգուին “Որոնք որ վանք մտնելու համար իրական սիմոնականութեան յանցաւոր կ'ըլլան”, ուստի, թէ՛ մտնելու համար դրամ տուողը թէ՛ ընդունողը, եթէ ըլլան այր եւ եթէ կին. աշխարհական կամ կրօնաւոր:

Բանադրանացս մէջ իյնալու համար կը պահանջուի, որ 1. Ժամանակաւոր բարիքն տրուի եւ կրօն մտնելն իրօք կատարուի, թէեւ սիմոնականութեան յանցանքն՝ իրօք չմտած ալ գործուած է. վասն զի խօսքն “իրական սիմոնականութեան”, վրայ է: 2. Իրական սիմոնականութիւնը “վանք մտնելու համար”, կամ առթիւ գործուի, այնպէս որ դրամն էքէքէ ընդունուելու տրուի³, առանց զանազանութեան տրուած իրին քանակութեան, որպիսութեան, գործ-

¹ Հմմ. Փր. Հայեր, էջ 200:
² Վերոյիշեալ Սահմանադրութիւնք՝ Պիոսի Գ. ի եւ Պիոսի Ե. ի: Հմմ. Բատ. Թ. 327: — Տես էջ 19:
³ Բատ. Թ. 330, էջ 219:

քին յանդգնութեամբ գործուած ըլլալուն կամ չըլլալուն: Ուստի, եթէ ուրիշ տիտղոսով կամ պատճառաւ արուի, ինչպէս վասն առատաձեռնութեան, ողորմութեան կամ իբր նպար կենաց, այն ատեն սիմոնականութեան յանցանք չկայ, եւ հետեւաբար ոչ ալ բանադրանք: 3. Սիմոնականութիւնը վասն մարտիրոսական գործուի: Եւ որովհետեւ յուխտադրութեան միայն յատկապէս վանք կը մտնէ մէկն եւ անդամ կ'ըլլայ, եւ ոչ ի նորրնծայութեան կամ ի սքեմաութեան, յայտնի է թէ ուխտադրութեան յառաջ, այն է՝ յառաջ քան զնորրնծայութիւն, կամ ի նորրնծայութեան գործուած սիմոնականութիւնը բանադրանաց տակ չ'իյնար. միայն թէ՛ ժամանակաւոր բարիքն իբրեւ գին ընդունելութեան է իրձոսորակն ուստի չտրուի եւ ըստ հետեւորդի շնորհունուի¹: 4. Որովհետեւ խնդիրն դժպէտաց վրայ է, «վանք», (religio) բառն ըստ անձուկ մտաց մեկնելու է. ուստի սիմոնականութիւնը հանդիսական ուստի ունեցող վանք մը մտնելու համար գործուած պիտի ըլլայ, ինչպէս վերն ուրիշ կանոնաց մէջ ալ բսինք:

Եթէ այս չորս պահանջեալք դտնուին, յանցաւորք բանադրանաց մէջ կ'իյնան: Իսկ այլ ամենայն դատակնիքներն՝ որ յառաջագոյն կային, Սահմանադրութեամբ ընջուած են, թէ եւ յառաջագոյն տրուած պարզ պատիժներն մնան²:

ԺԸ.

«Այն ամէնքն՝ որ ներողութիւններէ եւ ուրիշ նոգեւոր շնորհքներէ շահաւաճառութիւն ընելնուն համար քանադրանաց դատակնիքով կը պատուհասին ի Սահմանադրութենէ Ս. Պիոսի Ե.ի Որչափ շի, 2 Յունուարի 1569³:»

¹ Սուար. 56. 7: ՌայՊ. Ե. 3. 255:
² Տես էջ 47:
³ Տես էջ 19:

Սահման տակաւին անօրէն շահանդիքի սիմոնականութեան դէմ կը կռուի, որ կը գործուի ներողութիւններ եւ ուրիշ հոգեւոր շնորհքներ տալով:

Որովհետեւ աւելորդ է «ներողութեան» էութեան վրայ խօսիլ, կը մնայ տեսնել՝ 1. Որքն է նորրնծայութիւնը. եւ 2. Բանադրանաց մէջ ինչալու համար պահանջուածները:

1. «Որիչ հոգեւոր շնորհքներն» որ Ս. Պիոս Ե.ի Որչափ է Սահմանադրութեան մէջ կը յիշուին, են յաջորդքս. Իշխանութիւն տալ 1. Մէկուն՝ ըստ կամի քահանայ մ'ընտրելու, որ զինք խոստովանանքի մէջ ոչ միայն ամէն մեղքերէ, այլ եւ ամէն վերապահեալներէ արձակէ: 2. Եկեղեցական արգելման ժամանակ պատարագ մատուցանելու եւ եկեղեցական թաղում ընելու: 3. Արգելեալ կերակուր ուտելու: 4. Ընդդէմ վճույ Տրեդ. Ս. Ժողովոյ՝ Միտութեան երկու կամ շատ կնքահայր ընտրել կարենալու: 5. Առաքելական Աթոռոյ վերապահեալ սիմոնականութենէ արձակելու:

2. Բանադրանաց մէջ ինչալու համար կը պահանջուի, որ 1. Այս շահավաճառութիւնը հրապարակական թղթով ըլլայ, ինչպէս է՝ ներողութեանց կամ հոգեւոր շնորհաց ցանկն հանդերձ վճարելի դրամովն առգուրս եկեղեցւոյ կախել¹: 2. Պահանջուած դրամն իրօք արուի եւ ընդունուի. ուստի միշտ շահ մը պիտի ըլլայ²: Եթէ այս պայմանները դտնուին, ամէնքն՝ որ քան զԵպիսկոպոսունս խոնարհագոյն են, կ'իյնան բանադրանաց տակ. իսկ այլ ամենայն դատակնիքներն՝ որ յառաջ կային, դադրած են³: Եպիսկոպոսունք եւ առաւել բարձրաստիճան անձինք բանադրանաց տակ չեն իյնար. վասն զի Ս. Պիոս Ե.ի Սահմանադրութեան մէջ ի բաց առնուած են, Առաք. Աթոռոյ Սահմանադրութեան մէջ ալ յայտնապէս չեն յիշուիլ⁴:

¹ Պոնալ. Գ. Վ. 3. խ. 3. Մ. 30. Թ. 4: 2 ըլլ. 123. ընդ Գ:
² Վերդիւեալ Սահմանադրութիւն, § 1. 4: 2 ըլլ. անդ: Բատ. 339. եւ այլն:
³ Բատ. Թ. 340:
⁴ 2 ըլլ. Թ. 123. ընդ Գ.: Բատ. անդ:

ԹԲ.

“Որոնք որ մեծագին պատարագուներ կը ժողվեն եւ անոնցմէ շահ կ'ընեն, զանոնք այնպիսի տեղեր մատուցանել տարով, ուր պատարագուները սովորարար թեթեւագին են”։,

Այս կանոնը պատարագուներով վաճառակա՛նութիւն ընողներուն դէմ կը գուայ: Բայց պատարագուներով եղած ամէն շահավաճառութիւն, թէեւ միշտ ծանր մեղք ըլլայ, այս բանադրանաց տակ չի ձգուիր. այլ այն միայն, որ հետեւեալ պահանջուած պայմաններն ունի:

1. Պատարագուներ “ժողվել” պիտի ըլլայ: Ուստի ազատ են բանադրանքէ, որոնք որ պատարագուներ կու տան ուրիշին, զոր իրենք պիտի մատուցանէին. կամ այնպիսի պատարագներ, որոնք իրենց ազատակամ կը տրուին մատուցանելու համար, եթէ այն պատարագներն իրենց՝ իրբեւ ծանօթ պատարագու ժողովողաց չեն խաւրուիր: Նոյնպէս ազատ են անոնք, որ մէկէն կամ միւսէն պատարագուներ կը խնդրեն. վասն զի ասիկայ խողիւլ չէ: Այսպէս նաեւ՝ վաճառականներու պատարագու խաւրելու զեղծումն, որպէս զի պատարագու չունեցող քահանայից վաճառք տան եւ պատարագուներ իրբեւ գին վաճառաց պահեն, պարտաւորելով քահանայն նոյնչափ պատարագ մատուցանել, թէեւ բոլորովին սպորինաւոր է¹, բայց բանադրանաց տակ չ'իյնար²: Ուստի, բանադրանաց մէջ իյնալու համար իրօք խողիւլ մը պիտի ըլլայ³, առանց

¹ Կոնդ. Որւո՛վ հո՛ր, Բենեդ. Ժ. Գ. 30 Յունիս, 1741: — Տես էջ 19:
² Կ. Ժ. Արարողութեանց, 23 Յունիս, 1874:
³ Աւանց. Տ. 23: Զուլի. էջ 117. Թ. 125, ընդ 3:
⁴ Բաս. Թ. 341, էջ 227: Աւանց. Տ. 23: Ռիէդի, 157, Թ. 81: Զուլի. էջ 116. Թ. 125, 126 ընդ 2:

զանազանութեան՝ թէ ժողվոյն եկեղեցական է թէ աշխարհական¹:

2. Ժողվելն “շահ ընելոյն” համար պիտի ըլլայ: Ով որ պատարագու կը ժողվէ, որպէս զի շահ բարի վախճաններու գործածէ, ինչպէս՝ եկեղեցի շինելու, թէեւ կը մեղանչէ², բայց բանադրանաց մէջ չ'իյնար. նոյնպէս ո՛վ որ պատարագուին մէկ մասն անձին կը պահէ ի փոխարէն աշխատութեանց³, կամ իբր ողորմութիւն յիրական կարօտութեան, կամ այլ սեւե պատճառաւ, շահավաճառութիւն չ'ըներ. այնպիսին առաւել զող է քան վաճառական⁴: Բանադրանաց մէջ չ'իյնար նոյն իսկ այն անձն՝ որ պատարագուները թեթեւագին եղող տեղ մը կը խաւրէ քահանայի մը, որ ինքնայօժար կամօք եւ ամենայն ազատութեամբ, առանց կերպով մը (ինչպէս՝ աղաչելով, հարցընելով) իրմէ դայն խնդրելու, պատարագուին շահը կամ աւելին կը թողու⁵: Բայց չ'արդարանար երբ ժողվոյն միայն իմացընէ՝ թէ մեծագին պատարագու ընդունած է, եւ պատարագ մատուցողն թեթեւագին ալ շատանայ⁶: Իսկ եթէ մէկը վասն երեսօց անձին մեծագին պատարագուներ ընդունի, ինչպէս՝ նորընծայ քահանայի մ'առջին պատարագին համար, շնորհակալութեան, բարեկամութեան, աղքատութեան համար տրուածներն, որ պարագաներէն բարոյապէս պիտի ստուգուի, եւ սովորական պատարագուէն աւելին անձին պահէ, ոչ միայն բանադրանքէ, այլ եւ մեղքէ ազատ է: Նոյնպէս, եթէ մէկը պատարագու տուած ատենն ըսէ. “Պատարագիդ մէջ յի՛նչ զիս” այն ատեն ոչ որ պարտական է անոր դիտմանը պատարագ մատուցանել, հապա կրնայ թէ արդէն պատարագու մ'առած պատարագին մէջ յի՛նչ⁷, եւ թէ ուրիշին պատարագ մը

¹ Աւանց, Տ. 23:
² Վճիռ Ս. Ժ. Արար. 23 Յուն. 1874:
³ Ս. Լիդ. Չ. 322. Վ. 3: Բաս. Աւանց. եւ այլն:
⁴ Ռիէդի, էջ 82:
⁵ Ս. Լիդ. Չ. 321. բան. 2: Ռիէդի, անդ:
⁶ Զուլի, էջ 116, Թ. 125, ընդ Գ.: Ս. Լիդ. 321:
⁷ Ս. Ժ. Արար. 31 Յունուար, 1682: Միւլ. Գ. § 22, 4:

մատուցանել տալ սովորական պատարագացուով, եւ մնացորդն անձին պահել:

3. Ժողովոյը պատարագացուններն ուրիշ տեղ մը պիտի խրկէ, ուր թեթեւագին են պատարագացու-վասն զի կանոնս յայտնապէս կ'ըսէ. « Զանկեր այն-պիսի տեղեր մատուցակն աւարդ, ուր պատարագ-ցունները սովորաբար թեթեւագին են »: Ըստ այսմ, եթէ մէկն հոն, ուր կը ժողվէ, մատուցանել տայ, եւ կամ՝ ուրիշ տեղ մը մատուցանել տայ, ուր հաւասարագին կամ առաւել մեծագին են պատարագացունները, ըստ ուղղագոյն կարծեաց բազում մեկնչաց՝ բանա-գրանաց մէջ չ'իյնար:

4. Այնպիսի պատարագներ պիտի ժողվուին, որոնք *manuales* կը կոչուին. վասն զի « ժողվել » բառն ասիկայ կը պահանջէ²:

Եթէ այս չորս պայմանները գտնուին, « ժողվողք »

1. Բանագրանացս մէջ կ'իյնան, ընդ պատարագացուին մէկ մասն անձին պահելը, եւ ոչ թէ՛ ընդ ժողվել ձեռ-նարկելը³: Թէ այս պահումս մասն ըստ բաւականի մեծ պիտի ըլլայ, այսինքն՝ զողովութեան ծանր մեղք մը պիտի կարենայ ծնանիլ, յայտնի է. ինչու որ եկեղե-ցական դատակնքոյ մը տակ իյնալու համար ծանր մեղք մը միշտ կը պահանջուի⁴: 2. Որովհետեւ այսպիսի պա-հողներն ու շահ ընողները նաեւ զողովութեան ծանր մեղք կը գործեն՝ պատարագ մատուցողին արուած զրա-մէն անիրաւութեամբ խորհելով, յայտնի է թէ հա-տուցման պարտք ալ ունին. ուստի եւ պահածնին պար-տական են պատարագ մատուցողին հատուցանել⁵:

ՓՊ.

« Այն ամէնքն՝ որ Ս. Պիոս Ե.ի ծա-նոցակն մեզ, 29 Մարտ 1567, իննու-

¹ Ռիէդի, Թ. 127, էջ 82: Ա.անց. Թ. 342, էջ 228: Հմմ. Վուրի-Պալլ. Բ. 975:
² Վուրի-Պալլ. Բ. 975:
³ Ռիէդի, 82, Թ. 182: Չուլի, էջ 116. Թ. 125, ընդ Գ:
⁴ Ռիէդի, անդ:
⁵ Հմմ. Փր. Հայնէր, էջ 208:

կենտ. Թ.ի Որ ինչ յայտ՝ Աթոռոյ, 4 Նոյեմբ. 1591, Կոնստն Ը.ի Ի տնտեսու-թիւն Հոռմեակիս Բահնախայտիս, 26 Յունիս 1592, եւ Աղեքսանդր Ե.ի Ի մեջ այցոյ, 24 Հոկտեմբ. 1660, տուած Սրբոյ Հոռմեակիան Եկեղեցոյ Բաղարաց եւ Տեղ-եաց օտարացուցման եւ յաւատատու-թեան վերաբերեալ Սահմանադրութեանց մէջ ընտարանաց տակ կը ձգուին¹;

Այս կանոնս ի պաշտպանութիւն աշխարհական իշխանութեան եւ վարչութեան Հռոմայ Եկեղեցոյ արուած է, յորում կը բանագրուին ամէնքն՝ որ ան-ձամբ կամ ուրիշի մը ձեռք կը ջանան ուղղակի կամ անուղղակի Առաքելական Աթոռոյ վերաբերեալ տե-րութիւնները, քաղաքներն ու տեղերն օտարացրնել, կամ աւատատուութեան կամ ուրիշ տիրտորով մ'ու-րիշին անցընել. եւ կամ տոյն գործը Քահանայապետին կը թելադրեն կամ կ'առաջարկեն որեւէ պատճառա-նօք, նոյն իսկ յայտնի օգտի կամ հարկաւորութեան բարբառօք: Ուստի, որոնք որ վերջիվիջեալ տեղերն օտա-րացրնել տալու համար որեւիցէ կերպով կը ձառեն, քուէ կու տան, կ'առաջարկեն, պարզապէս կարծիքնին կը յայտնեն, խորհուրդ կու տան, Քահանայապետին կը թելադրեն օտարացրնել կամ հաշտուել Խտալոյ տերութեան հետ, հրաժարելով Եկեղեցոյ իրաւուն-քէն, աղերսագիր կը գրեն կամ երեսփոխան կ'ընտրեն այս վախճանաւ Քահանայապետին խաւերու համար, ամէնքն ալ կ'իյնան բանագրանաց տակ²:

ՓՊ.

« Այն կրօնաւորներն՝ որ առանց հրա-մանի ժողովրդապետին՝ Կղերականաց կամ

¹ Տես էջ 19:
² Հմմ. Փր. Հայնէր, էջ 209 — 213:

աշխարհականաց, արտաքոյ դիպուածի հարկաւորութեան, Վերջին Օծման խորհուրդը կամ Հաղորդութիւնն իբրև թոշակ մատակարարել կը յանդգնին¹։,

Այս կանոնս վերջինք մատակարարելու ժողովրդապետաց իրաւունքը կը պաշտպանէ ընդդէմ կրօնաւորաց, որ զայն բռնաբարել կը յանդգնին։ Ինչպէս կանոնիս իւրաքանչիւր բառերէն յայտնի է, բանադրանացս մէջ ինչպիսի համար կը պահանջուի, որ

1. Այս յանդգնողք «կրօնաւոր» քահանայ ըլլան։ կրօնաւոր բառն անձուկ մտքով առնելու է, ուստի հանրիսական ուրիշ ունեցող կրօնաւորներն իմանալու է²։ Անոր համար բանադրանացս տակ չեն ինչպիսի աշխարհական, կամ պարզ ուխտի կրօնաւոր քահանայք. նոյնպէս՝ թէ եւ հանդիսական ուխտ ունեցող, բայց վանքէն հանուած կամ աշխարհական իշխանութենէն ստիպեալ՝ արտաքոյ վանաց ապրող կրօնաւորք. վասն զի ասոնք իբրև աշխարհական քահանայ կ'ապրին եւ իբրև նոյնպիսի ալ կը նկատուին³։ Բայց թէ ասոնք յայտպիսիս յանդգնելով՝ ծանր կը մեղանշեն, աւելորդ է յիշեցնել. ինչու որ կը բռնաբարեն վերջինք մատակարարելու ժողովրդապետին առանձինն իրաւունքը։

2. Այս կրօնաւորք վերջինքը «կղերականաց կամ աշխարհականաց» մատակարարել յանդգնին։ Ուստի ազատ են բանադրանքէ՝ եթէ մատակարարեն կրօնաւորաց, թէ եւ ասոնք ուրիշ կարգէ ըլլան կամ վանքէ դուրս գտնուին⁴, եւ կամ՝ նորընծայից, իրենց իշխանութեան տակ վանքի մէջ ապրող ծառայից, իրենց հիւանդանոցը բնակող աղքատաց⁵, միաժողով ապրող

¹ Ի Ե. գրոց, Տիւ. Լ. կղեմանք, ԳԼ. 1. կրօնաւորք, 1312: — Տես էջ 19:
² Պոնալ. վ. Բ. Խ. Թ. Կ. 5. Թ. 28: Աւանց. Տ. 24: 2ՍԼԻ, Թ. 130. եւ այլն:
³ Ռիէդի, էջ 85. Թ. 134:
⁴ Ժ. Տր. Ն. Ի. Գ. Կ. 11: Ֆէրր. Ե. Երրորդականք, Թ. 3: Պոնալ. Թ. 3:
⁵ կղեմանք, անդ:

կամ արգելանաւոր կրօնաւորաց հետ բնակող Երրորդականաց մատակարարել: Նոյն իսկ վանքի մէջ ուսման համար բնակող աշակերտաց ըստ օրինի կրնան վերջինք մատակարարել¹: Փակարանէ դուրս բնակող ծառայից վերջինքը տալ ժողովրդապետին է²:

3. Այս մատակարարութիւնն «արտաքոյ դիպուածի հարկաւորութեան» կրնայ ըլլալ կամ հիւանդին եւ կամ ժողովրդապետին կողմանէ: 1. Հիւանդն ի դիպուածի հարկաւորութեան է, երբ կենաց այնպիսի վտանգի մէջ գտնուի, որ ժողովրդապետը կոչել կարելի չըլլայ, կամ մինչեւ անոր գալը վերջինքը յապաղելը վտանգաւոր կարենայ ըլլալ, եւ կամ՝ երբ հիւանդն այս ինչ կրօնաւորէն զատ՝ մէկէ մը վերջինք ընդունիլ չուզէ³: 2. Ժողովրդապետին կողմանէ հարկաւորութեան դիպուած կայ, երբ ժողովրդապետն հեռագոյն է եւ կարելի չէ սպասել զայստեանը կամ իշխանութիւն առնուլ. եւ կամ՝ երբ ժողովրդապետն չուզեր կամ չի կրնար գալ, վասն զի հիւանդ, կախակայեալ է եւ այլն, առանց վերջինքը չառած մեռնելու վտանգի մէջ գտնուի զհիւանդն⁴: Այսպիսի դիպաց մէջ վերջինքը տրուած ըլլալը՝ տուողը պարտական է թղթի մը վրայ նշանակել եւ հիւանդին քով թողուլ, որպէս զի ժողովրդապետը դիտնայ. բայց այս պարտքն ընդ պատժով բանադրանաց չէ⁵:

4. Այս մատակարարութեան աւարկան պիտի ըլլայ «վերջին Օծումն եւ Հաղորդութիւնն իբրև թոշակ»: Եթէ Հաղորդութիւնը վասն ջերմեռանդութեան (devotionis causa) մատակարարուի, թէ եւ ժողովրդապետին իրաւունքը կը բռնաբարուի, բայց բռնաբարողը բանադրանաց տակ չ'իյնար⁶:

¹ վէրք. անդ, Ա. էջ. 212:
² Մալա. Հա. Հաղորդ. Հիւ. § 3:
³ Արտաքոյ դիպուածի հարկաւորութեան հարցումը, Լիւնց, 1885, էջ 112:
⁴ Սանք. Յայտ. Բ. 13. 3: Բատ. էջ 238. Թ. 352, ընդ Գ.
⁵ Տէ Ընճէլիս, Գ. 2. էջ 46:
⁶ Բատ. էջ 238. Թ. 352. ընդ Գ.: 2ՍԼԻ, էջ 121. Թ. 129, ընդ Ա.:

5. Այս մատակարարութիւնն « առանց հրամանի ժողովրդապետին » ըլլայ: Ժողովրդապետ են՝ ամէն քահանայք՝ որոնք առանձինն հոգ հոգւոց ունին, կամ ասոնց տեղապահք կամ օգնական են. թէպէտ անուանուին ժողովրդապետ, թէպէտ մեծաւոր, դեղջերէց, հոգաբարձու: Բանադրանաց տակ կ'իյնայ կրօնաւոր մը, եթէ առանց ժողովրդապետին հրամանին անոր հպատակացը վերջինք տայ, ի բաց առեալ՝ եթէ արտօնութեամբ կամ աստիճանին բարձրութեամբ բացառութիւն մը կայ¹: Ժողովրդապետն հրաման կրնայ տալ կամ կրօնաւորին, եւ կամ նոյն իսկ հիւանդին՝ ուղած քահանայէն վերջինքն ընդունելու²: Եթէ մէկը ժողովրդապետին հաւանութիւնը կրնայ դէպքի մը մէջ հաւանականաբար ենթադրել, առանց հրաման առնելու կրնայ վերջին օծումը մատակարարել, առանց եւ ոչ իսկ մեղանշելու³: — Վերջապէս՝

6. Յայնպիսի իրս « յանդգնող » ըլլալ կը պահանջուի այսինքն՝ զիտնալով օրէնքն ու պատիժը, առանց պատճառի մը՝ ուստի չարամտութեամբ ընդդէմ օրինաց գործել: Ըստ այսմ, կ'ազատէ բանադրանդ օրէնքը նոյն իսկ ծանր յանցանօք (միայն կամակարորէնքը թեամբ չըլլայ) չի դիտցուիր, երբ կը կարծուի որ ժողովրդապետն հաւանականաբար հրաման կու տայ կամ կը հաւանի, երբ մահուան վտանգը սխալմամբ դիպուած հարկաւորութեան կը համարուի, բանադրանաց վրայ չի կրնար խօսք ըլլուիլ. վասն զի չարամտութիւն, յանդգնութիւն չկայ⁴:

Թե.

«Որոնք որ առանց օրինաւոր հրամանի՝ Հոռմայ քաղքին եւ անոր վերաբերեալ տեղեացը սուրբ Գերեզմաններէն կամ՝

¹ Բատ. անդ, ընդ Ե.
² Ռիեդի, անդ, թ. 133: Զոլի, էջ 122, թ. 131:
³ Ս. Լիդ. Զ. թ. 722:
⁴ Ռիեդի, էջ 84, թ. 133. եւ այլն:

Գետնափորներէն Սրբոց նշխարներ կը հանեն. եւ որոնք որ անոնց օգնութիւն կամ պաշտպանութիւն կը մատուցանեն¹»,

Ապօրինաւոր կերպով Ս. նշխարներն Հոռմայ գետնափորներէն բարձողները կանոնիւս կը բանադրուին: Այսպիսի են՝ 1. Հանողներն ու 2. Ասոնց գործակիցները:

1. « Հանողներն » որպէս զի բանադրանաց տակ իյնան, կը պահանջուի, որ ու իրօք « ճշտարք » առնուն, այսինքն՝ ամբողջ կամ մասն մի² մարմին եւ ոսկր՝ որոնց Ս. Մարտիրոսաց նշխարքն ըլլալը ստուգութեամբ հաստատուած ըլլայ: Ասիկայ սովորաբար կը ճանչցուի՝ երբ գերեզմանին արտաքին կամ ներքին կողմն արեան անօթ մը գտնուի, կամ՝ ձիթեւոյ սատ մը կափարչին վրայ քանդակուած ըլլայ³:

Ըսինք մարդն եւ ոսկր Ս. Մարտիրոսաց. վասն զի թէեւ Սրբոց զգետն, մարտիրոսութեան գործէքն, եւ այլն, նշխարք կը կոչուին, սակայն կըլնուի թի կոնդակին մէջ, որմէ կանոնս առնուած է, կ'ըսուի. « Եւ ոչ որ ոսկր կամ մարդն մը ի բաց պիտի պեղէ եւ առնու »: Ուստի, քար, հող, սրուակ, անօթ, եւ այլն առնողներ բանադրանաց տակ չեն իյնար, թէեւ այս գործքն ալ արգելեալ է: Եւ որովհետեւ Հոռմայ գետնափորներու բաց գերեզմանաց մէջ ցիր աստ անդ ոսկրոտի ու նշխարք կը գտնուին, որոնք ստուգիւ մարտիրոսաց չեն, այլ հոն թաղուած հաւատացելոց, եթէ այցելուք առ յիշատակէ կամ բարեպաշտութեան՝ մաս մ'առնուն, բանադրանաց տակ չեն իյնար. նոյն իսկ եթէ նոյներուն մարտիրոսաց թէ հաւատացելոց ըլլան երկբայական ըլլայ⁴:

Բ. Այս նշխարներն « Հոռմայ քաղքին եւ անոր վերաբերեալ տեղեացը սուրբ Գերեզմաններէն կամ՝

¹ Վճիռք Պօղոս Ե.ի 1613, 1614: Կոնդակ կըլնուի թ.ի Բ. ուղի յանդի եղեմէն, 1672: — Տես էջ 19:
² Հրովարտակ հրամանաւ Պօղոս Ե.ի 24 Օրոտաւ. 1613:
³ Ս. Ժ. Արար. 27 նոյ. 1863:
⁴ Ռիեդի, էջ 85, թ. 136:

Գեւորակներէն » Հանուին, եւ ոչ թէ ուրիշ տեղ-
ւոյ մը՝ ինչպէս Նէպոլէոնի գետնափորներէն :

Գ. Այս բարձունքն « սուսնց օրինաւոր հրամանի »
ըլլայ : Օրինաւոր հրամանը Հռոմայ Փոխան-կարգի-
նալէն կը տրուի հրամանադրով մը, հանդերձ կարեւոր
պայմանօք¹ :

2. Բանադրանաց տակ կը ձգուին նաեւ՝ « ո-
րոնք որ ակոնց օգնողներն կամ պաշտպանողներն
կը մատուցանեն » եթէ նիւթապէս եւ եթէ բարոյա-
պէս : Ասոնք բանադրանաց տակ կ'իյնան, երբ սուրբ
մարմին կամ սակր մը գործաւը լրացեալ գործ կ'ըլլայ² :

ԹՊ.

« Որոնք որ Քահանայապետէն յանու-
անէ բանադրելոյն հետ ի յանցանս յան-
ցաւորութեան կը հաղորդակցին, այսինքն՝
անոր օգնութիւն կամ պաշտպանութիւն
մատուցանելով³ : »

Այս եւ յաջորդ կանոնն գործնականի մէջ յա-
ճախ հանդիպելուն, ի դէպէ ընդարձակադոյնս ճառել :

Եկեղեցին այն ամէն յանցաւորներն՝ որ ծանր մե-
ղանշական կերպով ընդ հենդն Եկեղեցւոյ հրամա-
նաց կը գործեն, իւր հաղորդութենէն կը կտրէ բա-
նադրանօք, որպէս զի չըլլայ թէ ասոնց թիւնակց
մահաբեր անտան անմեղներուն ալ անցնի : Արդ,
Եկեղեցւոյ այս վախճանն ի դերեւ կ'ելլէր եւ ծա-
ղազական կ'ըլլար, եթէ իւր որդիքն ու պաշտօնեայքն
ազատ ըլլային հաղորդութիւնէն հետ, զոր
ինքն իւր հաղորդութենէն կտրած է : Անոր համար
Եկեղեցին ի սկզբանէ հրամայած էր խորշիւ բա-
նադրեալներէն : Այսպէս, Մարտինոս Ե. ի հռչա-
կաւոր Ա. է իւրիւր կոնդակէն յառաջ մեծ բանա-
դրանաց տակ ինկոդներն ամէնքը իւրիւրէն էին. այն-
պէս որ ամէնուն ծանօթ բանադրեալք հրապարակու-

¹ Հմմ. Փր. Հայեր, էջ 219 :

² Ռիեդի, էջ 86. թ. 136 :

³ Վճիռք Գրիգորեանք, Գիրք Ե. Տիտ. 1. թ. վասն վճռոյ
բանադր. իւրիւրէն, իննով. Գ. 1212. ԳԼ. 1. թ. — Տես էջ 21 :

իւրիւրէն, իսկ առանձնական ոմանց ծանօթ եղող-
ներն առանձին իւրիւրէն էին. օրինաւորացը իւր բա-
նադրանաց տակ կ'իյնային : Մարտինոս Ե. ի վերջի-
շեալ կոնդակաւն ժամանակին պարագաներէն ստի-
պեալ իշխանութիւն տրուեցաւ ամէն հաւատացե-
լոց (եթէ զայնթակողութիւն մը կամ մոլորելու
վտանգ չկայ) ամէն բանադրելոց հետ հաղորդութիւն
ունենալու, ի բաց առեալ¹. Բանադրեալներն փո-
շիւր², որոնց բանադրեալ ըլլալն հրապարակաւ հրա-
տարակել հարկաւոր չէր. բաւական էր եթէ յանցանքն
ծանօթական ըլլար, այնպէս որ չկարենար ծածկուիլ
կամ արգարացուիլ : 2. Գործնական բանադրեալները :
Ուստի, կրնային հաւատացեալք բաց այս երկուքէն,
միւս բանադրելոց հետ նաեւ յաստուածայինս հա-
ղորդութիւն առանց բանադրանքի մը մէջ իյնալու : Իսկ
վերջիշեալ երկուքը իւրիւրէն էին, որոնց հետ հա-
ղորդութիւն ունենալ օրինաւոր չէր, բայց միայն
եթէ հարկն կամ յայտնի օգուտ մը (օգուտ, օրինք,
հաղորդութիւն, հարկ պահանջեալ, անգործութիւն) նաեւ
ասոնց հետ հաղորդակից ըլլալ օրինաւոր կամ ի
հարկէ ընէր : Չանցառուք կը պատժուէին սովորա-
բար իւր բանադրանօք, նաեւ իւր բանադրանօք²,
եթէ այնպիսեաց հետ ի յանցանս յանցաւորութեան
հաղորդուէին :

Այսպէս էր մինչեւ ցՄահմանադրութիւն Արաբ.
Արաբաց, որով Պիոս Թ. անմահ Քահանայապետն
ինչ ինչ նաեւ յայսմ մասին փոփոխեց կամ մեղ-
մացուց : Բայց այս մեղմացուցումն միայն բանադրա-
նաց նկատմամբ է, եւ ոչ իւրիւրէն, ըստ որում հաւ-
ատացեալն ընտրութիւն պիտի ընէ ի մէջ խոր-
շիւ եւ ոչ խորշիւ բանադրելոյն, եւ պիտի խորշի
խորշիւոյն հետ յաստուածայինս եւ ի քաղաքա-
կանս հաղորդակից ըլլալէն, եթէ առ այն յայտնի
օգուտ կամ հարկէ ստիպուած չէ. ապա թէ ոչ՝ չի
կրնար ծանր մեղքէ արդարանալ : Հետեւեալ դի-
պաց մէջ հաւատացեալ մը շնորհ իւրեանք :

1. Եթէ հաղորդի խորշիւոյ հետ, արհամարհելով
Եկեղեցական արգելքը :

2. Եթէ յաստուածայինս հաղորդի, մանաւանդ
ի մեծամեծ իրս. ինչպէս ի միասին ժամ ըտել, զինք
Եկեղեցական թաղմամբ թաղել, անոր պատարագին
ներկայ ըլլալ, կամ իրմէ բարերարութիւն մ'առնուլ :

¹ Տես վերն էջ 141 :

² ԳԼ. Յոյր բար, Սահմ. Նորոգողութիւն : Վասն վճռոյ
բանադր. ԳԼ. Ա. Մեղ. վասն բացառութեանց :

Թիւնը, զլիւսաորութիւնն ուրանալուն համար անկէ յանուանէ բանադրուած ըլլայ, եւ ուրիշ մը այս բանադրելոյն (ըսենք՝) տեղ մը տայ, ուր անիկայ ընդ հենդն բանադրանաց՝ ճառէ Քահանայապետին զլիւսաւորութեան, անսխալականութեան կամ սխալականութեան վրայ, եւ կամ բռնեք՝ տպէ այն դրքերն ու ըրագիրները, որոնք այնպէս յանուանէ բանադրեալէ մը դրուած ըլլան, եւ որոնց մէջ Քահանայապետին անսխալականութեան կամ զլիւսաւորութեան վրայ վեճուի եւ ուրացուի, այնպիսին այսպէս Քահանայապետէն յանուանէ բանադրելոյն հետ ի յանցանս յանցաւորութեան, հոս՝ ուրացութեան անսխալականութեան կամ զլիւսաւորութեան, գործակից եւ հաղորդուող կ'ըլլայ: Բայ ի յանցաւորութեան յանցանքէն ուրիշ սրեւիցէ յանցանաց մէջ հաղորդութիւն ընելը բանադրանաց տակ չ'իյնար¹:

3. Բայց այսպիսեաց հետ եղած ամէն հաղորդութիւն ի յանցանս յանցաւորութեան, բանադրանաց տակ չ'իյնար. հապա այն միայն՝ որ «*օգնութիւն կամ պաշտպանութիւն մատուցանելով*» կ'ըլլայ: Ըստ այսմ, ասոնց հետ յայսպիսիս հաղորդուիլն երկու կերպով կ'ըլլայ. ա. Բարոյակն գործակցութեամբ, ինչպէս՝ խորհուրդ տալով, գովելով, ջատագովելով կամ յանցանաց հաւան ինքզինք ընծայեցընելով, եւ այլն: Բ. Նիւթակն գործակցութեամբ, որով բանադրեալն առաւել յամաւորութեամբ իւր յանցանաց մէջ կը յարատեւէ եւ դարձն առաւել կը դժուարանայ²:

Արդ, եթէ այս երեք պայմանները գտնուին, բանադրանաց տակ կ'իյնան թէ աշխարհականք, թէ կրօնաւորք եւ թէ եկեղեցականք. վասն զի օրէնսդիրն զանազանութիւն մը չ'ընէր: Զ'արդարացընէր բանադրանքէս տգիտութիւն թանձր կամ վեհերոտ. վասն զի կանոնս առանց յանդիման մը աւելցընելու պարզպէս կ'ըսէ՝ «*որոնք որ կը հաղորդակցին*»:

¹ Զու. էջ 124: Թ. 135: Ռիւրի, Թ 141: Բատ. էջ 243. Թ. 359, եւ այլն:
² Ֆերրարի, Ե. Բանադրանք:

հաւատացեալք բանադրելոյ մը հետ հաղորդակցութեան մէջ մտնելով՝ միայն այս մէկ բանադրանքի տակ կրնան իյնալ. իսկ կղերականք, ոչ միայն այս բանադրելոյ հետ յայսպիսիս հաղորդուելով բանադրանաց տակ կ'իյնան, հապա նաեւ յատուածայինս հաղորդուելով՝ յաջորդ կանոնիս տակ ալ կրնան իյնալ:

ԹԷ.

«Այն կղերականը՝ որ հռոմայ Քահանայապետէն յանուանէ բանադրեալ անձանց հետ զխտութեամբ եւ ինքնակամ կամ մօք յատուածայինս կը հաղորդակցին եւ զանոնք ի պաշտամունս կ'ընդունին»,:

Այս ԹԷ² կանոնս նախնութաց կանոնին ամբողջացուցումն է. հոն թէ աշխարհականք եւ թէ կղերականք բանադրուեցան բանադրելոյ մը հետ ի յանցանս յանցաւորութեան հաղորդուելուն համար: Եւ որովհետեւ նոյնպիսի պարագայից մէջ կրնայ նոյն ծանրութեամբ, մանաւանդ թէ առաւել ծանր յանցանք մը գործուիլ, հոս կանոնս ասոր ալ աւելը կ'առնու բանադրելով կղերականներն՝ որոնք նախնութաց կանոնին մէջ յիշեալ բանադրելոյ հետ յատուածայինս կը հաղորդուին:

Այս կանոնն կղեմէս Գ. ին վճիռը վերստին կը նորոգէ, ուստի հարկ է որ այնպէս մեկնուի, ինչպէս այս միշտ մեկնուած է: Արդ, ըստ ընդհանուր եւ միաբան մեկնութեան վճռոյ կղեմայ Գ. ի՝ կանոնիս մէջ «*հաղորդակցողներն*» ու «*ընդունողները*» կապող «*եւ*» ը բաժանական իմաստ չունի, այլ յօդական, շղկկապիչ. այնպէս որ հաղորդուողներն ու ընդունողներն ի հարկէ մէկ նախադասութեան անդամ են եւ զիրար կ'ամբողջացընեն: Ուստի, կանոնիս մէջ մէկ տեսակ յանցաւոր կը բանադրուի: Իսկ «*յատուածայինս*»

¹ Վճիռը Գրիգ. Գիրք Ե. Տիւ. 1Թ. Վասն վճռոյ բան. ԳԼ. ԺԼ.: Յայտարար, կղեմէս Գ. 1190: — Տես էջ 21:

եւ « ի պաշտամունն » նոյնանշան են, եւ եկեղեցական լեզուի մէջ խառնիխուռն փոխանակաւ կը գործածուին¹, եւ այս մտօք ալ կղեմէս Գ. ի կանոնն կը մեկնուի միշտ: Ըստ այսմ՝ կանոնիս « հաղորդողոյ » բառին իմաստն է՝ Քահանայապետէն յանուանէ բանադրեալ մը յեկեղեցական պաշտամունս ընդունիլ²: Այս նախադիտելիքն հոս գնեւէն ետեւ՝ տեսնենք պայմաններն որ կը պահանջուին որպէս զի այս հաղորդուողներն բանադրանացս մէջ իյնան:

Կանոնս այլեւայլ պայմաններ կը դնէ բանադրանացս մէջ իյնալու համար: Կը պահանջէ՝ որ

1. Բանադրեալն « Գրանաւայտետեմ յանուանէ թաղայրեալ » ըլլայ, ինչպէս նախընթաց կանոնին մէջ ըսինք:

2. Կղերիկոսք հին կանոնին հակառակ³ « գիտութեամբ եւ ինքնակամ կամօք » հաղորդուին: Ուստի, այս գործքն կատարեալ ծանօթութեամբ եւ լիակատար ազատութեամբ պիտի գործուի. այնպէս որ ամէն ազիտութիւն, նաեւ թանձրն ու վեհերօտը, եւ թերեւս նոյն իսկ կամակարն, նաեւ ամէն երկիւղ, սպառնալիք, որոնք յաճախ ուրիշ դիպաց մէջ բանադրանքէ չեն ազատեր, այս բանադրանքէս ազատ կը կացուցանեն⁴:

3. Հաղորդուիլն ըլլայ « յատուածայինն » կամ « ի պաշտամունն »: Աստուածայինք կամ պաշտամունք են այն ամէն գործք, աղօթք եւ արարողութիւնք, որոնք հանդիսութեամբ ի կարգադրութենէ Քրիստոսի կամ Եկեղեցւոյ, ի կղերականաց իբրեւ յայնպիսեաց կը կատարուին, կամ՝ որոնք կղերական աստիճանի, թէեւ փոքր աստիճան ըլլայ, սեպհական են: Այսպիսի են՝ Պատարագ, մատակարարութիւն Ս. Խորհրդոյ, հանդիսական ժամերգութիւն, հանդիսիւ ընթերցուած կամ աւետարան կարգալ, եկեղեցական թա-

¹ Սուր. 10. Գ. 9: Պոնաշ, խ. 5. Մ. 3. Թ. 3:
² Բատ. էջ 251. Թ. 369. Եւ այլն:
³ Գ. 29. § 2. Վասն վճ. բան.
⁴ Ռիեդի, էջ 87. 141. Զոր. 126, Թ. 137 ընդ Գ. Բատ. անդ:

փոր, սուրբ իրեր հանդիսութեամբ օրհնել, ինչպէս՝ օրհնութիւն ջրոյ, իւզոյ, մամեղինաց եւ այլն: Ի բաց կառնուելի քաղցն՝ վասն զի ասիկայ աստուածային պաշտոն չէ եւ ոչ իսկ անոր մէկ մասը. հապա այնպէս ընդհանուր է, որ նաեւ անհաւատներու առջեւ կրնայ քարոզ արուիլ¹:

4. Չանոնք ի պաշտամունս ընդունելով հաղորդակցողներն « կղերիկոս » ըլլան: Կղերիկոս են անոնք՝ որ գոնէ խուզումն հերաց ընդունած են, սրբէէ պատիւ, աստիճան կամ սուրբ կարգ ալ ունենան: Եւ որովհետեւ ինդիրը դժպհեաց վրայ է, կրօնաւորք իբրեւ նոյնպիսիք չեն կղերական²: Բայց ոչ միայն ընդունելով հաղորդակցողն կղերական պիտի ըլլայ, ինչպէս կանոնս յայտնապէս կ'ըսէ, հապա նաեւ յանուանէ բանադրեալն, ինչպէս յայտնի է: Առաջնոյն պատճառն է՝ վասն զի Եկեղեցւոյ մէջ իշխանութիւն մը՝ իրաւաբանութիւն մ'ունեցող միայն կրնայ զմէկն աստուածային պաշտամանք ընդունիլ, իսկ իրաւաբանութիւն ունեցող միայն կղերականը կրնայ ըլլալ: Իսկ վերջնոյն պատճառը՝ վասն զի կղերական մը միայն կրնայ աստուածային պաշտամունք կատարել³:

Մինչեւ ցարդ ըսուածներուն համեմատ՝ սրբէէ կղերական մը, որ Քահանայապետէն յանուանէ բանադրեալ կղերականի մը դիտութեամբ եւ ազատ կամօք կը թողու որ պատարագ մատուցանէ, խորհուրդ մատակարարէ, թափար ընէ, եւ այլն, անպայման, բանադրանացս տակ կ'իյնայ: Բայց բանադրանաց տակ չ'իյնար, եթէ այնպիսոյն հետ հաղորդուի՝ յաստուածային պաշտամունս ներկայ գտնուելով, սուրբ տեղ մ'իրեն գերեզման շնորհելով, թող տալով որ պատարագ տեսնէ. այսպիսի կղերական մ'այս դիպաց մէջ իբրեւ աշխարհական կը գործէ եւ իբրեւ նոյնպիսի ալ կը նկատուի, եւ ոչ իբրեւ « ընդունող ի պաշտամունն »: Նոյն իսկ այսպիսի բանադրելոց Ս. Խորհուրդ մատու-

¹ Ս. Լիդ. Է. 177: Զոր. էջ 125. Թ. 137 ընդ Բ.:
² Պոնաշ. վ. Բ. խ. Ժ.:
³ Ռիեդի, էջ 87. 141:

կարարողն բանադրանքէ ազատ է, բայց կ'իյնայ ընդ արգելմամբ ի մտաներջ յեկեղեցի, որուն վրայ քիչ ժ'ետքը:

Այս կանոնիւ Քաջանայապետին պարզապէս վերապահեալ բանադրանաց շղթայն կը վերջանայ: Սակայն, ինչպէս վերն ըսինք, առանձինն կերպով վերապահեալ վերջաբանին մէջ ուրիշ պարզապէս վերապահեալ բանադրանք ժ'ալ գրուած է, որուն մէջ կ'իյնան՝ «Առանց պարտուպատշաճ իշխանութեան, ևս ին որեւիցե պատճառաւօր, Հոռոմաց Քիսիւսայապետին առանձինն կերպով վերապահեալ բանադրանքներէն արտաքոյ կիտի մահուան արձակել յանդիպողներն»։ Ասիկայ իբրեւ ժ.՛։ կանոն պետք ենք յաւելուլ պարզապէս վերապահեալ վրայ: Իսկ մեկնուած թիւնն արգէն վերը՝ տրուած կը գտնես՝:

1 Տես էջ 127:

2 Բայց ի Քաջանայապետին պարզապէս վերապահեալ բանադրանաց այս ժ.՛. կանոններէն, կայ հատ ժ'ալ Տրիդ. Ս. ժողովէն արուած, որ տակաւին ի զօրութեան է, որով կ'ըլլայ ժ.՛. կանոն: Տես՝ Յաւելուած Ա:

Գ. Դ Ա Ս

Ե Գ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ը Յ Վ Ե Ի Ը Պ Ա Ն Յ Ե Լ Բ Ը Ն Ը Դ Ի Ը Ն Ք Ն Ե Ի
Երպիսիպարտաց կամ՝ կարգաւորաց վերապահեալ տուեալ վճողոյ բանադրանաց տակ ինկած են՝

Ա.

«Այն Կղերականներն՝ որ սուրբ Աստիճաններն ընդունելէն ետեւ, եւ կամ՝ Կրօնաւորք կամ՝ Կուսանք, որոնք ողջախոհութեան հանդիսական ուխտէն ետեւ կը յանդգնին ամուսնանալ. նոյնպէս որոնք որ վերոյիշեալ անձանց մէկուն հետ ամուսնանալ կը յանդգնին՝:»,

Կանոնս թեմական Եպիսկոպոսին կամ՝ Կարգաւորին վերապահեալ բանադրանաց տակ կը ձգէ մեծեղեւն յանցաւորաց երեք խմբերն, որոնք են՝

1. Սուրբ աստիճաններն ընդունելէն ետեւ ամուսնանալ յանդգնող կղերականք: «Կղերականք» ըսելով՝ հոս կ'իմացուին միայն անոնք՝ որ գտնէ Արհասարկաւազութիւն ընդունած են. վասն զի Արհասարկաւազութիւն կը սկսի անկնութիւնն: Ուստի, ասանցմէ չեն փոքր աստիճանաւորք, նոյնպէս անոնք՝ որ իբրեւ տղայ կամ՝ անչափահաս՝ Արհասարկաւազութիւն ընդունած են, ի բաց առեալ՝ եթէ ի չափ հասնելէն, ուստի 14 տարուան ըլլալէն ետքն, յառաջուց ընդունած Ս. Աստիճանին հաւանին՝:

2. Ողջախոհութեան հանդիսական ուխտ դնելէն ետքն ամուսնանալ յանդգնող երկու սեռի անձինք: Ուստի կանոնիս տակ չեն իյնար այն կրօնաւորք:

1 Կղեմեանք, Գլ. Գ. Ա սան ազգակ. եւ խնամութեան. Գլ. Ա. Զայնք: Ե. ի վիեննական ժողովի 1312: — Տես էջ 21:
2 Պոնալ. վ. 2. Խ. 4. Մ. 1. Թ. 2:

որք եւ կուսանք, որոնք թէեւ Քահանայապետէն հաւանեալ, բայց պարզ ուրիշ ունեցող կրօնի մը մէջ մշտնջենաւոր Ողջախոհութեան պարզ ուխտն ուխտած են: Աս այս կը պահանջուի « Եւստիապոստոս յոյս », որ ուխտին հակառակ գործքերն ոչ միայն պարտաւորանաւոր, այլ եւ անվաւեր, ամենեւին ոչինչ կ'ընէ:

3. « Մրոնք որ » այս Աստուծոյ նուիրեալ անձանց հետ « ամուսնանալ կը յանդգնին »: Ուստի, կանայք՝ որ այնպիսի կղերականի կամ կրօնաւորի հետ, եւ կամ արք՝ որ այսպիսի կուսանաց հետ ամուսնանալ կը յանդգնին, բանադրանաց տակ կ'իյնան:

Յայս վայր ըստածներէն յայտնի է, թէ բանադրանաց մէջ իյնալու համար հետեւեալ պայմաններն անհրաժեշտ կը պահանջուին:

1. Ս. Աստիճանը եւ կամ հանդիսական ուխտադրութիւնն իրօք եւ վաւեր եղած պիտի ըլլայ:

2. Ամուսնութիւնն այնպիսի պիտի ըլլայ, որ եթէ Ս. Աստիճանին կամ հանդիսական ուխտին եղծիչ արգելքը չըլլար, վաւեր պիտի ըլլար: Ուստի, եթէ ամուսնութիւնը սրեւէ պատճառաւ վաւեր չէ, բանադրանքն տեղի չունի. վասն զի ամուսնութիւն չկայ:

Նաեւ քաղաքական ամուսնութեամբ ամուսնացող կղերականք կամ կրօնաւորք ըստ վճռոյ Քննութեան Ս. Ժողովոյ (22 Գեկտ. 1880) բանադրանաց մէջ կ'իյնան: Յայտնի է՝ թէ նաեւ հին ուր Տրիդ. Ս. Ժողովոյ ամուսնութեան վճիռն ի զօրութեան չէ, այսպիսի յանցաւորք բանադրանաց տակ կ'իյնան. վասն զի ըստ ինքեան խօսելով՝ եթէ ուրիշ արգելք մը (Ս. կարգ, Ողջախոհութեան հանդիսական ուխտ) չըլլար, վաւեր պիտի ըլլար ամուսնութիւնը: Իսկ Կարմախոսութիւնն յայտնի է թէ բանադրանաց տակ չ'իյնար, վասն զի խոստումն է միայն ամուսնութեան, եւ ոչ ամուսնութիւն:

3. Ասոնք ամուսնանալ պիտի « յանդգնին », այսինքն՝ զիտութեամբ եւ կամօք ընդ պատժով բանա-

1 Եւանգ. ճան. 28:

զբրանաց արդելեալ ամուսնութիւնը պիտի կատարեն: Եթէ միակողմանի կամ երկակողմանի տգիտութիւն ըլլայ այսպիսի ամուսնութեանց անվաւեր եւ բանադրեալ ըլլալուն վրայ, կամ մէկ կողմը չգիտնայ՝ թէ միւսն կարգի կամ հանդիսական ուխտ արգելքն ունի, այն ատեն՝ նոյն իսկ եթէ տգիտութիւնը թանձր ու վեհերոտ ալ ըլլայ, քիչ քաջող կողմն բանադրանաց տակ չ'իյնար: Նաեւ եթէ այսպէս տգիտութեամբ ամուսնանալէն ետեւ՝ իմանայ արդելքն ու բանադրանքը եւ սակայն ի միասին բնակի, ազատ է բանադրանքէ¹:

Թէ այսպիսի անվաւեր ամուսնութիւն մը լըրացեալ է թէ ոչ, բանադրանաց նկատմամբ անտարբեր է. վասն զի ամուսնութիւնն երկակողմանի հաւանութեամբ կ'ըլլայ, եւ ոչ ամուսնական գործքով: Իսկ եթէ վերոյիշեալ անձինքներէն մէկն ամուսնանայ ըսելով՝ թէ այսպիսի ամուսնութիւն մը վաւեր է, վասն զի Եկեղեցին այսպիսի ամուսնութիւն մը չի կրնար անվաւեր ընել, այնպիսին հերետիկոս է², եւ իբրեւ այնպիսոյ հետ պէտք է վարուիլ:

Բ.

« Որոնք որ վիժել կը ջանան, եթէ արդիւնքն հետեւի³ »:

Սիրտոս Ե.ին այս քստմնելի մեղաց նկատմամբ տուած Զարչապետեան կոնդակն՝ որ Գրիգոր ԺԳ. ի 1591ին տուած կոնդակաւն մեղմացած էր, Սահմանադրութեանս այս կանոնին առաւել եւս կը սահմանաւորի նկատմամբ դործակցաց, թէեւ այլուստ ըստ իմիք ընդարձակեցաւ: Վասն զի այսուհետեւ ոչ թէ քիչ քաջող վիժել ջանացողները միայն կը բանադրուին, այլ եւ այն ամէնքն՝ որ քաջապէ վիժումն

¹ Սուար. 23. 5. 21: Զու. անդ. ընդ 3. եւ այլն: Հմմ. Փր. Հայեր, էջ 242—243:
² Ս. Ժ. Տրիդէստեան, Ն. Ի. Գ. ԳԼ. 9:
³ Կոնդակք Զարչապետեան, Սիրտոս Ե.: Արար. Արարչական, Գրիգոր Ժ. Գ. 1591: — Տես էջ 21:

յառաջ կը բերեն. այնպէս որ այսուհետեւ տգիտութիւնը կամ երկիւղն այնպէս դիւրաւ չ'արդարացընէր բանադրանքէ: Այս հնոյն եւ նորոյն մէջ եղած տարբերութիւնը համառօտիւ տեսնելէն ետեւ, անցնինք կանոնիս մեկնութեանը:

Բանադրանացս տակ կը ձգուին « Որոնք որ յիժեղ կը ջանան, եթէ արդիւնքն հետեւի », այսինքն այն ամէնքն՝ որ կը ջանան սաղմը տարաժամ ի բաց վիժեղ եւ իրօք կը վիժեն: Ըստ այսմ, երկու պայման կը պահանջուի: 1. Իրօք ջանալ մը, եւ 2. Ջանքն ալ դիտած գործն յառաջ բերէ: Ըսինք՝

1. Ջանալ մը — « Որոնք որ յիժեղ կը ջանան », ջանալ է՝ խնամով եւ դիտմամբ բանի մ'ետեւէ ըլլալ: Ուստի, որոշեալ վախճանի մը հասնելու ջանքն ու համքն էական կը պահանջուի: Այս կամքը կրնայ ըլլալ ուղղակի, ըստ որում՝ դրուած պատճառն գործ մը՝ իբրեւ բուն վախճան կը դիտէ եւ կ'ուզէ, եւ կամ անուղղակի, ըստ որում՝ պատճառը կը դրուի որպէս զի ուղղակի յառաջ եկած արդեանց ձեռօք ուրիշ վախճանի արդիւնքէն, հասնուի, այնպէս որ բաց ի պատճառին արդիւնքէն, ուրիշ մ'ալ՝ որ թէեւ յառաջագոյն կանխատես եղած բայց յինքեան չէ դիտուած, յառաջ կու գայ:

Արդ, միայն երբ որ ուղղակի կը դիտուի վիժումը, բանադրանք կայ. վասն զի անուղղակին « յիժեղ ջանալ » չէ՝: Անոր համար, անզատ են բանադրանքէ, թէեւ ոչ միշտ մեղքէ, որոնք որ գործ մը կը գործեն, որմէ վիժում յառաջ կու գայ անուղղակի կերպով եւ ի պատճառի իւրում. ինչպէս՝ եթէ մէկն առ զայրոյցը ցասման կամ ատելութեան յղի կին մը սաստիկ նեղէ մինչեւ սաղմի կանխատես վիժումն յառաջ գայ: Վասն զի այս վերջինն ուղղակի դիտուած չէ, այլ ցասման կամ ատելութեան յագեցուցումն կ'ըլլայ ուղղակի պատճառ՝ որմէ անուղղակի կերպով եւ ի պատճառի իւրում վիժումն յառաջ կու գայ²: Այսպէս կրնայ նաեւ մէկն առանց բանադրանացս մէջ ինչալու, մահուան

¹ Հմմտ. Փր. Հայնէր, էջ 245:
² Հփորէր, Գ. § 709, 738, 739: Ռիեդի, 90, Թ. 151:

մահուան վտանգի մէջ եղող մօր դեղ մը տալ վասն անուղղութեան, եւ ոչ՝ վասն վիժումն սաղմին, թէեւ այս դեղով ըստ պատահման վիժումն յառաջ գայ: Բայց չեն ազատիր բանադրանքէս բժիշկը եւ վերաբուժք, որոնք սաղմն յարգանդի կը սպաննեն կամ վիժեղ կու տան, որպէս զի մօր կեանքն ազատեն. վասն զի այս դեպքիս մէջ վիժումն ուղղակի կը դիտուի: Ուստի, չ'ըլլար վիժումն ուրիշ սրեւէ վախճանի մը հասնելու իբրեւ միջոց, առաջին կամ վերջին վախճան դիտել:

Այս « յիժեղ ջանալը » կրնայ ըլլալ որ կինն ազատ կամօք անձամբ յանձին ընէ, եւ կամ ուրիշի ձեռօք, երկու դիպաց մէջ ալ՝ կինն բանադրանաց տակ կ'իյնայ. վասն զի ինք միշտ ջանացող է՝: Ըսինք ազատ կանօք, այսինքն՝ առանց ստիպման կամ ծանր երկիւղի. վասն զի եթէ շահք երկնքն՝ ամօթոյ կամ վատահամ բաւուցութեան ընէ, հաւանական է ընդդէմ այլոց՝ թէ ազատ ըլլայ բանադրանքէ², թէեւ խնդիրն երկբայական կը մնայ մինչեւ ցորոյումն Ս. Աթոռոյ³: Բայց երկբայական չէ անոնց նկատմամբ՝ որոնք կին մ'անձամբ կամ առ այն ուրիշ մը պատուէր տալով կամ

¹ Այս Աւանդիկնայ (էջ 108), Հայնէրի (էջ 246) եւ այլոց կարծիքն ունի իրեն բազմութիւն հակաապրոքները: Այսպէս Ս. Լիգ. (Գ. Թ. 395) կ'ըսէ. « Երկրորդ կարի հաւանական, եւ եթէ ներքին պատճառներուն միտ դնես՝ հաւանականագոյն կարծիքը յղի կանանց բանադրանաց տակ ինչալ կը ժխտէ », եւ կը յաւելու. « Որովհետեւ այս բանադրանաց յղի կանանց համար ալ տրուած ըլլալն երկբայական է, կարի հաւանականարար ասոնք բանադրանքէս կ'արգարանան »: Առաջ. Ա. Բոյ. Սահմանադրութենէն ետքն ալ շատերը կը հաստատեն թէ յղի կանայք՝ որ անձամբ վիժումն յառաջ կը բերեն, Սահմանադրութեանս այս կանոնին տակ չեն իյնար: Այսպէս Կուրի-Կրեանի, Բ. էջ 618, ծան. Կուրի-Պայլ. Բ. Թ. 976: Վէրքիտի, Հրահանգք Կան. Բ. էջ 663: Վէրքիտի, Առաջաբանք. Բոյ. Ս. Բ. էջ 719: Նինցագրի, Առաջաբանք. Բոյ. Ս. Թ. 401, եւ այլք, որոնց կարծիքը, Յովսէփ Փէննայի վիճակն է Սահմանադրութենէն (Հոսմ, 1884) կուտած գրքին մէջ, ճշմարտագոյն եւ ի գործնականին բացարձակապէս հետեւելի կ'անուանեն, գոնէ ցորակի որ հեղինակական յայտարարութիւն մ'այս նկատմամբ չէ տրուած:

² Ս. Լիգ. Գ. Թ. 359: Վէրք. Ա. էջ 386. Թ. 621: Հմմտ. նաեւ Չոլլի, էջ 134. Թ. 148:
³ Հմմտ. Փր. Հայնէր, էջ 246:

Իսկ էգը 80 օր ետքը վիժել ջանար. յերկրայականս միշտ զսաղմն էգ համարելով¹: Իսկ զըկուսն ի բարերարութենէ կամ ի կղերական արտօնութենէ դատարական վճռով կրնայ միայն ըլլալ²:

Պ.

“Որոնք որ նենգեալ Առաքելական թուղթ մը գիտութեամբ կը գործածեն կամ յայսմ՝ մասին յանցանաց գործակից կ'ըլլան³”:

Այլ երն՝ առանձինն կերպով վերապահեալ բանադրանաց թ. կանոնին մէջ, Առաքելական թղթերն սրեւէ կերպով խորդախոյններն բանադրուեցան. հոս այնպիսի նենգեալ Առաքելական թղթերը գործածողներն եւ անոնց գործակիցներն Եպիսկոպոսին վերապահեալ բանադրանք կը բանադրուին:

Եթէ կանոնս Իննովկ. Պ. ի Սահմանադրութեան հետ, որմէ առնուած է, համեմատենք, հին ու նոր իրաւանց մէջ հետեւեալ տարբերութիւնը կը գրտնենք: 1. Նենգեալ Առաքելական թուղթը 20 օրէն աւելի քովը պահելն ընդ բանադրանք արգելեալ չէ, ինչպէս յառաջ: 2. Հիմայ ամէնքը՝ թէ աշխարհական եւ թէ եկեղեցական, բանադրանաց տակ կ'իյնան, ուր որ յառաջ՝ միայն աշխարհականք: 3. Հիմայ գործածողներուն գործակիցներն ալ կը բանադրուին, բայց ոչ՝ յառաջագոյն: 4. Բանադրանքն հիմայ Եպիսկոպոսին վերապահեալ է, իսկ յառաջագոյն՝ եւ ոչ մէկուն: Մնացած տարբերութիւնն ի մեկնութեան կը տեսնենք:

Կանոնիս մէջ բանադրանաց մէջ կը ձգուին՝

1. “Գործածողներն”, այսինքն անոնք՝ որ նենգեալ կամ անհարգաւոր Առաքելական թղթերը⁴ ի

¹ Ս. 1ԻԳ. Գ. 396:

² Հմմ. Քերրարի, Սահմ. կանոնակ. 271. 297:

³ Վճիռք Գրեգ. ԳԼ. Ե. ՏԽ. Ի: 2: շէնգէլ: Իննովկ. Գ. 1212, ԳԼ. Ե: — Տես էջ 21:

⁴ Տես վերն, էջ 108:

նպատ անձանց եւ կամ այլոց կը գործածեն, այնպէս որ անոնցմով արդիւնք մը յառաջ բերել զիտուի: Բայց որպէս զն գործածելն բանադրանաց տակ իյնայ, հարկ է որ “գիտութեամբ” ըլլայ. այսինքն՝ նենգեալ թուղթն ի նպատ գործածողը պիտի գիտնայ, որ թուղթը խարդախուած է եւ այսպիսի թուղթը գործածողին վրայ բանադրանք կայ: Ամէն տգիտութիւն յայս մասին, նաեւ թանձրն ու վեհերօտը, եւ թերեւս նոյն իսկ կամակարը կ'ազատէ բանադրանքէ¹:

2. “Որոնք որ գործակից կ'ըլլան”, այսինքն անոնք՝ որ ուրիշ մը սրեւէ կերպով կ'օգնեն, որպէս զն նենգեալ Առաքելական թղթերը կարենայ գործածել: Եւ յայսպիսիք են՝ որոնք որ խորհուրդ, օգնութիւն կը մատուցանեն, հրաման կամ յանձնարարութիւն կու տան նոյները գործածելու. միով բանիւ՝ ամէնքն որ նիւթական կամ բարոյական գործակցութեամբ գործածողներուն յանցանացը մասնակից կ'ըլլան: Բայց որպէս զն ասոնք բանադրանաց տակ իյնան, կը պահանջուի որ գիտութեամբ գործակից ըլլան, այսինքն՝ գիտնալով որ Առաքելական անուանեալ թուղթը նենգեալ է եւ արգելի թուղթ մը գործածողներուն գործակցաց վրայ բանադրանք կայ²:

Այսուհետեւ թէ գործածողներն եւ թէ իրենց գործակիցներն՝ եթէ ըլլան աշխարհական եւ եթէ կղերական, կ'իյնան բանադրանաց տակ³, ուր որ յառաջագոյն կղերականք՝ միայն իրենց պաշտօնէն ու բարերարութենէն կը զրկուէին, որ հիմայ դադարած է: Իսկ ով որ երկու յանցանաց ալ պարտապան կ'ըլլայ, թէ Առաքելական թղթեր նենգելու եւ թէ զանոնք գործածելու, բնականապէս երկու բանադրանաց տակ կ'իյնայ, թէ՛ առանձինն կերպով Քահանայապետին

¹ Ս. 1ԻԳ. Ե. 47: 2Պ. Թ. 150: Ռիեդի, Թ. 155:

² Ռիեդի, էջ 92. Թ. 155:

³ 2Պ. էջ 136. Թ. 149. ընդ Բ.: Ռիեդի, էջ 91, Թ. 155: Բատ. էջ 276. Թ. 389, եւ այլն:

⁴ Ռիեդի, Թ. 155, ծան. 2: 2Պ. Թ. 150, ընդ Բ.:

վերապահեցին (Թ. Կանոն, վերն էջ՝ 105,) եւ թէ այս բանադրանաց¹:

Եպիսկոպոսական վերապահեալներէն արձակելու իշխանութիւն ունեցող խոստովանահայրն, Քահանայապետին կողմանէ Եպիսկոպոսաց այս երեք վերապահեալ բանադրանքներէն արձակելու համար, առանձինն իշխանութիւն պիտի առնու Եպիսկոպոսէն, ինչպէս ինքնին յայտնի է:

¹ Աիւգէի, անդ:

Գ. Դ Ա Ս

ՈՉ ՈՐՄԵՔ ՎԵՐԱԳՈՒՅԵԱԼ ԲԵՆԵԳՐԵՆՔՆԵՐ

Ոչ որոնք վերապահեալ տուեալ յանոյ թանադրանաց տակ ինկած են՝

Ը.

“Որոնք որ կը հրամայեն կամ կը ստիպեն հրապարակական հերետիկոսաց կամ յանուանէ բանադրելոց կամ արգելեալ անձանց եկեղեցական թաղում՝ շնորհել¹:”

Կանոնս ոչ թէ, ինչպէս յառաջագոյն էր, վերոյիշեալ անձինքն եկեղեցական թաղմամբ թաղողներն եւ անոնց ուղղակի կամ անուղղակի գործակիցները կը բանադրէ, թէեւ ասոնք ալ ծանր մեղանշէն², հապա զանոնք միայն՝ որ ազատ կամք կանոնիս մէջ յիշեալ անձինքն եկեղեցական թաղմամբ թաղել “կը հրամայեն կամ կը ստիպեն”³:

Արդ, որպէս զե ասոնք բանադրանացս մէջ կանոն, կը պահանջուի, որ

1. Թաղուելիքներն ըլլան, կամ ա. “Հրապարակական հերետիկոս”, այսինքն անոնք՝ որոնց իբրեւ հերետիկոս ապրիլը եւ իբրեւ նոյնպիսի ալ մեռնիլը հրապարակաւ ծանօթ ըլլայ: Այսպիսի են նաեւ անհաւատք, հերձուածողք, մասնեանք, եւ այլն⁴: Եւ կամ Բ. “Յաւնոսանէ թանադրեալ կամ արգելեալ”, այսինքն անոնք՝ որոնց վոյս յիշատակութեամբ անուան, վիճակի եւայլն, ժամանակին եկեղեցական Մե-

¹ Վճիռք Սեբաստի ԳԼ. Ե. Տիւ. 2. Վ. 4. հերետիկոսաց եւ այլն: — Տես էջ 23:

² Չժ. Թ. 152, ընդ Ա:

³ Բատ. էջ 284. Թ. 413: Չժ. 138. Թ. 152. Վէբք. էջ 388. Թ. 623:

⁴ Տես էջ 51:

ծէն բանադրանք կամ արդելումն դրուելը հրապարակաւ հրատարակուած է, այնպէս որ դատակնքեալ անձին նկատմամբ ամենեւին տարակոյտ չմնայ: Աւստի, ով որ հրապարակական մեղաւորը, անձնասպանը, հետեանսը, եւ այլն թաղել կը հրամայէ կամ կը ստիպէ, թէեւ ծանր մեղանչէ, բանադրանաց տակ չ'իյնար:

2. «Եկեղեցական թաղում՝ շնորհիկ» չհրամայուելի: Եկեղեցական թաղումն երկու իմաստ ունի, մէյ մը թաղման եկեղեցական արարողութիւն, եւ մէյ մ'ալ մարմինը սուրբ տեղ մը թաղել: Թէեւ վերջինն եկեղեցական թաղում գաղափարին առանձինն կը բաւէ¹: Իսկ որքէ որեւ ըսելով կ'իմացուի այն տեղն՝ որ Եպիսկոպոսի կամ անոր յանձնարարելոյն ձեռօք օրհնուելով, եւ կամ գործածութեամբ ու սովորութեամբ մարմինը թաղելու, կամ աստուածային պաշտամանոյ սահմանեալ է²: Արդ, բանադրանաց մէջ իյնալու համար բաւական է սուրբ տեղ մը (գերեզման, եկեղեցի, վանք, եւ այլն) թաղելու հրաման տալ, թէեւ թաղումն առանց եկեղեցական արարողութեանց ըլլայ³: Բայց չի բաւեր՝ միայն եկեղեցական արարողութիւնը կատարել տալ, առանց սուրբ տեղ մը թաղելու⁴:

3. Եկեղեցական թաղումն էրօ՛ր կատարուելի: Աւստի, հրամայողք կամ ստիպողք այն ատեն միայն բանադրանաց տակ կ'իյնան, երբ մարմինը սուրբ տեղ մը արդեամբք կը թաղուի⁵:

4. Հրամայելը կամ ստիպելը էէորդութեամբ ըլլայ: Բայց այսուհետեւ չ'արդարացըներ թանձր ու վեհերոտ տգիտութիւնն. եւս առաւել կամակարն: Վասն զի Աղէքսանդր Գ. ի «գիտութեամբ յանդգնեցան» եւ կղեմէս Ե. ի «որոնք յանդուգն ժպրհուութեամբ» բա-

¹ Պոնաչ. Հ. Գ. Վ. 2. Խ. 2. Խ. 20. Թ. 5:
² Սուր. Խ. Ժ. Բ. Վ. Դ. Թ. 2:
³ Պոնաչ. Խ. 20. Թ. 5:
⁴ Հմմ. Ռիէրի, էջ 93. Թ. 159: Գլ. էջ 139. Թ. 152 ընդ 2:
⁵ Բատ. Թ. 413, եւ այլն:

ուերն, որոնք բարձրագոյն աստիճան մը դիտութեան կը պահանջեն, կանոնիս մէջ չեն առնուած¹:

Իսկ Ժողովրդագետք՝ որ այսպիսի հրամայողութեան հրամանին հնազանդելով վերոյիշեալ անձինքը կը թաղեն կամ թաղել կու տան, թէեւ այս բանադրանաց տակ չեն իյնար, բայց իբրեւ «հաղորդակցող ի յանցանս յանցաւորութեան», Քահանայապետին պարզպէս վերապահեալ բանադրանաց (Ժ. Ս. Կան.) տակ կ'իյնան, եւ իբրեւ «ընդունող յեկեղեցական թաղումն» եկեղեցի մանեղէն կ'արգելուին, եթէ որեւորէ որեւոր մը շտապեց առ այն²: Ս. Ժողովն Քննութեան առ հարցուածս ինչ կը պատասխանէ³. «Չեւրեակիտաց թաղում շնորհելու է, եթէ առանց գայթակղութեան կարելի չէ ընդդիմանալ»: Անոր համար իրաւացի է մեկնչի մ'ըսածը⁴. «Որովհետեւ եկեղեցական թաղմանէ զբխումը կանոնական իրաւամբք դրուած պատիժ մին է, յորչափ որ եկեղեցական թաղումն առանց ծանր անպատեհութեանց չի կրնար զլայուել, շնորհել կամ ամէն եւ կամ ծանր յանցանքէ ազատ է. բայց միայն յարհամարհանս Եկեղեցւոյ չըլլուի»:

Եթէ մեղքն ու բանադրանքն առ ոչինչ համարելով խորշել կամ յանուանէ եւ հրապարակաւ հրատարակեալ մը, կամ կղերականաց հրապարակական ձեռն մտող մը, կամ անհաւատ մը սուրբ տեղ մը թաղուի, այն տեղը պղծուած է: Պէտք է դիտել ի բաց հանել, եթէ ուրիշներէն կը զանազանի, եւ տեղը դարձեալ սրբելու է: Եթէ կարելի չէ դիակը հեռացընել, բաւական է վերստին սրբելը⁵:

Բ.

«Որոնք որ Սրբոյ Ատենին Քննչաց, զեկուցող վկայից կամ ուրիշ պաշտօնէից կը վնասեն կամ անարեւել կ'ընեն. եւ նոյն

¹ Ռիէրի. Թ. 159 ընդ այլ հեղինակս:
² Հմմ. Արգելումներ, Բ. Կանոն: Աւանց. ծան. 31:
³ 13 Յուլ. 1609:
⁴ Ռիէրի, էջ 93. Թ. 158:
⁵ Պոնաչ. Վասն բանադր. ի մասն. Վ. Բ. Խ. Բ. Խ. 31:

Ս. Ատենին թղթերը կը յափշտակեն կամ կ'այրեն, կամ ում եւ պէտ ումը ի վերոյիշելոց օգնութիւն, խորհուրդ, պաշտպանութիւն կը մատուցանեն¹։

Մաննս կը պաշտպանէ Առաքելական Աթոռոյ քննչաց թէ անձն եւ թէ գործունէութիւնը, ի բազում իրս ամիտփելով հնազոյն կանոնաց տարածութիւնը։

Բանադրանաց տակ կը ձգուին ամէնքն՝ ինչ աստիճան, վիճակ, արժանապատուութիւն ալ ունենան, որոնք 1. քննչաց « կը ղևատեն, կամ անաքէն կ'ընեն » իրենց պաշտամանը վերաբերեալ իրաց պատճառաւ։ * « ղևատող » են ամէնքն՝ որ քննչաց սաստիկ բռնաբարութիւն կ'ընեն, ինչպէս է՝ մեռցընել, անդամատել, զարնել, մղել, բանտարկել, եւ այլն²։ ք. « Անաքէն ղնող » են անոնք՝ որ գործով կամ սպառնալեօք նոյն անձինքը կը սարսափեցընեն կամ տագնապ կը ձգեն³։

2. Նոյն Ս. Ատենին « թղթերը » բռնաբար կը յափշտակեն ոչնչացընելու դիտմամբ, եւ կամ « կ'այրեն »։ * « Յափշտակող » են՝ Ս. Ժողովոյ քննութեան թղթերը բռնաբար առնողներն⁴, թէ եւ չոչնչացընեն⁵։ Ուստի գաղտուկ գողցողներն յափշտակող չեն։ ք. « Ս. Ատեն » կը կոչուի Հռոմայ քննութեան Ս. Ժողովոյ ատեանը, եթէ Հռոմ Ժողովի եւ եթէ այլուր։ Ուստի Եպիսկոպոսաց քննութեան ատեանը՝ Ս. Ատեն չէ⁶։

Վերոյիշեալ արգելեալ գործոց՝ « օգնութիւն, խորհուրդ ու պաշտպանութիւն մատուցանողներն »։

¹ Կոնգակը՝ Թեղեթ է Յուլիոս Գ. 1551, եւ այլն։ Եթէ ինչ որ լրացուց Պիոս Ե. 1569։ — Տես էջ 23։

² Ռիէզի, Թ. 71։

³ Նոյն, անդ։

⁴ Ռիէզի, 12 էջ 94, Թ. 161։ Բատ. էջ 285, Թ. 415։

⁵ 2Պլ. Թ. 153։ Բատ. անդ։

⁶ Ռիէզի, Թ. 71։

Ատնք բանադրանաց տակ կ'իյնան եթէ գործքն արդեամբք կատարուի¹։

Գ.

« Որոնք որ առանց Առաքելական Հանձնութեան եկեղեցական ստացուածները կ'օտարացընեն, եւ կը յանդգնին ընդունիլ, ըստ ձեռոյ Ամբարնառան Ատարանդեաց, որ Եկեղեցոյ ինչքերը շտարացընելու վրայ է²։ »

Եկեղեցին ի վաղուց հետէ մեծամեծ եւ ծանրագոյն պատիժներ գրած էր եկեղեցական ստացուածքներն օտարացընողներուն վրայ։ Ատնք մէկ քանին տեսանք վերն առանձինն վերապահելոց ԺԱ. եւ ԺԲ. եւ պարզապէս վերապահելոց ԺԳ. կանոնաց մէջ, ինչպէս նաեւ Տրիդ. Ս. Ժողովոյ տուածն ալ վերջէն Ա. Յաւելուածին մէջ կը տեսնենք։ Եւ որպէս զի այս չարն արմատաքի խլէ, հոս կը բանադրէ նաեւ ամէնքն՝ որ նոյնքը կ'օտարացընեն եւ որոնք որ ընդունիլ կը յանդգնին, նորոգելով Պօղոս Բ. ի ասոր նկատմամբ տուած Ամբարնառան կոնդակը։ Այս կոնդակն եթէ ինչ ինչ տեղեր, ինչպէս Գերմանիա, կամ բնաւ ոչ՝ եւ կամ ըստ մասին ընդունուած է, Առաք. Աթոռոյ Սահմանադրութեամբն այսուհետեւ իրաւանց լիակատար զօրութեամբն այսուհետեւ Երուսաղէմ ոչ միայն թիւն ունի. այնպէս որ այսուհետեւ Երուսաղէմն ոչ միայն առանց Առաքելական Աթոռոյ հաճութեան՝ եկեղեցական ստացուածոց օտարացուցումը բոլորովին անվաւեր է, հապա նաեւ բանադրանք ալ կայ թէ օտարացընողին եւ թէ ընդունողին վրայ։ Վասն զի կանոնս յայտնապէս կը հաստատէ նոյն կոնդակն ըսելով՝ « ըստ ձեռոյ Ամբարնառան վտարանդեաց », այնպէս որ այսուհետեւ այն կոնդակին վճիռներն « իրիւն այն թիւն առաջին անգամ ասիկ տրուած ըլլային, այնպէս յաւանքս »։

¹ Բատ. էջ 287, Թ. 415։

² Ատարանդ. Ամբարնառան Պօղոս Բ. 1467։ — Տես էջ 23։

րենց խոյաներսկ զորոսթիւնը պիտի ստանան » : Ափ-
կայ յայտնի է նաեւ Ս. Ժողովոյ Քննութեան¹ Գեր-
մանացի Եպիսկոպոսի մը հարցուածոց տուած պատաս-
խանէն, որուն մէջ նոյն Ս. Ժողովը կը հաստատէ, թէ՛
« Սահմանադրութեանս մէջ յիշուած Առաքելական
հաստատութեան օրէնքն իբրեւ վերստին հրատարակուած է,
այնպէս որ իւր զօրութեամբն ընդհանրապէս զազնէն
կը կապէ եւ կը կապէր եթէ այն Ամբարհուածն կոն-
դակն յառաջագոյն չըլլար » : Իսկ այս նկատմամբ ար-
ուած ընդհանուր արտօնութիւնը դադարած են, իսկ
անձնականներն ու մասնականները կը մնան² : Հիմայ
գամբ մեկնութեան :

Կանոնս երկու տեսակ յանցաւորներ բանադրա-
նացս տակ կը ձգէ, 1. Օտարացընողները եւ 2. Օտա-
րացուած ստացուածքներն ընդունողները : Մասանց
մեկնութեան չսկսած՝ պէտք ենք « եկեղեցական ըս-
տացուածք » բառերուն մեկնութիւնը տալ :

1. « Ստացուածք » են այն ամենայն իրք՝ որ մարդ-
կային ընկերութեան առուտուրին մէջ ժամանակա-
որ արժէք մ'ունին : Ըստ այսմ. ասոնց տակ չեն
երթար հոգեւոր իրերն կամ այնպիսի աշխարհական
իրեր՝ որոնց հետ հոգեւոր իր մ'ի բնէ միացեալ է,
ինչպէս նշխարք Սրբոց իբրեւ նոյնպիսի : Վասն զի
ասոնք ըստ ինքեան ժամանակաւոր արժէք չունին
եւ իբրեւ այնպիսի ընդհանրապէս չեն ծախուիր : Ըստ
այսմ, զասոնք ծախելը թէեւ խստիւ արգելուած է³,
բայց առանց բանադրանաց⁴ :

Ստացուածքը կրնայ ըլլալ . 1. Շարժական, ինչպէս՝
ոսկիղէն կամ արծաթի անօթք, զգեստեղէնք, գո-
հարք, գիրք, դրամ եւ այլն⁵ : Այս շարժականներէն
ոմանք առանց փճանայու կրնան դաճուիլ, ոմանք
այ երեք տարիէ աւելի վն դաճուիլ. ոմանք քչաւն
են՝ որպիսի են այն ամէն իրերն՝ որոնք կամ իրենց
նիւթոյն (ոսկի, արծաթ, գոհար) կամ դոյնագիւ-
տութեան, կամ հնութեան, կամ արուեստին (պատ-
կեր հոյակապ նկարչի) պատճառաւ յաչս մարդկան

¹ 22 Դեկտ. 1880 :
² Հմմ. Փր. Հայեեր, էջ 263 — 267 :
³ Ս. Ժ. Արարողութեան, 1702 :
⁴ Ռիեդի, էջ 96. Թ. 166, նաեւ ծան. 22 :
⁵ Հմմ. Ֆերրարի, կրատ. Ս. Ե. Օտարացուցումս, ա. 1 :

200 ֆրանքէ աւելի արժէք ունին, ոմանք ալ քչ-
աւն են, ինչպէս արջառոց հօտն ի միասին, եւ ոչ
իւրաքանչիւր կենդանին առանձինն, կամ դրամի
գումար մը, որ եկեղեցւոյն գանձը կը կացուցանէ եւ
որոշ վախճանի մը՝ ինչպէս եկեղեցւոյ շինութեան ու-
րոշուած է¹ :

Ստացուածքը կրնայ ըլլալ Բ. Անշարժական, ինչ-
պէս՝ մնայուն իրք, ագարակ, երկիր, տուն, երկրի
իրաւունք, տուրք եւ այլն : Այս անշարժական ի-
րերն քանազան կամ թիթիւնն կրնան ըլլալ : Ըստ
ընդհանուր առման՝ ծանրագին են 200 ֆրանք ար-
ժող իրերն : Ասկէ նուազագոյն գնով անշարժական
ստացուածքներն թէթեւագին են :

2. « Եկեղեցական » ստացուածք են, այն ամէն
ինչք՝ որոնց վրայ եկեղեցին տէրութեան իրաւունք
մ'ունի : Այսպիսի են ոչ միայն նուիրական սուրբ
տեղերն, այլ նաեւ ամէն հաստատութիւնք՝ որ եւ
կեղեցական իշխանութեամբ հաստատուած են, եւ
սահմանուած կրօնի կամ քրիստոնէական սիրոյ եւ
ողորմութեան, ինչպէս՝ վանք, հիւանդանոց, աղքա-
տանոց, եւ այլն : Իսկ այն բարեպաշտական հաստա-
տութիւններն կամ իրերն՝ որ եպիսկոպոսական իշ-
խանութեամբ հաստատուած չեն, եկեղեցական բւ-
տացուածք չեն, ինչպէս նաեւ Եկեղեցւոյ պար-
գեւուած կամ կտակաւ ձգուած իրերն, ցորչափ որ
տակաւն Եկեղեցին չէ ընդունած² :

1.

« Օտարացընել » ըսելով՝ կ'իմացուի այն ամե-
նայն գործ՝ որով կամ ստացուածոց տէրութիւնն ամ-
բողջ կամ ըստ մասին, եւ կամ ստացուածը գործա-
ծելու կամ վայելելու իրաւունքն երեք տարւոյնէ աւ-
ելի ուրիշի մը կը տրուի. համառօտիւ՝ այն ամէն դա-
շինք, որով իրի մը տէրութեան կամ ստացման իրաւ-
ունքն ամբողջ կը կորսուի կամ կը նուազի եւ սահմա-
նաւորի, եւ կամ՝ որով ստացուածոյ վրայ բեռ մը կը
դրուի կամ արժէքը կը կորսնցընէ :

Երեք տարւոյնէ աւելի պողպեբը վարձատու-
թեան նկատմամբ պէտք է միտ դնել, որ Ս. Ժողովոյ

¹ Չոր. անդ. Բատ. էջ 297. Թ. 431 եւ այլն :
² Ռիեդի, էջ 94. Թ. 163 :
³ Ռայֆֆ. Գ. 18, 23 : Ս. Լիդ. Գ. 187, ծան. 7 :

Քննութեան 1880 Գեկա. 22 տուած պատասխանազարոյն համաձայն՝ առէն մասնական եւ անշխարակ սովորութիւնները բարձրացնելու են. այնպէս որ այսուհետեւ ամէն տեղ երեք տարւոնէ աւելի միայն Առաքելական Աթոռայ հրամանաւն կրնայ վարձու տրուիլ: Բայց երեք տարւոնէ աւելի վարձու տալ չէ, եթէ այն դաշմբ արուի, որ երեք տարիէն վարձատուն կամ վարձական ազատ ըլլայ հրաժարելու. եւ կամ՝ եթէ դաշնքն երեք տարի մէյ մը նորոգուի¹: Նոյնպէս ընդգէմ չէ Աճբարհաւան կոնդակին, բայց սպորինուոր է², եթէ վարձատուն վայելող, գործակրող (fructuarius) միայն է, ինչպէս ժառանգաւորն, եւ այնու դաշմբ տայ, որ իւր մահուամբ կամ այն բարերարութեան իրաւանց դադրելովն դաշնքն ալ պիտի դադրի³:

Իսկ յատարման Եկեղեցւոյ շէղած իրերն դուրս տալ՝ օտարացընել չէ. այսպէս իր մը ստանալու անփոյթ ըլլալ, Եկեղեցւոյ տրուած պարգեւ մը, կտակ մը չընդունիլ, չվարել դատ մը՝ որով Եկեղեցւոյ իրաւունք մը կը ստացուի կամ կը հաստատուի, դրամագրու մը շահու չտալ, եւ այլն, օտարացընել չէ եւ ըստ հետեւորդի բանադրանք ալ չկայ⁴: Բայց թէ անփոյթ ըլլալ այնպիսի գործքի մը, որով Եկեղեցւոյ իրաւունքը կը կորսուի կամ չձառուելու, օրինաւոր չէ եւ այնպիսին պարտական է հատուցում ընելու, ինքնին յայտնի է. մենք միայն բանադրանաց վրայ խնդիր կ'ընենք:

Ուստի, վերոյիշեալ եկեղեցական ստացուածներն անհրաման օտարացընողներն՝ ընդ երկակողմանի միաբանութեամբ դաշնաց կատարուիլը, կամ նոյն իսկ ստացուածն ուրիշին տալէն ետքը բանադրանաց տակ կ'իյնան, ի բաց առեալ Եպիսկոպոսունքն ու Աբբայքը, որոնք ոչ Ընթրեաց կոնդակին մէջ եւ ոչ կանոնիս մէջ կը յիշուին: Վասն զի եկեղեցական ստացուածներն իւրաքանչիւր եկեղեցեաց վարչաց, վերա-

¹ Հմմ. Հայնէր, էջ 272—273:

² Ռեկտի, էջ 99, թ. 168. Տան. 44:

³ Հմմ. Ռեկտի էջ 97, 167:

⁴ Հմմ. Հայնէր, 274—275:

տեսչին, առաջնորդաց, յանձանձչաց չեն. հասպա՝ եկեղեցւոյ, վանաց, հաստատութեանց ստացուածներն են, որուն գործածութիւնը կամ մատակարարութիւնը միայն յանձնուած է իրենց: Անոր համար Եկեղեցին անվաւեր կ'ընէ եւ կը պատժէ եթէ վերոյիշեալք սպորինուոր կերպով կ'օտարացնեն: Ըսինք՝ սպորինուոր կերպով: Վասն զի

Միայն 1. Օրինաւոր պատճառներու եւ 2. Յօրինաց դրուած պահանջերովք կարելի է օտարացընել:

ա. Օրինաւոր պատճառներ են՝ կարեւոր հարկ կամ յայտնի օգուտ Եկեղեցւոյ, շարժականներու նրկատմամբ՝ նաեւ քրիստոնէական սէրն, (ինչպէս՝ սովի ժամանակ) եւ վերջապէս անպարտաւորութիւն, այսինքն՝ երբ որ այս ստացուածներն աւելի ի վնաս, քան յօգուտ Եկեղեցւոյ են¹:

բ. Յօրինաց պահանջեալք են այժմ՝ նկատմամբ անշարժական եւ մեծագին շարժական իրաց՝ «Առաքելական Հանձնութիւն», որ Սիւնհոգոսաց, կամ Եպիսկոպոսաց եւ կրօնաւորաց Ս. Ժողովներէն կը տրուի: Բայ Առաքելական Հանձնութեան, Եպիսկոպոս կամ Աբբայէ մը կը պահանջուի նաեւ հաստատութեան շնորհոյ կանոնիկոսաց կամ վանականաց: Իսկ կղերականէն՝ նաեւ Կարգաւորին հաւանութիւնը: Բայց այս ամէն գիպաց մէջ Առաքելական Հանձնութեան զանցառութիւնը բանադրանաց տակ կ'իյնայ, եւ ոչ այլոցն:

Արդ, Առաքելական Հանձնութիւնը կը պահանջուի՝ 1. Անշարժական իրաց համար, եթէ 200 Ֆրանքէ աւելի կրնան արժել: 2. Շարժական իրաց համար եթէ մեծագին են եւ երեք տարի առանց փճանալու կրնան պահուիլ: Ըստ այսմ, հետեւեալ գիպաց մէջ բանադրանք չկայ:

1. Եթէ փոքր եւ անբեր երկիր մը, որ 200 Ֆրանքէ նուազ արժէք ունի, օտարացուի: Բայց չըլլար մեծատարած երկիրներ մասն մասն իբրեւ փոքր ծախել, վասն զի այս օրէնքն ոչնչացընել է:

2. Եթէ անշարժական իր մը վանքի մը ժառանգ-

¹ Ս. Լիգ. Դ. 187. Տան. 9:

գութիւն թողուի, որ անկարող ըլլայ ստացուած ունենալու, ինչպէս՝ քափուչինք, Փրանկիսկեանք, թէւարինեանք. այսպիսի դէպքի մէջ կրնայ յօգուտ վանք կամ եկեղեցւոյ ծախուիլ:

3. Եթէ եկեղեցական ստացուածներն երեք տարւան համար վարձու տրուին:

4. Եթէ անշարժականներն երկայնժամանակեան վարձակարութեան կամ անկորդութեան (emphytheusis) տրուին, երբ այսպէս յառաջագոյն ալ տալ սովորութիւն էր:

5. Օրէն է, մանաւանդ թէ պարտք է եկեղեցական ստացուածներն օտարացընել, եթէ կարելի չէ առանց փճանալու կամ վատթարելու պահել, անոր համար այսպիսի իրեր 3 տարւան միջոցին մէջ պէտք են ծախուիլ:

6. Եթէ եկեղեցական ստացուածներն օտարացընել այնպէս հարկ ըլլայ, որ կարելի չէ Առաքելական Հաճութիւն խնդրել: Բայց այն ստեն Եպիսկոպոսէն հրաման պիտի առնուի:

7. Եթէ հրետակի մը մէջ պայման դրուի, որ եկեղեցւոյն պարգեւեալ ինչքերն կարենան կամ պարտաւորին օտարացուիլ:

8. Եթէ եկեղեցւոյն կողմանէ հարկ մը կայ, ինչպէս՝ երբ եկեղեցին պարտքը հատուցանել ստիպուի եւ յապաղել կարելի չըլլայ³: Բայց այս ամէն դեպք մէջ ալ Եպիսկոպոսին կամ ժողովոյն հաւանութիւնը կը պահանջուի, բայց ոչ թէ ընդ բանագրանք:

2.

Բանագրանաց տակ կը ձգուին նաեւ «որոնք որ կը յանդգնին ընդունիլ»: Ասոնց մէջ բովանդակուած են նաեւ Եպիսկոպոսունք եւ Աբբայք: Ասոնք բանագրանաց տակ կ'իյնան, եթէ «յանդգնիլ» ընդունիլ այսինքն՝ եթէ դիտութեամբ եւ կամօք եկեղեցական ստացուածներն ապօրինաւորապէս օտարացընողներէն կ'ընդունին զներով, փոփոխելով եւայլն: Աւստի թանձր ու վեհերոտ տգիտութիւնը կ'արդարացընէ ընդունողները, բայց ոչ թէ օտարացընողներն՝ որոնցմէ յանդգնութիւն չի պահանջուիր: Բաց ընդունողներէն՝ որիչ սրեւէ գործակցաց համար բանագրանք չկայ:

¹ Հայեր, էջ 272:

Իսկ Պօղոս Բ. ի Եպիսկոպոսաց եւ Աբբայից վրայ դրած եկեղեցական արգելումը դադրած է. վասն զի Սահմանադրութեանս արգելմանց մէջ չի յիշուիր¹: Եւ որովհետեւ մի անգամ օտարացուածն վերտփն չ'օտարանար, յայտնի է թէ ընդունողը բանագրանաց մէջ իյնալէն ետեւ եթէ ինքն ալ օտարացընէ, ո՛չ ինքն եւ ո՛չ նոր ընդունողը բանագրանաց տակ կ'իյնայ:

Այս երկու յանցաւորաց վրայ բաց ի բանագրանքէ երկու պատիժ ալ դրուած է, որոնք մինչեւ ցայժմ ի զօրութեան են: 1. Ոչնչացուցումն օտարացուցման ապօրինաւոր դաշանց: 2. Զրկումն ի բարերարութեանց՝ որոնց ստացուածքն առանց հաւանութեան Առաքելական Եթոսոյ օտարացուցած են: Այս պատժէն ազատ են Եպիսկոպոսունք եւ Աբբայք²:

Պ.

«Որոնք որ անփոյթ կ'ըլլան կամ՝ յանցաւոր կերպով զանց կ'առնեն զեկուցանել մէկ ամսուան միջոցի մէջ այն խոստովահարքը կամ Բահանայքը, որոնցմէ հրապուրուած են ի զազիր մեղս այն ամէն ղիպաց մէջ, որ կը յիշուին Մեր Նախորդներէն Գրիգոր ԺՅ. է ի Մհմտը. Ընդհանուր, 20 Օգոստ. 1622, եւ Բենեդ. ԺԳ. է ի Մհմտը. Խորհուրդն Ապուշխարութեան, 1 Յունիս 1741³:»:

Սանտիս⁴ մէջ բանագրանաց տակ կը ձգուի միայն այն անձն՝ որ զազիր մեղքի հրապուրող խոստովանահայրն օրինաւոր Մեծին չի զեկուցաներ:

¹ Բատ. էջ 300, թ. 433 ընդ Գ.:
² Հմմ. ընդհանրապէս Հայեր, էջ 263—277:
³ Տես էջ 23:
⁴ Այս կանոնս պէտք չէ շփոթել առանձին կերպով վերապահելոց Ժ. կանոնին հետ: Սակայն հոն յիշուած մեղակիցն արձակելու յանցանքը կրնայ շատ դիւրաւ հրապուրմանէ անմիջապէս ետքը գործուիլ, երբ խոստովանահայրն հրապուրումն առ թիւ խոստովանութեան կատարէ, եւ խոստովանու-

“Հրապարակել” է կանոնիս մէջ՝ ի քահանայէ իբրեւ խոստովանահօրէ ի զաղիւր մեղք գրգռում: Ըստ այսմ՝ առ այս երեք բան կը պահանջուի:

1. “Ձազիր մեղքի” պիտի հրապուրուի: Զուրկ մեղք են ամէն արտաքին մեղքերն ընդդէմ վեցերորդ պատուիրանին Ատուծոյ, ըլլայ խօսքով ըլլայ գործքով, (ինչպէս՝ շօշափումն, հայեցումս, համբոյր եւ այլն) ըլլայ նշանաւ կամ թղթով: Նոյն իսկ խոստովանորդոյն մարմնական սէրն ու զինքն իրեն շահելու փորձն ասոր տակ կ'երթայ¹: Հրապուրելն ընդ սկսիլը՝ կը սկսի զեկուցանելու պարտքը, թէեւ խոստովանահայրն անմիջապէս զղջայ կամ ոչ². Նոյն իսկ եթէ հրապուրելը խոստովանորդիեն սկսի եւ խոստովանահայրն հաւանութիւն միայն տուած ըլլայ³: Ուստի, զեկուցանելու պարտքը միայն զաղիւր մեղաց հրապուրելու վրայ է, եւ ոչ յայլ աղղւ մեղաց, ինչպէս՝ գործութիւն, սպանութիւն, եւ այլն⁴:

2. Խոստովանահայրը “քահանայ” պիտի ըլլայ, առանց զանազանութեան կրօնաւոր կամ աշխարհական քահանայի, խոստովանութեան իշխանութիւն ունեցող կամ չունեցող քահանայի⁵: Եթէ հրապուրող խոստովանահայրն քահանայ չէ, կամ թեմական եպիսկոպոսն է, զեկուցանելու պարտք չկայ:

3. Հրապուրումն ի քահանայէ իբրեւ ի “Խոստովանորդի” պիտի ըլլայ. այսինքն՝ քահանայէ կամ խոստովանահօրէ եղած ամէն հրապուրում զեկուցման պարտք չի ծնանիր, այլ այն միայն՝ որ Ս. Ապաշխարութեան հետ յարաբերութեան մը մէջ է: Այս յարա-

թեանէ ետեւ հրապուրոյն արձակել յանդիւն: Այս դէպքիս մէջ քահանայէս խոստովանահայրն Եկեղեցիէն այս երկու յանցաւորաց վրայ դրուած թէ բանադրանաց եւ թէ պատժոց մէջ կ'իյնայ: Մեղաւորիցն արձակիցն երու վրայ դրուած բանադրանքն ու պատիժը տեսանք (էջ 110). իսկ հրապուրման պատիժներն ալ կանոնիս մէջ կը տեսնենք:

¹ Ս. Լիդ. Զ. 704:
² Ս. Ժ. քննութեան, 11 Փետր. 1661, թ. 2:
³ Նոյն. անդ, թէեւ ոմանք խնդրել տակաւին անորչ կը համարին:
⁴ Ս. Լիդ. Զ. 684:
⁵ Ս. Ժ. քննութեան, 4 Փետր. 1661:

բերութիւնն՝ որ Բենեդիկտոս ԺԳ. ի վերոյիշեալ կանոնիս մէջ յառաջ կը բերուի, երկու եական կետերու կ'ամփոփուի. այսինքն՝ ըստ մտաց կանոնիս հրապուրելը կրնայ ըլլալ կամ խոստովանանքի մէջ եւ կամ որոշ խոստովանութեան:

•. Խոստովանանքի մէջ եղած հրապուրումը միշտ պարտք յառաջ կը բերէ, եւ այս պարտոց զանցառութիւնը բանադրանաց տակ կ'իյնայ: Հոս զանազանութիւն չ'ըլլուիր խոստովանանք ըլլալու ատեն կամ անմիջապէս յառաջ կամ ետքը գործուած ըլլալուն մէջ: Ըսինք անմիջապէս. վասն զի հրապուրումն այնպէս կ'ապուած պիտի ըլլայ խոստովանութեան հետ, որ թէ խոստովանորդոյն եւ թէ խոստովանահօր կողմանէ՝ խոստովանութեան հետ կ'ապակցութիւն չունեցող գործք մ'ընդ մէջ պիտի չ'մտնէ¹: Բայց խոստովանութեան մէջ կամ անմիջապէս յառաջ կամ ետքն եղած հրապուրումը հարկ չէ որ մանդամայն լրանայ, բաւական է սկսիլն, ինչպէս՝ երբ խոստովանորդոյն զաղիւր մեղաց հրապուրելչ նամակ մը սրուի, որպէս զի յետոյ կարգայ. կամ՝ երբ բերնով զինք տուն հրաւիրէ, կամ ըսէ՝ որ տեղ մ'իրեն սպասէ, կամ անոր բնակարանը հարցընէ հոն հրապուրելու դիմամբ²: Իսկ եթէ խոստովանահայրն խոստովանութեան իմանայ խոստովանորդոյն տկարութիւնը եւ յետոյ հրապուրէ, ըստ Ս. Լիդուորեայ³ հաւանականագոյնս (ընդդէմ բազմաց) պիտի զեկուցուի. վասն զի հրապուրման պատճառ է խոստովանութիւնը, ըստ հետեւորդի խոստովանութեան առթիւ կ'ըլլայ հրապուրումը:

•. Արտաքոյ Խոստովանութեան եղած հրապուրումն որպէս զի զեկուցման պարտք յառաջ բերէ, հարկ է որ խոստովանութեան հետ յարաբերութիւն մ'ունենայ: Ուստի, կը պահանջուի որ կամ առթիւ կամ երեւութիւ, եւ կամ պատճառանօք խոստովանութեան ըլլայ:

¹ Ս. Լիդ. Զ. 677:
² Նոյն, Գ. 676, 704:
³ Զ. 678:

1. Խոստովանութեան արժէքը կը հրապուրուի, օրինակի աղագաւ, երբ մէկը քահանայի մը դայ անմիջապէս նոյն արժէքը խոստովանելու. իսկ քահանայն փոխանակ սուրբ պաշտօնը կատարելու, յապաղէ խոստովանութիւնն յայլ ինչ ժամանակ, եւ հրապուրէ ի դազիրան: Նոյնպէս եթէ մէկը դայ եւ յատենի խոստովանութեան խնդրէ՝ որ ուրիշ ատեն մը իւր խոստովանանքը լռէ, եւ քահանան ալ սկսի հրապուրել. այս երկու դիպաց մէջ ալ խոստովանութեան առթիւ եղած է հրապուրումը, առանց զանազանութեան խոստովանասօր նստած եւ միւսին ծունր դրած ըլլալուն կամ չըլլալուն: Իսկ եթէ մէկը դայ եւ արտաքոյ ատենի խոստովանութեան խնդրէ քահանայէ մը որ որքէն արժէք մը իւր խոստովանանքը լռէ, եւ կամ թէեւ նոյն ատեն խոստովանիլ ուզէ եւ քահանայն ուրիշ ատենուան թողու, պակայն հրապուրել չսկսած՝ ուրիշ անտարբեր կրաց վրայ սկսի խօսիլ եւ անկէ ետեւ սկսի հրապուրել, այն ատեն այս հրապուրումն խոստովանութեան հետ յարաբերութեան մէջ չէ, եւ ըստ հետեւորդի զեկուցման պարտք չկայ. վասն զի այս դիպաց մէջ քահանան իբրեւ խոստովանասայր չի հրապուրել¹:

2. Խոստովանութեան երեսնութիւնը կը հրապուրուի, երբ մէկը խոստովանասայր ձեւանայ, կամ մէկուն խոստովանանքը լռել ձեւացընէ եւ փոխանակ լռելու՝ ի զաղիրս հրապուրէ: Բայց առ այս կը պահանջուի, որ երեւոյթն այնպէս ըլլայ՝ որ ուրիշներն խաբուին կամ գոնէ խաբուիլ կարենան: Անոր համար երկու պարագայ կը պահանջուի: ա. Հրապուրումը կատարուի խոստովանարանը կամ խոստովանութեան որոշեալ տեղ մը, թէեւ խոստովանասայրն անձամբ նոյն տեղն առ ժամն որոշէ: Այսպիսի է նաեւ հիւանդի մը կամ հիւանդ ձեւացողն մը սենեակը: Բ. Խոստովանասայրն ու խոստովանորդին այնպէս մը ձեւացընեն, իբր թէ իրօք խոստովանանք կ'ըլլան: Եթէ խոստովանորդին ուրիշներուն պէս չի վարուիր, ծունր չի դներ, այլ խոստովանարանի

¹ Վճիռ Ս. Ժ. Քննութեան, անդ, 4: Ս. Լիդ. Զ. 677. 2: Ռիեդի, էջ 102 ծան. 12:

առջեւ կը կենայ, եւ այնպէս հրապուրումը կը կատարուի, չի կրնար ըսուիլ թէ երեւութիւ խոստովանութեան կը կատարուի. անոր համար զեկուցման պարտք ալ չկայ¹:

3. Պարճարանօք խոստովանութեան կը հրապուրուի, օրինակի աղագաւ, եթէ խոստովանասայրն զմէկը խոստովանանքի հրաւիրէ, բայց ոչ իրօք խոստովանանք ընելու եւ յետոյ հրապուրելու դիտմամբ, հապա խոստովանանք ընելու պատճառանօք խաբելու եւ զանպատեհս գործելու դիտմամբ: Ըստ այսմ, զեկուցման պարտք չկայ, երբ խոստովանորդին անձամբ, կամ խոստովանասայրն, եւ կամ երկուքն ի միասին խոստովանիլ ձեւացընեն զուրիշները խաբելու համար²:

Արդ, վերոյիշեալ՝ խոստովանութեան մէջ եւ արտաքոյ խոստովանութեան կատարուած հրապուրումը պարտական է զեկուցանել³. 1. Հրապուրողն, ընդ ծանու մեղօք, որ սեռէ կամ հասակէ անձ ալ ըլլայ, հաւանած ըլլայ կամ ոչ, քահանային միտքը հրապուրման ժամանակ կամ ետքն իմացած ըլլայ, քահանայն իրեն հետ կամ ուրիշ երրորդի մը հետ կամ անձամբ անձին հետ մեղանշելու զինք հրապուրած ըլլայ. կամ հրապուրմանէն ետքն երկայն ատեն անցած ըլլայ, կամ քահանայն ինք զինք ուղղած ըլլայ. այս ամէն դիպաց մէջ ալ հրապուրողն պարտական է զեկուցանել, եւ այս պարտքը չի դադրիր մինչեւ որ ինք կամ ուրիշ մը զեկուցանէ կամ հրապուրող քահանայն ինքնին ինք զինքը զեկուցանէ կամ մեռնի³: Եթէ հրապուրողը «մեկ ամսոտան միջոցի մէջ չի զեկուցաներ», կ'իյնայ բանադրանացս մէջ⁴: Բայց որովհետեւ ըստ իրաւագիտական սկզբանոյ՝ Անթիոյն համար ժամանակը չ'անցնիր. Անթանօթի օրէնք մը չի պարտադրեր. Պարտնիթի որակ ինչպիսի համար յամարանիւն կը պահանջուի. անոր համար հարկ է այս մէկ ամսոտան միջոց հաշ-

¹ Յայտար. Ս. Ժ. Քննութեան, 25 Նոյ. 1874: Ս. Լիդ. Զ. 680:
² Ս. Լիդ. Զ. 679. 680:
³ Ս. Ժ. Ապաշխ. 24 Ապրիլ 1884:
⁴ Ս. Ժ. Քննութեան, 20 Փետր. 1867, թ. 3:

ուել այն օրէն սկսեալ, յորում գիտնայ հրապուրեալն
 * Չեկուցանելու պարտքը: Յորչափ մէկն անդէտ է
 պարտուց, ազատ է մեղքէ եւ պատժէ: ք. Պարտուց
 Ընդ Բանադրանքի պարտաւորելը: Ուստի, սով որ պարտ-
 քը գիտէ, բայց հետը կապուած բանադրանքը չի գի-
 տեր, ազատ է բանադրանքէ, բայց ոչ՝ մեղքէ: ք. Բա-
 նադրանայ մէջ կէնալու սահմանէալ ժամանակը, որ է մէկ
 ամիս. ըստ այսմ, սով որ կը կարծէ թէ պարտական է
 ընդ բանադրանքը անմիջապէս զեկուցանել, չ'իյնար
 բանադրանայ մէջ, բայց եթէ ամիսն անցնէլէն ետքը
 վասն զի «մեկ ամսոսան միջոցին մեծ» չզեկուցանող չէ,
 այլ իւր խղճին դէմ գործող, որուն բանադրանք չկայ:
 Նոյնպէս, սով որ կը կարծէ թէ ըստ կամի սրեւէ ատեն
 կրնայ զեկուցանել, ամիս մ'անցնէլէն ետքն ալ բանա-
 դրանքէ ազատ է, ցորչափ բարեմտութեամբ կը կարծէ
 թէ կրնայ յապաղուիլ¹:

2. Հրապուրման վրայ սոյնի գեղեկութիւնն ունե-
 ցողնն, ընդ ծանու մեղքը, բայց ոչ ընդ բանադրա-
 նօք, ինչպէս յառաջագոյն: Ստոյգ տեղեկութիւն կ'ու-
 նեցուի, եթէ անձամբ տեսած, կամ նոյն իսկ հրա-
 պուրողին կամ հրապուրողին, եւ կամ հաւատալի
 մարդկանէ լուսած ըլլայ: Եթէ թեթեւամիտ, կասկա-
 ծելի եւ չհաւատալի մարդկանէ լուսի, զեկուցման
 պարտք չկայ²: Այս պարտքէն ազատ չեն ազգականքն
 ալ, նոյն իսկ այն անձն՝ որ ընդ բնական դաղանօք ի-
 մացած է, ըստ միաբան վարդապետութեան աստուա-
 ծաբանից³:

Այս ստոյգ տեղեկութիւնը պիտի ունեցուի, որ-
 պէս զի մէկը զեկուցանել պարտաւորի, թէ խոստովա-
 նահօր անձին եւ թէ յանցանայ նկատմամբ. այսինքն՝
 ստոյգ պիտի գիտցուի՝ որ հրապուրում մ'ըստ մտայ
 կանոնիս իրօք եղած է: Ըստ այսմ, եթէ երկբայական է՝
 թէ այս ինչ կամ այն խոստովանահայրն է հրապուրողն,
 կամ՝ եթէ հրապուրման մեղքը գործուած ըլլալը

¹ շմբ. Բատ. Թ. 442: Ռիէգի, Թ. 174: Չօը. Թ. 158.
 Ընդ Բ. եւ Գ.:
² Ս. Ժ. Բննութեան, 1661:
³ Ս. Լեգ. Կուրի, Սքաւ.:

ստոյգ չըլլայ, ինչպէս՝ երբ հրապուրողին թէ խօսքերն
 եւ թէ դիտաւորութիւնը մթին ըլլայ, այս դիպաց մէջ
 պէտք է զեկուցումը զանց առնել: Եթէ երկբայու-
 թիւն մը չկայ ասոնց նկատմամբ, կամ՝ թէ եւ խօսքերն
 մթին, բայց հրապուրելու գիտումն յայտնի եւ պայ-
 ծառ է, պիտի զեկուցուի: Նոյնպէս պիտի գիտցուի,
 թէ հրապուրումն ի քահանայէ իրբեւ ի խոստովանա-
 հօրէ գործուած է, եւ թէ խոստովանութեան հետ
 յարաբերութիւն մ'ունի, թէ ոչ: Եթէ այս ամէն գի-
 պաց մէջ երկբայութիւն մը կայ որ չի բարձուիր, ա-
 ռանց մեղաց կրնայ զեկուցումը զանց առնուիլ: Ինչու
 որ երկբայական օրէնքն չի պարտաւորէր: Բայց այսպիսի
 երկբայութիւնն որոշելը խոստովանորդայն գործը չէ,
 այլ խոստովանահօր¹:

Արդ, այս զեկուցման պարտք ունեցողները չեն
 կրնար արձակում ընդունիլ, ցորչափ որ պարտքերնին
 չեն կատարեր: Եթէ առաջիններն ամիս մը յապաղեն,
 կ'իյնան բանադրանաց տակ: Եթէ յապաղելու իրաւ-
 սցի պատճառ մը կայ, ինչպէս՝ կարի մեծ վնաս²,
 ծանր դժուարութիւն, եւ խոստովանորդին անկեղծու-
 թեամբ եւ հաստատութեամբ կը խոստանայ ըստ կա-
 ըրի շուտով զեկուցման պարտքը կատարել, կրնայ ար-
 ձակում տրուիլ ոչ միայն մեղացը, այլ եւ ուղղակի
 բանադրանացս, եթէ մէջն ինկած է⁴: Բայց յապաղ-
 մամբ՝ զեկուցման պարտքը չի դադրիր, այնպէս որ պատ-
 ճառներն դադրելուն պէս, պարտքը վերադառնի կը սկսի:
 Եթէ խոստովանորդի մը չ'առնուր յանձն զեկուցանել,
 կամ առ ամթոյ եւ կամ առ երկիւղի, պէտք չեն
 խոստովանահօրք զայնպիսին անմիջապէս մերժել,
 հապա Եպիսկոպոսէն կամ Ս. Աթուէն խորհուրդ
 խնդրելու է, լռելով խոստովանորդայն անունն: Վասն
 զի Ս. Ժ. Ապաշխարութեան կը անօրինէ, թէպէտ ոչ ի
 պարտուց զեկուցման, այլ յայլոց պահանջելոց, պա-

¹ շմբ. Բատ. էջ 331. Թ. 449: Կուրի, Բ. 590: Սքաւ.
 Գ. Թ. 418, եւ այլն:
² Ս. Լեգ. Զ. 699:
³ Ս. Ժ. Բննութեան, 22 Յունր. 1827:
⁴ Աւանց. ծան. 32: Ռիէգի, եւ այլն:

Հանջերով միայն՝ որ հրապուրողին անունն իւր խոստովանահօրը ղեկուցանէ՝: Ասիկայ իմանալու է ղեկուցման պարտաւորելոց երկու տեսակին համար ալ:

Ար մնայ հոս յառաջ բերել ղեկուցանելու եղանակը, զոր քննութեան Ս. Ժողովը 20 Փետր. 1867ին տուած հրահանգին մէջ կու տայ: ր § 3. Չեկուցանելն ոչ որ առանց մահուչափ մեղաց կրնայ զանց առնել, զոր պէտք է խոստովանողաց յիշեցընել. եւ անոնց բարեմտութիւնն ալ այս յիշեցընելու եւ ուսուցանելու պարտքէն չ'արդարացընէր: § 4. Ս. խոստովանութիւնը լսելու կարգեալ քահանայք, որ այս պարտքն իրենց խոստովանողաց չեն յիշեցընէր, պէտք են պատժուիլ: § 6. Եթէ ի զազիրս հրապուրողներն առանց անուան ղեկուցուին, ոչինչ է: Չեկուցումը պիտի ըլլայ յատենի, այսինքն՝ առաջի Եպիսկոպոսի կամ յանձնարարելոյ նորա, ներկայութեամբ եկեղեցական անձի՝ որ իբրեւ նոտար ըլլայ, երգամբ եւ իւր անունը յայտնելով եւ ստորագրելով. չի բաւեր եթէ տոմսակաւ կամ նամակաւ ըլլայ, որուն մէջ նամակագրին անունը չգտնուի: Բայց կը հրամայենք, որ ղեկուցման ժամանակ՝ բաց ի դատաւորեն եւ նոտարէն որոնք եկեղեցական պիտի ըլլան եւ Եպիսկոպոսին առանձինն ու գրեալ թուղթին ունենան, ուրիշ վկաներ չգտնուին: Նոյնպէս պէտք է զգուշանալ որ ղեկուցանողներուն չհարցուի թէ հաւանեցան արդեօք հրապուրման. եւ պատշաճագոյն այն է, որ այս հաւանութիւնը թէեւ կամակար յայտնուած ըլլայ, թղթին մէջ բնաւ չնշանակուի: § 7. Չեկուցման պարտքն անձնական է եւ հրապուրողէն պիտի կատարուի: Բայց, եթէ ծանր դրժուարութենէ խափանուելով՝ չկարենայ անձամբ կատարել, այն ատեն կամ անձամբ, կամ թղթով, կամ իրեն հաճոյ երեւցող անձի մը ձեռքը իւր կարգաւորին կամ Ապաշխարութեան կամ քննութեան Ս. Ժողովոց ձեռքը Ս. Աթոռն երթայ եւ ամէն պարագայքն առջեւը դնէ, եւ վարուի ըստ հրահանգաց զոր կ'ընդունի: Իսկ եթէ հարկն ստիպէ, ըստ խրատու եւ յորդարանաց խոստովանահօր իւրոյ վարուի: Բայց եթէ առանց արգելքէ մը խափանուելու բացարձակապէս յանձն չառնու ղեկուցանել, այս եւ վերջիշեալ դիպաց մէջ գովելի է այն խոստովանահայրն որ իւր օգնութիւնը չի զանար խոստովանորդոյն, եւ կարգաւորին կամ Ս. Աթոռոյն կը

1 Չու. էջ 149, ընդ 2.:

հարցընէ, թէ ինչպէս պէտք է այնպիսւոյն հետ վարուիլ, բայց լսելով զանունն խոստովանորդոյն: Իսկ այս դիպաց մէջ գործելու կերպը կ'աւանդեն հոյակապ մատենագիրք, իմէջ այլոց՝ Փիկնադէլի, Հար. Ա. Խորհրդ. 104. Գարենա, Ալպիդիոս: ր

Հրապուրող խոստովանահայր մը բաց ի բանադրանքէն՝ հետեւեալ պատժոց տակ ալ կ'իյնայ, ըստ վճռոյ Բենեդ. ԺԳ. ի 1:

- 1. Ասխակայութիւն ի գործադրութենէ կարգին ընդհանրապէս:
- 2. Զրկումն ի բարբերարութենէ եւ ամէն պատուէ:
- 3. Մշտնջենաւոր անկարողութիւն պատարագ մատուցանելու:

Առաջին երկուքն տալի վճռոյ են. նոյնպէս վերջինն քննութեան Ս. Ժողովոյն 1867ին տուած հրահանգին համաձայն՝ այսուհետեւ տալի վճռոյ է: Իսկ կարգընկէցութիւնն եւ աշխարհական իշխանութեան մատենէն՝ որ յառաջագոյն կար, աւելի վախցընելու համար էր. անոր համար՝ պէտք է Եպիսկոպոսն բոլորովին ետ կենալ այսպիսի ահագին պատիժ մը դնելէն²:

«Բաց ի ցայս վայր թուածներնէս նաեւ անոնց՝ զորոնք Տրիդնտեան Ս. Ժողովը կամ արձակումը ծայրագոյն Բանախայպետին կամ Կարգաւորաց վերապահելով, եւ կամ՝ առանց վերապահութեան մը քանադրած է, նոյնպէս Մենք ալ այնպէս քանադրեալ ըլլալը կը ծանուցանենք. ի բաց

¹ 5 Օգոստ. 1743:
² Բենեդ. ԺԳ. Թուղթ առ Աղեւնտոս, 11 Նոյ. 1743:
 Ոչ ումէք վերապահեալ այս չորս բանադրանքներէն զատ, կայ հատ մ'ալ որ Սահմանագրութեանս յաջորդ խօսքերովն կը տրուի: Նոյնպէս ճ հատ ալ Տրիդնտեան Ս. Ժողովէ արուած եւ տակաւին ի գօրութեան է, հատ մ'ալ քննութեան Ս. Ժողովոյ 1872 Դեկտ. 4ին տուած մէկ վճռովը դրուած է: Աւստի ընդ ամէնը կ'ըլլայ Ժ.Բ. կանոն (Տես Ա. Յաւելուած):

հաննալ քանադրանաց պատիժն՝ որ սահմաննալ կայ ի Վճիռն Գ. Նստոյ “Ղաանի դրոշմերոյ եւ ի կիր արխաներոյ զՍոսոր Գիրս”, որուն տակ միայն անոնք կ'ուզենք որ ինկած ըլլան, որոնք սուրբ իրաց վրայ ճառող զրքերն առանց Կարգաւորին հաւատութեան կը տպեն, կամ տպել կ'ու տան՝:

Ս. Քահանայապետը բաց ի ցայս վայր թուած դատակնիքներէն, հոս վերստին կը հաստատէ Տրիդենտեան Ս. Ժողովոյն առաջին կէրպով գրած դատակնիքներն. այսինքն Տրիդ. Ս. Ժողովէն դուրս թողնելն նոր դատակնիքները: Եւ սրով հետեւ նոյն Ս. Ժողովոյն առաջին կէրպով գրածներն, այսինքն այն դատակնիքները, զորոնք այս Ս. Ժողովն ի հին իրաւանց առնելով վերստին ի մէջ կը բերէ կամ կը հաստատէ, յայտնապէս չեն յիշուիր Սահմանադրութեան մէջ, անոր համար անոնք ամեն ալ ջնջուած են: Աօրկայ յայտնի կ'երեւայ Սահմանադրութեան խօսքէն՝ “Անոնց ՋՈՐՈՆՔ ՏՐԻԴԵՆՏԵԱՆ Ս. ԺՈՂՈՎԸ . . . ԲԱՆԱԻՐԱԾ Է, և ոյնպէս Մենք ալ այնպէս շանտորեալ ըլլալը կը ծանուցանենք”: Ըստ այսմ, Տրիդ. Ս. Ժողովոյն բանադրանքներէն տակաւին ի զորութեան են հետեւեալները միայն:

1. Այն ամէն բանադրանքներն, զորոնք նոյն Ս. Ժողովն առաջին անգամ իբրեւ բոլորովն նոր դատակնիք տուեալ վճռոյ՝ գրած է:
2. Անոնք՝ որ ի հին իրաւունս տալի վճռոյ էին, եւ Ս. Ժողովն տուեալ վճռոյ ըրած է. վասն զի նոր են:
3. Այն դատակնիքներն՝ որ Քահանայապետին ընտրութեան եւ բարեպաշտական հաստատութեանց ներքին վարչութեան կը հային, եւ որոնք մինչեւ ցայսօր ի զորութեան մնացած են, վասն զի զատնք առանձինն կը յիշէ Սահմանադրութիւնս իւր վերջաբանին մէջ:

՝ Տես էջ 23:

Առաջին երկու տեսակ դատակնիքները, որպէս զի Սահմանադրութեան շարքը չընդհատի, Ա. Յաւելուածին մէջ կը դնենք: Իսկ վերջինն ի մօտոյ Սահմանադրութեան վերջաբանին մէջ պիտի տեսնենք:

Հոս հարկաւոր կ'երեւայ Տրիդենտ. Ս. Ժողովոյն տակաւին ի զորութեան մնացած վերոյիշեալ դատակնիքացը նկատմամբ եղած յաջորդ երկու կարեւոր ինդիքոյ լուծումը տալ:

1. Տրիդ. Ս. Ժողովէն առաջին անգամ տրուած տուեալ վճռոյ դատակնիքներն, որ հակառակ սովորութեամբ մինչեւ ցհրատարակումն Առաջ. Արքեպ. Սահմանադրութեան բարձուած էին, արդեօք հիմայ Սահմանադրութեամբս վերստին հաստատուեցան:
2. Արդեօք այն տեղերն, ուր Տրիդ. Ս. Ժողովոյն վճիռները տակաւին չեն հրատարակուած կամ ի զորութեան չեն, Տրիդ. Ս. Ժողովոյն առաջին անգամ գրած տուեալ վճռոյ դատակնիքներն Սահմանադրութենէս ետք կը պարտաւորեն:

Տրիդ. Ս. Ժողովն Առաջ. Արքեպ. Սահմանադրութեամբս նոր իրաւանց զորութիւն մը չստացաւ. անոր համար իւր վճիռներն հիմայ ալ այնչափ զորութիւն ունին, որչափ նոյն իսկ Ժողովոյն ձօնութեամբն ունէին: Վասն զի Առաջ. Արքեպ. Սահմանադրութիւնս այն դատակնիքներու միայն նոր զորութիւն իրաւանց կու տայ, զորոնք ինքն ի մասնաւորի եւ յայտնապէս կը յիշատակէ, կամ ինչպէս ինքնին Ս. Քահանայապետը կ'ըսէ՝ “ . . . զորոնք ի անին իսկ Մահնամարտութեան կը կարգենք”: Ուստի, ուր որ Տրիդենտեան Ս. Ժողովոյ դատակնիքներն, թէեւ իրմէ առաջին անգամ իբրեւ նոր տրուած ըլլան, կամ հակառակ սովորութեամբ, կամ չհրատարակուելով եւ կամ չլուծուելով Սահմանադրութեան հրատարակման ժամանակ զորութիւն չունէին, նոյն տեղերն այսուհետեւ ալ իբրեւ բարձուած եւ անզօր կը նկատուին:

Պիոս Թ. Ս. Քահանայապետը վերոյիշեալ խօսքերով՝ Տրիդ. Ս. Ժողովոյ ուղղակի տուած բանադրանքները հաստատելէն ետեւ, ասոնց թուէն ի բաց կը հանէ սուրբ իրաց վրայ ճառող զրքերուն նկատմամբ նոյն Ս. Ժողովէն տրուած մէկու մը չվերապահեալ բանադրանքն, եւ զայն սահմանաւորելով՝ կ'ու-

՝ Ռիեդի, էջ 19, Թ. 24:

զէ՛ որ այսուհետեւ անոնք միայն այն բանադրանաց տակ իյնան, “ որոնք սուրբ իրաց վրայ անող գրքերն առանց կարգաւորիկն հաւանութեան կը տպեն, կամ տպել կոչ տան: ”

Այս բանադրանքն, որ Սահմանադրութեանս մէկու մը չվերապահեալ բանադրանաց շղթային վերջին օղակն է, կը բանադրէ զայն ամէնքն՝ (ինչ վեճակ կամ աստիճան կամ արժանապատուութիւն ալ ունենան, ¹) որոնք սուրբ իրաց վրայ ճառող գրքերն անհրաժան “ կը տպեն կամ տպել կոչ տան ”: Ուստի, այսուհետեւ չեն բանադրուիր՝ օրինակողն, ընթերցողն, ծախողն, խորհուրդ տուողն, եւ այլն: Իսկ որոշ կամ որոշ քոչու ըսելով՝ կ'իմացուին վերագոյն՝ յիշուած անձինք, որոնց վրայ աւելցընելու է նաեւ որոշ քոչու թիւք յանջն աւանշերը:

Արդ, որպէս զի վերոյիշեալ երկու յանցաւորները բանադրանաց տակ իյնան, կը պահանջուի, որ

1. Գիրքն ըլլայ “ սուրբ իրաց վրայ անող ”: Մինչեւ 1880 մեծ խնդիր կար այս խօսքին իմաստին վրայ: Ոմանք ասով կ'ուզէին իմանալ կրօնական նիւթոց վրայ խօսող ամէն գրքերն. իսկ ոմանք՝ միայն Աստուածաշունչը: Ամէն խնդիր վերջացաւ, երբ 1880 Գեկտ. 22ին Արարողութեան եւ Քննութեան Ս. Ժողովներն վճռեցին, թէ այս կանոնս “ Պէտք է ամփոփել Սուրբ Գրոց մատենից վրայ եւ անոնց ծանօթութեան եւ մեկնութեան. եւ պէտք չէ ձգտել սուրբ իրաց՝ այն է կրօնի վերաբերեալ իրաց վրայ ընդհանրապէս ճառող նրբէէ մատենից վրայ ”: Ուստի, առանց կարգաւորին հաւանութեան տպուած կամ տպել տրուած այն գրքերը կանոնիս տակ կ'իյնան, որոնց բովանդակութիւնը Ս. Գիրք է, ըլլայ հանդերձ կամ առանց մեկնութեան, ըլլայ ամբողջ կամ առանձինն ինչ մասն Ս. Գրոց:

2. Տպելն կամ տպել տալն “ առանց կարգաւորիկն հաւանութեան ըլլայ ”: Այս հաւանութիւնը

¹ Բաս. էջ 320, թ. 459:

² Տես էջ 71:

ծրի եւ շուտով պիտի տրուէ, որպէս զի տպողն կամ տպել տուողն ծախքը կամ ժամավաճառութիւնն իրբեւ պատճառանք ի մէջ չըբերէ:

Սահմանադրութեան նոր որոշմամբն եւ գրոց հրատարակման վրայ Եկեղեցւոյ դրած պատժոց սահմանաւորուելովն չուզուիր ընաւ ըսել, թէ ամէն գրքերն՝ որ Ս. Գրոց վրայ չեն ճառեր, կրնան այսուհետեւ առանց հաւանութեան կարգաւորին հրատարակուիլ: Կարգաւորին հաւանութիւնը խնդրելու նկատմամբ տրուած Եկեղեցւոյ հին օրէնքները ցարդ եւ ընդ միշտ այնպէս ի խղճի կը պարտաւորեն, ինչպէս յառաջագոյն, թէ եւ այս նկատմամբ տրուած բանադրանքն արտաքոյ կարգի սահմանաւորուած ըլլայ: Իսկ այս ընդ ծանու մեղօք՝ բայց առանց բանադրանաց (եթէ այս ալ թեմական օրինօք մը չէ տրուած) պարտաւորիչ պարտն ալ հաւանականաբար եւ ըստ սովորութեան միայն կրօնական իրաց վրայ ճառող գրքերու (Աստուածաբանութիւն, Եկեղեցական Պատմութիւն, Արարողական, եւ այլն) համար է, եւ ոչ՝ աշխարհական իրաց վրայ ճառող գրոց համար: Վասն զի, այժմու հրատարակութեանց յաճախութիւնը ծանրատաղտուկ կ'ըլլար Եպիսկոպոսին, եթէ աշխարհական գրքերն ալ քննելու ստիպուէր:

Մինչեւ ցարդ ի զօրութեան եղող եւ ոչ ումք վերապահեալ բանադրանքները տեսնելն ետեւ, որոնցմէ իրաւաբանութիւն ունեցող ամէն քահանայ կրնայ արձակել, յառաջ վարենք Սահմանադրութեան զատակնքաց շարքը:

Ե. Դ Ա Ս

ՔԱՆՈՆԱՅԵՊԵՏԻՆ ՎԵՐԲՊԱՀԵՆԸ ԿԱՆՈՆԻԿՈՒԹԻՒՆԻՔ
Ծայրագոյն Բահնանայապետին մերապա-
հնայ տուեալ մտոյ կախակայութիւնք:

Ա.

“Իրենց բարերարութեան վայելմունք-
քէն ցկամն Ս. Աթոռոյն նովին գործով կը
կախուին ժողովք կանոնիկոսաց, եկեղեց-
ցեաց եւ մենաստանաց, եւ այլ ամէնքն՝ որ
յիշեալ եկեղեցեաց եւ մենաստանաց վրայ ի
վարչութիւն եւ ի տեսչութիւն այն եկեղեց-
ցեաց կամ մենաստանաց ի նմին Ս. Աթոռոյ
նրով եւ է օրինակաւ յառաջագոյն կարգեալ
Եպիսկոպոսունքը կամ ուրիշ Առաջնորդները
կ'ընդունին յառաջ քան անոնց՝ իրենց յա-
ռաջձգութեան Առաքելական թուղթը ցու-
ցընելը”:

Կանոնս Քահանայապետին վերապահեալ կա-
խակայութեան տակ կը ձգէ կանոնիկոսաց եւ վանոր-
էից ժողովները եւ զամէնքն, որ Առաքելական հաւ-
անութեան կամ հաստատութեան թուղթը տակաւին
չեկած եւ պաշտօնական կերպով չցուցուած՝ Եպիսկո-
պոսներ կամ Առաջնորդներ իբրեւ իրենց օրինաւոր
Առաջնորդն ի վարչութիւն եւ ի տեսչութիւն եկեղեց-
ցեաց կամ վանաց կ'ընդունին: Ուստի, կախակայու-
թեանս մէջ էյնալու համար կը պահանջուի, որ յա-
ռաջ քան Առաքելական թղթոյն վաւերական ծանօ-
թութիւն Տ'ունենալը, Եպիսկոպոսն կամ Առաջնորդն
օրինաւոր Մեծ հանչոյք՝ եւ ի վարչութիւն խորհի:

¹ Վարանդէի, Երեւան, Պոնիփակ. Ը. 1, 1300: — Տես
էջ 25:

Երկու տեսակ յանցաւորներ կանոնիւս կը պատ-
ժուին: 1. “Շողովք կանոնիկոսաց, եկեղեցեաց եւ
մենաստանաց”: 2. “Ին այլ ամէնքն”, որ ժողովոյն
անդամ չեն: Այսպիսիք են ժառանգաւորք՝ որ հա-
սարակաց բարերարութենէն մուտք չունին, հապա ա-
ռանձնական միայն. անոր համար ասոնք իրենց անձնա-
կան բարերարութենէն կը զրկուին, եթէ վերայիշեալ
յանցանաց մասնակից ըլլան. ընդհակառակն որոնք որ
անմեղ են, չեն զրկուիր: Իսկ առաջինները միայն այն
բարերարութենէն կը զրկուին, զոր իբրեւ հասարակու-
թեան ունին. անոր համար ալ մէջերէն անմեղներն ալ
կը պատժուին: Ուստի, եթէ բայ ի բարերարութենէն,
զոր իբրեւ հասարակութիւն ունին, նաեւ ուրիշ անձ-
նական բարերարութիւններ ալ ունին, այս յանցան-
քով թէեւ առջիններէն կը զրկուին, բայց ոչ վերջին-
ներէն. ինչու որ ասով “են այլ ամէնքն” կ'ընտրուե-
րէն աւելի պատիժ մը կը կրէին, ուր որ կանոնս երկու
խումբն ալ հաւասարապէս առանց զանազանութեան
մը կը յիշէ: Իսկ եթէ վերայիշեալ անձինք՝ թէեւ ե-
կեղեցեաց կամ վանաց ժողովոյն անդամ ըլլան, բայց
հասարակաց բարերարութիւն մը չունենան, այն ատեն
ասոնցմէ միայն յանցաւորք կը պատժուին: Համառօտ
ըսելով՝ կանոնս կը պատժէ՝

1. Ամէն կանոնիկոսներն ու վանաց ժողովոյց ան-
դամներն, առանց բացառութեան, եթէ իրենց մուտ-
քը հասարակաց բարերարութենէ կ'ընդունին:
2. Կանոնիկոսաց կամ վանաց ժողովոյն միայն
յանցաւոր անդամներն, եթէ իրենց համար առանձ-
նական բարերարութիւն ունին:
3. Այլ ամէն ժառանգաւորներն՝ որ կանոնիկո-
սաց կամ վանաց ժողովոյց անդամ չեն, եթէ այս յան-
ցանքը կը գործեն:

Ասոնց համար տրուած պատիժն է “իրենց յա-
րերարութեանց մայրնունքին” կախակայեալ ըլլալ:
Կանոնիւս միայն բարերարութեան վայելէն, եւ ոչ թէ

¹ Հմմ. Փր. Հայեր, էջ 318—320:
² Բատ. էջ 312, Բ. 490: Ռիեդի, 201Է, Վէրբիոյ:

բարերարութեան վարչութեանն կը կախուին. վասն զի բարերարութեան մը վարիչ ըլլալ եւ անոր պտուղը վա-
յելել՝ երկու իրարմէ տարբեր իրեր են. եւ որովհետեւ
կանոնս վերջինը միայն կը յիշէ, մենք ալ իրաւունք
չունինք, մանաւանդ որ դժպէտաց վրայ է խնդիրն,
կանոնս առաջնոյն վրայ ալ ձգտելու¹: Իսկ բարերար-
ութեան վայելի կամ պտուղ ըսելով՝ կ'իմացուին այն
մուտքերն, որոնք ուղղակի բարերարութիւններէ յա-
ռաջ կու գան, եւ ոչ թէ անոնք՝ որ պաշտամանն յա-
ռաջ կու գան, որպիսի են՝ դաւազանապտուղք, աւ-
ուրջեայք, եւ այլն²:

Բ.

“Երեք տարի կարգ տալէն նովին ի-
րաւամբ կը կախուին՝ որոնք որ առանց
տիտղոսի քարերարութեան կամ հայրենի
ժառանգութեան մէկը կը ձեռնադրեն այ-
նու դաշամբ՝ որ ձեռնադրեալն իրենցմէ ա-
պրուստ չինողէ³,”

Սաննս երեք տարւոյ միջոցի մէջ կարգ տալէն
կը կախէ “ձեռնադրողները” . այսինքն՝ այն Եպիսկո-
պոսունքն՝ որ ձեռնադրութեան տիտղոս չունեցող մե-
կուն, թէեւ իրենց հպատակն ըլլայ կամ ոչ, Տէժ աստի-
ճաններ կու տան: Ըսինք՝ Տէժ աստիճան. վասն զի ըստ
Տրիգ. Ս. Ժողովոյ⁴, միայն մեծն ընդունելու համար
ձեռնադրութեան տիտղոս հարկաւոր է: Իսկ “կարգ”
ըսելով՝ կ'իմացուին եօթն աստիճանները, այս է՝ չորս
փոքր եւ երեք մեծ աստիճանները: Բայց ոչ՝ խուզումն
հերաց, որ եկեղեցական արարողութիւն մը միայն է եւ
պատրաստութիւն առ աստիճանս. եւ ոչ ալ՝ Եպիսկո-
պոսութիւն՝ որ սովորաբար կարգ, ձեռնադրութիւն (Or-

¹ Ռիէզի, Թ. 179:

² Ս. Լիզ. Գ. 130:

³ Վճիռք Գրիգ. Գ. Ե. Տիտ. Գ. վասն Սիմոն. ԳԼ. ԽԵ:

⁴ Գրիգ. Թ. 1235: — Տես էջ 25:

⁵ Նիստ ԻԱ.:

dinatio) շրուիր, այլ օծումն¹ (consecratio): Անոր
համար կարգ ընդունելէն կամ տալէն կախեալ մը
խուզումն հերաց կամ Եպիսկոպոսութիւն ընդունելէն
կամ տալէն կախեալ չէ²:

Արդ, կախակայութեանս մէջ ինչպէս համար՝
ըստ բանի կանոնիս կը պահանջուի, որ

1. Եպիսկոպոսն “առանց տիտղոսի քարերարու-
թեան կամ հայրենի ժառանգութեան” զմէկը ձեռ-
նադրէ: Վասն զի չէ օրէն Եպիսկոպոսաց օտարա-
կան կամ հպատակ մը առանց Գրիգորի Յեռնարո-
թեան ձեռնադրել, այսինքն՝ առանց ձեռնադրեալն ե-
կեղեցւոյ մը վերաբերելու, որմէ իւր ապրուստն դտնել
կարենայ, եւ չըլլայ թէ ի կարօտութենէ ստիպեալ ե-
կեղեցական վիճակի անվայել կերպով մ'իւր պարէնն
հայթայթել ջանայ:

Հին ժամանակներն ամէն ձեռնադրեալ՝ եկեղեց-
ւոյ մը կը վերաբերէր, թէեւ բոլորովին որոշ մուտք
մը չունէր. յրեթացս ժամանակաց եկեղեցեաց ստա-
ցուածներն ըստ պաշտամանց բաժնուեցան, այնպէս
որ իւրաքանչիւր ոք որոշ հաստատուն մուտք մը
(բարերարութիւն) ունէր, որ նոյն իսկ փոքր աստի-
ճաններու համար կը պահանջուէր, եւ այս է տիտ-
ղոսին

1. Տեսակը՝ Բարերարութիւն: Լատերանեան Գ.
Ժողովն այս բարերարութիւնը սահմանաւորեց սար-
կաւազութեան եւ քահանայութեան վրայ, որոնք
վրայ քիչ մ'եաքն աւելցաւ կիսատարկաւազութիւնն
ալ: Եւ որովհետեւ տիտղոսի էական է՝ որոշ եւ
հաստատուն մուտք մը, յիշանս Բառնիս Ժողովո-
րէնն իբրեւ 2. Տեսակ տիտղոս ճանչուեցաւ, զոր
Տրիգ. Ս. Ժողովը հաստատեց, սահմանաւորելով այն
դիպաց վրայ, երբ բաւական բարերարութիւն չկայ
եւ թեմի մը համար նոր կղերականաց ձեռնադրու-
թիւնը հարկաւոր կամ օգտակար է: Անոր վրայ
աւելցաւ իբր 3. Տեսակ տիտղոս՝ Առաքյական Ա-
թուէն յայտնապէս հաստատեալ Գրիգոր Գրիգորի-
րէնն, որ Տարած. Հաւ. Ս. Ժողովոյն հպատակ եր-
կիրներու համար միայն կ'արժէ: 4. Տեսակ տիտղոս

¹ Հմմ. Փր. Հայնէր, էջ 14:

² Տէ Անճէլիս, Գ. Ա. Տիտ. Թ. էջ 195:

³ Նիստ ԻԱ. ԳԼ. 2. վասն նորոգի:

է ԴԻՊԼՈՄ ԲՆՈՒԹԻ ՈՐ Է՝ ՈՐՈՂ, բաւական ապահով եւ ապրուստի բաւական մուտք մը՝ որ ձեռնադրելոյ մը կամ եկեղեցական ստացուածներէն եւ կամ աշխարհականաց ստացուածներէն հաստատուն եւ յետ չնահանջելի կերպով կը տրուի: 5. Տեսակ տիտղոս է՝ ԴԻՊԼՈՄ «ՆՂԵՐՈՒՄ»-ԻՆՈՒՆ, որ հանդիսական ուխտ ունեցող կարգի մը մէջ ուխտելոյ համար միայն կ'արժէ, այնպէս որ այնպիսի կարգի մ'անդամներն հանդիսական ուխտ չդրած՝ չեն կրնար ձեռնադրուիլ, բայց միայն՝ եթէ կարգն առանձինն արտօնութիւն մ'ունի, ինչպէս Յիսուսեանք: 6. Տեսակ տիտղոս է՝ ԴԻՊԼՈՄ «ԵՂՆԱՆՆՈՒՆ», կամ ըստ այժմու հանգամանաց՝ ԴԻՊԼՈՄ «ԵՂՆԱՆՆՈՅ ԷԼԵՄԵՆՏԻ», որ միայն Գերմանիա սովորութեամբ հաստատուած է: Ասոնցմէ մէկն ալ չունեցողը կրնայ 7. Տեսակ տիտղոսով ձեռնադրուիլ, որ կը կոչուի ԴԻՊԼՈՄ «ԿՆԵՐԱՆՆՈՅԻ», որ օրինակ որ է՝ ցոր-չափ կղերանոցը պահանջուած ստացուածքն ունի:

Ձեռնադրութեան համար այս տիտղոսներէն մէկը կը պահանջուի: Անոր համար դատակնքէս չաղատիր ով որ ձեռնադրութենէն ետքը բարեբարութիւն մը տալու դիտմամբ կը ձեռնադրէ. վասն զի ձեռնադրութեան ժամանակ տիտղոս մը չունի: Նոյնը կ'արժէ եթէ տիտղոսն ըստ ինքեան ոչինչ եւ անվաւեր կամ սուտ տիտղոս ըլլայ որ իրօք չկայ, ինչպէս՝ եթէ հայրենի ժառանգութիւնն անապահով ըլլայ: Իսկ եթէ Եպիսկոպոսն զմէկը՝ թէպէտ ապահով բայց ապրուստի բաւական չեղող կամ քիչ ատեն (3 տարի) տեւող տիտղոսով ձեռնադրէ, այն ատեն ազատ է կախակայութենէ: 1. վասն զի ձեռնադրութեան ապահով տիտղոս կայ, եւ արգարութիւնը՝ միայն պակասը լրացնելու կը ստիպէ զԵպիսկոպոսն, մինչեւ որ ձեռնադրեալն ուրիշ բաւական տիտղոս մը ստանայ: — Կախակայութեանս մէջ իյնալու համար չի բաւեր միայն ձեռնադրութեան տիտղոս մը չունենալը, այլ կը պահանջուի նաեւ

2. Միաբանութիւն մը, «դաշինք» մը, որով ձեռնադրեալը ձեռնադրողէն «սայրառատ շխնորհ» պիտի: Այն Եպիսկոպոսն՝ որ կղերական մը թէեւ

1 Հմմ. Կուրի-Պալլ. Բ. 999:
2 Վճիռ. Գ. 2. 4. 16. 23 — վասն ձեռնադր.:

առանց տիտղոսի մը կը ձեռնադրէ, բայց «սայրառատ շխնորհ» դաշինք մը հետք չի դնել, կախակայութեանս տակ չ'իյնար. բայց պարտական է տալ անոր կարեւոր ապրուստը, մինչեւ որ անիկայ կամ ինքն անձամբ ուրիշէ մը ձեռնադրութեան տիտղոս մը հայթայթէ անոր: Իսկ եթէ մէկն իրմէ ապրուստ չունեցողը դաշամբ՝ ձեռնադրութեան տիտղոս չունեցողը ձեռնադրէ, ըստ վճուոյ կանոնիս՝ երեք տարի կարգ տալէն կը կախուի, այնպէս որ երեք տարի չի կրնար, եթէ անկանոնական ըլլալ չ'ուզեր, սրեւէ նաեւ փոքր աստիճան տալ, ի բաց հանեալ զխուզումն հերաց, որ աստիճան չէ: 1: Այս կախակայութիւնն երեք տարունէ ինքնին կը դադրի. իսկ անկէ յառաջ՝ առանց քահանայապետէն արձակումն առնելու՝ չի բարձուիր: 2:

Գ.

«Տարի մը Կարգ տալէն նովին իրաւամբ կը կախուին որոնք որ ուրիշին հպատակը կը ձեռնադրեն, նաեւ անմիջապէս քարերարութիւն տալու պատճառանօք, կամ արդէն իսկ տուեալ, բայց ոչ քաւական քարերարութեան պատրուակաւ, առանց անոր Եպիսկոպոսին ընծայազրոյն, եւ կամ որոնք որ կը ձեռնադրեն իրենց սեպհական հպատակը՝ որ այլուր այնչափ ժամանակ ընակած ըլլայ, մինչեւ հոն կանոնական արգելք յանձն ձգել կարող եղած ըլլայ, առանց այն տեղոյն Կարգաւորին վկայազրոյն: 3:»

1 Պոնաշ. Վ. Գ. Մ. Բ. Թ. 8: Կախակայութեանս տակ անկեալ Եպիսկոպոսը թէեւ 3 տարի չի կրնար անձամբ ձեռնադրել, բայց կրնայ զօրութեամբ իրաւարանութեան իւրոյ ուրիշն ձեռնադրուելու իշխանութիւն տալ:

2 Հմմ. Բատ. 493 — Ռիեդի, 2011, Ֆորմիզ. եւ այլն:
3 Վճիռք Սիքստ. Գ. Ա. Տ. Թ. Գ. Գ. եւ այլն — Տե՛ս

Վանոնս մէկ տարի կարգ տալէն կը կախէ այն Եպիսկոպոսունքն՝ 1. Որոնք կը ձեռնադրեն իրենց հոգաբարձի մը, առանց անոր սեպհական Եպիսկոպոսին ընծայագրոյն, եւ կամ՝ 2. Որոնք կը ձեռնադրեն թէ-եւ իրենց հոգաբարձի, բայց առանց այն Եպիսկոպոսին վկայագրոյն, որուն թեմին մէջ ձեռնադրեալն այնչափ ատեն բնակած ըլլայ, մինչեւ ձեռնադրութեան արգելք մը յանձն ձգել կարող եղած ըլլայ: Կանոնիս սոյն երկու մասանց մեկնութեան չսկսած՝ կանոնիս մէջ յիշուած 1. Հոգաբարձի, 2. Ընթացիչի, 3. Կանոնական ուրբի, եւ 4. Վկայագրի բառերուն մեկնութիւնը տանք:

1. Մէկն Եպիսկոպոսի « հյաւառակ » կրնայ ըլլալ չորս կերպով:

ա. Ծննդէամբ, երբ մէկը ձեռնադրուիլ ուզած թեմին մէջ ծնած է, որ միանգամայն հօրը բնակատեղին է: Եթէ այսպիսի մէկն այն տեղն՝ ուր ըստ պատահման ծներ է, այնչափ ատեն բնակի, մինչեւ կանոնական արգելք կարող ըլլայ յանձն ձգել, չի կրնար հօրը բնակատեղոյն Եպիսկոպոսէն ձեռնադրուիլ առանց նոյն ծննդեան տեղոյն կարգաւորին վկայագրոյն: Իսկ եթէ հայրն՝ որդւոյն ըստ պատահման ծնած տեղն այնչափ ատեն եւ այն դիտմամբ բնակի, որ հօն իւր բնակութիւնը հաստատէ, ձեռնադրութեան նկատմամբ այս կարժէ, եւ ոչ՝ առաջին բնակատեղին: Բնական սպորինաւոր զաւակն այն Եպիսկոպոսին հպատակ է, որուն թեմին մէջ կը բնակէր մայրը զինք ծնած ժամանակ. իսկ եթէ մայրը բնակատեղի մը չունէր, այն ատեն որդին ալ մօրը ծննդեան տեղոյն Եպիսկոպոսին հպատակ է: Ընկեցիկն գտնուած եւ մկրտուած տեղոյն Եպիսկոպոսին հպատակ է, եթէ ծնողքն անձանօթ է: Նորագարձք մկրտուած թեմին կը վերաբերին¹:

բ. Բնակութեամբ: Եթէ մէկը թէեւ այլուր ծնած՝ բայց տեղ մը կամ 10 տարի արդէն բնակած է, եւ կամ՝ եթէ ստացուածոց մեծ մասը (չէնք, տուն եւ այլն), հօն կը գտնուի եւ ինքն ալ բաւական ատեն

¹ Սահմ. Պօղոս Գ. ի Յանկայութիւն § 3. 1542:

բնակած է, նոյն տեղոյն Եպիսկոպոսին հպատակ է: Բայց երկու դիպաց մէջ ալ պէտք է ձեռնադրելին հօն բնակելու կամք ու դիտում ունենալուն վրայ ապահովութեան համար երդնուլ: Այսպիսի մէկն եթէ եօթը տարուան ըլլալէն ետքը՝ հեռացած է ծննդեան քաղաքէն, կը պահանջուի նաեւ ծննդեան տեղոյն Եպիսկոպոսին վկայագիրը. վասն զի եօթը տարւնէ ետեւ՝ կրնար կանոնական արգելք մը յանձն ձգել:

գ. Բարերարութեամբ: Եթէ մէկն Եպիսկոպոսի մը թեմին մէջ սրեւէ բարերարութիւն մ'ընդունի, նոյնին հպատակը կ'ըլլայ: Բայց առ այս կը պահանջուի, որ 1. Ձեռնադրելին բարերարութիւնն արդէն իսկ խաղաղութեամբ ստացած ըլլայ: 2. Բարերարութիւնը բաւական ըլլայ ապրուստի: 3. Ձեռնադրելին ծննդեան եւ բնակութեան տեղոյն Եպիսկոպոսներուն վկայագիրը՝ բարերարութեան պատճառաւ ձեռնադրող Եպիսկոպոսին ձեռքը տայ, որ զայն՝ եւ տուած բարերարութեան մուտքը ձեռնադրութեան գրքին մէջ որոշակի նշանակէ¹:

դ. Ընթացիչութեամբ: Եթէ մէկն Եպիսկոպոսի մը երէք տարի տնակից եւ կենակից եղած է, եւ Եպիսկոպոսն իւր ապրուստը վճարեր է, եւ կամք ունի ձեռնադրութենէն դոնէ ամիս մ'ետքն ապրուստի բաւական բարերարութիւն մը տալ, այնպիսին այս տնակից Եպիսկոպոսին հպատակը կ'ըլլայ:

Եթէ մէկն այս չորսէն երկուքը կամ աւելին ի միասին ունի, կրնայ ըստ կամի ասոնցմէ մէկէն ձեռնադրուիլ կամ ինչ ինչ աստիճան մէկէն եւ ինչ ինչ մէկալէն ընդունիլ. միայն թէ այս փոփոխութիւնը նենգութեան համար չըլլայ²:

2. « Բնծայագիր », կամ յանձնարարական թուղթ (dimissoriales, litterae dimissoriae) ըսելով՝ կ'իմացուի այն թուղթն, որով սեպհական Եպիսկոպոսն իւր հպատակին իշխանութիւն կու տայ հոռոմեական Եկե-

¹ Տէ Ընձէլիս Էջ 204—:

² Ս. Ժ. Արար. 26 Յունուար 1732:

ղեցւոյ հետ միացեալ ուրիշ Եպիսկոպոսէ մը ձեռնադրուել կարենալու, այնու պայմանաւ՝ որ դարձեալ իւր հպատակը մնայ, եւ ոչ՝ ձեռնադրողին: Այս ընծայագիրը միայն սեպհական Եպիսկոպոսը կրնայ տալ. իսկ Ընդհանրական փոխանորդը միայն այն ատեն կրնայ տալ, երբ Եպիսկոպոսը թեմէն հեռու տեղ մ'երկայն ատեն կենայ¹: Եպիսկոպոսական աթոռոյ դատարկութեան առաջին օրուքնէ սկսեալ տարի մ'ամբողջ անցնելէն ետեւ՝ Կանոնիկոսաց ժողովոյն Գահերէցը կրնայ ընծայագիր տալ. իսկ մէկ տարին չլրացած՝ կրնայ միայն այն ատեն տալ, երբ հարին ստիպէ, ինչպէս եթէ մէկն արդէն տրուած կամ նոյն ատեն տրուելի բարերարութեան պատճառաւ ստիպուած է ձեռնադրուել²: Հանդիսական ուխտ ունեցող Կրօնաւորաց կրնան տալ իրենց Առաջնորդները³:

3. «Կանոնական արգելք» ունեցողներն՝ որոնց պատճառաւ չեն կրնար ձեռնադրուել, հետեւեալներն են՝

1. Անկուռն: 2. Ագօրինաւոր զաւակ: 3. Անչափահաս: 4. Անդրոջմ: 5. Կորագարձ: 6. Ամուսնացեալ: 7. Երկկին: 8. Յանցաւոր: 9. Վատանուռն: 10. Հասարակաց պաշտաման զբաղող: 11. Ծառայ: 12. Ներքինի: 13. Խեղ մարմնով: 14. Չգալն տձեւ: 15. Յիմար եւ կատաղի: 16. Գիււհար: 17. Չանպարհորդ եւ Անծանօթ: 18. Արեցող եւ Որկորուստ: 19. Ծանօթ վաշխառու: 20. Անկիրթ եւ Տգէտ: 21. Անկանոնական: 22. Կախեալ: Արգելեալ եւ Բանադրեալ: 23. Լուսնոտ: 24. Մտալաճառ: 25. Պանդոկապետ: 26. Միմոս: 27. Գուսան: 28. Անգթութիւններ ընող եւ հրամայող, պատժելէն կամ անդամատելէն ետեւ⁴:

4. «Վկայագիր» կը կոչուի այն թուղթն՝ զոր Եպիսկոպոս մը ձեռնադրողին կու տայ, որով կը վկայէ թէ ձեռնադրելին ունի կանոնական յատկութիւններ:

¹ Կ. 3. § Ի. Խոնարհ, առ 6:
² Ս. Ժ. Տրիդ. Նիստ Ի. Կ. 10. Վասն բարեկ.:
³ Հմմ. Հայնէր, էջ 326:
⁴ Հմմ. Մոնաչէլի, Գործնական օրինական կարգ. վասն մտակարար. Կարգի:

Այս՝ ծննդեան, հասակին, բարոյից, կարողութեանց, տիտղոսին, կանոնականութեան, եւ այլն, վճայ տարածուող վկայութիւնը ձեռնադրող Եպիսկոպոսին պիտի տրուի՝ 1. Թէ ծննդեան եւ թէ բնակութեան Եպիսկոպոսէն, եթէ ձեռնադրելին իբրեւ ընդհանրական հպատակ պիտի ձեռնադրուի: 2. Այս վկայագիրը թէ ծննդեան եւ թէ բնակութեան Եպիսկոպոսէն պիտի բերէ կղերական մը, որ իւր սեպհական Եպիսկոպոսէն Խուզումն հերաց կամ նաեւ ուրիշ աստիճան մ'ընդունելէն ետեւ՝ բարերարութիւն մը տուող Եպիսկոպոսէն իբրեւ Բարերարութեամբ հպատակ կ'ուզէ մնացեալ աստիճաններն ընդունիլ: 3. Ծննդեան Եպիսկոպոսին վկայագիրը պիտի տրուի բնակութեան Եպիսկոպոսէն իբրեւ Բնակութեամբ հպատակ ձեռնադրուելու համար, եթէ ծննդեան տեղն այնչափ բնակած է, որ կանոնական արգելք մը յանձն ձգել հնարաւոր ըլլայ: 4. Վկայագիրն ընծայագրոյ հետ միացեալ պիտի ըլլայ:

Այս չորս նախադիտելիքները դնելէն ետեւ՝ դիւրին է կանոնիս մատուցել ի միտ առնուլ:

Եպիսկոպոս մը միայն իւր հպատակները կրնայ ըստ օրինի ձեռնադրել. իսկ օտարականները միայն այն ատեն, երբ օտարականին սեպհական Եպիսկոպոսն իրեն իշխանութիւն կու տայ: Անոր համար, երբ հպատակութեան համար պահանջուած վերոյիշեալ չորս տիպակութեան համար պահանջուած վերոյիշեալ չորս տիպակութեան մէկն ալ չկայ, խտիւ՛ ընդ պատժով կախողանքէն անկողնէն ընծայագրոյն՝ աստիճան մը տալ հական Եպիսկոպոսին ընծայագրոյն՝ աստիճան մը տալ մէկուն, «կանոն անմիջապէս շարերարութիւն տալու պատճառաւ», կամ արդէն իսկ տուեալ խոյս ոչ չառնական շարերարութեան պատրաստակաւ»: Վասն զի ձեռնադրութեան անմիջապէս ետքը տրուելի բարերարութիւնը ձեռնադրութեան յառաջ տրուած չլրալով՝ հպատակութիւն մը չի ծնանիր: Նոյնպէս՝ արդէն իսկ տուեալ, բայց ոչ բնակութեան բարերարութիւնն ալ հպատակութեան տիտղոս չէ. ինչու որ ոչ բնակութեամբ Բարերարութիւնն ըսելով կ'իմացուի այն՝ որուն պատուին այնչափ քիչ է, որ նոյն թեմին սովորութեան

Համաձայն ձեռնադրութեան տիտղոս մը չի կրնար ստացուիլ: Նոյն իսկ այն ատեն՝ երբ այս ոչ բաւական բարերարութեան վրայ հայրենի ժառանգութիւնն ալ աւելցընելով՝ բաւական բարերարութիւն ըլլայ, բարերարութիւնը միշտ ոչ բաւական կը մնայ, եւ ըստ հետեւորդի ձեռնադրողը կը կախակայի. ինչու որ վրան աւելցած հայրենի ժառանգութիւնը հպատկութիւն յառաջ չի բերեր, որով ձեռնադրողն «արդե՛ն իսկ տոնեալ՝ յայց ոչ յառակաւ յարերարութեան ցատտոտակաւ» կը ձեռնադրէ: Ուստի, ոչ բաւական բարերարութիւնը թէեւ նախընթաց կախակայութենէ կ'ազատէ, բայց ոչ՝ ասկէ: Եթէ տուեալ բարերարութիւնը բաւական է ապրուստի, եւ ձեռնադրելին արդէն խաղաղութեամբ զայն կը ստանայ, այն ատեն սոյն բարերարութիւնը տուողն առանց կախակայութեանս մէջ իյնալու՝ կրնայ զինք ձեռնադրել, թէեւ ընծայագիր չունենայ. վասն զի այնպիսին՝ տուողին բարերարութեամբ հպատակ եղած է¹:

Ամէն Եպիսկոպոս իւր հպատակները, ցորչափ ուրիշ Եպիսկոպոսի մը հպատակութեան տիտղոս կամ ուրիշ արգելք մը չունին, առանց վկայագրի կամ ընծայագրոյ կարօտանալու կրնայ ձեռնադրել: Բայց երբ որ իւր հպատակներէն մէկը իւր թեմէն կը հեռանայ եւ կ'երթայ ուրիշ թեմի մէջ այնչափ ատեն կը բնակի, որչափ կանոնական արգելք մ'ունենալու համար կը պահանջուի, այնուհետեւ չի կրնար իւր սեպհական հպատակը ձեռնադրել առանց այն ուրիշ թեմին կարգաւորին վկայագիրն ունենալու. ապա թէ ոչ՝ ձեռնադրողն ձեռնադրութենէ կը կախուի, որ տարին անցնելէն ետքն ինքնին կը դադրի, իսկ տարւան մէջ՝ միայն Քահանայապետէն կրնայ արձակուիլ:

Մէկն, ընդհանրապէս խօսելով, կանոնական արգելք յանձն ձգել կարող կ'ըլլայ, եթէ եօթը տարւան հասակէն ետքը վեց ամիս օտար թեմի մէջ բնակի²: Բայց որովհետեւ նաեւ վեց ամէն քիչ ժամանակուան

¹ Կուրի-Պալ. Բ. 999, եւ այլն:
² Կուրի-Պալ. Բ. 999, եւ այլն:

մէջ ալ կրնայ մէկը կանոնական արգելք յանձն ձգել, անոր համար եօթը տարւանէ ետեւ վկայագիր միշտ հարկաւոր է:

Ընծայագրոյ եւ վկայագրի համար ըսածնիս պարզ ուխտ ունեցող Միաբանութեանց համար ալ իմանալու է. վասն զի ասոնք ալ առանց իրենց բնակատեղոյն Եպիսկոպոսին ընծայագրոյն կամ վկայագրոյն չեն կրնար ձեռնադրուիլ¹: Իսկ հանդիսական ուխտ ունեցողներն՝ որոնց կարգաւորն է բնակատեղոյն վանական Մեծաւորը, ծննդեան Եպիսկոպոսին ընծայական վանական Մեծաւորը, ծննդեան Եպիսկոպոսին ընծայագիրը բերելու պարտական չեն², հապա իրենց Առաջնորդացը³, բայց պարտական են թեմական Եպիսկոպոսէն ձեռնադրուիլ⁴:

Ի վերջոյ մտադրութեան արժանի է, Տրիդ. Ս. Ժողովէն այս նկատմամբ տրուած հետեւեալ կախակայութիւններն⁵, որ տակաւին ի զօրութեան են:

1. Իր կամ ուրիշին հպատակն ուրիշին թեմին մէջ առանց յայտնի հրամանի կարգաւորի տեղոյն ձեռնադրողներն յանրոջ ժամանակ կը կախակային⁶:
2. Տիտղոսական Եպիսկոպոսուք, եթէ մէկու մը խուզումն հերաց կամ աստիճան մը տան, տարի մ'Եպիսկոպոսական զարդուց գործածութենէն կը կախակային⁷:
3. Կանոնիկոսական Փոխանորդք, որոնք աթոռոյ դատարկութեան ժամանակ առանց հարկի մը տարւան մը միջոցին մէջ ընծայագիր կուտան, տարի մ'իրենց պաշտօնէն եւ բարերարութենէն կը կախակային:

Գ.

«Տարի մը կարգ տալէն նովին իրաւամբ կը կախուի ով որ՝ արտաքոյ ռիպաց օրինաւոր արտօնութեան, առանց բարերարութեան կամ հայրենի ժառանգութեան

¹ Ս. Ժ. Եպիսկ. եւ Կրօն. 6. Մայ. 1864:
² Ս. Ժ. Արար. 28 Փետր. 1754:
³ Բենեդ. Ժ. Գ. Սահմ. Եթէ: է վերջ Ժ. 7:
⁴ Նոյն, անդ:
⁵ Տես Ա. Յաւելուած:
⁶ Նիստ. 2. Գ. 5. Առան բարեկ.:
⁷ Ն. Ժ. Գ. 2:

տիտղոսի, Կղերականի մը՝ որ Միաբանութեան մը մէջ կ'ապրի, յորում հանդիսական ուխտ չի դրուիր, կամ նաեւ դեռ չուխտեալ կրօնաւորի մը սուրբ Կարգ կու տայ¹։

Պանոնս նաեւ փոքր աստիճան մը տալէն տարի մը կը կախակայէ այն Եպիսկոպոսն, որ կամ 1. Պարզ ուխտ ունեցող կրօնաւորի առանց ձեռնադրութեան տիտղոսի մը² Ս. Աստիճան կու տայ «արտաքոյ դիպաց օրինաւոր արտօնութեան», ինչպէս ունին Յիսուսեանք՝ որոնց հանդիսական ուխտէն յառաջ երեք տարի պարզ ուխտ դնող ուխտեալներն կրնան աղքատութեան տիտղոսիւ նոյն իսկ քահանայ ձեռնադրուիլ։ Եւ կամ 2. Հանդիսական ուխտ ունեցող Կարգերու մէջ երեք տարի պարզ ուխտ դնողներն առանց օրինաւոր տիտղոսի կը ձեռնադրէ։ Եթէ մէկն աղքատութեան կամ սեղանայ տիտղոսիւ Ս. Աստիճան մ'առնելէն ետեւ՝ Կարգէ կամ Միաբանութենէ օրինաւորապէս կ'ելլէ կամ կ'արձակուի, չի կրնար ընդունած աստիճանները դործածել «մինչեւ որ ապահով եւ բաւական հայրենի ժառանգութիւն մ'անձին հայթայթէ»³։

Ի վախճանի մտադիր ընենք, որ այս վերոյիշեալ երեք կանոնաց մէջ պատիժը միայն ձեռնադրողին վրայ է, եւ ոչ ձեռնադրելոյն⁴։

Ե.

«Կարգի գործածութենէն նուրիս իրաւամբ ի մշտնջենաւորս կը կախուին կրօնաւորք ի քաց արձակեալք՝ որ արտաքոյ վանաց կ'ապրին»⁵։

¹ Ի կոնդակաց՝ Թէթ. ար. 1567: Հոգևանք. Բ. հանդ. արդեթ. արգ. Պիոս Է. 1568: Տես էջ 27:
² Տես էջ 225:
³ Հոգևանք. Բ. հանդ. §. 4:
⁴ Բատ. Թ. 499: Ուիեթի, 20րդ:
⁵ Վճիռ Ս. Ժ. Սիւնհ. հրամանաւ Ուրբ. Ը. ի տուեալ 1624, եւ հրամանաւ Իննովկ. Ժ. Ի. Ի սահմանաւորեալ եւ նորոգեալ, 1694: — Տես էջ 27:

Պանոնս կախակայութեան տակ կը ձգէ այն կրօնաւորներն որոնք՝ Առաքելական Աթոռէն հաստատեալ Կարգէ մը մէջ ուխտ դրած են. ուստի եւ միայն հանդիսական ուխտ ունեցող կրօնաւորները, եւ ոչ թէ զանոնք, որ Միաբանութեան մը կամ կրօնական ընկերութեան մը մէջ կ'ապրին, կամ՝ որոնք թէեւ Կարգի մը մէջ կ'ապրին, բայց տակաւին հանդիսական ուխտ չեն դրած:

Այս կրօնաւորներն որպէս զի կախակայութեան տակ իննան, կը պահանջուի, որ

1. Վանքէն «ի բաց արձակեալ», արտաքսեալ ըլլան իրաւացի պատճառի մը համար, եւ պահելով օրէնսոր կերպը:

Այս նկատմամբ պէտք է իւրաքանչիւր վանաց Սահմանադրութեան մտադիր ըլլալ: Իսկ արտաքսուողն դեռ վանքէն չելած՝ կրնայ բողոքել առ Ս. Աթոռն, եթէ պատճառ մ'ունի: Ըսինք՝ Դեռ վանքէն չելած վանն զի ըստ Տրիդ. Ս. Ժողովոյ¹, եթէ բողոքելու ժամանակ արդէն արտաքոյ վանաց կ'ապրին, լսելի չեն ըլլար, եթէ յառաջուրէն առ այս արտօնութիւն չեն ընդունած²:

Ուստի, առաջին եական պահանջեալն է ի բաց արձակեալ ըլլալ: Անոր համար ալ ուստի արտաքսութիւն, որ իբրեւ զմի յաշխարհականաց կ'ապրին, ուրացեալէ կամ փախուցանելէ ազատ են կախակայութենէս, թէեւ «արտաքոյ վանաց», ապրին. վանն զի ի բաց արձակեալ չեն: Բայց փախտականներն Ուրբանոս Ը. ին³ տուած պատժէն չեն ազատիր, ըստ որում՝ այսպիսեաց դանուած տեղւոյն Եպիսկոպոսն զիրենք վանք դառնալու պիտի ստիպէ, եւ վանքին Առաջնորդներն ալ պիտի ջանան գտնել եւ կոչման մէջ հաստատել: Ասոնք փախուցտական ըլլալուն պէս՝ վանքին ամէն արտօնութիւնները կը կրնան ընեն⁴ եւ իւրաքանչիւր վանաց՝ այսպի-

¹ Ս. Ժ. Սիւնհ. 21 Սեպտ. 1624. § 6:
² Նիստ Ի. Գ. 12. Վանն Կրօնաւորաց:
³ Վճի. Սուրբ. Վանն դատակնքաց, Վ. Դ. Հատած 7:
⁴ Ս. Ժ. Տրիդ. Ն. Ի. Գ. 19. Վանն կրօն.:

սեաց վրայ դրած պատժոց տակ կ'իյնան, որ սովորաբար նովին գործով անկանելի բանադրանք է¹: — Կը պահանջուի՝

2. Որ արտաքսեալն “արտաքոյ վանաց ապրի” : Անոր համար Վանքէ հանուած կրօնաւոր մ'եթէ ուրիշ նաեւ թուլագոյն կարգ մը մտնէ, կախակայութեանս տակ չ'իյնար, եւ կամ եթէ վերստին իւր Վանքն ընդունուի, կախակայութիւնը վերստին կը դադարի²:

Ուստի, եթէ հանդիսական ուխտ ունեցող կրօնաւոր մ'ըստ օրինի Վանքէն մերժուի, ամէն՝ նաեւ փոքր աստիճանաց գործածութենէն կը կախուի, ցորչափ որ Վանքէ դուրս կ'ապրի. առանց զանազանութեան՝ թէ աստիճան մը Վանք չմտած թէ Վանքի մէջ, եւ կամ արտաքսուելէն ետքն ընդունած է³: Անոր համար, այսպիսեաց ուրիշ միջոց չի մնար, եթէ ոչ դարձեալ Վանք դառնալ, եթէ Վանքին Սահմանադրութիւնը կը ներէ, կամ ուրիշ Վանք մը մտնել, եւ կամ՝ Ս. Աթոռէն աշխարհական կղերց դասը մտնելու շնորհադիր ընդունիլ, որով առանց ուխտերէն ըստ էութեան արձակուելու, կրնայ զթած Եպիսկոպոս մը գտնել, որ զինք ընդունիլ հաճի⁴:

Չ.

“Ընդունած կարգէն նովին իրաւամբ կը կախուին որոնք որ այն կարգն յանուանէ քանադրեալ, կամ՝ կախակայեալ եւ կամ՝ արգելեալ ծանուցուած անձէ մը, եւ կամ՝ հրապարակական հերետիկոսէ կամ՝ հերձուածողէ ընդունիլ կը յանդգնին. իսկ ասոնցմէ մէկէն քարեմտութեամբ ձեռնադրեալն կը ծանուցանենք թէ մինչեւ որ

¹ Հմմ. Չորի, Թ. 168 — : Վէրբ. Ա. Թ. 644:
² Պոնաչ. Հ. Գ. Վ. 3. Խ. 8. Մ. 12. Թ. 2:
³ Կ. 6. Վասն ուրաց. :
⁴ Աւանց. ծան. 46:

տնօրինում՝ ընդունի՝ այս կերպով սուած կարգին գործածութենէն զրկուած է¹ :,,

Եկեղեցին միշտ արդի յիշեալ անձինքներէն Ս. կարգ մ'ընդունող անձանց վրայ խստագոյն պատիժներ դրած էր. սակայն սոյն պատիժներն այնչափ ուրոշ եւ ճշդիւ սահմանեալ չըլլալուն՝ աստուածաբանից մէջ անոնց տարածութեան եւ աստիւթեան վրայ կարծեաց տարբերութիւն կար, յայնմ միայն միաբանելով՝ որ յայնպիսեաց տրուած կարգն վաւեր է, եւ թէ պահելով զպահելին տրուած է: Սահմանադրութիւնս ըլլս ու պայծառութիւն ծագեց նաեւ այս խնդրոց կնճռեալ խաւարին մէջ: Վասն զի այսուհետեւ կախակայութեանս մէջ ինչալու համար յայտնապէս կը պահանջուի, որ

1. կարգն “յաւնոսանի քանադրեալ կամ՝ կախակայեալ եւ կամ՝ արգելեալ ծանուցուած անձէ մը, եւ կամ՝ հրապարակական հերետիկոսէ կամ՝ հերձուածողէ” ընդունի: Թէ որմըք են՝ յանուանէ բանադրեալք, կախակայեալք եւ այլն, վերք² տեսանք, ինչպէս նաեւ հրապարակական հերետիկոսը կամ հերձուածողը³: Այս առաջին պայմանէն յայտնի կ'երեւայ՝ որ եթէ մէկը ձեռնադրուի կարգընկէց, սիմոնական Եպիսկոպոսէ մը, կամ այնպիսի Եպիսկոպոսէ՝ որ բանադրեալ եւ այլն ըլլայ, բայց ոչ յանուանէ, այսուհետեւ ազատ է կախակայութեանս տակ կ'իյնային, կանոնիս մէջ չեն առնուած, մեք ալ իրաւունք չունինք դատակնիքն ըստ բովանդակութեանը ձգտելու. մանաւանդ որ Սահմանադրութեանս վախճանն է դատակնիքները սահմանաւորել⁴: Բայց իբրովհետեւ այսպիսի կարգընկէց, սիմոնական, բանադրեալ եւ այլն

¹ Վճռ. կրտսիանոսի, Գլ. 1. 2. 3. Պ. 9. Խ. 1. Վճիռ. Գրիգ. Գ. Ե. Տ. Ը. Գ. 1. 2. Վասն հերձուած. Ժ. Լաս 1102: — Տես էջ 27:
² Տես էջ՝ 183:
³ Տես էջ՝ 52, 77:
⁴ Ռիէդի, Թ. 196: Բատ. էջ 355. Թ. 508:

Եպիսկոպոսներէն ձեռնադրուողներուն վրայ Սահմանադրութենէս յառաջ գրուած կախակայութիւնը նաեւ անադարձութիւն (inhabilitas) մը յինքեան կը բովանդակէր, «ինչու որ այսպիսի բանագրեալ, եւ այլն Եպիսկոպոս մը կարգի գործածութենէ զուրկ է, այնպէս որ չի կրնար օրինաւորապէս Եպիսկոպոսական պաշտօն կատարել, ուստի ով որ ասոնցմէ կարգ կ'ընդունի, գործածութիւնը չ'ընդունիր, վասն զի ոչ ոք կրնայ չունեցածն ուրիշին տալ¹» անոր համար յայտնի է թէ՛ այսպիսի կարգընկէց, բանագրեալ, եւ այլն, Եպիսկոպոսներէ թէ՛ յանցանօք եւ թէ՛ տգիտութեամբ եւ առանց կամաց ձեռնադրուողն անադարձութիւն մ'ունի. այնպէս որ ընդունած աստիճանը չի կրնար գործածել, եւ եթէ ընդդէմ գործէ, թէեւ անկանոնական չ'ըլլար, բայց ծանր կը մեղանչէ: — Կը պահանջուի՝

2. Որ ընդունած կարգն (առանց զանազանութեան փոքր կամ մեծ աստիճանի), ըստ ամենայնի վաւեր ըլլայ. վասն զի ոչ ոք չունեցած կարգէն կրնայ կախակայիլ: Անոր համար անգղիական Եպիսկոպոսներէն ձեռնադրուողներն կախակայութեան տակ չեն իյնար. վասն զի ասոնք իրօք Եպիսկոպոս չեն²: — Կը պահանջուի՝

3. Որ մէկը վերոյիշեալ անձինքներէն կարգ մ'ընդունիլ «յսնդանի» այսինքն՝ գիտնալով անոնց այնպիսի ըլլալն եւ անոնցմէ ձեռնադրելոց վրայ գրուած պատիժը, անոնցմէ ազատ կ'սօսէ կարգ մ'ընդունի: Ուստի, կ'արդարացընէ կախակայութեան նախընթաց նոյն իսկ պարզ երկբայութիւնն, զոր բառնալու անհոգութեամբ չ'անացուեցաւ. միայն թէ այս անհոգութիւնը թոյլ, թանձր եւ վեհերոտ եւ կամ կամակար թիւնը թոյլ, թանձր ու վեհերոտ եւ կամ կամազուրկութիւնը թոյլ, թանձր ու վեհերոտ եւ կամ կամակար է, ուստի գիտեալ տգիտութիւն մը, այն ատեն բնականապէս բարեմտութիւն մը բնաւ եւ ոչ կերպով՝

¹ Պոնաչ. վ. Գ. Խ. 1. Մ. Ժ. Թ. 1 — :
² Չոլլէ էջ 163. Թ. 170. Ընդ այլ մեկնիչս:

մը կրնայ ընդունուիլ, հապա արդէն իսկ յանդգնիլ է: Այսպէս նաեւ «ասնցմէ մեկէն յարեմտութեամբ ձեռնադրուողն» ալ կախակայութեան տակ չ'իյնար, հապա «այսպիս ընդունած կարգին գործածութիւնը չունի», ուստի անատակութիւն յանձն կը ձգէ, որով ընդունած կարգը չի կրնար առանց մեղանչելու ի գործ դնել. վասն զի կանոնիս մէջ կ'ըսուի «յինչն որ սնօրիմով ընդունի», արդ գատակնքէ մը՝ հոս կախակայութեան մ'երբեք չի արժեանիլ, այլ կ'արժանանի¹: Այս տնօրինումը կրնայ տալ ձեռնադրելոյն օրինաւոր Եպիսկոպոսը²:

Ուստի, եթէ այս երեք պայմանները կան, ձեռնադրեալն կախակայութեան տակ կ'իյնայ, որմէ քահանայապետը միայն կրնայ արձակել:

Ի.

«Չորս ամսէ աւելի Հռոմ ընակող աշխարհիկ օտարական Կղերիկոսներն, որ իրենց սեպհական կարգաւորէն զատ մէկէ մը՝ առանց հրամանի Հռոմայ Փոխան-կարդինալին, կամ՝ առանց յառաջագոյն նոյն կարդինալին առջեւ քննութիւն ընելու ձեռնադրութիւն ընդունած են, կամ՝ նաեւ յիշեալ քննութեան մէջ մերժուելէն ետեւ իրենց սեպհական կարգաւորէն ձեռնադրուած են. նոյնպէս Հռոմայ վեց արուարձանեայ Եպիսկոպոսութիւններէն մէկուն վերաբերող Կղերիկոսներն եթէ արտաքոյ իրենց թեմին ձեռնադրուին, իրենց կարգաւորին ընծայագիրն Հռոմայ Փոխան-կարդինալին զատ մէկու մ'ողողեալ ըլլալով. եւ կամ՝ եթէ

¹ Բատ. էջ 354. Թ. 506:
² Գրիգ. Թ. Գ. 2. 2^ա էջ 164. Թ. 170 Ընդ Բ.՝ Ռիէրի, Թ. 196. եւ այլն:

սուրբ Կարգ ընդունելն յառաջ՝ Առաքելութեան Քահանայք անուանելոց տան մէջ ի Հոռոմ տասն օր հոգեւոր կրթութիւն չըրած ձեռնադրուին, այս կերպով ընդունած Կարգերէն ցկամն Ս. Աթոռոյն, իսկ ձեռնադրող Եպիսկոպոսունքն՝ տարի մը ի գործածութեանէ Հայրապետականաց նովին իրաւամբ կը կախուին¹։,

Պանոնս երկու խումբ ձեռնադրելեաց յինքեան կը բովանդակէ։ Ա. խումբը կը կազմեն անոնք՝ որ Հռոմաց արուարձանեաց եպիսկոպոսութեանց հպատակ չեն. իսկ Բ. խումբն անոնք՝ որ վերոյիշելոց հպատակ են։

1.

Այն ամէնքն՝ որ ոչ Հռոմայ թեմին ոչ ալ անոր վեց արուարձանեաց թեմերուն կը վերաբերին, ուստի եւ « օտարակառն » են, եթէ Հռոմ բնակին կամ գէթ չորս ամիս Հռոմ կենան, չեն կրնան աստիճան մ'առնուլ առանց հրամանի Հռոմայ Փոխան-Վարդինալին, կամ՝ առանց նոյն Վարդինալին առջեւ քննութիւն ընելու չեն կրնար արտաքոյ Հռոմայ բնակող Եպիսկոպոսէ մը ձեռնադրուիլ. նոյն իսկ եթէ սեպհական Եպիսկոպոսէն ընծայագիր ալ ունենան։ Առանց այս Եպիսկոպոսէն ընծայակցոյ սեպհական Եպիսկոպոսէն պահանջելոց՝ միայն իրենց սեպհական Եպիսկոպոսէն կրնան ձեռնադրուիլ. բայց այս ալ արգելուած է, եթէ ձեռնադրելին վերոյիշեալ քննութեան մէջ ի բաց մերժուած է։ Եթէ մէկն այս կարգադրութեան հակառակ գործէ, նովին գործով կ'իյնայ կախակայութեանս մէջ, ձեռնադրող Եպիսկոպոսն ալ եպիսկոպոսական զարուց գործածութենէն տարի մ'ամբողջ կը կախուի։

¹ Եպիսկոպոսական գարդը « կ'ըսուին » որոնք որ եպիսկոպոսական իշխանութեան նշանակ են, ինչպէս թագ, դաւազան, եմփորոն եւ կոնքեռ։ Ուստի, կա-

¹ Վճիռք՝ Կղեմայ ը. ի 1608, Աղէբս. Է. 1664, եւ Բեներ. Ժ. 1743: — Տես էջ 27:

կախայութեան տակ ինկած Եպիսկոպոս մը՝ եպիսկոպոսական զարդուք կատարուած գործերէն ետ պիտի կենայ. ուստի եւ չի կրնար՝ Գրոշմ եւ Ս. Վարդ տալ, եկեղեցի, բաժակ, եւ այլն օձել, հայրապետական պատարագ մատուցանել։ Բայց կրնայ թիւ պատարագ մատուցանել իբրեւ քահանայ, խոտովանութիւն իւրել, միտել, առանձինն խուզումն հերաց տալ, Իրաւաբանական գործեր գործել, եւ այլն. վասն զի անոնք եպիսկոպոսական զարդեր չեն պահանջեր։

Այս կախակայութենէս ազատ են՝ 1. Հռոմ բնակող կրօնաւորք. վասն զի կանոնս՝ «աշխարհիկ» կղեկիօք կ'ընէ։ 2. Աշխարհականք՝ որ առանց այս պահանջելոց խուզումն հերաց կ'ընդունին. վասն զի կանոնս « Կարգի » վրայ կը խօսի։ 3. Անոնք՝ որ թէեւ Հռոմ չորս ամիս կեցած են եւ նոյն իսկ հոն քննութեան մէջ ի բաց մերժուած են, բայց կը մեկնին ի Հռոմայ դիտմամբ՝ այլ եւս հոն չընակելու, առանց այս վերոյիշեալ պահանջելոց որեւէ Եպիսկոպոսէ կը ձեռնադրուին. միայն թէ Հռոմայ Փոխան-Վարդինալին վկայագիրն եւ սեպհական Եպիսկոպոսին ընծայագիրն ըլլայ։ 4. Անոնք՝ որ Հռոմայ մէջ իրենց սեպհական Եպիսկոպոսէն, որուն տիրապետով մը հպատակ են, քննութենէ ետեւ Ս. Վարդ կ'ընդունին, թէեւ Հռոմայ Փոխան-Վարդինալին կամ անոր չըլլան. միայն թէ Փոխան-Վարդինալին կամ անոր Տեղապահին առջեւ քննութիւն ընելով ի բաց մերժուած չըլլան։

2.

Պանոնիս երկրորդ մասին մէջ կը բովանդակուին Հռոմայ վեց արուարձանեաց եպիսկոպոսութեանց վերաբերող անձինք։ Անոնք եթէ չեն ուղեր իրենց սեպհական Եպիսկոպոսէն ձեռնադրուիլ, միայն Հռոմայ ներս ընդունելէն յառաջ, Հռոմ՝ Մոնթե Զիթօրիոյ (Monte-Citorio) եղող Առաքելութեան Քահանայի (Ղազարիտ) տունը, 10 օր հոգեւոր կրթութիւն պիտի ընեն։ Ապա թէ այլապէ գործեն, կ'իյնան կախակայութեանս տակ. ձեռնադրող Եպիսկոպոսն ալ կախու-

1 Պոնաչ. Վ. Գ. Մ. Բ. Թ. 3:
 2 Տես էջ 225:
 3 Ռիէդի, էջ 116. Թ. 198: 2րդ. Թ. 172: Ֆորմիզ. էջ 112: Բատ. էջ 356. Թ. 509:

պոսական զարդուց գործածութենէն մէկ տարի կը կախակայի:

Բայ ի Քահանայապետին վերապահեալ տուեալ վճռոյ կախակայութեան այս 7 կանոններէն, կան Տրեդ-Ս. Ժողովէն տրուած ուրիշ 7 կախակայութիւնք ալ, որոնք տակաւին ի զօրութեան են, որոնց վրայ Պիոս Թ. 1873ին Հռոմէական Քահանայապետն Սահմանադրութեամբ հաս յ'ալ աւելցուց, որով եղաւ ԺԵ. կանոն, զորոնք կը գտնես Ա. Յաւելուածին մէջ:

Զ. Դ Ա Ս

ՎԵՐԱՊԱՀՆԵԱԼ ԱՐԳԵՆՄԱՆՔ

Վերապահեալ արգելմանք տուեալ յճոյ:

Ա.

«Հոռմայ Քահանայապետին առանձինն կերպով վերապահեալ արգելման մէջ նովին իրաւամբ կ'իյնան Համալսարանք, Վարժարանք եւ Ժողովք կանոնիկոսաց, ինչ անուն ալ ունենան, որոնք ժամանակին Հոռմայ Քահանայապետին կարգադրութիւններէն կամ հրամաններէն յապազայ տիեզերական ժողով կը ըողորեն¹»:

Այս արգելումն հասարակութեանց վրայ իբրեւ նոյնպիսեաց վրայ գրուած է. իսկ առանձնական անձինք՝ որ այս բողոքման յանցանաց յանցաւոր կը գտնուին, Քահանայապետին առանձինն կերպով վերապահեալ բանադրանաց (Գ. կանոնի) մէջ կ'իյնան: Բայց որովհետեւ հասարակութիւնն ալ առանձնական անձինքներէ կազմուած է, բնականապէս նաեւ անձնական ալ է, եւ կը փակէ յինքեան հասարակութեան ամէն անձինքն ի միասին եւ իւրաքանչիւրն առանձինն, ըլլան կղերական, ըլլան աշխարհական, բաւական որ անդամ ըլլան հասարակութեանս, առանց զանազանութեան՝ թէ իրենք եղան պատճառ այլոց արգելմանս տակ իյնալուն, թէ իրենք բողոքովին անմեղ են: Եւ նոյն իսկ անոնք ալ արգելմանս մէջ կ'իյնան, որոնք հասարակութեան արդէն արգելման տակ եղած ատեն՝ նոյնին անդամ կ'ըլլան. վասն զի միշտ արգելման տակ եւ զոչ հասարակութեան մը² մասն են: Բայց յանցաւոր

¹ Ի կոնդ. Ընթերց. 2: — Տես էջ 29:

² Կ. 10, 16, 17, անդ:

եւ անմեղ անդամոց մէջ այս տարբերութիւնը կայ, որ յանցաւորին համար դատարանին անկանոնական կ'ընէ. իսկ անմեղին համար զբոլոր մըն է միայն, զոր բռնաբարելն թէեւ մեղք է, բայց անկանոնական չ'ըներ¹:

Ի բաց կ'առնուին արգելմանէս՝ 1. Տղաք, ցորչափ որ բանավարութեան չեն հասած, եւ յիմարք. այսինքն՝ այն ամէնքն, որ ի միտս չեն: Բայց ասոնք ալ եկեղեցական թաղում չեն կրնար ընդունիլ²: 2. Եպիսկոպոսուներ, եթէ վերոյիշեալ հասարակութեանց անդամ են. վասն զի յայտնապէս կանոնիս կամ Ընթրեաց կոնդակին մէջ չեն յիշուիր: 3. Անոնք՝ որ թէեւ եւ այս հասարակութեանց անդամ չեն, բայց բողոքման օգնութիւն, խորհուրդ կամ պաշտպանութիւն կը մատուցանեն. վասն զի ասոնք թէեւ Ընթրեաց կոնդակին մէջ կը գտնուին, բայց կանոնիս մէջ ի բաց ձգուած են: Բայց ասոնք Քահանայապետին առանձինն կերպով վերապահեալ բանադրանաց տակ կ'իյնան, ինչպէս վերն ըսինք³:

Իսկ թէ՛ հասարակութիւնն ալ բաց յարգելմանէս նսեւ առանձինն կերպով վերապահեալ բանադրանաց Գ. կանոնին տակ կ'իյնայ, ինչդիր է: Մենք «դժպէ՛նք ամփոփեցին» սկզբան հետեւելով՝ մեղմագոյն կարծեաց ետեւէն կ'երթանք: Վասն զի մէկը միեւնոյն յանցանաց համար շատ պատժոց տակ միանգամայն չի կրնար իյնալ⁴, եթէ հաստատուն չէ՝ թէ միեւնոյն յանցանաց համար շատ պատիժ դրուած է. ուստի հասարակութեան իւրաքանչիւր անդամք եթէ կանոնիս մէջ յիշեալ բողոքման յանցաւոր կ'ըլլան, միայն արգելման տակ կ'իյնան⁵:

Բ.

«Որոնք որ Կարգաւորէն կամ յանձնարարական Դատաւորէ եւ կամ յիրաւանց արգելեալ տեղերը զիտութեամբ աստուածային

¹ Ռիեդի, էջ 121, թ. 204: 2ՊԸ. թ. 175. Ընդ Գ.:
² Սուար. 36. 2. 9:
³ Տես էջ 82:
⁴ ԳԼ. 4. § վերջ. Վասն դատաւոր. Օ. Ծերակոյտն. 14. Վ. Վասն ամբաստ.:
⁵ Ռիեդի, թ. 204:

պաշտամունք կը կատարեն կամ կատարել կու տան. կամ յանուանէ բանադրեալներն յաստուածային պաշտամունս, կամ յեկեղեցական Խորհուրդս, կամ յեկեղեցական թաղումս կ'ընդունին, նովին իրաւամբ կ'իյնան ընդ արգելմամբ մտանելոյ յեկեղեցի, մինչեւ որ՝ ըստ կամաց այնը որուն վճիռն արձամարճեցին, ըստ պատշաճի հատուցումս ընեն¹»,

Այս կանոն² եկեղեցական արգելումն ու բանադրանաց խստութիւնը պաշտպանելու համար՝ ինչ ինչ փոփոխութեամբ հնոյն, դրուած է. եւ այն՝ միայն ինչ փոփոխութեամբ չ'ըլլայ, ըլլան աշխարհիկ ըլլան վանական կ'ըլլան, նսեւ առանց զանազանութեան՝ թէ վանականներն ազատ են կամ Եպիսկոպոսին իրաւաբանութեան տակ³: Այս արգելումը վերապահեալ է անոր, որուն վճիռն մէկն արհամարհեց արգելումը շպահելով. այնպէս որ, եթէ Եպիսկոպոսն եկեղեցի մ'արգելման տակ ձգած է, ինքը միայն կրնայ արձակել այն քահանան, որ հոն անհրաման պատարագ մատուցանելով՝ կանոնիս արգելման տակն ինկած է. կամ՝ ինչպէս կանոնիս կ'ըսէ, ինքը միայն յանցանաց համար վրան հանոն կ'ըսէ, ինքը միայն յանցանաց համար վրան հատուցում կը դնէ, զոր հատուցանելով՝ դատաւորին ինքտուցում կը դնէ, զոր հատուցանելով զատաւորին պաշտամունս յանուանէ բանադրեալն յաստուածային պաշտամունս ընդունելով Քահանայապետին վերապահեալ բանադրանաց տակ կ'իյնան⁴, ասոր մէջ ալ չեն իյնար. վասն պատիժները միեւնոյն յանցանաց համար չեն կրնար աճեցուիլ, եթէ յայտնապէս հաստատուն չէ՝ որ միեւնոյն յանցանաց վրայ շատ պատիժ դրուած է: Այս-

¹ Վճիռք Սեբաս. Գ. Ե. Տ. Ե. ԳԼ. Ը. Եպիսկ. — Տես էջ 29:
² 2ժմ. Ռիեդի, թ. 206—209: Բաս. թ. 537 — 2ՊԸ. թ. 177: Վէթբ. Ա. էջ 408:
³ Ռիեդի, թ. 206:
⁴ Տես էջ 185:

չափս իբրեւ նախագիտելիք դնելէն ետեւ, տեսնենք յանցաւորներն՝ որ արգելմանս տակ կը ձգուին:

Կանոնիս մէջ երեք տեսակ յանցաւորներ եկեղեցի մտնելէն կ'արգելուին:

1.

“Որոնք որ արգելեալ տեղերը գիտութեամբ աստուածային պաշտամունք կը կատարեն”։ “Աստուածային պաշտամունք” է այն ամենայն՝ որ իբրեւ նոյնպիսի, միայն կղերականներէ կրնայ կատարուիլ. ինչպէս՝ պատարագ մատուցանել, հանդիսական ժամասացութիւն, եւ այլն¹։ Ուստի, ընդ արգելմամբս խստիւ կ'արգելուի կղերականաց՝ օրինաւորապէս եկեղեցական արգելման տակ եղած տեղեր որեւէ աստուածային պաշտամունք չկատարել։ Բայց յաջորդ գիպաց մէջ արգելում չկայ։

1. Եթէ արգելումը մասնական է, կարելի է շահաթն անգամ մը պատարագ մատուցանել նշխարք սրբագործելու համար, որպէս զի հիւանդաց թողակ կարենայ արուիլ⁵։

2. Կրնան եւ պարտական են վանական կղերականք, եթէ իրենք ալ արգելման տակ չեն, յառաջուան պէս պատարագ եւ ժամ ըսել, բայց դրօք փակելովք, առանց զանգակ հընչեցընելու (բաց ի քարոյն, Հրեշտակ Տեառնի եւ մահուան զանգաւէն,) մեղմ ձայնիւ, այնպէս որ զբոսիները չմանան, եւ ամէն արգելեալներն ի բաց մերժելով։ Բայց օրէն է նաեւ մեծ աստուած (Ծնունդ, Չատիկ, Պենտեկոստէ, Վերափոխումն, ութօրեք Տօնի Կարմնոյ եւ Արեան) ժամ եւ պատարագ հանդիսութեամբ կատարել, նաեւ թող տալով՝ որ արգելեալներն ալ գան, միայն թէ ասոնց մէջէն յանցաւորք խորանին շատ չմտնան եւ պատարագ մատուցանելու կամ Ս. Հաղորդութեան թող չտրուին։

Այս յանցաւորաց առաջին տեսակներն որպէս զի արգելմանս մէջ իյնան, կը պահանջուի, որ

1. “Գիտութեամբ” այս յանցանքը գործեն։

¹ Ս. Լ. Կ. Է. 333։ Տես ասոր վրայ էլ 186։
² Կ. 57. Բ. 1։

Ուստի, արգելմանէ կ'ազատէ Ձանը երկիւղն, ամէն տեսակ տգիտութիւն՝ թանձր ու վեհերօտը, եւ թերեւս կամակարն ալ։

2. Աստուածային պաշտամունքը “կարգաւորեմ կամ յանձնարարական Դաստարոյն եւ կամ յիրաւանց արգելեալ տեղերը” կատարուին։ Յերանոց արգելեալ տեղերն անոնք են միայն, որոնք եկեղեցական իշխանութենէ իբրեւ նոյնպիսի հրատարակեալ են. ուստի արգելումն այսպէս չբարարուած տեղ մ'աստուածային պաշտօն կատարողն արգելմանս տակ չ'իյնար։ Իսկ տեղական արգելման ընդհանուր կամ մասնակի ըլլալուն մէջ զանազանութիւն չ'ըլլուի¹։

2.

Չէ թէ միայն այսպիսի արգելեալ տեղերն աստուածային պաշտամունք կատարողներն արգելմանս տակ կ'իյնան, այլ նաեւ “կատարել տողներն”։ Այսպիսի են, որոնք որ արգելեալ տեղեր պաշտամունք կատարելու իշխանութիւն կու տան կամ չեն արգելուր, երբ պարտական էին ի պարտուց։ Իսկ այս դէպքիս մէջ իշխանութիւն տուող կամ չտրողը կրնայ ըլլալ եկեղեցւոյ ժողովրդապետը կամ Մեծաւորը²։ Անոր համար նոյն եկեղեցւոյն ուրիշ ամէն կղերականները՝ կատարել տուող չեն, եթէ արդի յիշեալ պաշտօններէն մէկը չունին, կամ՝ եթէ իբրեւ զմի յաշխարհականաց պաշտաման ներկայ կը գտնուին։ Այս երկրորդ տեսակին համար ալ՝ առջիններուն համար պահանջուած պայմանները կը պահանջուին։

3.

Արգելմանս տակ կ'իյնան նաեւ “որոնք որ յանձնարարական իշխանութեան յարկերու կամ յեկեղեցական խորհուրդս կամ յեկեղեցական թաղաւմ կ'ընդդռնեն”։ “Բաւական յանձնարեալ”

¹ Ուիլի, Թ. 207. եւ այլն։
² Փորձիզ. էլ 114, եւ այլն։

ըսելով՝ Հոս կ'իմացուին անոնք, որ Եպիսկոպոսէն կամ յանձնարարական Դատարարէն յականէ յանուանէ՜ բանադրուած են, եւ ասով ալ կը տարբերին Քահանայապետին վերապահեալ բանադրանաց ժե. կանոնին մէջ յիշուածներէն: Հոս Քահանայապետէն, իսկ Հոս Եպիսկոպոսէն կամ յանձնարարական Դատարարէն յանուանէ բանադրելոց հետ հաղորդութիւնները կը պատժուին: Իսկ աստուածային պաշտամունք² եւ եկեղեցական թաղում³ բառերուն իմաստը մեկնելու վերագոյնն արգէն առիթ ունեցանք:

Ուստի, այս երէք տեսակ յանցաւորներն եկեղեցի մոռնելու իրաւունքն կը զրկուին: «Եկեղեցի» ըսելով՝ կ'իմացուի Եպիսկոպոսէն աստուածային պաշտամանոց որոշուած ամէն հրապարակական տեղերն, թէեւ օծուած կամ օրհնուած ըլլան, կամ ոչ: Այսպիսի են նաեւ՝ կողմնական մատրուներ, աւանդատուն, եւայլն: Իսկ գերեզմանատունն Հոս եկեղեցւոյ մասը չի համարուիր, թէեւ վերոյիշեալք չկարենան Հոս թաղուիլ⁴: Այս յանցաւորք եւ ոչ իսկ եկեղեցւոյն առջեւ կրնան կենալ աստուածային պաշտամանոց ժամանակ:

Իսկ եկեղեցի մոռնելը կերպովէս պիտի առնուի, եւ ոչ նիւթապէս⁵: Ուստի, ով որ իբրեւ անցք մը եկեղեցին կը մտնէ, կամ Հոս վեճարանութեան մասնակից ըլլալու համար, կամ նոյնպիսի վախճաններու համար, այնպիսին արգելմանս տակ չ'իյնար: Միայն արգելեալ է այնպիսւոյ մը՝ նոյն տեղն զործածել իբրեւ նուիրական տեղ, եւ իբրեւ այնպիսի՝ աստուածային պաշտամանոց որոշեալ: Ուստի, արգելեալ քահանայ մը չի կրնար Հոս պատարագ ընել կամ լսել, խորհուրդ մը մատակարարել կամ ընդունիլ, եւայլն, ապա թէ ոչ՝ անկանոնական կ'ըլլայ: Բայց հաւանականաբար կրնայ արտաքոյ աստուածային պաշտամանոց ժամանակի՝ եկեղեցւոյ մէջ իրեն համար առանձնապէս

¹ Տես էջ 183:
² Տես էջ 186:
³ Տես էջ 200:
⁴ Փր. Հայնէր, էջ 367:
⁵ Քլար. էջ 220:

ազնիւնք ընել. վասն զի չի կրնար բառիլ՝ որ աստուածային պաշտամունք կը կատարէ կամ ներկայ կը գրանուի¹. նոյնպէս կրնայ Խորհրդ լսել. վասն զի ասիկայ աստուածային պաշտամունք չէ, եւ քարոզ լսելն երբեք չ'արգելուի, մանաւանդ որ վասն դարձի կը տրուի: Եւս առաւել կրնայ արտաքին եկեղեցական իրաւարանութեան գործեր կատարել, ինչպէս՝ Առաջնորդ ընտրել, բանադրանքէ ազատել, եւ այլն:

Եկեղեցի մանելէն արգելեալ եկեղեցական մը՝ արդարեւ եկեղեցւոյ կրնայ ընել՝ ինչ որ յառաջագոյն իրեն օրէն էր. ինչպէս՝ առանձնական մատրան մը մէջ պատարագ ընել, տունն վերջին Օծում եւ ուրիշ խորհուրդներ ընդունիլ, եւ այլն. վասն զի կանոնս միայն եկեղեցւոյ մէջ աստուածային պաշտամունք կատարելու կամ ներկայ գտնուիլը կ'արգելու:

«Ի վախճանի՝ զորս միանգամ Ս. Ժողովն Տրիդնտեան նովին իրաւամբ կախակայեալ կամ արգելեալ վճռեց, Մենք ալ նմանապէս անոնց կախակայեալ կամ արգելեալ ըլլալը կ'ուզենք եւ կը ծանուցանենք²»:

Այս խօսքերով բարեյիշատակ Ս. Քահանայապետն Տրիդնտ. Ս. Ժողովոյն առաջին, այսինքն՝ առաջին անգամ իբրեւ նոր դրած կախակայութիւններն ու արգելմանքը վերստին կը հաստատէ³: Տրիդ. Ս. Ժողովոյն տուած կախակայութիւններն, որ Սահմանադրութեանս այս խօսքերովն վերստին հաստատուեցան, եօթը հատ են, իսկ արգելմանքն՝ երկու: Եւ որովհետեւ 1873ին տրուած Հռոմէական Քահանայապետն Սահմանադրութիւնն ուրիշ արգելում մ'ալ

¹ Հմայց. Ե. 39. 387: Սքաւ. Ա. Թ. 888: Ռեէրի, էջ 120. Թ. 202:
² Տես էջ 31:
³ Աւանց. Յաւելուած: Հմմ. վերն էջ 218:

ուելցուց, անոր համար այժմ ի զօրութեան եղող ար-
գելմանց թիւն հինգ է:

Առաջ. Արտոյ Սահմանադրութեան մեկնիչնե-
րէն ոմանք, ինչպէս Աւանցինի, Տրիգ. Ս. Ժողովէն¹
յիշուած՝ « սորմա՞ք յեւեարբելոց » նկատմամբ դրուած
կախակայութիւնն իբրեւ տակաւին ի զօրութեան յա-
ռաջ կը բերէ, որ ուղիղ չէ: Ինչու որ այս դատակնիքն
Տրիգ. Ս. Ժողովէն յառաջ կար, եւ Ս. Ժողովը նոյնը
միայն ի մէջ բերաւ. անոր համար « զաւի՛ իրմէ իբրեւ
նոր արուած չի կրնար նկատուիլ: Ուստի, այնպիսի-
ներն թէեւ նախընթաց խոնարհագոյն աստիճան մը
զանց աւելով եւ բարձրագոյն Ս. Աստիճան մ՛ըն-
դունելով՝ նովին գործով անտակ կ'ըլլան այսպէս ըն-
դունած կարգն գործածելու եւ բարձրագոյն աստի-
ճաններն եւ կամ չընդունած աստիճանն ընդունելու
առանց ծանր մեղանչելու, բայց դատակնիքն մը տակ
չեն իյնար այսուհետեւ: Այս անտակութենէն կը
անօրինուին կամ Եպիսկոպոսէն՝ երբ ընդունած կար-
գը չեն գործածած², կամ Քահանայապետէն երբ
գործածած են:

« Իսկ այն քանադրանաց կամ՝ կախա-
կայութեան եւ կամ՝ արգելման դատակնիք-
ներն, որ Մեր կամ՝ Մեր Ծախորդաց Սահ-
մանադրութեանց եւ կամ՝ սուրբ կանոնաց
մէջ բաց ի Մեր թուածներէն տրուած են,
եւ մինչեւ ցայսօր ի զօրութեան մնացած, ը-
լլան Հոռոմայ Քահանայապետին ընտրու-
թեան նկատմամբ, ըլլան վասն ներքին
վարչութեան որեւէ վանական կարգաց եւ
Հաստատութեանց, այլ եւ որեւիցէ Ժողովոց,
Միաբանութեանց եւ քարեպաշտական Ժո-

¹ Նիստ Ի. Գ. Գլ. 14. Վասն բարեկ...
² Նոյն անդ: Հմմ. Փր. Հայեր, էջ 353:

ղովոց եւ տեղեաց, ինչ անուն ալ ունենան,
կամ՝ որ սեռէ ալ ըլլան, անոնց ամէնուն ալ
Հաստատուն ըլլալն եւ իրենց զօրութեան
մէջ յարատեւ մնալը կ'ուզենք եւ կը ծա-
նուցանենք¹: »

Ըստ այսմ, այն ամէն մասնական դատակնիք-
ներն՝ որ սուրբ կանոնաց եւ քահանայապետական
Սահմանադրութեանց ձեռօք, նկատմամբ արգի յիշ-
եալ գործոց տրուած են եւ մինչեւ ցայսօր ի զօրու-
թեան մնացած, այս խօսքերով վերստին կը Հաստատ-
ուին, ըլլան ասոնք ընդհանրապէս կրօնաւորական կե-
նաց նկատմամբ, ըլլան Հաստատութեան մը մէջ առ-
անձինն կէտի մը նկատմամբ: Այսպէս օրինակի աղա-
դաւ՝ անփոփոխ կը մնան այն ամէն դատակնիքներն՝ որ
դրուած են ընդդէմ կրօնաւորաց, որոնք դիտմամբ
իրենց կարգին սքեմն ի բայ կը թողուն², կամ՝ Վանաց
սրմածին մէջ առանց Առաջնորդին հրամանին զէնք կը
պահեն³, կամ Առաջնորդը՝ որոնք Ս. Ժողովոյ Քննու-
թեան վերաբերեալ դատերու կը խառնուին կամ նոյն
Ժողովոյն դիմել ուղղ հպատակներուն արգելք կը
դնեն:

Բայց որպէս զի սուրբ կանոնաց եւ քահանա-
յապետական Սահմանադրութեանց այս ամէն դատա-
կնիքներն իբրեւ տակաւին ի զօրութեան եղող կարե-
ւան ըլլալ, կը պահանջուի, որ

1. « Միևնն ցայսօր ի զօրութեան մնացած » ը-
լլան: Եթէ հակառակ սովորութեամբ մը, կամ ուրիշ
որեւէ կերպով բարձուած են, այն ատեն Առաջ. Ար-
տոյ Սահմանադրութեանս այս խօսքերովն չեն նորոգ-
ուիր, եւ այնու՝ չեն այսուհետեւ ի զօրութեան: Ուս-
տի ամենայն ինչ կը մնայ յայնմ վիճակի, յորում յա-
ռաջ քան զՍահմանադրութիւնս էր: Վասն զի Սահ-

¹ Տես էջ 31:
² Գլ. Զի վտանգաւոր. 2. Տիտ. Զի մի կղերակներ կամ
միանձուներ, առ 6⁰:
³ կղերակներ Ա. Վասն վիճ. միանձուութեան:

մանադրութիւնս զասոնք նորոգելու՝ վրայ բնաւ չի խօսիր, այլ լակ կ'ըսէ. « Որոնք որ միեւնոս ցայսօր ի զօրութեան մնացած են . . . սեռնց ամենուն ալ . . . ի թիւնջ զօրութեան մեջ յարստեռ մնայր կ'որոգենք: »

2. Այս դատակնիքներն ըլլան՝ « Հոռոնց փախանայապետիկ ընտրութեան և կիսամամբ, եւ կամ վասն և երբիև վարչութեան ո՛րեւեկ վաճակաւ կարգաց եւ Հաստատութեանց, այլ եւ որեւիցե վարժարանաց, Սխարսանութեանց, եւ յարեւպաշտ ժողովոց եւ սեղեաց: », սրպիսի են՝ եկեղեցիք, վանորայք, հիւանդանոցք, դրատունք, եւ այլ նոյնպիսի հաստատութիւնք քրիստոնէական սիրոյ: Ասկէ յայտնի է, որ եթէ դատակնիք մը վանական կարգի, եւ այլն, ներքին վարչութեան նկատմամբ չէ, հապա արտաքին կենաց եւ գործունէութեանը վրայ, այն բարձուած է, եթէ Սահմանադրութեանս դատակնիքաց շարքին մէջ առանձինն չէ յիշուած: Այսպէս, ըստ Աղեմեանոյ՝ բանադրանաց տակ կ'իյնան այն կրօնաւորք՝ որ եկեղեցեաց տասանորդներն անձանց կը սեպհականեն, կամ՝ որոնք առանց օրինաւոր իշխանութեան եպիսկոպոսական վերապահութիւններէ կ'արձակեն, եւ այլն. բայց Սահմանադրութեանս հրատարակմանէն ետեւ՝ այս եւ նոյնպիսի այլ դատակնիքներ այսուհետեւ ի զօրութեան չեն:

Սահմանադրութեանս վերջին խօսքերովն² դատակնիքներէ արձակելու իշխանութիւն ունեցողները կ'որոշուին: Բայց որովհետեւ Բ. Յաւելուածին մէջ ընդհանրապէս դատակնիքաց վրայ խօսելու ժամանակ դատակնիքէ արձակելու վրայ ալ պիտի խօսինք, անոր համար հաս աւելորդ կը համարինք նոյները կրկնել:

¹ Անդ. Ա. Վասն տասանորդաց:
² Տես վերն, էջ 31-37:

ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆՍ ԶՕՐՈՒԹԻՒՆՆ

ԱՐԵՒԵԼԵԱՅԵՅ ՀԱՄԱՐ

Առաւելուան Արտոյ Սահմանադրութիւնն ամբողջութեանը մէջ՝ նկատելէն ետեւ՝ բնականապէս Արեւելեայցս համար առաջին խնդիրն այն կ'ըլլայ, թէ արդեօք Արեւելեայքս, եւ ի մասնաւորի կաթողիկէայ Հայքս, այս Սահմանադրութեան ամէն կանոնաց ենթարկեալ ենք, թէ միայն այն մասանց, որոնք ընդհանրապէս ուղղափառ հաւատոյ կը հային:

Սահմանադրութեանս հրատարակութեան յաջորդ տարին՝ այն է 1870ին, նոյն Սահմանադրութեան հայերէն թարգմանութիւնն մեր Պատրիարքարանի կողմանէ հրատարակեցաւ, առանց մասնաւոր պաշտօնական հրատարակութեան մը, որ մեր առջեւ դնէր նոյն Սահմանադրութեան տարածութիւնն: Բնականապէս գործնականի մէջ այս մասին կրնար շատ խնդիր յուզուիլ, եւ ամէնուն ցանկալի էր, որ մեզ Արեւելեայցս համար վաւերական (authentic) մեկնութիւն կամ յայտարարութիւն մը տրուէր: Քննութեան Ս. Ժողովն 1885ին Յուլիս 15ին Ս. Քահանայապետէն հաստատեալ Յայտարարութիւն մը հանեց, որ խնդրոյն որոշումը տուաւ: Այս Յայտարարութիւնն Վրաստան-գնուպոլսոյ Քահանայապետական նուիրակատան ձեռքը նոյն տարին Օգոստ. 21ին առ Գերերջ. կաթողիկոսն մեր Ստեփ. Պ. Ժ. Աղարեան ծանուցուեցաւ: Սոյն Յայտարարութիւնը յիշեալ նուիրակատան վաւերական բնագրին վրայէն հաս յառաջ կը բերենք՝ թարգմանութեամբն հանդերձ:

¹ Տրիդէնտ. Ժողովոյ դատակնիքները եւ զայլս տես Ա. Յաւելուած:

Delegatio Apostolica Constantinopolitana

Constantinopoli, die 21 Aug. 1885.

Excellentissime ac Reverendissime Domine.

Proposito nuper dubio: Utrum Orientales subsint Constitutioni quae incipit *Apostolicae Sedis* latae a Sa. me. Pio Papa IX. die 12 Octobris 1869? Suprema Congregatio Sanctae Romanae et Universalis Inquisitionis, adprobante Summo Romano Pontifice haec quae sequuntur constituit ac declaravit Feria IV die 15 Julii vertentis anni:

1° „Per Constitutionem *Apostolicae Sedis* nihil esse innovatum circa censuras earumque reservationes pro fidelibus rituum orientalium.“

2° „Eosdem fideles subiici omnibus censuris proprii ejusque ritus, et iis censuris ab Apostolica Sede latis in materia dogmatum, et in Constitutionibus in quibus implicate de iis disponitur, nempe ubi materia ipsa demonstrat eos comprehendi, quatenus non de lege mere ecclesiastica agitur, sed jus naturale et divinum declaratur.“

Voluit insuper Sacra eadem Congregatio ut de hujusmodi dispositionibus uni-

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՆՈՒԻՐԱԿԱՏՈՒՆ ԿՈՍՏԱՆՆՈՒՊՈԼՍՈՑ

Կ. Պոլիս, 21 Օգոստ. 1885:

Գերերջանիկ Ամենապատիւ Տէր:

Առաջարկուելով նորոգ խնդիրս՝ թէ՛ «Արդեօք Արեւելեայք ենթարկեալ են երջանկայիշատակ Պիոս Թ. Գահանայապետին 1869 շուկտ. 12ին տուած Սահմանագրութեան, որոյ սկիզբն է Արեւելեան Արեւելեայքի Սրբոյ Հոռմէական եւ Ընդհ. Քննութեան Գերագոյն Ժողովն տարւոյս Յուլիս 15ին Չորեքշաբթի օրն հետեւեալը սահմանեց եւ յայտարարեց, կանխաւ Հոռմայ Ծայրագոյն Գահանայապետէն հաստատութիւն առնլէն ետեւ:

1. «Արեւելեան Արեւելեայք Սահմանագրութեամբ՝ արեւելեան ծիսից հաւատացեալոց համար դատակնքաց եւ անոնց վերապահութեանց մասին ոչինչ նորոգուած է:»

2. «Նոյն հաւատացեալք իրենց ծիսին յատուկ ամէն դատակնքներուն ենթարկեալ են, ինչպէս նաեւ Առաքելական Գահէն վարդապետական նիւթոց մասին տրուածներուն, եւ այն Սահմանագրութեանց մէջիններուն, յորս լռելեայն իրենց վրայ տրամագրութիւն կ'ըլլուի, այն է՝ ուր նոյն իսկ նիւթը կը ցուցնէ, թէ անոնք ալ մէջը կը բովանդակուին, այսինքն՝ երբ խնդիրը զուտ եկեղեցական օրինաց վրայ չէ, այլ բնական եւ աստուածային օրէնքը կը մեկնուի:»

Գարձեալ՝ նոյն Ս. Ժողովն ուզեց, որ այս տրամագրութիւնք ծանուցուին արեւելեան ծիսից ամէն

versi et singuli rituum orientalium Patriarchae, Archiepiscopi et Episcopi certiores fierent, mediante Apostolica Delegatione intra cujus limites versantur, atque ut hac ipsa occasione eisdem Praesulibus iterum notum fiat „illos fideles (orientales nempe) subiici nominatim nedum censuris sed etiam Apostolicis reservationibus latis in Constitutione Benedicti XIV. *Sacramentum Poenitentiae* et in Constitutionibus contra sectae massonicae aliisque similibus addictos. “

Haec Amplitudini Tuae communicando habui de mandato ipsius Sacrae Congregationis de Propaganda Fide pro Negotiis Orientalibus, ac denuo perfectae existimationis et observantiae meae sensus Tibi contestor, quibuscum subscribor et maneo

Excell. ac Revm. Dominationis Tuae

Al. Archiep. Pharsaliensis

Delegatus Apostolicus.

Excell. ac Revm.

D. S. P. X. Azarian

Patriarcha Ciliciae Armenorum Consoli.

եւ իւրաքանչիւր Պատրիարքաց, Արքեպիսկոպոսաց, եւ Եպիսկոպոսաց ի ձեռն այն Առաքելական Կուրիալին՝ որուն սահմանին մէջ կը գտնուին, եւ թէ այս առթիւ նոյն Աւագաց ծանուցուի վերստին, որ “ նոյն հաւատացեալք (այն է արեւելեայք) ի մասնաւորի ենթարկեալ են ոչ միայն դատակնքաց, այլ եւ Առաքելական վերապահութեանց, որ տրուած են Բենեդիկտոսի ԺԳ. խորհուրդն Ապաշխարութեան Սահմանադրութեան մէջ, եւ ի Սահմանադրութիւնս որ ընդդէմ Մասոնեան աղանդոյն եւ նմանեաց տրուած են: ”

Չայս գերերջանիկ Տեառնդ ծանուցանել հրամայեցաւ ինձ ի Սրբոյ Ժողովոյ Տարածման Հաւատոյ վասն Գործոց Արեւելեայց. եւ վերստին լիովին յարգանացս եւ մեծարանաց հաւաստիքը կը յայտնեմ Ձեզ, որով կը ստորագրեմ եւ եմ

Գերերջ. եւ Ամենապատիւ Տէրութեանդ

Ա. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՓԱՐՍԱՂԱՅՐՈՑ

Առաքելական Կուրիալ

Առ Գերերջ. եւ Ամենապատիւ

Տէր ՍՏԵՓ. Պ. Ժ. ԱԶԱՐԵԱՆ

Պատրիարք Կիլիկիոյ Հայոց ի Կ. Պոլիս:

Վրննութեան Ս. Ժողովոյն այն Յայտարարութիւնն Առաքելական Արհարար Սահմանադրութեան Արեւելեացյ յմասին ունեցած զօրութիւնը լուսաւոր կերպով մեր առջեւ կը դնէ: Ս. Ժողովն յայտնապէս կ'ըսէ՝ թէ Արեւելեացյ յայն Սահմանադրութեան ամէն դատակնքաց ենթարկեալ չենք, այլ 1. Անոնց միայն, որոնք մինչեւ ցայսօր ի գործադրութեան էին. 2. Անոնց, որ ուղղափառ հաւատոյ կը հային, եւ 3. Մասնաւորապէս Յայտարարութեանս մէջ յիշուածներուն: Փր. Հայնէր, Ուսուցիչ եկեղեցական իրաւանց, որուն գլխաւորաբար հետեւած ենք ամբողջ գործոյս մէջ, առանձին թղթով մ'իւր կարծիքն այս Յայտարարութեան մասին այսպէս կը հաղորդէ մեզ:

“1. Առաքելական Արհարար կոնդակն Արեւելեան եկեղեցւոյ համար իրաւանց զօրութիւն չունի, վասն զի դատակնիքներն բարեկարգական օրէնքներ են. ուստի միայն Արեւմտեան եկեղեցւոյ համար կ'արժեն՝ ուր որ Արեւելեանն յայտնապէս չի յիշատակուիր:”

“2. Հայ կաթողիկեաց եկեղեցւոյ համար այն դատակնիքներն նաեւ այսօր կ'արժեն՝ որոնք մինչեւ ցայսօր իրեն համար կ'արժէին:”

“3. Առաք. Արհարար Սահմանադրութեան նաեւ այն դատակնիքներն հայ կաթողիկեաց եկեղեցւոյ համար կ'արժեն, որոնք աստուածային կամ բնական իրաւանց մեկնութեան վրայ խօսող Քահանայապետական Սահմանադրութեանց մէջ՝ վարդապետութեան (dogma) մ'ուրացութեան վրայ դրուած են: Վասն զի երբ Սահմանադրութիւն մը վարդապետութեան վրայ կը խօսի, նոյն Սահմանադրութիւնն բովանդակ է եկեղեցւոյ համար կ'արժէ, ուստի նաեւ նոյն վարդապետութեան ուրացութեան վրայ դրուած պատիժն: Այսպիսի են՝ Առաքելական Արհարար Սահմանադրութեան առանձինն կերպով վերապահելոյ Ա. Բ. եւ Գ. կանոններն: Ասկէ զատ՝ մասնաւոր վճռով (որ Յայտարարութեանս

1 Տես վերն էջ 7:

մէջ կը կրկնուի,) նաեւ նոյն վերապահելոյ Ժ. կանոնն՝ եւ պարզապէս վերապահելոյ Գ. կանոնն:”

Ուրեմն, Յայտարարութեանս յայտնի խօսքերուն համեմատ՝ Առաքելական Արհարար Սահմանադրութեանս վերոյիշեալ հինգ կանոններն եւ Խորհուրդն Ապաշխարութեան Սահմանադրութեան վերապահութիւնն՝ պարտաւորիչ են Արեւելեան եկեղեցեաց համար: Նաեւ ուրիշ դատակնիքներ պարտաւորիչ են, եթէ մինչեւ Առաքելական Արհարար Սահմանադրութեան հրատարակումն՝ իբրեւ նոյնպիսի ճանչցուած էին եւ գործադրուած:

Բենեգիկոս ԺԳ. ի Խորհուրդն Ապաշխարութեան Սահմանադրութեան բովանդակութիւնը վերն (էջ 110) յառաջ բերինք: Բայց որովհետեւ մեզը համար առանձին կարեւորութիւն ունի նոյն Սահմանադրութիւնն, նոյնին բանադրանաց եւ վերապահութեան մասին որոշումներն հոս յառաջ կը բերենք:

Սրբն. Քահանայապետն՝ Գրիգ. ԺԵ. ի եւ այլոց նոյն նիւթոյ մասին տուած Սահմանադրութիւններն վերադարձնելու հաստատելն ետեւ՝ այսպէս կը շարունակէ. “... Կը պատուիրենք ամենայն քննչաց, կարգաւորաց... որ արժնութեամբ եւ առանց ակնառուութեան քննեն եւ դատեն այն ամէն եւ իւրաքանչիւր թեւեւ սրբեկ կամ կրօնաւոր քահանայք, թէ եւ որեւէ կերպով աղատ եւ ուղղակի Առաքելին. Աթոռոյ ստորակարգեալ ըլլան... ալ ունենան, որոնք խոստովանող տուութիւն... ալ ունենան, որոնք խոստովանող մը, որպիսի անձ ալ ըլլայ, կամ խորհրդական խոստովանութեան մէջ, կամ յառաջ, կամ անմիջապէս խոստովանութենէ ետքը, կամ առթիւ, կամ պատժաւոր խոստովանութեան, կամ նաեւ արտաքոյ ճառանք խոստովանութեան ի խոստովանարանի կամ առթի խոստովանութեան ի խոստովանուած կամ ընտրուած խոստովանութիւն լսելու որոշուած կամ ընտրուած ուրիշ տեղ, հոն խոստովանութիւն լսել ձեւացը ներով յանպատեհս եւ ի զազիրս հրապուրել կամ գրգռել կը փորձեն բանիւր կամ նշանաւ, կամ ակնարկութեամբ, կամ շօշափմամբ, կամ գրով՝ նոյն ատեն կամ յետոյ ընթեռնու համար, կամ անոր ատեն կամ յետոյ ընթեռնու խօսքեր կամ յանդրգհետ անպատեհ եւ անպարկեշտ խօսքեր կամ յանդրգ-

1 Տես էջ 11:
2 Տես էջ 17:
3 Տես էջ 110:

նական խօսակցութիւններ կ'ընեն: Իւր զորոնք որ այսպիսի անպատեհ խոտորմանց յանցաւոր կը գտնեն, ըստ որպիսութեան յանցանաց եւ ըստ պարագայից խոտութեամբ պատուհասեն . . . :

§ 2. Գարձեալ յիշեն նաեւ ամէն եւ իւրաքանչիւր քահանայք սահմանեալք ի լեւել զխոտորմանութիւն, որ պարտական են եւ պարտաւորեալ իրենց ապաշխարողաց, որ վերոյիշեալ կերպով հրապուրեալ են յայլոց, խնամով յիշեցընել, ըստ պարագայից դիպացն դիպելոց, որ պարտական են հրապուրողը զեկուցանել քննաց կամ վերոյիշեալ Արագաւորաց տեղեաց, թէեւ ըլլայ այն վաւերաբար արձակելու իրաւունք չունեցող քահանայ, կամ հրապուրումն ի մէջ խոտորմանաճօր եւ ապաշխարողին փոփոխակի եղած ըլլայ, թէեւ ապաշխարողն հրապուրման հաւանութիւն տուած ըլլայ կամ ոչ, կամ հրապուրմանն ետեւ շատ ժամանակ անցած ըլլայ, եւ կամ խոտորմանաճօրն ոչ վասն իւր անձին հրապուրած ըլլայ, այլ վասն այլոյ ուրուք: Այլ եւ խոտորմանաճօր խնամով զգուշանան որ չըլլայ թէ ապաշխարողաց, զորոնք յայլմէ հրապուրեալ կը ճանչնան, խորհրդական արձակում տան, բայց միայն երբ յիշեալ զեկուցումը գործադրելով՝ զյանցաւորս օրինաւոր դատաւորաց ծանուցանեն, կամ գէթ խոտանան ըստ կարի փութով զեկուցանել:

§ 3. Իւր որովհետեւ կան անօրէն մարդիկ, որ ատելութենէ, բարկութենէ կամ ուրիշ անպատեհ պատճառէ դրդեալ կամ այլոց անօրէն յորդորմանէն . . . գրգռեալ, . . . արհամարհելով Եկեղեցւոյ հեղինակութիւնը՝ անմեղ քահանայքն եկեղեցական դատաւորաց առջեւ ստութեամբ իբրեւ հրապուրող կը զրպարտեն, որպէս զի այսպիսի ամբարիշտ յանդրգնութիւնն եւ պիղծ անօրէնութիւնն պատժոյն մեծութեան երկիւղել զսպուռի, այն ամէն անձն որ այսպիսի զրուելի անօրէնութիւն գործած է, անձամբ անմեղ խոտորմանաճօրն ամբարշտութեամբ զրպարտելով, կամ անօրէնութեամբ ջանալով որ այլք նոյնք գործեն, ի մշտնջենաւորս զրկուի որեւէ քահանայէ, թէեւ արտօնութիւն հեղինակութիւն եւ արժանապատուութիւն մ'ունենայ, բաց ի Մէնջ եւ ի Յաջորդաց Մերոց, արձակում ընդունելու յուսէն, զոր Մեզ եւ Մեր Յաջորդաց կը վերապահենք, ի բաց առեալ միայն կենաց վերջը եւ մահուան կէտը:

§ 4. . . Առաքելին. իշխանութեամբ եւ Մեր իշխանութեան լուծեամբ կ'արգելունք եւ կը հրամայենք

ամէն եւ իւրաքանչիւր քահանայի, — եթէ աշխարհիկ եւ եթէ կրօնաւոր որեւէ Արագէ եւ արժանապատուութեամբ, թէեւ այլուստ խոտորմանութիւն լսելու իշխանութիւն ունենայ, նաեւ եթէ անիկայ մասնաւոր եւ ամենամասնաւոր յիշատակութեան արժանի ըլլայ, — որ ոչ որ յանդգնի լսել ընդդէմ Յր պատուիրանի զագիւր եւ անպարկեշտ մեղաց մեղակցին խորհրդական խոտորմանութիւնը, ի բաց առեալ վերջին հարկաւորութեան դէպքն այն է անոր մահուան կէտին, եւ այն՝ երբ ուրիշ որեւէ քահանայ չկայ որ կարող ըլլայ խոտորմանաճօր պաշտօն կատարել: Անոր համար այսպիսի քահանայէ նովին գործով կը բառնանք ամէն իշխանութիւն եւ իրաւարանութիւն զմէկն այսպիսի մեղքէ արձակելու. այնպէս որ, արձակումն եթէ տուած է, ոչինչ եւ բոլորովին անվաւեր ըլլայ, իբրեւ տուեալ ի քահանայէ՝ որ վաւերաբար արձակելու իրաւարանութենէ եւ իշխանութենէ զուրկ ըլլայ, զոր եւ ներկայիս բառնալ կը դիտենք: Եւ սակայն եթէ խոտորմանաճօր մը այլազգ գործով յանդգնի, նովին գործով մեծ բանադրանաց պատժոյն տակ իյնայ, որմէ արձակելու իշխանութիւնը միայն Մեզն եւ Մեր Յաջորդաց կը վերապահենք:

§ 5. Յայտարարելով նաեւ եւ սահմանելով՝ որ եւ ոչ զօրութեամբ որեւէ Յօրելինի . . . կամ որեւէ շնորհագրի այսպիսի մէկն վերոյիշեալ մեղակցին խոտորմանութիւնը լսել կարող ըլլայ եւ անոր խորհրդական արձակում տալ: . . . Իւր ասոր չեն կրնար ընդդիմանալ Առաքելական Սահմանադրութիւնք եւ Արագադրութիւնք . . . » եւ այլն: Հմմտ. վերն էջ 110:

Ա. ՅԱԻԵԼՈՒԱԾ

ԱՐՏԱՔՈՑ ՍԵՂՄԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ

ՏԱԿԱՒԻՆ Ի ԶՕՐՈՒԹԵԱՆ ԴԱՏԱԿՆԻՔՆԵՐ

Առաւելական Աթոռայ Սահմանադրութեան դատակնիքաց շարքին բովանդակած դատակնիքներէն զատ, կան նաեւ ուրիշ դատակնիքներ՝ որ տակաւին իրաւանց զօրութիւն ունին, կամ որովհետեւ Առաւ. Աթոռայ Սահմանադրութեան մէջ նոյններն յընդհանուրն յառաջ բերուած են եւ ի զօրութեան ըլլալն ծանուցուած, եւ կամ որովհետեւ Առաւ. Աթոռայ Սահմանադրութենէն ետքը արուած են առանձինն կոնդակաւ, եւ իբրեւ նոյն Սահմանադրութեան դատակնիքացը հաւասարազօր հրատարակուած: Առջիններն երկու խումբ են. 1. Տրիդեսնական Ս. Ժողովէն ուղղակի, առաջին անգամ իբրեւ նոր արուած դատակնիքներն¹, եւ 2. Քահանայապետին ընտրութեան եւ բարեպաշտական հաստատութեանց ներքին վարչութեան նկատմամբ արուած եւ ցարդ ի զօրութեան մնացած դատակնիքները: Իսկ վերջինք, չորս խումբ են. 1. Ի վաղուց արուած դատակնիք մը, որ Քննութեան Ս. Ժողովոյն 1872 Վեկտ. 4ին տուած մէկ վճռովն իբրեւ տակաւին ի զօրութեան հրատարակուեցաւ: 2. Պիոս Թ. ի 1873 Օգոստ. 28ին տուած Հռովմական Քահանայապետն Սահմանադրութեան մէջ բովանդակեալ դատակնիքներն: 3. Նոյն Քահանայապետին 1874 Մայիս 13ին Սիւնհոգոսաց Ս. Ժողովոյն մէկ վճռովն տուած դատակնիքները: Եւ 4. Ս. Ժողովոյ Ապաշխարութեան 1876 Օգոստոս 4ին տուած վճռովն դրուած առանձինն իբրացվերապահեալ բանադրանքը:

¹ Տես վերն էջ 218:

որովհետեւ առաջին խմբին երկրորդ տեսակը մասնական դատակնիք մըն է եւ մեզնէ համար անգործածական, զանց կ'առնենք¹. իսկ մեկալններն, որ գործնականի մէջ կարեւոր կ'երեւան, հոս կարգաւ կը դնենք:

Ա. Խ Ո Ի Մ Ք

Տ Ի Դ Ե Ն Տ Ե Ա Ն Ս. Ժ Ո Ղ Ո Վ Ո Յ Ն Դ Ա Տ Ա Կ Ն Ի Ք Ն Ե Բ Ն

Ա. Դ Ա Ս

Բ Ա Ն Ա Գ Բ Ա Ն Ք

1.

Առնակոմս ժայրագոյն վրահանայապետին վերայսահեալ բանադրանք:

I.

Clerici vel laici quacumque dignitate, etiam imperiale aut regali praefulgeant, qui alicuius ecclesiae seu cuiusvis saecularis vel regularis beneficii, montium pietatis, aliorumque piorum locorum iurisdictiones, bona, census ac iura etiam feudalia et emphyteutica, fructus, emolumenta, seu quascumque obventiones, quae in ministrorum et pauperum necessitates converti debent, per se vel alios, vi vel timore incusso, ... seu quacumque arte ... in proprios usus convertere,

Ա.

որնէ, նաեւ կայսերական կամ թագաւորական արժանապատուութիւն ունեցող կղերականք կամ աշխարհականք, որոնք անձամբ կամ ուրիշի մը ձեռքը ընտար կամ երկիւղ ձգելով, կամ հրեւէ նսարիւք՝ եկեղեցւոյ մը, կամ հրեւէ աշխարհական կամ վանական քարերարութեանց, քարեպաշտական ընկերութեանց, կամ ուրիշ քարեպաշտական տեղեաց իրաւաբանութիւնները՝ ստացուածքը, նարկերն ու իրաւունքները, նաեւ աւատական եւ երկայնժամաւ-

illosque usurpare praesumpserint, seu impedire, ne ab iis, ad quos de iure pertinent, percipiantur, ii anathemati tamdiu subiaceant, quamdiu integra data satisfactione, a Summo Pontifice absolutionem obtinuerint.

նակեան վարձակալութեան իրաւունքները, պտուղները, մուտքն ու հրեւէ շահերն ի պէտս անձանց դարձնել, եւ զանոնք յափշտակել կը յանդգնին, կամ կ'արգելուն որ անոնցմէ՝ որոնց ըստ օրինաց կը վերաբերի, չստացունին. այսպիսիք այնչափ ատեն ըանադրանաց տակ մնան, մինչեւ որ ամբողջական հատուցումս ընելէն ետեւ ծայրագոյն Զահանայապետէն արձակունին:

Առաջ. Արհայ Սահանադրութեան առանձինն կերպով վերապահեցնց ժԱ. եւ ժԲ. կանոնաց, եւ ոչ ումեք վերապահեցնց Գ. կանոնին մէջ՝ Եկեղեցւոյ ստացուածոց, բարերարութեանց, եւ այլն, յափշտակութիւնն ըստ յանցանաց՝ ծանր կամ թեթեւ բանադրանաց տակ կը ձգուին: Բայց այնու՝ տակաւին Եկեղեցւոյ ստացուածոց եւ իրաւանց եղած ամէն բռնաբարութիւն չի պատուհասիր: Այս պատճառաւ, անոնց համար՝ որոնք այսպիսի յանցանք մը գործելով վերոյիշեալ երեք կանոնաց մէջ չեն բովանդակուիր, դրուեցաւ Տրիդ. Ս. ժողովոյ՝ Քահանայապետին պարզապէս վերապահեալ բանադրանաց այս կանոնն, որ այնպիսի տարածութիւն մ'ունի, որ ոչ ոք անոնցմէ՝ որ կերպով մ'Եկեղեցւոյ իրաւանցն ու ստացուածոցը բռնաբարութիւն կ'ընէ, կրնայ ասկէ ազատիլ:

կանոնիս մեկնութեան գալով՝ 1. կանոնիս մէջ յանցաւորաց վիճակին, պատուոյն, եւ այլն, զանազանութիւն մը չըլլուիր. « որեւէ արժանապատուութիւն ունեցող կղերականք կամ աշխարհականք », 2. Զափշտակութեան առարկան է՝ ամէն ստացուածներն ու իրաւունքները. « իրաւաբանութիւնները, ստացուածքը . . . » եւ այլն: 3. Իբրեւ բանադրանացս մէջ ինչալու պայման կը պահանջուի « յանդգնել »: Ուստի պէտք է որ յանցանքը գործուի:

¹ Եթէ կ'ուզես, տես կրօնաւորաց նկատմամբ ինչ ինչ Գուրի-Պալլ. Բ. 979:

¹ Ս. ժ. Տրիդ. Ն. Ի. Կ. 11. Վասն բարեկարգութեան:

հիւսն-կեանք որ ... Ստացուածները կանոնիս մէջ յիշեալ բարեպաշտական ընկերութեանց են, եւ ք. Յափշտակութեան վրայ բանադրանք կայ: Բայց ասկէ, յանցանքը կ'առնէ, կատարեալ ազատութեամբ պիտի գործուի: Ուստի բանադրանքէս կ'ազատէ՝ ոչ միայն ազիտութիւն, նոյն իսկ եթէ ծանր մեղանշական ըլլայ, այլ եւ երկեւոյ. թէեւ բացարձակապէս կամ յարաբերութեամբ ծանր ըլլայ: — Այս նախագիտելիքները դնելէն ետեւ, ի մէջ բերենք յանցաւորաց խմբերը:

Բանադրանաց սակ կ'իյնան՝

1. « Սրոնք որ ի պէտս սննանց դարձնեն, եւ զսննք յափշտակել կը յանդգնին »: Այսինքն այն ամէնքն՝ որ սրեւէ հնարիւք կամ պատճառանօք կը յափշտակեն եւ ի պէտս եւ յօգուտ իւրեանց կը գործածեն: Հոս « յափշտակել » ընդարձակաբոյն մտօք պիտի աւնուի¹, եւ կը նշանակէ ամէն բռնաբարութիւն եկեղեցական ստացուածոց, եթէ ըլլայ բռնութեամբ կամ խաբէութեամբ, եւ եթէ գաղտնի կամ յայտնի, ընդ կերպարանօք իրաւանց կամ յայտնի աւիրաւութեան. համառօտիւ՝ սրեւէ կերպով յափշտակողներն: Ուստի, հողէքն՝ որ Եկեղեցւոյ սրեւէ ինչքերը կը գողնան, եթէ վերոյիշեալ երեք կանոններէն կ'ազատին, այս բանադրանաց սակ կ'իյնան²: Իսկ այս յափշտակողներէն հողէքն՝ նոյնպէս բանադրանաց սակ կ'իյնան, ըստ վճռոյ Ս Ժողովոյ Քննութեան, 8 Յուլ. 1874:

2. « Արգելոյններն », այսինքն անոնք, որոնք սրեւէ հնարիւք կամ պատճառանօք շէն թողուր՝ որ Եկեղեցական ստացուածներն « սննցմե՝ որոնց ըստ օրինաց կը վերադարձնեն », ստացուին:

3. Որոնք որ վերոյիշեալ երկու յանցանքները գործելու հրաման կոտորան. վասն զի կանոնս յայտնապէս կ'ըսէ՝ « սննամից կամ ոտրիջի մը ձեռք »: Անյամբ գործողները վերոյիշեալ երկու յանցաւորներն են. իսկ ոտրիջի մը յետո՛ գործել՝ միայն հրամայելով կրնայ ըլլալ:

¹ Պոնաչ. վ. Ա. Խ. Ի. Բ. Գ. Թ. 3: Հմմ. Փր. Հայնէր, էջ 234—235:
² Նոյն էջ 235:

Բայց որպէս զի այս հրամայողներն բանադրանաց սակ իյնան, հարկ է որ գործն արբեամբ քաղարարի. վասն զի հրամանը կատարուելով՝ լրացեալ մեղք կ'ըլլայ¹:

4. Այն ամէն կղերականք՝ որ վերոյիշեալ 1. եւ 2. տեսակ յանցաւորաց յանցանացը կը հասնին: Վասն զի նոյն կանոնն կը յաւելու. « Իսկ կղերիկոսն՝ որ այս խորշէլն զրկանքը կամ յափշտակութիւնը կը գործէ կամ հասնա՞ծ է, նոյն պատժոց սակ իյնայ »²:

2.

Որ ուսմը վերապահեալ տղանց վճռոյ յանադրանքներ:

I.

Cogentes, praeterquam in casibus in iure expressis, quameumque mulierem ad ingrediendum monasterium, vel ad suscipiendum habitum cuiuseumque religionis, vel ad emittendam professionem; omnesque consilium, auxilium vel favorem dantes; itemque scientes eam invitam, qui quoque modo eidem actui vel presentiam vel consensum, vel auctoritatem interposuerint, eosque qui sanctarum virginum vel aliarum mulierum voluntatem veli accipiendi vel voti emittendi, quoque modo sine iusta causa impedierint.

B.

Որոնք որ արտաքոյ դիպաց որ յիտուունս եղեալ կան, սրեւէ կին մը վասնք մտնելու կամ սրեւէ կրօնի սրեւն ամուլու կամ ուխտ դնելու կը ստիպեն. եւ այն ամէնքն՝ որ խորշուրդ, օգնութիւն կամ պաշտպանութիւն կը մատուցանեն. նոյնպէս որոնք որ զիտութեամբ ընդդէմ կամաց կ'ստը, սրեւէ կերպով նոյն գործին կամ ներկայութեամբ, կամ հաւանութեամբ, կամ ծոխութեամբ մասնակից կ'ըլլան. նոյնպէս որոնք որ սրբակեաց կուսանաց կամ ուրիշ կանոնաց սրեւ՝ անուր կամ ուխտ դնելու կամին սրեւէ կերպով ստանց իրաւացի պատճառաց կ'արգելուն:

Կանոնս երեք խումբ յանցաւորաց՝ առանց անաղանութեան վիճակի կամ պատուոյ, բանադրանաց սակ կը ձգէ:

¹ Պոնաչ. անդ. Թ. 3:
² Հմմ. Փր. Հայնէր, 236—238:
³ Նիսոս Ի. Կ. 18. վասն կրօն. եւ կուս.:

1. « Որոնք որ կը ստիպեն: » Սորիպէլ է՝ նիւթապէս կամ՝ բարոյապէս, անձամբ կամ ուրիշի մը ձեռք բռնութեամբ կամ անիրաւութեամբ ծանր երկիւղ ձգելով՝ մէկուն գործ մը կատարել տալ: անոր համար թախանձանքն ստիպել չէ: Իսկ երկիւղն որպէս զի ստիպել կարենայ ըսուիլ եւ բանադրանաց տակ իյնայ, հարկ է որ բացարձակ կամ յարաբերութեամբ ծանր ըլլայ: յարաբերութեամբ թէթեւ երկիւղն բնաւ չի բաւեր: Բաց ասիկէ՝ նաեւ անիրաւութեամբ պիտի ըլլայ ստիպումն: Եթէ իրաւացի պատճառ մը կայ Վանք մուծանելու, ինչպէս՝ « որպէս զի հոն կրթութի մինչեւ որ ամուսնութեան ատակ ըլլայ, կամ ի պատիժ յանցանաց ինչ, կամ առ պահպանութեան կուսութեան, կամ ուրիշ իրաւացի պատճառներու համար մուծուի¹ », այն ատեն չեք տեղի բանադրանաց, բայց միայն չգիտուի զինքը յանկամա կուսան ընել: Ամէն ստիպողք, ըլլայ ստիպումն Վանք մտնելու համար, ըլլայ ստիպումն թեմաութեան, նորընծայութեան եւ կամ ուխտ գնելու համար, ստիպումն ըլլայ կոյս, այրի, եւ այլն, հաւասարապէս բանադրանաց տակ կ'իյնան, միայն թէ՛ ստիպումն արգիւնք յառաջ բերէ, ուստի իրօք Վանք մտնելէն, եւ այլն, ետքը: Արգիւնք կը պահանջուի եւս առաւել յաջորդ երկու յանցաւորաց համար:

2. Վերոյիշեալ գործոց « որոնք որ խորհուրդ, օգնութիւն կամ պաշտպանութիւն կը մատուցանեն »:

3. Այն ամէնքն, որ գիտեն թէ կինն չ'ուզեր Վանք մտնել, սքեմ առնուլ եւ այլն, եւ սակայն սոյն բռնական գործոյն մասնակից կ'ըլլան իրենց ներկայութեամբը, հաւանութեամբ կամ իրենց ճիշտութեամբն: Այսպիսիք կրնան ըլլալ՝ ծնողք, ազգականք կնոջ, կարգաւորք, Առաջնորդք կուսաստանաց, եւ այլն: Տգիտութիւն թանձր ու վեհերոտ եւ թերեւս նաեւ կամակարգ կ'արդարացընէ զասոնք բանադրանքէ, բայց ոչ առաջին խումբը: Վասն զի կանոնիս մէջ ասոնց համար կ'ըսուի « գիտութեամբ »: Բայց ոչ վասն առաջնոց:

¹ Գոնալ, անդ:

Այս ամէն գործերով բանադրանաց տակ կ'իյնան վերոյիշեալք, եթէ « արտաքոյ դիպաց » որ յիրաւունս եղնալ կուսն », գործած են: Յիշատակ եղեալ դէպքերն են յաջորդքս:

1. Օրէն է կին մը Վանք մտնելու ստիպել, երբ իւր հաւանութեամբն էրկան կրօնաւորական կարգ մտնելէն եւ հանդիսական ուխտ գնելէն ետեւ, իւր ժուժկալութեան վրայ՝ զոր էրկանը Վանք մտնելու ատեն ուխտած է, կը կասկածուի¹:

2. Պէտք է այն կինն՝ որ էրկը թողած եւ անկեալ է, եւ յետոյ ուղղութեան եկած, բայց էրկը չ'ուզեր զինք ընդունիլ, բարեպաշտ կանանց քով մուծանելու ջանալ, որպէս զի հոն մշտնջենաւոր զգուժմ ընէ²:

Ասոնցմէ զատ կը բանադրուին նաեւ՝

4. « Արգելողներն »: այսինքն՝ սրեւէ վիճակի կամ պատուաւոր անձինք, որոնք ուղղակի կամ անուղղակի, նիւթական կամ բարոյական միջոցներով, անձամբ կամ ուրիշի մը ձեռք կոյս կամ այրի մը կ'արգելուն, որ նորընծայ չըլլայ կամ ուխտ չգնէ, կամ կնոջ մարդու մ'ազատութիւնն այնպէս սաստիկ եւ անիրաւութեամբ կը բռնաբարեն, որ կինը կամ Վանք մտնելու գիտմանէն եւ կամ Վանք մտնելն ստիպուի ետ կենալ: Իսկ որոնք որ Վանք մտնելու կամ կրօնաւորական սքեմ առնուլ ուխտը կ'արգելուն, ազատ են բանադրանքէ³: Բայց որպէս զի արգելողք բանադրանաց տակ իյնան, հարկ է որ արգելքը գործունեայ եւ սաստիկ ըլլայ, եւ առանց իրաւացի պատճառի: Թախանձանք, համոզողնել, խոստում, եւ այլն, որով կին մ'իւր այս կամքէն ետ կենայ, ազատ են բանադրանքէ: Նոյնպէս՝ իրաւացի պատճառաւ գրուած արգելքն: Ինչպէս՝ երբ տեսնուի որ մէկն ամենեւին կրօնաւորական կոչում չունի:

¹ Խննովկ. Գ. Կ. 18: Վասն գնացից ամուսնացելոց:
² Գրիգ. Թ. Կ. 19: Վասն զն. ամուսն.: Հմմ. Բատ. էջ 330, Թ. 474: Վէքք. Ա. էջ 400. Թ. 636: Չուլ. 154:
³ Փր. Հայեր, էջ 295:

II.

β.

Raptores mulierum, ac omnes illis consilium auxilium et favorem praebentes.

Որոնք որ կին կ'առեանազնն, եւ այն ամէնքն որ անոնց խորհուրդ, օգնութիւն ու պաշտպանութիւն կը մատուցանեն¹:

1. Առեւանգողներն, ու 2. Անոնց գործակիցները:

1. « Առեւանգել » է՝ ամուսնանալու դիտմամբ կին մը բռնաբար յափշտակել եւ տանիլ տեղւոյէ ի տեղի²: Որպէս զի առեւանգողք բռնադրանաց տակ իյնան, կը պահանջուի ըստ այսմ, որ

ա. Յափշտակութիւնը բռնութեամբ ըլլայ, յանկամտ կնոջ, եւ ոչ՝ ծնողաց: Բռնութեամբ տանիլ է նաեւ՝ խաբելով, սաստիկ վախցընելով տանիլն. իսկ շողջորթութելով, յանկուցանելով տանիլը՝ բռնութեամբ տանիլ չէ, բայց եթէ մէկն այսպէս տանելէն ետեւ՝ Տոն բռնութեամբ պահէ, բռնադրանաց տակ կ'իյնայ:

բ. Յափշտակուածն կնո մարդ ըլլայ, թէպէտ օրիորդ, թէպէտ կոյս կամ այրի, եւ կամ նոյն իսկ նշանեալ, խօսեցեալ³: Ուստի եթէ կին մը զայր յափշտակէ, ազատ է բռնադրանքէ:

գ. Տեղւոյէ ի տեղի արքայ: Տեղւոյ փոփոխութիւն մը էպպէս կը պահանջուի, ապա թէ ոչ՝ յափշտակել տանիլ չ'ըլար:

դ. Ամուսնանալու դիտմամբ ըլլայ: Ըստ այսմ, ամուսնանալու դիտմանէն զատ, ուրիշ որեւէ բարի կամ չար դիտմամբ եղած կնոջ առեւանգութիւնը բռնադրանաց տակ չ'իյնար⁴:

Իսկ անձամբ կամ ուրիշ մը ձեռք յափշտակող տանողներն միշտ առեւանգող են⁵:

¹ Նիստ. Ի. Գ. Կ. 2. Ասան բարեկարգ.:
² Փայկէ, Ասան արգելից ամուսն.:
³ Սբաւ. Գ. Թ. 815:
⁴ Ս. Ժ. Աբար. 18 Յունիս 1859, 25 Յունիս 1864:
⁵ Ս. Ժ. Ժողովք, 13 Յունուար 1586:

2. Ասոնց գործակիցներն են « խորհուրդ, օգնութիւն ու պաշտպանութիւն մատուցողներն »: Ասոնք բռնադրանաց տակ կ'իյնան, եթէ յափշտակութիւնը լրացեալ գործ ըլլայ, այսինքն՝ կինն իրօք յափշտակողաց ձեռքն ինկած ըլլայ¹:

Այս երկու տեսակ յանցաւորներն բաց ի բռնադրանաց՝ նաեւ տալի վճուոյ պատժոց տակ ալ կրնան ձգուիլ²:

III.

γ.

Dominos temporales, aut magistratus omnes, cuiuscumque gradus, dignitatis et conditionis existant, quovis modo directe vel indirecte cogentes subditos suos, vel quoscumque alios, quominus libere matrimonia contrahant.

Տեսարք ժամանակաւորք, կամ ամէն պաշտօնեայք տէրութեան, որեւէ աստիճանի, արժանապատուութեան կամ վիճակի որ ըլլան, որոնք որեւէ կերպով ուղղակի կամ անուղղակի կը ստիպեն իրենց հպատակները կամ ուրիշ զո՞ որ եւ իցէ, որ շղարկանալ ազատութեամբ ամուսնանալ³:

Բռնադրանաց տակ կը ձգուին ամէն պաշտօնեայք տէրութեան, որոնք յանուն տէրութեան իրաւաբանութիւն մ'ի գործ կը դնեն: Ասոնց թուէն չեն կայր, թագաւոր, եպիսկոպոս, Ժողովրդագետ, ծնողք եւ այլն. թէեւ ասոնք ալ ծանր մեղանչեն՝ երբ ամուսնութեան ազատութեան դէմ բռնութիւն ի գործ կը դնեն, սպառնալով կամ պատժելով, իրական բռնութեամբ կամ թշնամանելով, ուղղակի կամ անուղղակի իրենց հպատակներն ամուսնանալու կամ այսինքն մարդու հետ ամուսնանալու ստիպելով: Որպէս զի այս ստիպող պաշտօնեայք բռնադրանաց տակ իյնան, կը պահանջուի, որ

1. Ամուսնութեան ազատութիւնն այնու ստիպմամբ ստիպիլ բռնաբարուի: Եւ

¹ Պոնտ. Կ. Բ. Խ. Բ. Մ. Թ. Թ. 4:
² Հմմ. Սբաւ. անդ:
³ Ն. Ի. Գ. Կ. Թ.:

2. Յանկրաւի ըլլայ: Եթէ իրաւացի պատճառ կայ, բանադրանք չկայ. ինչպէս եթէ դատաւոր մը սրեւէ կերպով ստիպէ զմէկը, որ իւր խօսեցելոյն կամ ամուսնութեան խոստմամբ ապականած անձին հետ ամուսնանայ:

Իսկ ամուսնութենէն ետ կէսալու ստիպելն այս բանադրանաց տակ չ'իյնար. վասն զի կանոնս կ'ըսէ՝ « չկարենան ազատորոյժ ետրի ամուսնանայ »: Այս յանցաւորներն այն ատեն կ'իյնան բանադրանաց տակ, երբ ստիպեալ ամուսնութիւնը կը կատարուի¹:

IV.

Negantes vera ac rata esse, libero contrahentium consensu facta matrimonia clandestina, quamdiu ea irrita Ecclesia non fecit.

Ի. Որոնք որ ամուսնացելը ազատ հաւանութեամբն եղած գաղտնի ամուսնութեան՝ ցորչափ որ Եկեղեցին նոյնն անվաւեր չէ ըրած, ճշմարիտ եւ վաւեր ըլլալը կ'ուրանան:

V.

Falso affirmantes a filiis familias, sine consensu parentum contracta, irrita esse, et parentes ea rata vel irrita facere posse.

Բ. Որոնք որ ստութեամբ կը հաստատեն՝ թէ որդւոց առանց ծնողաց հաւանութեան ըրած ամուսնութիւնն անվաւեր է, եւ թէ՛ ծնողք կրնան նոյնը վաւերացնենլ կամ ոչնչացնենլ:

Այս երկու կանոնաց մէջ Ս. Ժողովն այն վարդապետութեան վրայ կը յենու, որ ամուսնութիւնը կը կայանայ՝ ամուսնացելոց երկակողմանի ազատ հաւանութեան վրայ: Անոր համար կը մերժէ Ս. Ժողովն այն կարծիքն՝ որ ժողովրդապետին եւ երկու վկայից ներկայութիւնն այն տեղերն՝ ուր Տրիդ. Ս. Ժողովն չէ հրատարակուած, եւ կամ ծնողաց հաւանութիւնն՝ ամուսնութեան վաւերութեան բացարձակապէս հար-

¹ Բատ. էջ 328, թ. 472, 473:
² Ն. Ժ. Գ. Կ. 1:

կաւոր կը համարի. վասն զի թէ եւ առանց եկեղեցական օրհնութեան ամուսնանալն ապօրինաւոր է, բայց չէ անվաւեր հոն, ուր Տրիդ. Ս. Ժողովոյ ամուսնութեան վճիռը չհրատարակուելով՝ չէ անվերացուցուած:

Ուստի բանադրանաց տակ կ'իյնան՝

1. Որոնք որ կը հաստատեն՝ թէ Տրիդ. Ս. Ժողովն յառաջ առանց ժողովրդապետի եւ երկու վկայից եղած ամուսնութիւնը, կամ նոյն ժողովն ետքը, ուր որ նոյն ժողովոյն այս վճիռն չէ հրատարակուած, առանց վերոյիշեալ անձանց ներկայութեան եղած ամուսնութիւններն անվաւեր են¹:

2. Որոնք որ կը հաստատեն, թէ որդւոց առանց հաւանութեան ծնողաց ըրած ամուսնութիւններն անվաւեր են, կամ՝ թէ այսպիսի ամուսնութիւնը ծնողաց հաւանութեամբը վաւերութիւն կը ստանան, կամ՝ թէ առանց ծնողաց հաւանութեան եղած ամուսնութիւնը կրնայ անոնցմէ ոչնչացուիլ:

VI.

Praesumentes docere, praedicare, vel pertinaciter asserere, seu etiam publice disputando defendere illis, quos conscientia peccati mortalis gravat quandumeunque etiam se contritos existiment, habita copia confessoris, ante susceptionem Eucharistiae, non esse praemitendam confessionem sacramentalem.

Գ.

Որոնք որ կը յանդգնին ուսուցանել, քարոզել, կամ յամառութեամբ հաստատել կամ նաեւ հրապարակաւ վիճելով պաշտպանել թէ անոնց, որոնց կիրով մահուչափ մեղք ծանրացած է, որոշափ ալ հրենք զիրենք կատարեալ զըջացած համարին, երբ խոստովանա՞օր ղիւրութիւն ունին, հարկ չըլլայ յառաջ քան զՍ. Հատորութիւն ընդունիլը նախ խորհրդական խոստովանութեան մերժենալ²:

¹ Բատ. էջ 326, թ. 467:
² Ն. Ժ. Գ. Կ. ԺԱ:

Վաննիս բանադրանաց առարկան չորս է .

1. « Տխտոցանէլ » այն կարծիքը, թէ մահացու մեղք ունեցողին համար Ս. Հաղորդութեան մերձեւնալէն յառաջ՝ նախքնթաց խորհրդական խոստովանութիւնը հարկաւոր չէ :

2. « Գրարողել » այն այս մտքութիւնը :

3. « Հատարանէլ » նոյնը յամառութեամբ՝ առանձնական կամ հրապարակական խօսակցութեան մէջ :

4. « Պաշտպանել հրապարակահիւսն » եւ ոչ՝ առանձնական վիճարանութեանց մէջ նոյնը, ցուցումներ յառաջ բերելով եւ առարկութիւնները լուծելով :

Այս բանադրանաց մէջ իյնալու համար կը պահանջուի միշտ « յամառութիւն » , սյոխքն՝ զիտութեամբ եւ կամօք դործել : Անոր համար պիտան բանադրանքէ՝

ա. Թանձր, եւ ըստ ոմանց՝ նաեւ կամակար տգիտութեան մէջ եղողներն :

բ. Առանձինն (privatim) պաշտպանողներն, բայց միայն յամառութեամբ չհաստատեն :

գ. Աննք՝ որ կ'ուսուցանեն, կը քարոզեն, եւ այլն, թէ այս խոստովանութիւնը յատուածային պատուիրանն չի պարտաւորեր :

դ. Որոնք որ կը հաստատեն՝ թէ Տրիդ. Ս. Ժողովէն յառաջ ոչ աստուածային եւ ոչ եկեղեցական դրական օրէնք կար. թէ եւ յանդուգն ըլլայ այս դրութիւնն :

ե. Այն ամէն հաւատացեալք կամ քահանայք, որոնք թէ եւ խոստովանահայր կարենան գտնել, զործնականապէս՝ մահացու մեղաց վիճակի մէջ առանց խոստովանելու կը հաղորդին կամ կը պատարադեն :

Միայն երկու դէպքի մէջ մահացու մեղք ունեցող մ'առանց խոստովանութեան, միայն կատարեալ զլքմամբ կրնայ հաղորդուիլ կամ պատարադել, եւ ասոնք են՝ 1. Ստիպիչ հարկ : 2. Պակասութիւն խոստովանահօր¹ :

¹ Ասոնց վրայ տես Բարդուէլէն Արքեպիսկոպոսիտի ի մասնաւորի Պէլլառոք, Հատ. Գ. էջ 212. ուր այս երկու գիպաց վրայ մանրապատու՝ կը խօսուի :

Բ. Դ Ա Ս

Կ Ա Խ Ա Կ Ա Յ Ո Ի Թ Ի Կ Ե Բ

I.

Ա.

Nulli Episcopo liceat, eiusvis privilegii praetextu, Pontificalia in alterius dioecesi exercere, nisi de Ordinario loci expressa licentia, et in personas eidem Ordinario subiectas tantum; si secus factum fuerit, Episcopus ab exercitio Pontificalium, et sic ordinati ab executione Ordinum sint ipso iure suspensi.

Ոչ ումիք Եպիսկոպոսի օրէն է, նրեւէ արքայութեան պատճառաւոր՝ ուրիշին թեմին մէջ Հայրապետականք կատարել, բայց միայն տեղւոյն Կարգաւորին յայտնի հրամանաւն : եւ նոյն Կարգաւորին հպատակ անձանց վրայ միայն. եթէ այլազգ գործուի, Եպիսկոպոսն Հայրապետականաց զործածութենէն, եւ այնպէս ձեռնադրեալն Կարգի գործածութենէն նովին իրաւամբ կախուած մնա :

Վաննիս կախակայութեան տակ կը ձգէ

1. « Զեպիսկոպոստունս » ի գործածութենէն Հայրապետականաց կամ Եպիսկոպոսական զարգուց², երբ՝

ա. Ուրիշին թեմին մէջ առանց հրամանի տեղւոյն Կարգաւորին՝ իրաց կամ անձանց վրայ Եպիսկոպոսական զարգ կը գործածեն : Այս յայտնի հրամանը միայն տեղւոյն Կարգաւորն՝ Եպիսկոպոսը կրնայ տալ, եւ ոչ Ընդհրին. Տեղապահն, եթէ առանձին կերպով իսոյն յանձնարարեալ չէ : Իսկ Եպիսկոպոսական աթոռոյ դատարկութեան ժամանակ կրնայ տալ կանոնիկոսաց Ժողովոյն Գահակերպը, կամ առ ի չգոյէ նորա՝ դատարկութենէն մինչեւ ութ օր՝ ժողովն իսկ :

բ. Ուրիշին թեմին մէջ՝ թէ եւ հրամանաւ Կարգաւորին, Եպիսկոպոսական զարգ կը գործածեն այնպիսի անձանց վրայ, որոնք ոչ իրեն եւ ոչ այս Կար-

¹ Կ. Զ. Կ. Ե. Ի.
² Տես էջ 240 :

գաւորին հպատակ են: Եպիսկոպոս մը կրնայ օտարին թեմին մէջ կարգաւորէն եպիսկոպոսական զարդուց գործածութեան հրաման առնելով՝ թէ իւր հպատակը ձեռնադրել եւ թէ ուրիշ Եպիսկոպոսի մը հպատակը, եթէ ասիկայ ընդհանուր կամ առանձին այս Եպիսկոպոսին ուղղեալ ընծայագիր մ'ունի եւ ինքը կարգաւորէն ձեռնադրութեան հրաման առած է: Իսկ եթէ օտարին թեմին մէջ՝ առանց եպիսկոպոսական զարդուց գործածութեան հրաման առնելու, ուրիշ երրորդի մը հպատակն առանց ընծայագրի ձեռնադրէ, այն ատեն թէ այս կախակայութեան տակ կ'լինայ, վասն զի օտարին թեմին մէջ եպիսկոպոսական զարդ կը գործածէ. եւ թէ Առաք. Արարչ Սահմանադրութեան Ծայրագոյն Քահանայապետին վերապահեալ կախակայութեանց Գ. կանոնին տակ. վասն զի ամէն Եպիսկոպոս միայն իւր հպատակը կրնայ օրինաւորապէս ձեռնադրել¹: — Ասոնցմէ զատ, կանոնս նաեւ

2. Այսպէս՝ «նեղնայրեայնէրն» ընդունած կարգէն կը կախակայէ:

Երկու կախակայութեանց ալ տեւողութեան ժամանակը չորրորդի. ուստի, մինչեւ որ արձակուին՝ կը մնան: Եւ որովհետեւ Տրիդ. Ս. Ժողովն արձակման վերապահութեան վրայ չի խօսիր, անոր համար այսպիսիք նաեւ Եպիսկոպոսներէն ալ կրնան արձակուիլ²:

II.

Բ.

Nemo Episcoporum, qui titulares vocantur, etiamsi in loco nullius dioecesis, etiam exempto, aut aliquo monasterio cuiusvis Ordinis residerint, aut moram traxerint, vigore cuiusvis privilegii sibi de promovendo quoscumque ad se venientes pro tempore concessi, alteri-

ուչ որ յեպիսկոպոսաց՝ որ Տիողոսականք կը կոչուին, — թէ եւ անթէմ կամ ազատ տեղոյ մը մէջ, կամ նրելէ կարգի վանքին մէջ քնակութիւն նստատած ըլլան կամ առ ժամանակ մի քնակին, — կարող ըլլայ՝ գորութեամբ արտօնութեան մ'որ ամէն իրեն նկողնորուն

¹ Բառ. էջ 358. թ. 512.
² Պոնաչ. վ. Գ. 10. Բ. 11. Ժ. Բ. Թ. 6:

us subditum, etiam praetextu familiaritatis continuae commensalitatatis suae, absque sui proprii Praelati expresso consensu, aut litteris dimissoris, ad aliquos sacros aut minores Ordines, vel primam tonsuram promovere, seu ordinare valeat. Contrafaciens ab exercitio Pontificalium per annum, taliter vero promotus ab executione Ordinum sic susceptorum, donec suo Praelato visum fuerit, ipso iure sint suspensi.

Կարգ տալու համար առ ժամանակ շնորհուած ըլլայ, ուրիշ նպատակն սուրբ աստիճան կամ փոքր աստիճան կամ նաեւ խուզումս ներաց տալ կամ ձեռնադրել նաեւ յարստու սեղանակցութեան ընտանութեան պատճառանոց կարող է, առանց անոր Առաջնորդին բացայայտ նաւանութեամբ կամ ընծայագրոյն: Հակառակն ընողն ի գործածութենէ Հայրապետականաց տարի մը նովին իրաւամբ կախեալ ըլլայ. իսկ Կարգ անողը՝ այս կերպով առած Կարգին պաշտամունէն նովին իրաւամբ կախեալ մայցորչակի իւր Առաջնորդին կամին է¹:

Մինչեւ հիմայ ըստածներէն՝ դիւրին է ի միտ առնուլ այս եւ յաջորդ կանոնաց իմաստն. անոր համար աւելորդ կը համարինք մանրամասն մեկնութեանց իջնալ²:

III.

Գ.

Quod si quis ab alio promoveri petat (quam a proprio Episcopo) nullatenus id ei, etiam cuiusvis generalis aut specialis rescripti vel privilegii praetextu, etiam statutis temporibus permittatur; nisi eius probitas ac mores Ordinarii sui testimonio commendentur; si secus

Եթէ մէկն (իւր սեպական Եպիսկոպոսէն զատ) ուրիշ մէկէ մ'աստիճան ամուլ ինդրէ, այդ նաեւ նրելէ ընդհանուր կամ մասնական պատասխանագրոյ կամ արտօնութեան պատճառանոց, նմու սահմանեալ ժամանակի մը մէջ չշնորհուի անոր. բայց միայն՝ եթէ անոր լաւ-

¹ Ն. Ժ. Գ. Գ. Բ. Բ.
² Հ. մ. Փ. Բ. Հայնէր, էջ 346: Բառ. էջ 360, թ. 516: Վ. է. Բ. էջ 405, թ. 648. Ընդ Բ.

fiat, ordinans a collatione Ordinum per annum et ordinatus a susceptorum Ordinum executione, quamdiu proprio Ordinario videbitur expedire, sit suspensus.

IV.

Ab officio et beneficio sunt ipso iure per annum suspensi Abbates et alii exempti, aut collegia vel capitula quaecumque etiam ecclesiarum cathedralium, aliquibus clericis saecularibus, contra ius Episcoporum, litteras dimissorias, ut ab aliis ordinentur, concedentes.

V.

Non licet capitulis ecclesiarum, sede vacante, infra annum a die vacationis, ordinandi licentiam, aut litteras dimissorias, tam ex iuris communis dispositione, quam etiam cuiusvis privilegii aut consuetudinis vigore, alicui, qui beneficii ecclesiastici recepti, sive recipiendi occasione aretatus non fuerit, concedere. Si secus fiat, capitulum contraveniens eccle-

ուծիւնն ու քարչն իւր Կարգաւորին վկայութեամբն հաստատուի: Եթէ այլազգ գործով, ձեռնադրողն տարի մը Կարգ տալէն, իսկ ձեռնադրեալն ընդունած Կարգին գործածութենէն կախեալ ըլլայ՝ ցորչափ ժամանակ որ սեպհական Կարգաւորին պատշաճ թուի¹:

Դ.

Ի պաշտամանէ եւ ի քարերարութենէ նովին իրաւամբ տարի մը կախեալ են Աքքայր եւ այլք՝ որ ազատ են, կամ՝ սրբուէ կաճառ կամ՝ ժողով կանոնիկոսաց նսնւ ավոռանիստ եկեղեցեաց. որ աշխարհիկ կղերիկոսաց՝ ընդդէմ՝ իրաւանց Եպիսկոպոսաց, ուրիշէն ձեռնադրուելու ընծայագիր կու տան²:

Ե.

Չէ օրէն ժողովոյ կանոնիկոսաց եկեղեցեաց, ավոռոյ դատարկութեան ժամանակ դատարկութեան օրէն սկըսեալ տարւան մը միջոցի մէջ թէ ընդհանուր իրաւանց մնկնութեան, եւ թէ՛ սրբուէ արտօնութեան կամ՝ սովորութեան զօրութեամբ՝ ձեռնադրուելու իշխանութիւն կամ՝ ընծայագիր տալ անձի մը որ ընկալեալ կամ՝ ընդունելի եկեղեցական քարերա-

siastico subiaceat interdicto: et sic ordinati, si in minoribus Ordinibus constituti fuerint, nullo privilegio clericali, praesertim in criminalibus, gaudeant: in maioribus vero, ab executione Ordinum, ad beneplacitum futuri Praelati sint ipso iure suspensi.

րութեան առթիւ ձեռնադրուելու ստիպեալ չէ: Եթէ այլազգ գործով, ընդդիմադարձ ժողովն եկեղեցական արգելման տակ իյնայ, իսկ այսպէս ձեռնադրեալք, եթէ փոքր աստիճանները միայն ընդունած են, ընսա կղերական արտօնութիւն չունենան՝ մնաւանդ յոճրականս. իսկ եթէ մեծ աստիճանները, ի գործածութենէ Կարգին ցկանս գալի Առաջնորդին նովին իրաւամբ կախակայեալ ըլլան¹:

VI.

Si quis parochus, vel alius sacerdos, sive regularis sive saecularis sit, etiam si sibi ex privilegio vel immemorabili consuetudine licere contendat, alterius parochiae sponso sine illorum parochi licentia matrimonio coniungere aut benedicere ausus fuerit, ipso iure tamdiu suspensus maneat, quamdiu ab Ordinario eius parochi, qui matrimonio interesse debebat, seu a quo benedictio suscipienda erat, absolvatur.

Եթէ ժողովրդապետ մը կամ ուրիշ քահանայ մը, ըլլայ աշխարհիկ, ըլլայ կրօնաւոր, — թէ եւ հաստատ համոզուած ըլլայ՝ որ իրեն ներեալ է յարտօնութենէ կամ՝ յանյիշատակ սովորութենէ, — յանդգն ուրիշ ժողովրդապետութեան խօսեալներն (նշանածներն) անանց անոնց ժողովրդապետին նրամանին ամուսնացընել կամ՝ պատկն օրհնել, նովին իրաւամբ այնչափ ատեն կախակայեալ մնայ, մինչեւ որ այն ժողովրդապետին Կարգաւորէն արձակուի, որուն առջև որամուսնութիւնը պէտք էր ըլլալ կամ՝ որմէ օրհնութիւն պիտի ընդունուէր²:

¹ Ն. Ի. Գ. ԳԼ. Ը.: Հմմ. Փր. Հայեր, էջ 347: Բատ. էջ 362, Թ. 518: Վէր. ք. էջ 405 Ընդ Գ. Գ.:
² Ն. Ի. Գ. ԳԼ. Ժ.: Հմմ. Փր. Հայեր, էջ 348: Բատ. էջ 364, Թ. 521 Ընդ Բ. Գ. Գ.: Վէր. ք. Լ. էջ 406, Ընդ Ե:

¹ Ն. Ե. ԳԼ. Ժ.: Հմմ. Փր. Հայեր, էջ 350:
² Ն. Ի. Գ. ԳԼ. Լ. Վասն բարեկ. ամուսն.: Հմմ. Փր. Հայեր, էջ 352: Բատ. Թ. 526:

Այս կանոնս միայն այն տեղեաց համար է, ուր Տրիդ. Ս Ժողովոյ ամուսնութեան վճիռը հրատարակուած է, ինչու որ այս վճռոյ նկատմամբ նոյն Տրիդ. Ս. Ժողովն առանձինն կերպով կ'ըսէ, թէ «Այս վճիռն ամէն Ժողովոյ պատուութեանց մէջ սկսի զօրութիւն ունենալ, իւրաքանչիւր Ժողովոյ պատուութեանց մէջ հրատարակուելէն 30 օր ետքը»: Ուստի ուր որ այս վճիռը չէ հրատարակուած, կախակայութիւն ալ չկայ, բայց միայն ուրիշ կերպով մ'այս պատիժը Ժողովոյ պատուութեան մը մէջ մուծուած չըլլայ. ինչու որ սովորութիւնը կրնայ այսպիսի օրէնք մը մուծանել, թէեւ հոն նոյն վճիռը հրատարակեալ չըլլայ:

VII.

Suspensi sint ipso facto Episcopi, quod absit, si concubinas aut alias mulieres, de quibus haberi possit suspicio, in domo vel extra detinere, aut cum iis aliquam consuetudinem habere audeant, et a synodo provinciali admoniti, se non emendaverint.

Նովին զործով կախակայեալ ըլլան Եպիսկոպոսները, որ քսւ եւ մի լեցի, եթէ նարձնը կամ ուրիշ կասկածնի կանայք ի տան կամ արտաքոյ պահել կամ անոնց հետ զործողութիւն մ'ունենալ յանդգնին, եւ Գաւառական Ժողովէն յորդորուելէն ետեւ չեն ուղղուիր:

Գ. Դ Ա Ս

ԱՐԳԵԼՄՈՒՆՔ

I.

Metropolitanus suffraganeos Episcopos, absque iustis causis, per unum integrum et continuum annum absentes, Metropolitanum vero sic absentem suffraganeus Episcopus antiquior residens, sub poena interdicti

Եթէ Բորեպիսկոպոսները առանց իրաւացի պատճառաց ամբողջ տարի մ'անընդհատ հեռանան, Մետրոպոլիտը, — իսկ եթէ Մետրոպոլիտան այս կերպով հեռանայ՝ Բորեպիսկոպոսաց ժամանակաւ նսագոյնը —

¹ Ն. Ի. Կ. 14. Վասն բարեկ.: Հմմ. Փր. Հայնէր, էջ 353: Բատ. Թ. 528:

ingressus ecclesiae eo ipso incurrenda, infra tres menses per litteras, seu nuntium Romano Pontifici denunciare teneantur.

պարտաւորեալ ըլլայ՝ ընդ պատժով նովին զործով անկանելի արգելման մտանելոյ յեկեղեցի երեք ամսուան միջոցի մէջ թողով կամ պատգամաւորով հոռմայ-Կահանայապետին զեկուցանել:

II.

Non licet capitulis ecclesiarum, sede vacante, infra annum a die vacationis, ordinandi licentiam, aut litteras dimissorias . . . alicui, qui beneficii ecclesiastici recepti sive recipiendi occasione aretatus non fuerit, concedere. Si secus fiat, capitulum contraveniens ecclesiastico subiaceat interdicto.

Ի. Զէ օրէն Ժողովոյ կանոնիկոսաց եկեղեցեաց՝ աթոռոյ դատարկութեան ժամանակ, դատարկութեան օրէնսկըսեալ տարւան մը միջոցի մէջ . . . ձեռնադրուելու իշխանութիւն կամ ընծայագիր տալ անծի մը որ ընկալեալ կամ ընդունելի եկեղեցական բարեբարութեան տրութիւ ձեռնադրուելու ստիպեալ չէ: Եթէ այլազգ գործուի, ընդդիմադարձ Ժողովն եկեղեցական արգելման տակ իյնայ²:

Տրիդ. Ս. Ժողովոյ այս վճռոյն զօրութեամբ՝ կանոնիկոսաց Ժողովն աթոռոյ դատարկութեան ժամանակ, դատարկութեան առաջին օրէն սկսեալ տարի մը՝ ձեռնադրութեան հրաման, ընծայագիր (dimissoriale) չի կրնար տալ, բայց միայն երբ ընկալեալ կամ ընդունելի բարեբարութեան պատճառաւ. հարկ մը կայ. բայց վկայագիր (testimoniale) միշտ կրնայ տալ: Այս մէկ տարւան մէջոցին մէջ եթէ ձեռնադրել տալ կ'ուզուի՝ ոչ թէ սահմանակից Եպիսկոպոսին կամ Հայրապետին պէտք է դիմել, այլ Ս. Աթոռոյ: Այս արգելքն Հռոմոյն Աթոռոյն դատարկութեան ժամանակ նոյն Աթոռոյն Տեղապահին համար չ'արժեք. վասն զի

¹ Ն. Զ. Կ. 1: Հմմ. Փր. Հայնէր, էջ 368:
² Ն. Կ. 10: Հմմ. Փր. Հայնէր, 368:

Տրիդ. Ս. Ժողովն Առաքելական Աթոռոյն իրաւաբա-
նութիւնը չի կրնար ամփոփել:

Աթոռոյ գատարկութենէն տարի մ'ետքը Տե-
ղապահն, եւ ոչ կանոնիկոսաց Ժողովը, կրնայ բնծա-
յադիր տալ:

Բ. ԽՈՒՄԲ

**ՔՆՆՈՒԹԵԱՆ Ս. ԺՈՂՈՎՈՅՆ 1872 ԳԵԿՑ. 4 ԻՆ ՎՃՌՈՎՆ
Ի ԶՕՐՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ՀԻՆ ԲԱՆԱԴՐԱՆՔ ՄԸ**

I.

Missionarios mercaturae in
Indiis Orientalibus operam
dantes et Superiores. eorum
immediatos qui delinquentes
non punierint.

Ա.

Առաքելութիւն ընողներ՝ որ
Արևելեան Հնդկաստան ա-
ռևտրոյ կը պարապին, եւ
անոնց անմեջական Առաջ-
նորդներն՝ որ գլխնցաւորս
չնն պատուհասեր:

Այս բանագրանքն, որովհետեւ ոչ յայտնապէս
Առաք. Աթոռոյ Սահմանադրութեան մէջ կերպով մը
կը յիշատակուէր, եւ ոչ ալ Տրիդ. Ս. Ժողովոյն ուղ-
ղակի դրածներէն էր, Առաք. Աթոռոյ Սահմանադրու-
թեամբ բարձուած կը նկատուէր, եթէ 1872 Գեկտ.
4ին Քննութեան Ս. Ժողովոյն՝ ճոխութեամբ Ս. Քա-
հանայապետին տուած շրջաբերականովն տակաւին ի
գորութեան չհրատարակուէր:

Այս բանադրանքն՝ որ ոմանց (Աւանդինի, եւ
այլք) Քահանայապետին պարզապէս վերապահեալ
թուեցաւ, մեկու մը վերապահեալ չէ:

¹ Սահման. Ի գործոց, Ուրբանոս Ը. 1633, եւ Հե-
բուրգ-Բէն, Կղէմ. Թ. 1669:

Գ. ԽՈՒՄԲ

**“ ՀՌՈՄԷԱԿԱՆ ՔԱՀԱՆՈՅԱԳԵՏՆ ”
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԴԱՏԱԿՆԻՔՆԵՐՆ**

Ա. Դ Ա Ս

**ԱՌԱՆՁԻՆՆ ԿԵՐՊՈՎ ՔԱՀԱՆԱՅԱԳԵՏԻՆ
ՎԵՐԱՊԱՀԵԱԼ ԲԱՆԱԴՐԱՆՔ**

I.

Canonicos et Dignitates, qui
ecclesiae vacantis curam,
regimen et administrationem
ausi fuerint concedere in
praesentatos ad eandem ec-
clesiam, antequam litteras
Apostolicas canonicae suae
institutionis exhibeant; nec
non alios omnes, qui prae-
missis paruerint, vel auxi-
lium, consilium aut favorem
praestiterint.

Ա.

Կանոնիկոսներ եւ Աստի-
ժանաւորք, որ անվերահսու
եկեղեցւոյ մը հոգը, վարչու-
թիւնն ու անտեսութիւնը կը
յանդգնին տալ նոյն եկեղեց-
ւոյն ներկայացուցուած ան-
ժանց, յառաջ քան իրենց
կանոնական հաստատու-
թեան Առաքելական Թուղթն
ընծայեցընելը. նոյնպէս այլ
ամէնքն՝ որ վերոյիշեալոց հա-
ւանած, կամ՝ օգնութիւն,
խորհուրդ, կամ՝ պաշտպա-
նութիւն մատուցած ըլլան:

Հոսիական Քահանայապետն կոնդակը, որ բարե-
յիշատակ Պիոս Թ. Քահանայապետն 1873 Օգոստ.
28ին տրուած է, կ'ուզէ՝ աթոռանիստ եկեղեցւոյ մը
Եպիսկոպոսին մահուանէն ետքն՝ օրինօք ընտրեալ կա-
նոնիկոսաց Ժողովոյ զահաբիցուն թեմին վարչութեան
եւ կառավարութեան նկատմամբ ունեցած կարգաւոր
իշխանութիւնն ազատ եւ անարատ պահել, սկսեալ
աթոռոյ գատարկութենէն 8 օր ետքն ընտրուած օրէն,
մինչեւ ընտրեալ եւ անուանեալ Եպիսկոպոսին Առա-
քելական Աթոռէն ընդունած հաստատադիր կանո-
նիկոսաց Ժողովոյն ընծայեցընելը: Որոնք որ այս կար-
գադրութեան դէմ կը դործեն, Հռոմայ Քահանայա-
պետին առանցին կ'երպով վերապահեալ բանադրանք,

կախակայութեամբ եւ արգելմամբ կը պատժուին: Նախ տեսնենք հոս կանոնիս մէջ բովանդակուած բանադրանքը:

Քահանայապետին առանձինն կերպով վերապահեալ բանադրանաց տակ կ'իյնան ըստ Հռոմէական Քահանայապետն կանգակին՝

1. Կանոնիկոսունք եւ պատուաւորք անվերակացու աթոռանիստ եկեղեցեաց, եւ առ ի չզոյէ կանոնիկոսաց այն ամենքն՝ որ կարող են Տեղապահ Աթոռակալ մը դնել, կամ անվերակացու թեմն անձամբ կառավարել¹, երբ կը յանդգնին սրբուէ տիտղոսով տալ կամ յանձնել անվերակացու եկեղեցւոյն վարչութիւնն ու կառավարութիւնը՝ օրինաւոր Տեղապահը մերժելով՝ աշխարհական իշխանութենէն առ այն անուանելոյն կամ առաջարկելոյն, յառաջ քան անոր իւր ընտրութեան հաստատութեան թուղթն ըստ օրինի ընծայեցընելը:

Ըսինք անուանելու կամ անվերակացու վասն զի կանոնիս մէջ միայն ասոնք կը յիշուին: Անոր համար կանոնիկոսաց ժողովէն ընտրելու այս կանոնիս տակ չ'երթար². վասն զի ըստ կանոնական իրաւանց մեծ զանազանութիւն կայ ի մէջ անուանելոյն (nominatus) կամ առաջարկելոյն (praesentatus), եւ ի մէջ ընտրելոյն³ (electus): «Գարձեալ նոյն Սահմանադրութեան մէջ կ'ըսուի՝ «Գործնալ իրաւոյն Տեղապահն» ուստի, եթէ նոյն իսկ Տեղապահն անուանուի կամ ներկայացուի կամ կանոնական կերպով հեռացուի, (ինչպէս՝ ինքնակամ հրաժարելով, մահուամբ կամ ուրիշ օրինաւոր պատճառաւ մը) եւ անուանեալն կամ ներկայացեալն անոր տեղ դրուի, վերոյիշեալ պատիժներէն եւ ոչ մէկը տեղի ունի: — Նոյն բանադրանաց տակ կ'իյնան նաեւ՝

2. Աշխարհական իշխանութենէ անվերակացու եկեղեցւոյն անուանեալն կամ առաջարկեալն, եթէ կը յանդգնին անձամբ կամ ուրիշը մը ձեռօք յանձն առնուլ նոյն եկեղեցւոյն վարչութիւնն ու կառավարու-

¹ Կուրի-Պալլ, Բ. 973: Չոլլ, էջ 86 թ. 199 եւ այլն:
² Փր. Հայնէր, էջ 126:
³ Ռիեդի, էջ 125, թ. 2. Ծան. 4:

թիւնը յառաջ քան Առաքելական հաստատութեան թուղթը դալն կամ ընծայեցընելը, թէեւ կանոնիկոսք կամ պատուաւորք նոյնը շնորհէն կամ յանձնեն: — Այսպիսի անուանեալք այսպէս անուանուելով՝ բնաւ իրաւունք մը չեն ունենար եւ իրենց ամէն կարգադրութիւնն ոչինչ եւ անվաւեր է¹: — Աւերջապէս բանադրանաց տակ կը ձգուին՝

3. Այն ամենքն՝ որ վերոյիշեալ երկու յանցաւորաց՝ թեմին վարչութեան յանձնարարութեան նկատմամբ օգնութիւն, խորհուրդ կամ պաշտպանութիւն կը մատուցանեն, կամ նոյն անուանելոյ իբրեւ նոյնպիսեաց կը հնազանդին, ինչ աստիճան կամ արժանապատուութիւն ալ ունենան²: Բայց ի բաց կ'առնուին «Եպիսկոպոսական արժանապատուութեամբ ճիշտացեալ» վասն զի ասոնց համար ուրիշ պատիժներ՝ կախակայութիւն եւ արգելումն դրուած է, որուն վրայ ի մտայ:

Ասոնք կ'իյնան նաեւ Առաք. Աթոռոյ Սահմանադրութեան՝ Քահանայապետին վերապահեալ կախակայութեանց Ա. կանոնին մէջ:

Բ. Դ Ա Ս

ԱՌԱՆՁԻՆՆ ԿԵՐՊՈՎ ԲԱՀԱՆԱՅԱՊԵՏԻՆ
ՎԵՐԱՊԱՀԵԱԼ ԿԱՆԱԿԱՅՈՒԹԻՒՆ ԵՒ
ԱՐԳԵԼՈՒՄՆ

I.
Si vero aliqui ex praedictis Episcopali characterē sint insigniti, in poenam suspensionis ab exercitio Pontificalium et interdicti ab ingressu ecclesiae ipso facto, absque ulla declaratione in-

II.
Իսկ եթէ ի վերոյիշեալ ոմանք եպիսկոպոսական պատուով ծնխացեալ են, ընդ պատժով կախակայութեան ի գործածութենէ հայրասպետականաց եւ արգելումն ի մտանելոյ յեկեղեցի

¹ Ռիեդի, էջ 126, Յաւելում:
² Սահմանադր. Հռոմէական Քահանայապետն:

cidunt, S. Sedi pariter re-
servatam.

նովին գործով, առանց ու-
րիչ յայտարարութեան կ'իյ-
նան, եւ այս պատիժը Ս.
Աթոռոյ նոյնպէս վերապահ-
եալ է¹:

Վերոյիշեալ կանոնին մէջ յիշուած երեք յան-
ցանաց յանցար եւ Եպիսկոպոսունք նոյն բանադրանաց
տակ չեն կ'յնար, հապա կ'իյնան՝

1. Կախարչութեան տակ, որով չեն կրնար բնաւ
Եպիսկոպոսական զարգ մը² գործածել, մինչեւ որ Հռո-
մայ Քահանայապետէն արձակուին. վասն զի կանոն
կ'ըսէ, «որոնք Ս. Աթոռոյն նոյնպէս (ուստի առան-
չին կ'երպով) վերապահեալ են.»

2. Արքեւսն տակ, որով չեն կրնար եկեղեցի
ժողովել³, մինչեւ որ Ս. Աթոռէն արձակուին:

Թէ կախարչութեանս եւ թէ արքեւսն տակ
կ'իյնան Եպիսկոպոսունք այն ամէն դիպաց մէջ, որոնց
համար Եպիսկոպոս չեղողներուն վրայ բանադրանք
դրուած է: Ուստի կախարչութեանս եւ արքեւսն
տակ կ'իյնայ՝

ա. Այն Եպիսկոպոսն՝ որ կը յանդգնի կանոնի-
կոսաց հետ ժողովէն օրինօք ընտրեալ Տեղապահին
իրաւարանութիւնն ուրիշին թողուլ կամ յանձնել:

բ. Այն Եպիսկոպոսն՝ որ կը յանդգնի շնորհ-
մամբ կամ յանձնարարութեամբ ժողովոյն՝ անվերա-
կացու եկեղեցւոյ մը վարչութիւնն ու կառավարու-
թիւնն ի վնաս օրինօք ընտրեալ Տեղապահին յառաջ
քան Առաքելական հաստատութեան թուղթն ընծա-
յեցընելը՝ յանձն առնուլ կամ ընդունիլ:

գ. Այն Եպիսկոպոսն՝ որ այս գործոց օգնու-
թեամբ, խորհրդով կամ պաշտպանութեամբ գործա-
կից կ'ըլլայ⁴:

¹ Սահման. Հռոմէական Քահանայապետէն:
² Տես էջ 240:
³ Տես էջ 248:
⁴ Հմմտ. Բատ. էջ 368, Թ. 531: Ռիեդի, էջ 126 ընդ դ.

Այսպիսիք կ'իյնան նաեւ Առաք. Աթոռոյ Սահ-
մանադրութեան՝ Քահանայապետին վերապահեալ կա-
խարչութեանց Ա. կանոնին տակ:

Գ. Դ Ա Ս

ՍԻՒՆՀՈԴՈՍԱՅ Ս. ԺՈՂՈՎՈՅՆ 1874
ՄԱՅԻՍ 13ԻՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻՆ ԱՆՈՒԱՄԲ
ՏՈՒԱԾ ԲԱՆԱԴՐԱՆԻՆ

Sacerdotes suffragante po-
pulo ad parochi sive vicarii
officium electos, qui aude-
ant sive ecclesiae sive iur-
ium ac bonorum praetensam
possessionem arripere atque
obire munia ecclesiastici
ministerii, ipso facto incur-
rant excommunicationem
maiores peculiariter reser-
vatam S. Sedi, aliasque
poenas canonicas.

Ժողովողեան քուէերն ի
պաշտօն ժողովողապետի
կամ տեղապահի ընտրուած
քահանայք, որ եկեղեցւոյ
կամ իրաւանց եւ ստացու-
ածոց կարծեալ ստացումն յա-
փըշտակել եւ եկեղեցական
պաշտօնէի պաշտօն կատար-
րել կը յանդգնին, նովին
գործով Ս. Աթոռոյ առանձինն
կերպով վերապահեալ մեծ
բանադրանաց եւ ուրիշ կա-
նոնական պատժոց տակ իյ-
նան¹:

Այս Հռոմայ Քահանայապետին առանչին կ'երպով
վերապահեալ բանադրանքը տրուած է ընդդէմ եկե-
ղեցականաց՝ որոնք օգնականութեամբ ժողովողեան
(ինչպէս անկէ ընտրուելով) կամ աշխարհական իշխա-
նութեան ժողովրդապետութիւններ ստանալու կը ջա-
նան: Ասիկայ թէեւ գլխաւորաբար Վենետիոյ եւ Մե-
դիտերանո թեմերուն համար տրուած է, բայց միան-
գամայն ամէն որեւ օրինաց զորութիւն ունի. այնպէս որ
ամէն տեղ ժողովրդապետութեանց այսպիսի բռնա-
կալներն բանադրանաց տակ կ'իյնան: Վասն զի նոր
բանադրանք մը չէ, այլ Առաք. Աթոռոյ Սահմանա-
դրութեան առանձինն կերպով վերապահեալ բանա-
դրանաց Զ. եւ մանաւանդ ԺԱ. կանոնաց առանձինն

¹ Վճիռ Ս. Ժ. Սիւնհ. 13 Մայիս 1874:

մէկ դէպքը կամ մերձեցուցումն է: Եւ իրօք ալ, այսպիսի բռնակալք կամ տէրութեան կողմանէ գրուած ժողովրդապետք կամ օրինօք գրուած ժողովրդապետի մը ժողովրդապետութիւնը կը յափշտակեն, եւ այն ատեն ԺԱ. կանոնին տակ կ'իյնան, եւ կամ դատարկաթու ժողովրդապետութիւն մը կը գրաւեն, եւ այն ատեն՝ որովհետեւ Եպիսկոպոսին նոյնին վրայ ժողովրդապետ դնելու եկեղեցական իրաւաբանութիւնը կ'արգելուն, կ'իյնան Զ. կանոնին տակ¹: Անոր համար աւելորդ կը համարինք հոս վերստին մեկնութիւն տալ:

Բայց որովհետեւ այն Ս. ժողովոյն վճիռն կը յաւելու. « Եւ այս ամէնքն (այսինքն՝ այսպիսի բռնակալք) խորշէլէք են ի հաւատացելոց ըստ պատուիրանի Տեառն, իբրեւ յօտարաց եւ ի դողոց, որք ոչ գան եթէ ոչ զի գողացին եւ սպանցեն եւ կորուսցեն »², հարկ է որ դիտենք հաւատացելոց այսպիսի բռնակալաց հետ վարուելու կերպը, զոր Պիոս Զ. Գաղղիայի համար սուած հրահանգին մէջ կ'ուսուցանէ³:

1. Չէ օրէն այսպիսի բռնակալաց աղայ մկրտել տալ. բայց միայն ի հարկաւորութեան, երբ չկայ նոյն իսկ աշխարհական մը, որ վաւերաբար մկրտել կարենայ: Նոյնպէս արգելեալ է՝ երբ այսպիսի բռնակալ մը մկրտէ, կնքահայր ըլլալ:

2. Արգելեալ է, նոյն իսկ Աիրակի եւ Տօնի օրերն այսպիսի բռնակալաց պատարագին ներկայ գտնուել, քարոզը լսել, կամ անոնցմէ կատարուած ուրիշ եկեղեցական պաշտամանց ներկայ գտնուել, կամ իրենց պատարագ մատուցանել տալ:

3. Չէ օրէն այսպիսի քահանայի մը ձեռքէն Հաղորդութիւն ընդունիլ, եւ ոչ իսկ Զատիկի ատեն: Նոյնպէս չ'ըլլար այնպիսուն խոստովանիլ. եւ եթէ մէկը խոստովանի, այն ոչ միայն ապօրինաւոր է, այլ եւ անվաւեր:

¹ Հմմ. Փր. Հայեր, էջ 128: Կուրի-Պալ. Բ. 973:

² Կուրի-Պալ. անդ:

³ Հմմ. Փր. Հայեր, էջ 129:

4. Թէեւ հրամայուած է Սրբութիւն Սրբոց տարուելու ժամանակ ծուներ դնել, բայց այս դէպքիս մէջ զանց պիտի առնուի, որպէս զի եկեղեցական հաղորդութեան եւ ոչ իսկ երեւոյթ ըլլայ: Բայց կաթողիկէայ մը վասն մեծարանաց Ս. Խորհրդոյն՝ պէտք է դլուի խոնարհեցընել: Իսկ կաթողիկէ քահանայի օրէն է, նաեւ եթէ ծով չըլլայ, այնպիսի անձէ սրբադորձուած Սրբութիւնը ճաշակել, եթէ չի կրնար Սրբութեան վայել կերպով մը պահուիլ, որպէս զի այս սուրբ նշխարներն բռնակալ քահանային ձեռքը չանցնին:

5. Արգելեալ է բռնակալի մ'առջեւ Ամուսնութեան խորհուրդը կատարել: Եւ եթէ ուրիշ միջոց չմնայ, պէտք են հաւատացեալք դոնէ երկու վկայից առջեւ Ամուսնութեան խորհուրդը կատարել՝ առանց ներկայութեան բռնակալին: Եթէ Ամուսնութիւն մը հոն, ուր Տրիդ. ժողովոյն Ամուսնութեան վճիռը հրատարակուած է, բռնակալին առջեւ կատարուի, անվաւեր է:

6. Արգելեալ է կանանց՝ օղաբերքէ ետքը բռնակալէն Քառասնօրէի օրհնութիւն առնուլ երթալ:

7. Թաղումն օրինաւոր հովուէ պիտի ըլլայ: Եթէ բռնակալ մը թաղում ընէ ի տան, յեկեղեցոյ կամ ի գերեզմանի, ոչ սք կաթողիկէայ կրնայ յուղարկաւորութեան ներկայ ըլլալ, եւ ոչ ալ՝ ննջեցելոյն կամ թաղման աղօթից կցորդ ըլլալ:

8. Մահուան վտանգին հաւատացեալք բռնակալէն կրնան արձակում առնուլ, եթէ ուրիշ կաթողիկէ քահանայ մը չկայ, եւ առանց դայթակղութեան կարելի է: Բայց ի գործնականին պէտք չէ առնուլ. հաւատացեալն ջանայ կատարեալ զղջման ներգործութիւն ընել: Վասն զի այսօրս առանց դայթակղութեան դժուարաւ կրնայ մէկը բռնակալէ արձակում առնուլ:

Դ. Դ Ա Ս

ԱՊԱՀԻԱՐՈՒԹԵԱՆ Ս. ԺՈՂՈՎՈՅՆ 1876
ՕԳՈՍՏ. 4 ԻՆ ՏՈՒԱԾ ԲԱՆԱԳՐԱՆՔԸ

Omnes et singuli praedicae societati nomen dantes, vel eam promoventes, aut ei quomocunqve faventes, vel adhaerentes.

Ամէնքն ու իւրարմաշիւրը որ յիշեալ ընկերութեան կը գրուին, կամ նոյնին տածիչ կ'ըլլան. եւ կամ որեւէ կերպով նոյնին կ'օգնեն կամ կը յարին:

Սերջին ժամանակներս Հռոմ ընկերութիւն մը կազմուած էր որ ինք զինք կ'անուանէր «*Ընկերութիւն կաթողիկէ-իտալական*», (società catolica italiana): Ասոր վախճանն էր՝ վերստին հաստատել քրիստոնէայ ժողովրդեան իրաւունքները, որով Առաքելական Աթոռայ դատարկութեան ժամանակ, Հռոմայ ժողովուրդը քահանայապետին ընտրութեան մասնակից ըլլայ: Անոր համար վերոյիշեալ խօսքերով՝ Ապաշխարութեան Ս. Ժողովն 1876 Օգոստոս 4ին առաջինն էր որով վերապահեալ բանադրանաց տակ ձգեց զասոնք:

1 Գործք Ս. Աթոռայ, Հատոր Թ. էջ 352, 353: Հիւհ. Հուլիան Արքեպիսկոպոս, 7 Տպգր. 1885, էջ 703:



Բ. ՅԱԻԵԼՈՒԱԾ

Ե Կ Ե Ղ Ե Ց Ա Կ Ա Ն Դ Ա Տ Ա Կ Ն Ի Բ

Ա.

Դ Ա Տ Ա Կ Ն Գ Լ Յ Ո Ւ Մ Ն Վ Ե Դ Ի Հ Ե Ն Ի Ը Պ Ե Ս

1. ԷՌԻԹԻՒՆ, 2. ՊԱՅՄԱՆ, 3. ՆԻԹԱԿԱՅ, 4. ԱՐՁԱԿՈՒՄՆ
ՆԻ 5. ԲԱԺԱՆՈՒՄՆ ԴԱՏԱԿՆԲԱՅ

1.

ԷՌԻԹԻՒՆ ԴԱՏԱԿՆԲՈՅ

Օրինաց զանցառութիւնն՝ որ ոչ միայն բարոյապէս մեղք է, այլ նաեւ արտաքին բարեկարգութեան կամակար բռնաբարումը, հարկ է որ արտաքին պատժով մը Եկեղեցւոյ իշխանութենէն պատուհասի. որպէս զի թէ արդարութեան իրաւացի պահանջմանց հատուցում ըլլայ, եւ թէ յանցաւորն ուղղութեան բերուի, եւ այնու վերստին հաշտուի իւր հոգեւոր Մօրն՝ Եկեղեցւոյ հետ, որուն աստուածային կամ եկեղեցական օրինացն ընդդիմադարձ գտնուեցաւ: Արդ, Եկեղեցւոյ այսպիսի բուժիչ պատիժն է *քարախնէիք* (censura), որով Եկեղեցին քրիստոսէ առած իշխանութեամբն՝ իւր յանցաւոր եւ յամառ որդիքն իւր ծոյզն ըստ մասին կամ բոլորովին ի բաց կը մերժէ: Ըստ այսմ, դատակնիքն ընդհանրապէս կը սահմանուի՝ Պարթէ հոգեւոր եւ քաղաքացիական, որով յանցաւոր եւ յամառ քրիստոսնէն իւր զբիւրի հոգեւոր բարեաց վայելիէն²:

Ըսինք՝ 1. Պարթէ. վասն զի միայն հոգեւոր համար կը տրուի. ուստի դատակնիքէ ազատ են տղայք եւ մտազուրկք: 2. Հոգեւոր. վասն զի հոգեւոր իշխանութենէն ի հոգեւոր օգուտ քրիստոսնէնց, զրկմամբ

¹ Պարթէ. ժ.Ը. 17:

² Սուրբ. վասն դատ. վ. Ա. Հ. 1. Թ. 5:

հոգի-որ բարեաց կը դրուի: 3. Բժշկական. վասն զի դատակնիքոյն գլխաւոր վախճանն է ուղղութեան յանցաւորին. իսկ հատուցումն երկրորդական վախճանն է: 4. Յանցա-որ. վասն զի յանցա-որաց վրայ միայն պատիժ կը դրուի: 5. Յատու. վասն զի յատուութեանը միայն ծանր պատժոց արժանի է: 6. Քրիտո-նայ. վասն զի պատիժը հոգորակաց վրայ կրնայ դրուիլ. իսկ չմկրտեալը հպատակ չէ Եկեղեցւոյ: Ուստի Քահանայապետը բովանդակ Եկեղեցւոյ համար, եւ Եպիսկոպոսն իւր թեմին համար կրնան դատակնիք տալ, բայց ոչ այլ ոք: 7. Կը շրջա-ի հոգի-որ քրեաց էջեղէն, որպիսի են՝ հրապարակական աղօթք, Ս. Խորհուրդք, Պատարագ, Եկեղեցական թաղումն, բարերարութիւն, հոգեւոր իրաւաբանութիւն, եւ այլն. բայց ոչ՝ առանձնական աղօթք, բարեգործութիւն, եւ այլն:

Ըստ այսմ, դատակնիք չեն՝ 1. Մշտատեւ պատիժք. 2. Զրկումն պարզ. 3. Անատակութիւն, եւ 4. Անկանոնականութիւն:

2.

ՊԱՅՄԱՆՔ ԴԱՏԱԿՆԻՔ ՈՅ

Որպէս զի մէկը դատակնիքոյ տակ իյնայ, կը պահանջուի, որ

1. Մեղք մ'ըլլայ. վասն զի չիք պատիժ ուր չիք յանցանք: Ուստի, եթէ անօրէն մը դատակնիքոյ տակ ձգուի, առ այն ի խղճի պարտաւորեալ չէ, եւ հետեւաբար զանցաւորութեամբ ալ անկանոնական չ'ըլլար: Եթէ մէկը սխալմամբ կ'ըրթուի՝ որ գործոյ մը վրայ դատակնիք կայ, նոյն գործը գործ է, թէպէտ ի խղճի յանցաւոր գտնուի, սակայն դատակնիքոյ մէջ չ'իյնար¹:

2. Մեղքը ծանր ըլլայ. այսինքն՝ կամօք եւ գիտութեամբ գործուի. վասն զի ծանր պատիժ ծանր յանցանաց վրայ կը դրուի: Ուստի, ինչ որ ծանր մեղքէ կ'արդարացընէ, կ'արդարացընէ նաեւ դատակնիքէ:

3. Մեղքն աբորդիքն ըլլայ. վասն զի զնեղքինսն չդատի աւագն: Ուստի, ցորչափ մեղքը նեղքին է, ազատ է դատակնիքէ:

¹ Սուրբ. անգ. Ա. Դ. Հ. 6: Ա. էքք. Ա. էջ 315, Թ. 503, եւ այլն:

4. Ի տեսակէ իրո՞՞մ լրացեալ ըլլայ. այսինքն՝ օրինաց պահանջածին համաձայն գործն արդեամբք կատարուած լինցած ըլլայ: Ասոր համար յինքեան լրացեալ՝ բայց սպարդիւն գործ մը դատակնիքոյ տակ չ'իյնար. ինչպէս՝ եթէ մէկն Առաջնորդի ընտրութեան ատեն քուէն անարժանի մը տայ, որ առ նուազութեան քուէից չընտրուի, թէեւ մեղանչէ, ազատ է դատակնիքէ, վասն զի արդիւնք չկայ: Նոյնպէս երբ մէկը դատակնիքեալ գործոյ մը հրաման տայ, եթէ նոյնը չկատարուի, ազատ է բանադրանքէ. վասն զի թէեւ հրամանն յինքեան լրացեալ է, բայց արդեանց հետ միացեալ չէ: Այսպէս. երբ օրէնքն գործ մը նոյն իսկ առանց արդեանց յայտնապէս բանադրանաց տակ չի ձգեր: Վասն զի եթէ օրէնքը հրաման կամ խորհուրդ տալը, փորձելը, եւ այլն իբրեւ նշանակի միայն յիշէ, յայտնի է թէ առանց արդեանց ալ դատակնիքոյ տակ կ'իյնան¹:

5. Կից ընդ յամաութեան ըլլայ. այսինքն՝ գիտնալով (թէ Եկեղեցւոյ օրէնքը եւ թէ գործոյն վրայ դրուած դատակնիքը) կամօք ընդդէմ Եկեղեցւոյ օրինաց եւ հրամանաց գործուի. վասն զի դատակնիքը յամաութիւնը կարճելու համար է: Ուստի, օրինաց կամ դատակնիքոյ, եւ կամ այս ինչ գործոյն դատակնիքօք արգելեալ ըլլալուն տգիտութիւնը, նոյնպէս բացարձակ կամ յարաբերութեամբ ծանր երկիւղը կ'արգարացընեն դատակնիքէ, թէպէտ ոչ միշտ ի մեղաց²:

Վերջապէս 6. Մեղքը քուրթիքն անցեալ ըլլայ. վասն զի դատակնիքը բուժիչ պատիժ է, իսկ ուղղեալ մը չէ կարօտ բժշկութեան: Բայց որպէս զի մեղքն անցեալ ըլլայ, յարգիւնս իւր պիտի շտեւէ, ինչպէս է՝ չբարձեալ գայթակղութիւն մը, շհատուցեալ անիրաւութիւն մը, եւ այլն:

Ըսուածնեքն բնականապէս կը հետեւին՝ Դատարարացընող պարտաւորեան: Այսպիսի է՝

1. Տքիտութեան, որ կրկին է. ա. Անյողութիւն, երբ

¹ Շմայց. Ե. տ. 39. Թ. 64, եւ այլն:
² Ռիեդի. Թ. 8, ընդ այլ հեղինակս:

բնաւ խորհուրդ կամ երկբայութիւն մը մուտքած կամ սխալած ըլլալուն նկատմամբ միտքը չի գար, որով եւ յաղթելու անկարող կ'ըլլայ: Ասիկայ միշտ կ'արդարացնէ դատակնքէ եթէ ըլլայ բացարձակ՝ յինքեան, եւ եթէ յարաբերութեամբ՝ այս ինչ անձին համար ան- յաղթելի: Անհրաժեշտ-նն ու մոռացո-նի-նն ալ ան- յաղթելի տգիտութիւն է¹:

Բ. Յուլիէի, երբ սխալած ըլլալուն վրայ խոր- հուրդ կամ երկբայութիւն մը, եւ նոյնը բառնալու պարտքը միտքը կու գայ, եւ կրնայ ալ բառնալ: Ասի- կայ կը բաժնուի 1. Պարզ յաղթելի, երբ տգիտութիւ- նը բառնալու թէեւ կը ջանացուի, բայց պահանջեալ փոյթն ըստ բաւականի չի գործադրուիր: 2. Թանջը կամ վեհերոք, երբ մէկը կամ բնաւ ոչ, եւ կամ կարի սակաւ փոյթ ի գործ կը դնէ ճանչնալու այն ճշմար- տութիւնը, զոր իրեն նմանները պէտք էին գիտնալ: Ճիշդ խօսելով՝ Թանջը Գրիգոր-նի-նն է այն՝ որ լոկ անհո- գութենէ կամ ծուլութենէ յառաջ կու գայ. իսկ վե- հերոք այն՝ որ յառաջ կու գայ երբ ամենայն ճիգն յայլ ինչ զբաղումն կը ծախուի, որով ժամանակ ու զօրութիւն չ'ունեցուիր ստանալու այն ծանօթութիւ- նը՝ զոր վիճակն ու կոչումը կը պահանջէ: Բայց ի գործ- նականին երկուքն իբր նոյնանշան կը գործածուին: 3. Կամակար կամ ակորժեալ, երբ մէկը դիտմամբ խոյս կու տայ այն ամէն իրերէն, որ կրնային զինք ի ծանօ- թութիւն հասուցանել:

Արդ, 1. Պարզ յաղթելին կ'արդարացընէ դատա- կնքէ, եթէ ծանր մեղանշական չէ²: Աերջին դէպքիս մէջ ըստ բազում աստուածաբանից³ չ'արդարացընէր- անոր համար ի գործնականին պէտք է վասն ապահովո- նի-նն⁴ արձակմամբ միշտ արձակել⁵: 2. Թանջը ու վեհե- րոք տգիտութիւնը չ'արդարացընէր դատակնքէ, բայց

¹ Աէք. Ե. 317: Ռիէդի, էջ 8. Ծ. 25: Սուար. Սալմ. Բրուա, եւ այլն:
² Ս. Լիդ. Ե. Թ. 45:
³ Լայման, Պոնաչ. Սուար. Ս. Լիդ. եւ այլն:
⁴ Տես էջ 302:
⁵ Բլար. էջ 10, Թ. 2: Հմմ. Փր. Հայեր, էջ 9:

միայն՝ երբ օրէնսդիրը նորաբեալ դիտութիւն կը պա- հանջէ, զոր սովորաբար այսպէս կը բացատրէ. “Որոնք որ յանդո-ն-նեամբ . . . Գրիգոր-նի-նն . . . Գրիգոր-նի-նն համարչակո-նեամբ . . . կամակար զայս ինչ գործեցին”, կամ՝ “Որոնք որ յանդո-ն-ն գտնուեցան . . . յանդո-նեցան . . . արհամարհեցին”: Իսկ 3. Կամ- կար տգիտութիւնն թանձր տգիտութեան արդարա- ցուցած այս դիպաց մէջ ալ չ'արդարացընէր ըստ ընդ- հանրագոյն կարծեաց. վասն զի իրական գիտութեան հաւասար է այս: Եւ թէպէտ ընդդիմակաց կողմն ալ անհաւանական չէ, խոհեմ խոստովանահայրն՝ որ իշ- խանութիւն ունի վերապահեալ դատակնքէ արձակե- լու, պէտք է կամակար տգիտութեամբ դատակնքոյ տակ անկեալն արձակել վասն ապահովո-նի-նն արձակմամբ¹:

2. Տարակոյս: Հոս չենք խօսիր Գրիգոր-նի-նն կամ բացասական տարակուսի վրայ, որ կը ծագի երբ երկու ընդդիմակաց իրաց համար ալ պատճառ մը չկայ. վասն զի այս հաւասար է անյաղթելի տգիտութեան: Ար խօսինք Գրիգոր-նի-նն տարակուսի վրայ, որ կը յառնէ երկու ընդդիմակաց կողման ալ հաւասար կամ իբր-հաւա- սար, եւ կամ մէկ կողման պատճառ կայ:

Արդ, կ'արդարացընէ դատակնքէ երկբայո-նի-նն Գրիգոր կամ Գրիգոր-նի-նն Գրիգոր-նի-նն, որ կ'ըլլայ, երբ չէ հաստատուն թէ դատակնքեալ գործ մ'իրօք այնպէս՝ ինչպէս օրէնքը կը պահանջէ գործուած է, կամ՝ թէ դատակնքող օրէնք մը կայ: Բայց չ'արդարացընէր, երբ իրօք դատակնքոյ տակ իյնալէն ետեւ՝ կը տարակուսուի թէ արձակուած է, Սեծը դատակնքելու իշխանութիւն ունի, դատակնքին իրաւացի կամ վաւեր է. վասն զի այն ատեն ենթադատութիւնն (presumptio) օրինաց կողմն է: Իսկ երկբայո-նի-նն իրաւացի կամ անպիտի գոր- ծուած կը ճանչցուի, բայց կան պատճառներ՝ որ երկ- բայել կու տան՝ թէ արդեօք պատժող օրէնքն այս յանցանաց վրայ ալ կը տարածուի: Այս դէպքիս մէջ

¹ Անդ, 11:

օրինաց մեկնութեան պէտք է գիտել, եւ անկէ իմանալ թէ որ եւ որչափ ինչ դատակնքի տակ կ'իյնայ¹:

3. Անկարելիութեան կամ անկարողութեան բան մ'ընելու կամ զանց առնելու, որ դատակնքով հրամայեալ կամ արգելեալ է: Արդ, այսպիսի նշանական անկարողութիւն կ'արդարացընէ դատակնքէ, վասն զի առ անկարելին ոչ սք պարտաւորի: Նոյնպէս կ'արդարացընէ նաեւ քարոյական անկարողութիւն. վասն զի ոչ սք կը պարտաւորի մարդկային օրինաց հպատակիլ ծանր վնասուք ժամանակաւոր կամ բարձրագոյն կարգի բարեաց: Աւստի, ծանր (բայց ոչ թեթեւ) արտաքին եւ անիրաւ երկնալք, թէեւ բացարձակ կամ յարաբերութեամբ ծանր ըլլայ, կ'արդարացընէ դատակնքէ, թէպէտ եւ երբեմն մեղքէ չարագարացընէ: Բայց յաջորդ դիպաց մէջ չ'արդարացընէր. 1. Երբ օրէնքի մը պահպանութիւնը հասարակաց բարոյն պահպանութեան կարելոր է: 2. Եթէ եկեղեցական օրինաց զանցառութիւնը հաւատոյ, կամ հոգեւոր իշխանութեան ուղղակի արհամարհում մը յինքեան բովանդակէ²:

3.

ԵՆԹԱԿԱՅ ԴԱՏԱԿՆՔԻՍ

Դատակնքոյ ենթակաց կրնան ըլլալ միայն բնականութեամբ որ բնաւորութեան հասած, մեղանկէլութեամբ կարող երբորակնողն հպարտի են: Ըստ այսմ՝ դատակնքոյ տակ չեն իյնար՝

1. Ամէն շիրտեալ: 2. Մեղանկէլութեամբ անկարող. այսպէս յիմարք, մտաթափք, ապուշք, եւ այլն: Տղայք մինչեւ անչափահասութիւն (արուն՝ լրացեալ 14 տարին, էգ 12,) ազատ են դատակնքէ, բայց միայն՝ երբ օրէնքը յայտնապէս զանտնք ալ կանոնին մէջ կը փակէ: Այսպէս տղաք լրացեալ 7 տարւոնէ ետեւ՝ դատակնքոյ տակ կ'իյնան՝ . . . Երբ կուսանաց փակարանը բռնաբարեն, եւ ք. Երբ կղերիկոսաց եւ մրանձանց

¹ Հմմ. նոյն, 12—16:
² Ս. Լիդ. Է. 46:

բռնաբար ձեռն մխեն¹: 3. Բարոյական անկէլութեամբ, որպիսի է իւրաքանչիւր հասարակութիւն ի միասին առեալ: Աւստի հասարակութիւնները մէկանց բանադրանաց տակ չեն իյնար, բայց կրնան կախակայութեան կամ արգելման տակ իյնալ: Բայց հասարակութեան մէջ առանձնական անձինք կրնան բանադրանաց տակ իյնալ: 4. Քահանայադէպն եւ ոչ դատակնքոյ մը տակ կ'իյնայ: 5. Կարգիւնք միայն քահանայապետական դատակնքաց տակ կրնան իյնալ, եթէ յայտնապէս օրինաց մէջ յիշուին: 6. Եպիսկոպոսն, նոյն իսկ եթէ միայն ընտրուած եւ հաստատուած՝ բայց տակաւին ձեռնադրեալ չըլլան, միայն քահանայապետական դատակնքաց տակ կ'իյնան, երբ յայտնապէս օրինաց մէջ յիշուին: Իսկ նկատմամբ բանադրանաց՝ միշտ կ'իյնան, եթէ յայտնապէս ի բաց չեն առնուած: 6. Կրօնաւորք, եթէ Եպիսկոպոսին իշխանութենէն ազատ չեն, անոր ամէն դատակնքացը տակ կ'իյնան. եթէ բոս մասին ազատ են, միայն Եպիսկոպոսին իրաւաբանութեան տակ եղած իրաց մէջ կ'իյնան: Իսկ եթէ բոլորովին ազատ են, երբեք չեն իյնար: Քահանայապետականաց նկատմամբ խնդիր չ'ըլլուիր: 7. Թագաւորք եւ Ռոմանիք միայն քահանայապետական դատակնքաց տակ կ'իյնան: 8. Եթէ դատակնքը միայն կղերականաց վրայ է, կրօնաւորք ազատ են, թէեւ կղերական ալ ըլլան. նոյնպէս ընդ հակառակն: Եթէ դատակնքը կրօնաւորաց վրայ առանց ուրիշ յաւելուածի մը կը դրուի, միայն հանդիսական ուխտ ունեցող կարգերը կ'իմացուին, եւ ոչ պարզ ուխտի Միաբանութիւնք: Եթէ յանցանք մը միեւնոյն դատակնքոյ տակ կ'իյնայ, որչափ եւ քանի անգամ որ դատակնքօք արգելեալ գործ մը կը գործէ: Եթէ շատ անգամ կրկնուած գործ մը մէկ մահացու մեղք կ'ըլլայ, մէկ անգամ դատակնքոյ տակ կ'իյնայ:

¹ Ռիեդի, էջ 10, ճ. 47:
² Հմմ. Փր. Հայնէր էջ 17—: Կրօնի-Պալլ. Բ. 947—951:

Իսկ եթէ կրկնեալ դործը սեռով կամ թուով տարբեր մահացու մեղք ըլլայ, դատակնիքն ալ նոյնչափ կը կրկնուի. այսպէս՝ կրնայ մէկը թէ՛ Քահանայապետին եւ թէ՛ Եպիսկոպոսին վերապահեալ դատակնիքոյ մէջ իյնալ, եւ մէկէն արձակուելով՝ միւսէն չ'արձակուի:

4.

ԱՐՁԱԿՈՒՄՆ ԳԱՏԱԿՆԵՐ

Մէկը դատակնիքոյ մը տակ իյնալէն ետեւ, միայն արդիւնա՞ծ կրնայ անկէ ազատիլ: Աւստի, դատակնիքելոյն ուղղութեան գալովը, դատակնիքողին եւ կամ դատակնիքելոյն մահումբը չի դադրիր, բայց միայն՝ եթէ դատակնիքը սահմանեալ ժամանակի մը համար միայն դրուի, եւ այն ատեն, ի լրանալ ժամադիր ժամանակի դատակնիքն ինքնին, առանց արձակման կը դադրի:

Գատակնիքոյ արձակումը կրնայ տրուիլ կամ 1. Ի ներքին արեւնի, երբ Ապաշխարութեան Ս. Խորհրդեան ատենի մէջ տրուի: Եւ կամ 2. Յարգաւորութեան արեւնի, երբ արտաքոյ խոստովանութեան տրուի:

Գատակնիքոյ արձակումը կերպին կողմանէ կրնայ ըլլալ 1. Բացարձակ կամ պարզ (absoluta et simplex) առանց թէուութեան մը: 2. Պայմանաւոր (conditionata) թէուութեամբ մը, որ միայն անցեալ եւ ներկայ կրնայ ըլլալ, եւ ոչ՝ ապառնի: 3. Վասն ապահովութեան կամ զգուշութեան, (ad cautelam) երբ դատակնիքոյ մը գոյութեան վրայ տարակոյս կայ: 4. Անուղղակի, (indirecta) երբ վերապահեալներէն արձակելու իշխանութիւն չունեցող քահանայն ի դէպս ինչ հարկաւորութեան՝ մեղքերը կ'արձակէ, որով անուղղակի կերպով դատակնիքն ալ կ'արձակուի: 5. Վերստին իյնալու համար (ad reincidentiam), երբ արձակման ժամանակ պայման մը դրուի խոստովանորդւոյն, զոր եթէ չկատարէ, վերստին նոյն դատակնիքոյ տակ կ'իյնայ: 6. Վասն որդեանց (quoad effectum) երբ դատակնիքելոյ մ'իշխանութիւն տրուի կատարելու գործ մը՝ զոր չէր կրնար դատա-

Սուար. վասն դատակնիքաց, 7. 1. 2:

կնիքոյ մը պատճառաւ, որուն մէջ ինկած է: Աւստի այս դէպքին մէջ դատակնիքը չի բարձուի, այլ դատակնիքոյն մէկ արդիւնքը մասնական դէպքի մը համար անգոր կը հրատարակուի:

Գատակնիքէ արձակելու իշխանութիւնը կրկին է.

- 1. Սղբնական իշխանութիւն (potestas primaria) եւ
- 2. Երկրորդական իշխանութիւն (p. secundaria):

1. Սղբնական իշխանութիւնն ունի դատակնիքէ արձակելու ունի դատակնիք գնողը: Աւստի իրմէ զատ մէկը չի կրնար առանց անոր իշխանութեան արձակել, բայց միայն՝ ա. Անկէ վերագոյնն, եւ Բ. Անոր յաջորդը:

2. Երկրորդական իշխանութիւնն ունին խոստովանութեան իրաւաբանութիւն ունեցող ամէն խոստովանահարք արձակելու միայն ի ներքին ատենի՞ այն դատակնիքներէն՝ զոր օրէնսդիրը մէկու մը չէ վերապահած՝:

Ասկէ զատ՝ արձակման նկատմամբ մտադրութեան արժանի են 1. Մահուան կէտին, եւ 2. Արտաքոյ մահուան կէտին տրուելու արձակման նկատմամբ գիտելիքներն:

1. Մահուան կէտին «ամէն քահանայ սրբէէ խոստովանողներն ինչ եւ իցէ մեղքէ եւ դատակնիքէ կրնայ արձակել»: Այս բառերէն ոմանք մեկնութեան կարօտ են. ատեններ կարգաւ:

ա. Աին բահանայ ըսելով՝ պէտք է խոստովանութեան իրաւաբանութիւն ունեցող քահանայքը հասկընալ: Երբ որ ատիկայ չի գտնուիր, կրնայ ուրիշ սրբէէ քահանայ ալ արձակել: Ի գործնականին՝ պէտք է բարոյագիտաց տուած յաջորդ կէտերուն մտադիր ըլլալ:

ա. Եթէ կարելի է դատակնիքողին պէտք է դիմել:
բ. Գատակնիքէ արձակելու իշխանութիւն ունեցողը՝ չունեցողէն նախամեծար է: Նոյնպէս՝

- 1 շմԲ, Փր. Հայնէր, 374—377:
- 2 ԱնԳ, 377—380:
- 3 Շիւհ, էջ 722:
- 4 Ս. Ժ. Տրիդ. Ն. ԻԴ. վասն Ապաշ. ԳԼ. Է.:

Ք. Խոստովանութեան իրաւաբանութիւն ունեցողը, նսնե օտար թեմի մէջ, չունեցողէն:

Դ. Իրաւաբանութիւն չունեցողը՝ պարզապէս եւ կամ հրապարակական բանադրեալէն կամ կախակայեալէն:

Ե. Կախակայեալ կամ արգելեալ մը՝ անկանոնականէն:

Զ. Կախակայեալ, արգելեալ կամ անկանոնական մը՝ խորշերի բանադրեալէն:

Է. Կախակայեալ, արգելեալ, բանադրեալ մը կարգընկէցէն նախամեծար են:

Ը. Ինչ է- իցե դատարանէ ըսելով՝ իմանալու է միայն անշահան քանադրանէն ու արգելեալը. վասն զի Ս. Ժողովն այս իշխանութիւնը կու տայ «որպէս զի մէջը չկարող է»: Արդ, կարգէ, պաշտմանէ, բարերարութենէ եւ այլն կախակայութիւնը յաւիտենական փրկութեան արգելք չ'ըլլար, ուստի եւ մահուան կէտին ասոնցմէ ալ արձակելու Եկեղեցւոյ ամենուն իշխանութիւն տուած ըլլալը չի կրնար ենթադրուիլ:

Գ. Մահուան կէտ ըսելով՝ կ'իմացուի ոչ միայն մօտալուտ, այլ եւ հաւանական վտանգ մը կայ: Բայց այն ատեն այս արտօնութեամբ արձակող խոստովանահայրն եթէ դատակնիքը Բանաստեղծութիւնն իբր պիտի վերապահեալ քանադրանէն է, եւ ոչ յայլ դէպս, վասն զի Առաք. Անտոնոյ Սահմանադրութեան մէջ այս միայն կը յիշուի¹, պիտի պահանջէ խոստովանողէն՝ որ եւ զայն պիտի խոստանայ, թէ ի դիպուածի որ վերստին աւողջանայ, պիտի ներկայանայ անոր՝ որ քանադրանէն դրած է, եւ անոր կամայը համայնայ արքայոյ կամ մէջ խոստովանութեան անոր առջեւ դարձեալ նոյնը պիտի խոստովանի, զոր անիկայ խոստովանութեան կնքով պարտական է միշտ լուել², եւ իրեն որոշած կարգադրութեանց պիտի հնազանդի: Ասով հաստատիկ առանձինն

¹ Հմմ. Հայնէր, 402—406:
² Սուար. վասն Ապաշ. Վ. Լ. Հ. Ե. Թ. 30:

կերպով վերապահեալ բանադրանքէ ի կէտ մահու արձակուողն՝ Առաքելական Անտոնոյ Սահմանադրութեան պահանջած¹ «Եկեղեցւոյ հրամանը կարտելու պարտք է. կատարած կ'ըլլայ: Այս ներկայանալու պարտքը ծանր է. ոչ խոստովանահայրը կրնայ առանց ծանր մեղաց զանց առնել պահանջելը, եւ ոչ խոստովանողին ընդդիմանալ: Եթէ խոստովանողին յետոյ խոստումը չկատարէ, նովին գործով նոյն բանադրանաց տակ կ'իյնայ: Բայց միտ զնելու է յայտմ մասին, որ

«Ապաշխարողն պարտական չէ ընչէց, պատուոյ կամ կենաց ծանր վնասու ներկայանալ:

Ք. Ներկայանալն որչափ կարելի է շուտով պիտի ըլլայ. ուստի, ընդ աւողջանալը կամ ի բառնալ արգելից:

Գ. Նոյն բանադրանաց մէջ վերստին կ'իյնան միայն յանդգնողք. այսինքն անոնք, որ ներկայանալու պարտքը կը ճանչնան, կատարել կրնան, եւ սակայն ամիս մը կը յապտղեն: Ըստ այսմ՝ վերստին չ'իյնար մէկը երբ թանձր ու վեհերոտ, եւ հաւանականաբար նաեւ կամակար տգիտութեան մէջ է: Նայնպէս ազատ է մէկը ներկայանալու պարտքէն, երբ մշտնջենաւոր արգելք մ'ունի, կամ օրինաւոր սովորութիւն մը զինք այս պարտքէ ազատ կ'ընէ²:

2. Արտարոյ մանուսան կետիկ: Նկատմամբ 1. Եպիսկոպոսաց եւ 2. Խոստովանահայր պետք է յաջորդացս միտ զնել:

«Եպիսկոպոսը կարգաւոր իշխանութեամբ չի կրնար արտարոյ մահուան կէտին Բահանայագետին վերապահեալներէն արձակել: Իսկ իբր-կարգաւոր իշխանութեամբ, զոր Տրիդ. Ս. Ժողովը³ տուած է, կրնայ Եպիսկոպոսը Բահանայագետին պարզապէս վերապահեալ ամէն դատակնիքներէն արձակել, եթէ ճարտնի էն. բայց չի կրնար երբեք առանձինն կերպով վերապահեալներէն արձակել, նսնե եթէ գաղտնի ալ

¹ Տես վերն էջ՝ 130:
² Տես Միւլէր, Գ. § 145. Թ. 2:
³ Նեւա Ի. Գ. Գ. Թ. Թ. 30:

ըլլան: Այս պարզապէս վերապահեալ դատակնիքներէն, երբ յանցանքը գաղտնի է, արձակելու արտօնութիւնը չունին Եպիսկոպոսունք տեղեաց, ուր Տրիդ. Ս. Ժողովը տակաւին չէ ընդունուած¹:

Քահանայապետին առանձինն կերպով կամ պարզապէս վերապահեալ բանադրանքէ արձակուելու համար՝ երբ իշխանութիւն ունեցող չկայ, Հռոմ. երթալու արգելք ունեցողներն մեր Ժամանակին համար են՝

1. Իօթանասնամեայք, եւ հաւանականաբար նաեւ վաթսնամեայք, անջրթափք (արու 14, էգ 12 տարուան) թէեւ արձակումը 14 տարեկան ըլլալէն ետքը խնդրեն:
2. Կանայք աշխարհական կամ վանական. ի բաց առեալ զբոսանաց համար Հռոմ երթալ կրցողները:
3. Տկարք եւ հիւանդք, որոնք անբժշկելի կամ երկարատեւ հիւանդութիւն մ'ունին, կամ խեղ են, ինչպէս՝ կնոջ, կաղք եւ այլն:
4. Աղքատք. որպիսի են՝ ձեռագէտք եւ աւուրչեքով ապրողներն:
5. Ծառայք, կրօնաւորք, տնօրդիք, դատապարտեալք, զինուորք, համառօտիւ որոնք որ ընդ իշխանութեամբ են:
6. Որոնք որ առանց հաւանական վտանգի մահուան, գայթակղութեան, վատահամբաւութեան չեն կրնար Հռոմ երթալ:
7. Բանաւոր եւ իրաւացի պատճառ մ'ունեցողներն ըստ դատաստանի խոհեմ ու խորհրդական անձի մը:

Այս արգելքներէն ոմանք մշտապէս են, ոմանք երկրորդապէս, եւ ոմանք կործապէս: Մշտապէս կ'անուանուին 5 տարւոյնէ աւելի տեւողները. երկրորդապէս են 6 ամսէն մինչեւ 5 տարի տեւողներն. իսկ մինչեւ 6 ամիս տեւողները կործապէս են:

Մինչեւ հիմայ բարոյագէտք կ'ուսուցանէին՝ թէ որոնք որ մշտատեւ արգելք ունին անձամբ ներկայանալու, կրնան դէթ Կարգաւորէն ուղղակի արձակուիլ Քահանայապետին վերապահեալներէն, իսկ որոնք որ կարճատեւ արգելք ունին՝ միայն անուղղակի կրնան արձակուիլ ընդ պատժով վերստին իյնալու, եթէ ըստ

¹ Կուրի-Պալ. Բ. 952:

կարի փութով չեն ներկայանար: Եւ այսպէս, կը հաստատէին թէ՛ հարկ չկայ նաեւ թղթով արձակում խնդրել¹: Սակայն Քննութեան Ս. Ժողովոյն 1886 Յունիս 23 ին տուած վճիռն, զոր նոյն ամսոյն 30 ին Լեւոն ԺԳ. հաստատեց, կը սահանէ՝ թէ Եպիսկոպոսն կամ խոստովանահայրն անձամբ Հռոմ երթալ անկարող խոստովանորդին Քահանայապետին նաեւ առանձին կերպով վերապահեալներէն չի կրնար արձակել, եւ եթէ Եպիսկոպոսն արձակելու իշխանութիւն չունի՝ հարկ է թղթով Հռոմ դիմել, բայց ի մահուան կէտէն. իսկ եթէ ստիպողական հարկ կայ եւ կարելի չէ արձակումը յապաղել առանց գայթակղութեան կամ վատահամբաւութեան ծանր վտանգի, զոր խոստովանահայր խիղճը սրտէ, կարելի է արձակել նաեւ առանձինն կերպով Քահանայապետին վերապահեալներէն, միայն թէ ընդ պատժով վերստին իյնալու նոյնին մէջ, եթէ գտնէ ամոց մը միջոցին թղթով եւ խոստովանահայր միջնորդութեամբ արձակում չընդունուի Ս. Աթոռէն²: Ըստ այսմ՝ այսուհետեւ մշտնջենաւոր արգելք ունեցող չկայ. եւ իշխանութիւն չունեցող մը միշտ պիտի դիմէ, գտնէ թղթով, ի Հռոմ:

Բ. Քահանայտ արտաքոյ մահուան կէտի չեն կրնար վերապահեալէ մ'ուղղակի արձակել. բայց միայն՝ եթէ յիրաւանց կամ յարտօնութենէ կամ հրամանաւ Սեծին իշխանութիւն ունին:

1. Յիրաւանց իշխանութիւն ունի խոստովանութեան իրաւաբանութիւն ունեցող քահանայն Քահանայապետին վերապահեալ դատակնիքներէն ուղղակի արձակելու զապաշխարոյս, որ չեն կրնար անձամբ Հռոմ երթալ: Բայց պարտական են խոստովանահայր հակառակ սովորութեան պատճառաւ եւ նորագոյն վճռոց համեմատ՝ Եպիսկոպոսին կամ վերապահեալներէն արձակելու իշխանութիւն ունեցողն մ'առաքել: Եթէ արձակումն յապաղելով գայթակղութեան կամ վատահամբաւութեան ծանր վտանգ կայ, կրնան խոստո-

¹ Տես ի մէջ այլոց՝ նաեւ Փր. Հայնէր, էջ 387:
² Տես Երեւանի տեղեւոր, Լինց, 1887, Բ. էջ 380:
20*

վանահարք առանց մէկու մը դիմելու ուղղակի արձակել, պարտաւորելով Մեծին ներկայանալ, կամ թղթով արձակում ուզել¹:

2. Արտօնութեան կրնայ իշխանութիւն ունենալ մէկն առ մէկ վերապահեալներէ արձակելու: Այսպիսի իշխանութիւն ունի Ս. Ժող. Ապաշխարութեան, եւ Տարած. Հաւ. Ս. Ժողովն առաքելութիւն ընդդէմը համար: Ասոնք այս իշխանութիւնն ուրիշ խնդրոյնքը կու տան թէ ի մասնաւոր դէպս, եւ թէ Եպիսկոպոսայ հինգամեայ իշխանութեանց ձեռօք²: Արտաքին ատենի մէջ դատակնքէ արձակելու իշխանութիւնը կրնայ տրուիլ նոյն իսկ աշխարհականի:

3. Հրամանաւ Մեծին: Եպիսկոպոսին վերապահեալներէն միայն Եպիսկոպոսին հրամանաւ կրնայ մէկն արձակել. այնպէս որ Քահանայապետին վերապահեալներէն արձակելու իշխանութիւն ունեցող մը չի կրնար նաեւ Եպիսկոպոսին վերապահեալներէն արտաքայ մահուան կէտին արձակել. բլլայ այս վերապահեալն ինքնին Եպիսկոպոսէն, բլլայ յիրաւանց՝ Առաջ. Արտոյ Սահմանադրութեանն անոր վերապահեալ³: Նոյնպէս, քահանայապետական վերապահեալներէն արձակելու ընդհանուր իշխանութիւն ունեցողը չի կրնար առանձինն կերպով վերապահեալներէն ալ արձակել. նմանապէս առանձինն կերպով վերապահեալներէն արձակելու իշխանութիւն ունեցողը չի կրնար արձակել մեղակիցն արձակել յանդգնողը, որ ամենառանձինն կերպով վերապահեալ է: Եպիսկոպոսին վերապահեալ մեղքերէն արձակելու իշխանութիւն ունեցողը չի կրնար Եպիսկոպոսին վերապահեալ բանադրանքէն ալ արձակել: Արքեպիսկոպոսունք կամ Պատրիարքունք չեն կրնար օգնական Եպիսկոպոսայ վերապահեալներէն արձակել, բայց միայն յայցելութեան:

¹ Վճիռ Ս. Ժող. քննութեան, 23 Յունիս, 1886: Տես ի մասնաւորի՝ Երանայ Գեորգ, 1ինց, 1888, Բ. էջ 383:
² Փր. Հայնէր, 396:
³ Հմմ. Փր. Հայնէր, 396—398:

Բայց պէտք է միտ դնել միշտ, որ դատակնք մ'այն ատեն միայն վերապահեալ է, երբ մեղքը որոշակի ու վերապահութիւնն ստոյգ բլլայ: Ընդ ասոնցմէ մէկուն անստոյգ բլլալը, ամէն խոստովանահայր կրնայ արձակել: Եւ եթէ երկբայութիւն իրաւանց է, արձակում ալ հարկաւոր չէ. իսկ եթէ երկբայութիւն գործոյ է, պէտք է վասն ապահովութիւն արձակմամբ արձակել¹:

5.

ԲԱԺԱՆՈՒՄՆ ԴԱՏԱԿՆՔՈՅ

Ղատակնիքը գլխաւորաբար երկու կը բաժնուի. 1. Տալի վճար (ferendae sententiae) երբ մասնական դէպքի մը մէջ Առաջնորդէն վճարով մը կը արուի, եւ 2. Տալի վճար (latae s.), երբ որոշեալ գործոց վրայ դատակնք մ'արդէն դրուած է եւ մէկը նոյն գործերը գործելուն պէս, ուստի եւ նովին գործով (կամ նովին երաւմբ) առանց ուրիշ դատավճարոյ մը կ'իյնայ նոյն դատակնքոյն տակ: Թէ տակ եւ թէ տուեալ վճարոյ դատակնքներն երեք տեսակ են՝ բանադրանք, կախալայութիւն եւ արգելում, որոնք կամ Բանապայտեանն առանձինն կերպով կամ պարզապէս, կամ Եպիսկոպոսայ, եւ կամ ոչ ոմեք վերապահեալ են:

¹ Ընդ. 398:

Բ.

ԴԵՏԵԿՆԻՔ Ի ՄԵՄՆԵՒՈՐԻ

1. ԲԱՆԱԳՐԱՆՔ, 2. ԿԱՍՆԿԱՅՈՒԹԻՒՆ, 3. ԱՐԳԵՂՈՒՄՆ

Ա.

ԲԱՆԱԳՐԱՆՔ

Բանադրանք (excommunicatio) է՝ եկեղեցական դատակնիք, որով քրիստոնեայ մը բոլորովին կամ ըստ մասին ի հաղորդակցութենէ հաւատացելոյ եւ հասարակաց հոգեւոր բարեաց կը զրկուի: Բանադրանքը մեծ կը կոչուի, երբ մէկն աֆէն հոգեւոր բարիքներէ եւ ի հաղորդակցութենէ ընդ հաւատացելոյ կը զրկուի. Իսկ փոքր, երբ մէկը ընդ բարիքներէ միայն կը զրկուի: Այս փոքր բանադրանքը հիմայ բոլորովին բարձուած է. կը մնայ միայն մեծը: Մեծ բանադրանքն եթէ հանդիսական կերպով տուի՝ անգլի (anathema) կը կոչուի:

Մեծ բանադրանաց տակ ինկողները կրնան ըլլալ՝ 1. Տանելի կամ ոչ-խորշելի (tolerati seu non vitandi), որոնց հետ հաղորդակցիլ հաւատացելոյ արգելեալ չէ, այնպէս որ եթէ հաւատացեալք ինդրեն, կրնան յամենայնի հաղորդակցիլ հաւատացելոյ հետ: Ապա թէ ոչ՝ չեն կրնար հաղորդակցիլ յաստուածայինս ընդ ծանու մեղօք, յաշնարհայինս ընդ ներելի մեղօք: 2. Խորշելի կամ ոչ-տանելի (vitandi seu non tolerati), որոնց հետ ամէն հաղորդակցութիւն արգելեալ է: Մեծ բանադրանաց տակ ինկողներէն երկուքը միայն խորշելի են այսուհետեւ. 1. Հրապարակական ձեռն մտող եկեղեցականաց կամ միանձանց, եւ 2. Քահանայապետէն յանուանէ բանադրեալ: Վերջին դէպքիս մէջ, եթէ մէկը Քահանայապետէն յանու-

1 Տես վերն էջ 180:

անէ բանադրելոյն հետ ի յանցանս յանցանորութեան հաղորդակցի, եւ կամ կղերիկոս մը զայնպիսին յաստուածային պաշտօնունս ընդունի, բաց ի մեղաց՝ նանէ Քահանայապետին պարզապէս վերապահեալ բանադրանաց տակ կ'իյնայ: Ուստի, բաց այս երկուքէն ուրիշ մեծ բանադրանաց տակ ինկողներն ամէնքն այսուհետեւ արանելի են:

Բանադրանաց արդիւնքն այլեւայլ է: Ասոնցմէ սմանք անողակի են, այսինքն անոնք՝ որ բանադրանաց մէջ յարատեւելէն կամ բանադրանքը բռնադատելէն կը ծնանին: Այսպիսի են՝ 1. Անխնամակոտորէն, որուն մէջ կ'իյնայ բանադրեալը՝ կարգի իշխանութիւնը գործածելով: 2. Ասակած հերետիկոսութեան, եթէ տարի մը բանադրանաց մէջ յամուտեալ մնայ, եւ այս պատճառաւ ալ եթէ եկեղեցական է, բարեբարութենէ կը զրկուի: Իսկ սմանք ալ ողակի են, այսինքն անոնք՝ զոր բանադրանքը հետը միշտ ունի, այնպէս որ բանադրանաց տակ ինկողը նովին գործով նոյն պատճոց տակ կ'իյնայ: Այսպիսի են՝

1. Չրկումն ի խորհրդոց, եւ այն՝ ա. Չրկումն խորհուրդ ընդունելէն, եւ Բ. Մատակարարելէ:

ա. Չրկումն խորհուրդ ընդունելէն: Բանադրեալն եւս եւ տանելին, Ս. խորհուրդներն ընդունելէն զրկուած է, այնպէս որ եթէ ընդդէմ գործէ, ծանր կը մեղանչէ: Բայց մեղքէ ալ կ'արդարանայ, եթէ տգիտութեամբ, միայն թէ յանցաւոր չըլլայ, կամ առ երկիւղի մահուան, անդամատութեան, վատահամբաւութեան, ծանր վնասուց ընչից ընդունի. եւ կամ՝ երբ տարեւոր խոստովանութեան եւ Հաղորդութեան պարտքը կատարելու համար ընդունի, եւ բանադրանքն արձակող մը չզտնուի: Բանադրելոյ մ'ընդունած խորհուրդները թէեւ օրինաւոր չըլլան, միշտ վաւեր են, բաց Ապաշխարութեան խորհրդէն: Նանա այս ալ վաւեր կ'ըլլայ, եթէ բարեմտութեամբ ընդունած է: Իսկ խորհուրդ մատակարարողը կը մեղանչէ միայն՝ երբ բա-

1 Ս. Լիդ. Թ. 159:

նադրեալը որակելի է. եւ նոյն իսկ մեզքէ ալ կ'արդարանայ եթէ բանադրեալն ի բարեմտութեան է եւ ըստ օրինի տրամադրեալ: Իսկ եթէ բանադրեալը խորշիկ էր, եւ այն Հռոմայ Քահանայապետէն յանուանէ բանադրեալ, ան ատեն մատակարարողը՝ զվայնպիսին աստուածային պաշտամանց ընդունելով՝ Քահանայապետին պարզապէս վերապահեալ բանադրանայ մէջ կ'իյնայ. իսկ եթէ ուրիշ մէկէ մը յանուանէ բանադրեալ էր, այն ատեն մատակարարողն եկեղեցի չմտնելու արգելման մէջ կ'իյնայ:

Բ. Ձրկումն խորհուրդ մարտիրոսացի: Թէ տանելի եւ թէ խորշիկ բանադրեալ մը հարկաւորութեան արեւ խորհուրդ մատակարարելու ըլլայ, թէ վաւեր է եւ թէ օրինաւոր, այսպէս մահուան կէտին՝ չէ թէ միայն կրնան արձակուիմ տալ, այլ նաեւ թողակ եւ վերջին Օծում ալ կրնան տալ, եթէ իրենց իրաւունքն է: Իսկ արտառոյ դիպաց հարկաւորութեան, 1. Տանելին, օրինաւորապէս կրնայ խորհուրդ մատակարարել, եթէ հաւատացեալք խնդրեն, միայն թէ շնորհաց վիճակի մէջ գտնուի եւ արձակուիմ առնուլ հնար չըլլայ: Իսկ եթէ հաւատացեալք չխնդրեն, մատակարարող տանելի մը ծանր կը մեղանչէ եւ կ'ըլլայ անկանոնական: 2. Խորշիկն եթէ խորհուրդ մատակարարէ, թէպէտ եւ հաւատացեալք խնդրեն, բայց Ապաշխարութենէ միւս խորհուրդները թէեւ վաւեր են, բայց ինք ծանր կը մեղանչէ եւ անկանոնական կ'ըլլայ: Բայց ասոնցմէ կ'արդարացնեն՝ ազիտութիւն, վտանգ մահուան, անդամատութեան, վատահամբաւութեան, մեծամեծ կուրուստ ընչից:

2. Ձրկումն յատուածային պաշտամանց: Բանադրեալն եթէ տանելին եւ եթէ խորշիկն, չի կրնար աստուածային պաշտամանց¹ ներկայ գտնուիլ: Ուստի ծանր կը մեղանչեն երկուքն ալ՝ եթէ պատարագի կամ ուրիշ հրապարակական պաշտամանց ներկայ գտնուին. բայց կրնան աղօթել առանձինն, ուր ու-

¹ Տես էջ 186:

րիչները կ'աղօթեն, քարոզ լսել խորհրդական իրերը դործածել, որպիսի են՝ պատկեր, նշխարք Արքայ, օրհնեալ ջուր, թէեւ իրենք չկարենան քարոզ կամ հրապարակաւ աստուածաբանութեան եւ իրաւագիտութեան դաս տալ: Իսկ կանոնական ժամասացութիւնը պարտական են առանձինն ըսել:

3. Ձրկումն ի հասարակաց նպաստից Եկեղեցոյ: Եկեղեցւոյ նպաստները կրկին են՝ հասարակաց եւ առանձինն: 1. Հասարակաց նպաստ էն անոնք՝ որ կը արուին հաւատացելոյ այն բարի գործերէն՝ զոր Եկեղեցւոյ պաշտօնեայքը յանուն նորա կը գործեն, որպիսի են՝ պատարագ, կանոնական ժամք, հասարակաց աղօթք, ներողութիւն: 2. Առանձինն նպաստ էն՝ բարի գործք, պահք, աղօթք, որ առանձնականներէ կ'ըլլուին: Արդ, խորշիկն, ցորչափ բանադրանաց տակ է, Եկեղեցւոյ հասարակաց ամէն նպաստներէն զրկուած է, բայց ոչ՝ առանձինն նպաստներէն: Ուստի կրնայ առանձնական մը խորշիկոյ մը համար աղօթել, պատարագի մէջ իբրեւ առանձնական մը զինք յիշել, եւ նոյն իսկ կրնայ քահանայ մը առանձնական դիտմամբ եւ յանուն իւր պատարագ մատուցանել խորշիկոյ մը համար, եւ կրնայ նաեւ պատարագցու ալ առնուլ¹: Իսկ որակելին ոչ հասարակաց, եթէ հերետիկոս կամ հերձուածող չէ, եւ ոչ առանձինն նպաստներէ կը զըրկուի: Ուստի հաւանական է ընդդէմ հաւանական կարծեաց, թէ օրէն է տանելեաց համար հրապարակական աղօթք մատուցանել յանուն Եկեղեցւոյ²:

4. Ձրկումն յեկեղեցական խորհուրդ: Եկեղեցական խորհուրդ կը կատարուի յատուկ արարողութեամբ թաղելով սուրբ տեղ մը կամ զերեզմանատուն, որ հաւատացելոյ համար օրհնուած է: Արդ, չէ օրէն թէ տանելին եւ թէ խորշիկն սուրբ տեղ մը թաղել, եթէ մահուան ժամանակ զղջման նշան մը չեն ցուցած, եւ բանադրանքէ, նաեւ մահուանէն ետեւ, չեն արձակուած: Եթէ խորշիկն ընդ հենդն Եկեղեցւոյ այն հրա-

¹ Տես Պր. Հայնէր, էջ 47:

² Նոյն, անդ:

մանին՝ սուրբ տեղ մը թաղուի, նոյն տեղը պղծուած է, պէտք է դիակը պեղել Հանել սուրբ տեղէն եւ տեղը վերստին օրհնել, եթէ հնար է: Իսկ Գանէլին թաղելով՝ սուրբ տեղը չի պղծիր: Որոնք որ կը հրամայեն կամ կը ստիպեն հրապարակական հերետիկոսները կամ յանուանէ բանադրեալը կամ արգելեալն եկեղեցական թաղմամբ թաղել, ոչ ումք վերապահեալ բանադրանաց տակ կ'իյնան:

5. Ջրհոծն յեկեղեցական իրաւաբանութենէ: Խորշէլին ամէն եկեղեցական իրաւաբանութենէ զուրկ է. ուստի՝ անվաւեր է եթէ արձակում տայ, օրէնք կամ դատակնիք դնէ, մէկուն բարերարութիւն տայ կամ ի նոյն ընտրէ: Իսկ Գանէլին եթէ սոյնպիսիս գործէ, թէ եւ անվաւեր չէ՝ բայց ապօրինաւոր է եւ կրնայ ոչնչացուիլ, երբ հաւատացեալք խնդրած չեն կամ ի հարկէ չէ գործած: Նոյնպէս թէ խորշէլին եւ թէ ամենէլին չեն կրնար շնորհաց կամ արգարութեան վերաբերեալ պատասխանադիր մ'ընդունիլ, եւ եթէ ընդունած են, անզօր է:

6. Ջրհոծն ի Բարերարութենէ: Թէ ամենէլին եւ թէ խորշէլին բարերարութեան անընդունակ են, բայց ոչ՝ եթէ Բահանայապետը տայ բարերարութիւնը: Եթէ բանադրանաց մէջ իյնալէն ետեւ յանձն առնուն բարերարութիւն մը, թէ իրենք եւ թէ տուող ծանր կը մեղանչեն, բայց Առտ. Արեւոյ Սահմանադրութենէն ետքը ուրիշ պատժոյ մը տակ չեն իյնար: Իսկ եթէ բանադրանաց տակ իյնալէն յառաջ տրուի կամ ընդունին բարերարութիւնը, չեն զրկուիր անկէ եւ ոչ ալ անոր պտղէն, բայց միայն՝ երբ որ ամբողջ տարի մը բանադրանաց մէջ յամառեալ կենան, կրնայ դատաւորը զերենք անկէ զրկել:

7. Ջրհոծն ի պաշտօնանց արեւի: Արեւի պաշտօնանց են եկեղեցական եւ աշխարհական ատենի վերաբերեալ պաշտօններն: Արդ խորշէլին (ուր ի զօրութեան է) քաղաքական եւս առաւել եկեղեցական ատենի ա-

1 Տես վերն էջ 199:

մէն պաշտօններէն կը զրկուի. ուստի՝ չի կրնար ըլլալ դատաւոր, նոտար, վկայ, գործակալ, կուսակալատար, եւ այլն. բայց բողոքել կրնայ: Տանէլին ասոնցմէ չի զրկուիր. բայց թէ դատաւորն եւ թէ հակառակորդը կրնան զինք մերժել:

8. Ջրհոծն ի Կառավարական Ընկերակցութենէ: Գաղաքական գործերն՝ յորս հաղորդակցիլ խորշէլեաց հետ արգելեալ է, են յաջորդքս՝ 1. Բերան խօսակցիլ, թղթակցիլ, բարեկամութեան նշաններ ցուցընել: 2. Աղջիկ՝ յատուածայինս հաղորդակցիլ: 3. Ողջոյն՝ մտերմաբար բարեւել: 4. Հարստութիւն ի գործս, բնակակցութիւն, դաշնակցութիւն: 5. Սեղանակցութիւն՝ զերար փոխանակաւ սեղանի հրաւիրել: Այս ամէնն արգելեալ է, միայն ծանր պատճառներ կրնան արդարացընել. որպիսի են՝ հարկ, հագեւոր օգոյր բանադրելոյն, օրէնք ամուսնութեան, հպատակութիւն որդիական, անշիտութիւն իրաւանց կամ գործոյ: Իսկ Գանէլեաց նկատմամբ այսպիսի արգելք մը չկայ, բայց միայն՝ առանց հարկի յատուածայինս չհաղորդուի:

Տուեալ վճռոյ բանադրանքներն Առտ. Արեւոյ Սահմանադրութեան եւ անկէ ետքը տրուած վճիռներու մէջ բովանդակուած են:

2.

ԿԱՍԿԱԿԱՅ ՈՒԹԻԻՆ

Սասնակցութիւն (suspensio) է դատակնիք՝ որով կղերիկոս մը կարգի, իրաւաբանութեան, պաշտաման կամ բարերարութեան իշխանութիւնը գործածելէն ամբողջապէս կամ ըստ մասին առ ժամանակ մի կը զրկուի:

Սասնակցութիւնը կրնայ ըլլալ 1. Ամբողջական, (s. totalis) երբ կղերիկոսն ամէն պաշտամանէ կամ եկեղեցական իրաւունքներէն կը զրկուի: 2. Մասնական (s. partialis), երբ անոնցմէ ըստ մասին կամ անոնց մէկէն միայն կը զրկուի: Ուստի մասնականը կրնայ

1 Տես վերն էջ 7 — 49 — ետ. 265 —

զըկեւ կամ 1. Կարգէն, որով Կարգի ամէն գործերէն կը զըկուի մէկը. կամ 2. Պաշտամանէն, որով թէ Կարգէն եւ թէ ներքին ու արտաքին աստեանի իրաւունքներէն կը զըկուի մէկը. եւ կամ 3. Բարեբարութիւնէն, որով բարեբարութիւն ընդունելէն կամ մատակարարելէն կը զըկուի մէկը: Այս ամէնը կրնան դարձեալ յինքեան ամբողջական կամ մասնական ըլլալ: Ներքին մեղաց համար միայն մասնական կրնայ տրուիլ, եւ այն առժամանակեայ եւ ի մարդկանէ. վասն զի այսպէս միայն յանցանաց եւ պատժոյն մէջ համեմատութիւն կ'ըլլայ:

Եկեղեցւոյ տուած ամէն կախակայութիւն միշտ դասադէմ է, այլ երբեմն լոկ պարթի, եւ հետեւաբար երկուքին արդիւնքն ալ նոյն չէ. վասն զի եթէ դատակնիք է, Կարգէ կախակայեալ մը նոյնը գործածելով անկանոնական կ'ըլլայ, բայց ոչ՝ երբ պատիժ միայն է: Անոր համար հետեւեալ կէտերու մտադիր ըլլալու է:

1. Ընդհանուր եւ մնայուն օրինաց ձեւով տուեալ կախակայութիւնը դատակնիք են:
 2. Եթէ ընդհանուր եւ մնայուն օրինաց ձեւով չի տրուիր, այլ իբրեւ դատավճիռ մը կամ իբրեւ ժամանակահատուկ կարգադրութիւն մը, այն ատեն յաջորդ դիպաց մէջ լոկ պատիժ է:
- ա. Երբ կախակայութիւնը միայն բերանացի տրուի:
- բ. Երբ բոլորովին անցեալ յանցանաց համար տրուի, որ արդէն իսկ ուղղուած ըլլայ եւ յարգիւնան չտեսէ:
- գ. Երբ մինչեւ ցժամ յանցաւորին իբրեւ մշտնջենաւոր տրուի:
- դ. Երբ տրուի հասարակութեան մը, որուն անդամոց ամէնքը յանցաւոր չեն: Այս դէպքիս մէջ կախակայութիւնն անմեղաց համար ոչ դատակնիք է եւ ոչ ալ անատակութիւն. բայց բռնաբարելը կրնայ մեղանշական ըլլալ անհնազանդութեան կամ դայթակղութեան պատճառաւ:

ե. Երբ կործ (ինչպէս՝ 2 ամիս) եւ օրոշեալ ժամանակի կամ տեղւոյ մը համար տրուի, հաւանականաբար պատիժ է միայն, երբ օրէնսդիրը հակասակ չի յիշեր¹:

զ. Իսկ եթէ մտաց կամ մարմնոյ անյանցաւոր պատկանութեան համար միայն տրուի, յայտնի է թէ ոչ դատակնիք է եւ ոչ պատիժ:

Կախակայութիւնն իբրեւ դատակնիք այլեւայլ բարեփոխութիւններ ունի:

1. Կախակայութիւնն՝ որ բացարձակ եւ պարզապէս (absolute et simpliciter) տրուած է, առանց սահմանաւորման մը, առանց յիշելու՝ թէ ասկէ կամ անկէ կը կախակայի, միշտ ամբողջական կը համարուի. ուստի այնպիսին ոչ միայն Կարգի եւ իրաւաբանութեան գործադրութեան կը զըկուի, այլ եւ բարեբարութեան պտղոյն ստացմանէն:

Իսկ 2. Մասնակի կախակայութիւնն անոնցմէ միայն կը զըկէ, որ օրինաց, իրաւանց, հրամանին կամ վճռոյն մէջ կը յիշուին: Ուստի ա. Ով որ բացարձակ եւ պարզապէս Կարգէն կը կախակայի, զըկուած է Կարգի ամէն, թէ՛ փոքր եւ թէ՛ մեծ աստիճաններու գործածութեան: Այսպիսի կախակայելոյ մը Կարգի գործերն որ իրաւաբանութեան հետ կապ մը չունին, թէ եւ միշտ վաւեր են, բայց եթէ հրապարակաւ գործադրէ, ոչ միայն ծանր կը մեղանչէ, (եթէ անյաղթելի տգիտութիւնը կամ օրինաւոր պատճառ մը մեղքէ տգիտութիւնը) այլ եւ անկանոնական կ'ըլլայ: Բայց չ'արդարացընէր, այլ եւ անկանոնական կ'ըլլար: Իրաւաբանութեան ալ կախակայեալ չէ. նոյնպէս ով որ Կարգի մեծ աստիճաններէն կախակայեալ է, անով փոքրէն ալ կախակայեալ չ'ըլլար: Եպիսկոպոս կախակայեալ յեպիսկոպոսական զարգուց, եթէ պատարագ մատուցանէ, նաեւ եպիսկոպոսական զարդուք, չ'ըլլար անկանոնական. վասն զի Եպիսկոպոսական կարգի էական գործ մը չի կատարեր:

¹ շմբ. Հայեր, 311 — 314:

բ. Ով որ միայն իրաւաբանութենէ կախակայեալ է, կը զրկուի իրաւաբանութեան ամէն գործադրութենէն: Ուստի այսպիսեղոյն իրաւաբանութեան գործերն անվաւեր են, երբ կախակայեալն յանուանէ հրատարակուած է. իսկ եթէ հրատարակուած չէ, վաւեր են, բայց մեղանշական: Ով որ բարերարութենէ կախակայեալ է, անով ոչ կարգէն եւ ոչ ալ պաշտամանէն կախուած է:

գ. Ով որ բացարձակ եւ պարզպէս պաշտամանէ կամ յաստուածայնոց կը կախակայի, կը զրկուի թէ կարգէն, թէ իրաւաբանութենէն եւ թէ եկեղեցական պաշտամանէն: Ուստի պաշտամանէ կախակայեալ ժողովրդապէս մը չի կրնար պատարագ մատուցանել, քարոզել, աստուածային պաշտամունք կատարել, Ս. Խորհուրդ մատակարարել:

դ. Ով որ միայն քաղաքացիութենէ կը կախակայի, կրնայ կարգի եւ իրաւաբանութեան իշխանութիւնները գործադրել: Նոյնպէս, այս ինչ Եպիսկոպոսն ընդունած բարերարութենէ կախակայեալ մը, ուրիշէ մ'ընդունածն չի կախակայիր, եւ ոչ ալ նոր մ'ընդունելու անատակ կ'ըլլայ. ցորչափ դատաւիճիւ մը չի արուիր, բարերարութենէ կախակայեալ մը կրնայ դաւազանապտուղ ընդունիլ:

Իսկ կախակայութեան արջակման նկատմամբ մտադրութեան արժանի են յաջորդքս: Եթէ կախակայութիւնը դատակնիք է, արձակմամբ միայն կը թողուի. եթէ վերապահեալ ալ է, վերապահողն արձակմամբ: Իսկ եթէ արուած է որոշեալ ժամանակի մը համար կամ պայմանու մը, ժամանակը լրանալուն կամ պայմանը կատարուելուն պէս ինքնին կը դադրի: Եթէ իբրեւ պատիժ արուած էր, նոյնպէս Մեծին կամ իւր յանձնարարական պաշտօնէին ձեռօք կրնայ թողուիլ, եթէ որոշեալ ժամանակի համար արուած չէր: Կախակայեալ կղերական մը յառաջ քան կախակայութենէն Առաջնորդին ձեռօք արձակուիլն, կրնայ արձակուիլ մեղքերէն պարզ խոստովանահօրէ մը, եթէ կը զղջայ մեղացը վրայ եւ կը խոստանայ ըստ

կարի շուտով կախակայութեան արձակումն արեւուլ, եւ կախակայեալ գործերէն՝ ցորչափ կախակայեալ է, ետ կենայ: Ասան զի կախակայութիւնը Խորհրդոյ մերձենայէն չի զրկեր:

Տուեալ վճույ կախակայութիւնը բովանդակուած են Առաջ. Ախոսոյ Սահմանադրութեան եւ անկէ ետեւ արուած վճիռներու մէջ¹:

3.

ԱՐԳԵԼՈՒՄՆ

Արգելումն (interdictum) է դատակնիք՝ սրով ի պատիժ յանցանաց ինչ՝ գործածութիւն աստուածային պաշտամանց, ինչ ինչ Խորհրդոց եւ եկեղեցական թաղման սմանց կամ ինչ ինչ տեղեր կ'արգելուի:

Ուստի կրնայ ըլլալ՝ 1. Անշնական, որեւէան ու խառն, ըստ որում ուղղակի անձին, տեղւոյն կամ երկուքին վրայ ի միասին կը դրուի: 2. Ընդհանուր եւ մասնաւոր, ըստ որում բովանդակ դաւառի, քաղաքի, ընկերութեան վրայ կը դրուի, եւ կամ մասնական՝ աղօթարանի, եկեղեցւոյ, որոշեալ անձանց վրայ: 3. Աքողջական եւ մասնական, ըստ որում թէ աստուածային պաշտամանէ, թէ Խորհուրդներէ եւ թէ եկեղեցական թաղմանէ կը զրկէ, եւ կամ անոնց մէկէն կամ երկուքէն միայն:

Ընդհանրապէս խօսելով՝ արգելումը կրնայ դրուիլ ծանր ու հասարակութեան վնասակար մեղաց համար: Ուստի անձնական մեղաց համար անձնական, իսկ բաւական մեծ հասարակութեան գլխաւորին կամ գլխաւոր անդամներուն մեղաց համար ընդհանուր կամ տեղական կը դրուի:

Ընդհանուր արգելումն որոշեալ տեղեաց եւ անձանց վրայ միայն կ'ըլլայ: Արդ, 1. Եթէ տեղւոյ մը կղերականներն արգելման տակ ձգուին, ժողովուրդն ու կրօնաւորներն ալ ձգուած չեն ըլլար: 2. Եթէ քաղաքն արգելման տակ է, անմեղ բնակիչք ազատ

¹ Տես էջ 25 —, 222 —, եւ 265 —

են արգելմանէ. կրնան ուրիշ տեղ երթալ աստուածային պաշտամանց ներկայ դասուելու: 3. Եթէ քաղաքի մը բնակիչք արգելման տակ ձգուին, եկեղեցիներն ալ չեն արգելուիր: Ուստի ծանապարհորդք, օտարք կրնան ներկայ ըլլալ պաշտամանց:

Եթէ արգելքն առանց սահմանադրութեան ամբողջի մը վրայ դրուի, ամէն մասանց վրայ ալ դրուած է: Ուստի 1. Արգելումն քաղաքին՝ ամէն եկեղեցեացն ալ է, թէեւ Եպիսկոպոսին իրաւաբանութենէն ազատ ըլլան: 2. Արգելումն ընտանեաց կամ հասարակութեան, արգելումն է ամէն մէկ անդամնց ալ, թէեւ մէկն արգելումը տրուելէն ետեւ նոյն հասարակութեան անդամ եղած ըլլայ: Բայց Եպիսկոպոսաց արգելում չկայ, եթէ մասնաւոր կերպով չշիշուին. նոյնպէս եւ ոչ մանկանց, յիմարաց եւ անմեղաց, թէեւ ասոնք ալ եկեղեցական թաղմանէ զրկուին: 3. Արգելումն եկեղեցւոյ, արգելում է իւր ամէն մէկ մատրան եւ կից գերեզմանին: Նոյնպէս տեղոյ մը (գղեկի, քաղաքի) վրայ դրուած արգելումն, արուարձանեացն եւ աւերթերակաց շինուածոց ալ է:

Արգելման արդեւնքն երեք է.

1. Չրկումն յաստուածային պաշտամանց՝ պատարագէ, հասարակաց աղօթքէ, հասարակաց ժամերգութենէ, հրապարակաւ ջուր, իւղ, եկեղեցի, մոմեղէն օրհնելէ եւ այլն, ի բաց առեալ քարոզը: Բայց կղերիկոսք՝ որ արգելման տակ են, չեն կրնան պատարագել, բայց միայն դրօք փակելովք, առանց զանդակի հնչման, արտաքսելով յայտնի արգելեալները: Իսկ Շննդեան, Չատկին, Պենտեկոստէին, Վերափոխման, Անարատ Յղութեան, Մարմնոյ եւ Արեան տօնին հանդերձ ութօրէիւք օրէն է պատարագ մատուցանել:

2. Չրկումն ի մարտիրոսացն եւ յընդունելոյն ինչ ինչ խորհուրդս, այս ինքն Հաղորդութիւն, Ասրգ քահանայութեան: Թոշակ, եւ վերջին Օծում (երբ հիւանդն ուրիշ խորհուրդ մը չէ ընդունած.) հոգեվարաց կրնայ տրուիլ: Մկրտութիւն նաեւ հանդիսական, Գրոշմ, Ապաշխարութիւն, հաւանականաբար

նաեւ Ամուսնութիւն ամէնուն կրնայ տրուիլ, բայց ոչ՝ արգելման պատճառին, օգնականին կամ պաշտպանին:

3. Չրկումն յեկեղեցական խորհուրդ: Տեղական արգելման ժամանակ նաեւ մանկունք ու յիմարք չեն կրնար եկեղեցական թաղմամբ թաղուիլ: Աղերիկոսք՝ որ յանուանէ արգելեալ չեն եւ արգելումը չեն բռնաբարած, կրնան թաղուիլ սուրբ տեղ, նաեւ պատարագաւ՝ բայց առանց հանդիսի. նոյն իսկ երբ եկեղեցին մասնաւոր արգելուած է, բայց առանց պատարագի:

Եթէ կղերիկոսք անձնական արգելումը բռնաբարեն, ծանր կը մեղանչեն, եթէ վասն թեթեւութեան նիւթոյ չարգարանան: Նոյնպէս ծանր կը մեղանչեն տեղական արգելումը բռնաբարելով՝ երբ տեղն ընդհանուր կամ մասնաւոր արգելմամբ արգելեալ ըլլայ եւ հրապարակաւ բռնաբարեն. այլազգ ներելի միայն կը մեղանչեն: Իսկ եթէ Ասրգի իշխանութիւնն ընդդէմ արգելման գործածեն, անկանոնական կ'ըլլան: Աղերականք՝ արգելեալ տեղ աստուածային պաշտօն եթէ կատարեն կամ կատարել տան, կամ քահանայակեանց զատ ուրիշէ մը յանուանէ բանադրեալներն աստուածային պաշտամանց, Ս. Խորհրդոց կամ եկեղեցական թաղման ընդունին, եկեղեցի մտնելէն կ'արգելուին:

Իսկ աղերիկոսք ծանր կը մեղանչեն անձնական արգելումը բռնաբարելով: Ծանր կը մեղանչեն եթէ տեղական արգելումը բռնաբարեն՝ ստիպելով զկղերիկոսս ընդդէմ արգելման աստուածային պաշտօն կատարել, եւ արգելեալ տեղ մը խորհուրդ ընդունելով: Միայն ներելի կը մեղանչեն, երբ իրենք անձամբ արգելման տակ չեն, բայց արգելեալ տեղ մ'աստուածային պաշտամանց ներկայ դասուին¹:

Տուեալ վճռոյ արգելմունք Առտ. Արտոյ եւ Հրտեակոս քահանայակեանց Սահմանադրութեանց մէջ բովանդակուած են²:

¹ Հմմ. Հայնէր, 356 — 359:
² Տես էջ 29 —, 243 —, եւ 265 —:



Այն դատակնիքներն, որ մեզնի համար այսօրս զօրութիւն ունին, բնականապէս այնչափ եւ այն եղանակաւ զօրութիւն ունին, որչափ եւ ինչ ձեւով Առաքելական Արեւելոյ Սահմանադրութիւնն անոնց կու տայ: Ասան զի եթէ այս Սահմանադրութեան ինչ ինչ կանոններն մեզնի համար պարտաւորիչ են, կրնան պարտաւորիչ ըլլալ միայն իրենց այս նոր յեղին որով, զոր Ս. Քահանայապետն ուզած է: « Արեւելոյ... բանագրանաց... դատակնիքներէն միայն անոնք զօրեն այսուհետեւ, կ'ըսէ Ս. Քահանայապետն, զորոնք ի սմին իսկ Սահմանադրութեանս կը կարգենք, եւ այլոնս ձեռով, որով կը կարգենք: »

Նոյն կերպով պատասխանեց մեզ այս մասին Փր. Հայնէր, որոյ նամակն հոս ամբողջ յառաջ կը բերենք. « Իմ կարծիքս այս է. Առաք. Արեւելոյ Սահմանադրութեան այն դատակնիքներն, որ արեւելեան եկեղեցեաց համար ալ պարտաւորիչ են, այնչափ կը պարտաւորեն, որչափ նոյնին մէջ բովանդակուած են: Եթէ նոյն Սահմանադրութեան ինչ ինչ դատակնիքներն իրաւանց զօրութիւն ունին, ունին միայն «այլոնս ձեռով, որով» կը կարգէ Ս. Քահանայապետն. ուստի այնչափ որչափ ասոնք դատակնիքաց հետ կը միաբանին. իսկ վերջինք՝ «ցորչափ որ Մեր այս Սահմանադրութեան հետ կը միաբանին: »... Ապա թէ ոչ պէտք է ըսել, թէ Առաք. Արեւելոյ Սահմանադրութիւնը բնառաւորապէս իրաւանց զօրութիւն չունի Արեւելեայց համար: Ուստի այն մասունքն, որ իրաւանց զօրութիւն ունին, ունին այն իրաւանց զօրութիւնը, զոր առած են այս Սահմանադրութեան ձեռք: »

Եւ իրօք, ինչպէս վերը տեսանք, Յայտարարութեան 2^ր կէտը կը ծանուցանէ թէ « վարդապետական նիւթոց մասին տրուած » նա եւ « բնական եւ աստուածային օրէնքը մեկտող » Սահմանադրութեանց

դատակնիքներն պարտաւորիչ են մեզնի համար: Արդ, Եկեղեցին այս դատակնիքներն ուրիշ ձեւի տակ չի ծանցնար այսուհետեւ, եթէ ոչ միայն Առաք. Արեւելոյ Սահմանադրութեան տուած ձեւին տակ:


« Ենթադրենք, կը շարունակէ Փր. Հայնէր, որ այս խնդիրը Կաթողիկոսական ըլլայ. ես կը մնամ վերոյն յիշեալ կարծեաց վրայ, ցորչափ Հռոմ հակառակը չ'որոշեր: Ասան զի եթէ ստոյգ է՝ որ այս Սահմանադրութեան մէկ քանի դատակնիքներն Արեւելեայց համար կ'արժեն, հարկ է որ սահմանաորհման հանդերձ արժեն. խնդիրն պատժոյ վրայ է, ուրեմն անձուկ մտօք մեկնելու է: Այս Սահմանադրութիւնն « օրէնսդրին մէկ բարերարութիւնն » (beneficium legislatoris) է, անոր համար չի կրնար ըսուիլ՝ թէ Հին օրէնքէն միայն այնչափն ջնջուած ըլլայ, որչափն ստոյգ է: Պիտի թ. դատակնիքներն ամբողջով ուզած է, անոր համար պէտք է որ մենք ալ Սահմանադրութիւնն ընդարձակ մտօք մեկնենք: Այս Սահմանադրութիւնն ամէն Կաթողիկոսական խնդրոց մէջ նախաձեռնար դիպի ընդհանրի: Եթէ Հռոմ կ'ուզէր՝ որ սլլազգ հասկըցուի, պէտք էր յայտնապէս ծանուցանել: Անոր համար ես Չեր դրից մէջ այս կարծեաց վրայ հաստատուն կը մնամ: »

« Կրնանք միանգամայն ենթադրել, որ Պիտի թ. արեւմտեան եկեղեցւոյ ընել ուզած բարիքն, Արեւելեայց ալ ընել ուզած է, այնչափ՝ որչափ այս կարելի էր Արեւելեայց դատակնիքներուն մասին: Արդ, կարելի է այն դատակնիքաց համար, որոնք ըստ Յայտարարութեանս « վարդապետական նիւթոց մասին » եւ այլն տրուած են: ... Ես այս կարծեաց վրայ ամենեւին տարակոյս չունիմ: »



Վ Ր Ի Պ Ա Կ Ք

Ըջ Տող		Ընթերցիր
50	Ժ. 1 Մ.	Խ.
53	Ժ. 2 Հատ. Է.	Գր. Ե. Տխտ. Է.
60	Ժ. 1 Ռ.	Ջ. [Տ Ե. Թ.
73	11 ընդհանուր	ընդհանուր
81	Ժ. 1 13	Ը. Թ.
89	25 ազատութիւնը	ազատութիւնը
101	11 Աթոռէն	Աթոռէն Կ-ժ
128	21 Քահանայապետին	Քահանայապետին
132	1 կեցողներէրը	կեցողները
134	1 Աղէքանդր	Աղէքանդր
135	Ժ. 1 Կ'ուրի	Կուրի
154	Ժ. 1 Իտալոյ	Իտալոյ
154	Ժ. 5 ազտելու	ազտելու
172	16 ազատակամ	ազատակամ
185	24 ուտի	ուտի
197	8 յայր	յայր
256	24 Patriacha	Patriarcha
289	4 Գ. Դաս	Գ. Խումբ
292	1 Գ. Դաս	Ե. Խումբ
309	7 ապահովութիւն	ապահովութիւն
309	Ժ. 1 (Ժ.) 5	(Ժ.) 1



Հ Ա Յ Ե Լ Ի Բ Ա Ն Ա Գ Ի Ր Ա Ն Ա Ց

Ա Ռ Ա Ն Զ Կ Ե Բ Պ Գ Բ Հ Ն Յ Պ Տ Ե Վ Ե Բ Ա Պ Գ

- “Առ. Աթ.” 1. Ուրախութիւն, հեղինակութիւն, քաջութիւն:
 2. Արեւելից քերականութիւն, քերականութիւն:
 3. Հերթաշար, ընդհանուր քերականութիւն:
 4. Բողոքող ի ժողով, գործակիցը:
 5. Բանարարող կարգիւնները, գործակիցը:
 6. Եկեղ. իրաւաբանութիւնն արգելող, գործ.
 7. Դատարան ստիպող, օրէնք տուող:
 8. Առաք. թղթերն արգելող:
 9. Չաստիք խարդախող, գործակիցը:
 10. Չարութիւն ընդդէմ:
 11. Յափշտակող Եկեղ. Ինչքն:
 12. Հռոմայ երկիրներն զննող, գործակիցը:
 “Հռ. Քհ.” 13. Ընտրեալն յեպիսկոպոսութիւն ընդունող:
 Ժ. Սիւնհ. 14. Բանաւոր ժողովրդապետ:
 Ժ. Ապաշ. 15. Ընկերութիւն կաթող. խտալ.:

Պ Ա Ր Զ Վ Ե Բ Ա Պ Ա Հ Ե Լ Ի Բ Հ Ն Յ Պ Տ Ե

- “Առ. Աթ.” 1. Գոպրտեալ. նիդո. եւ մեղսակցին անունը
 ինչդրել օրին. ուսուցանող:
 2. Եկեղեցականը բռնաբարող:
 3. Մենամարտող, գործակիցը:
 4. Մասնակցութիւն, քերականութիւն:
 5. Եկեղեցին բռնաբարող, նոյնը հրմող:
 6. 7. Կանանց եւ արանց փակարանը բռնաբարող:
 8. 9. Բարերարութեան մէջ իրկն. եւ մտերմին.
 սիմոնական:
 10. Վանք մտնելու առթիւ իրական սիմոնական:
 11. 12. Հոգեւորներ եւ պատարագներէ շահ ընող:
 13. Հռոմայ երկիրներն օտարացընել խրատող:
 14. Կրօնաւոր վերջինք տուող:
 15. Ս. Նշխար գողցող, գործակիցը: [հղղղ.]:
 16. Քհնյատ. յան. ընդրեւն. հետ ի յանց. յանցւոր.
 17. Չաստիք յաճայինս. ընդունող:

18. ԲՏԿԱՍ. առանձինն վերապէս արձակող :
 19. Յափշտակող եկեղ. ինչքն :

Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ի Ն Վ Ե Բ Ը Պ Ը Հ Ե Ա Լ

- “Ա. ԱԹ.” 1. Կղերին. եւ կրօնաւոր ամուսնացող :
 2. Վիժող :
 3. Խարդախեալ Առաք. թղթ. գործածող :

Ո Չ Ո Ի Մ Ե Ք Վ Ե Բ Ը Պ Ը Հ Ե Ա Լ

- “Ա. ԱԹ.” 1. Անարժանից եկեղ. թաղում շնորհեւ Հրմիդ. ստիպող :
 2. Ս. Ատենի քննիչքն ահարեկող, գործակիցք :
 3. Եկեղ. ստաց. օտարացընող :
 4. Ի զազիրս հրպրղ. խոստմիչյրբ. չգեկուցանող :
 5. Ս. Գիրք անհրմն. տպող :

- ՏՐՆԳ. Ժ. 6. Կինն վանք մտնելու ստիպող, արգելող :
 7. Առեւանգող : [Թիւնն :
 8. Տեարք արգելողք ամուսնութեան ազատու-
 9. 10. Գաղտնի եւ անհրմն. ամուսնութիւնն ան-
 վաւեր ըսող :
 11. Հաղորդութենե յառաջ խոստմիչք. հրկւր-
 չէ ըսող :

- ՔՆՆ. Ժ. 12. Առաքեալք վաճառականք ի Հնդկիս :
 “Ա. ԱԹ.” 13. ԲՏԿԱՍ. ընտրութեան եւ այլն տրուած բա-
 նարանքներն :



ԱՅԲՈՒԲԵՆԱԿԱՆ
 Յ Ա Ն Կ Ն Ի Ի Թ Ո Յ

- Արբայ, 147, 280 :
 Ազատ կաթողիկեայք, 81 :
 Ազատախորհ, 51 :
 Ազատորմաչէն, տ. Մասո-
 նեան :
 Ազատութիւն եկեղեցւոյ,
 97 :
 Աթոռ դատարկացեալ, 280 :
 Ախորժեալ, տ. Տգիտու-
 թիւն :
 Ահարեկ ընել, 104, 202 :
 Աղանդ, 154, ծան. 2 :
 Ամբաստանող, 96 :
 Ամուսնութիւն կրթակա-
 նաց եւն. 189 : Ամուս-
 նութեան ստիպել, 273 :
 Գաղտնի, 274 : Առանց
 հաւանութեան ծնողաց,
 274 : Օրհնել առանց հա-
 ւանութեան ժողովրդա-
 պետի, 274, 281 :
 Անանուն մատենք, 68 :
 Անաստուած, 51 :
 Անատակութիւն, չէ ջըն-
 ջուած, 47 : Իրանադրեալէ
 ձեռնադրելոյն, 238 : Գա-
 տակիք չէ, 296 : Տես եւ
 Անկարութիւն :
 Անբռնաբարելիութիւն, 158 :
 Անդամատող, 86 :
 Անկանոնականութիւն չէ
 դատակիք, 296 : Բանա-
 դրանքը բռնաբարել նոյնն
 յառաջ կը բերէ, 311 :
 Անկարելիութիւն կամ Ան-
 կարութիւն, 300 :

- Անհնազանդութիւն քահա-
 նայապետի, 79 :
 Անմտագրութիւն, 298 :
 Անյաղթելի, տ. Տգիտու-
 թիւն :
 Անշարժական ինչք, 205 :
 Անուղղակի, 91, 95 :
 Անչափահաս, 300 :
 Անջութափ, 145, 300 :
 Անտարբերական, 51 :
 Աշխարհականիշխանութիւն
 քահանայապետի, 175 :
 Ապականող Հռոմայ երկը-
 ները, 125 :
 Ապատանարան եկեղեցա-
 կան, 158 :
 Առանձինն կերպով վերա-
 պահեալ, 49, ծան. 1, 128 :
 Առաքելական թղթեր, 71,
 101, 109 : Չասոնք խարդա-
 խել, 106 : Խարդախեալ-
 ները գործածել, 196 : Ա-
 ռաքել. թղթերն արգե-
 լուլ, 103 : Առաքել. նու-
 իրակ, 101 : Հաճութիւն,
 203 :
 Առաքելական Աթոռոյ Սահ-
 մանագրութիւն, 2—37 :
 Ասոր մեկնիչները, 41 :
 Վախճանք, 44 : Մեկնու-
 թիւնը, 43, 49 : Տարա-
 ծութիւնը, 46 : Չօրու-
 թիւնն Արեւելեայց հա-
 մար, 253, 322 :
 Առաքելութիւն ընող վա-
 ճառականք, 284 : Տի-

տղոս առաքելութեան, 225: Առաքելութեան քահանայք, 241: Առեւանգութիւն, 272: Աստուածայինք, 186, 246: Ածխալաճառք, 153: Ասորձան, տ. Չեռնադրութիւն: Աստուածաշունչ, տ. Ս. Գիրք: Աստուածեանք, 51: Ատեան ներքին, արտաքին, 90, 302: Աշխարհական, 92, 96: Ատենի արտօնութիւն, 95: Սուրբ Ատեան 202: Արգելեալ գիրք, 60: Տեղեր, 246: Երթալու ի Հռոմ, 306: Արգելուլ եկեղեցական իրաւաբանութիւնք, 91: Առաքելական թղթերը, 103: Եկեղեցական մուտքն ընդունիլը, 268: Վանք մտնելը, 271: Արգելում, գաղափարը, տեսակներն եւ այլն, 319: Արգելք ձեռնադրութեան, 230: Մեծին ներկայանալու, 306: Արեւելեան կաթողիկէականք, 78: Արձակեալք ի վանաց, 235: Արձակումն ի հերետիկոսութենէ, 59: Մեղսակցին, 110: Ի քահանայապետական վերապահելոց, 126: Ի կէտ մահու, 130, 303: Եկեղեցական մը բռնաբարողը, 147: Ի ներքին եւ յարտաքին ատենի, 302: Ի դատակնքէ 302: Արտօնութիւն ատենի, 95: Կանոնական, 141: Աւաղակ, 121:

Բանադրանք, 181, 310: Բանադրեալ, 180, 247: Բանադրելոյ հետ հարորդակցութիւն, 180: Ի պաշտամունս ընդունիլ, 244: Բանակրօն, 51: Բանտարկող, 87: Բարերարութիւն տալու մէջ սիմոնականութիւն, 165, 168: Իբր տիտղոս, 224: Ինչ է, 225: Յափշտակել, 266: Բարձումն իրաւանց, 47: Բնակրօն, 51: Բողոքել ի վճռոյ քահանայապետի, 82: Չայս եթէ համալսարանք եւ այլն գործեն, 85, 243: Բռնաբար ձեռն մտող, 141: Բռնաբարել եկեղեցական ապաստանարանը, 161: Փակարանք, 162: Բռնաբարութիւն եկեղեցականի, 146: Նոյնին արձակումը, 147: [289: Բռնաւոր ժողովրդապետ, Գաղտնի ընկերութիւնք, 153: Ամուսնութիւն, 274: Գաւառապետ, 148: Գետնափորներն նշխարներ գողնալ, 178: Գերեզմանատուն եկեղ. ապաստանարան է, 159: Գիրք, 66: Հերետիկոսաց եւ այլն, 61—70: Արգելեալ, 70: Տես Ս. Գիրք: Գող, 121: Գործադրութիւն եկեղ. իրաւաբանութեան, 91: Առաքելական թղթոց, 103: Գործածել խորագրեալ Առաք. թուղթ մը, 196: Գործակալ, 101: Գործակցութիւն, 84, 94, 126, 151, 167, 184, 197:

Գործք Առաքելական Աթոռոյ, 101: Գրականք, 154, ծան. 3: Գրաւ դնել եկեղեցականի ստացուածները, 122: Գրաւել, տ. Յափշտակել: Դաշինք, 203: Դաշնադրական սիմոնականութիւն, 165: Դաշնադրութիւն, 48: Իբր կանոնական կարգադրութիւն, 97: Դատակնք, 295: Պայմանը, 296: Ենթակայն, 300: Արձակումը, 302: Բաժանումը, 309: Դատապարտեալ նախդատութիւնք, 134: Զանոնք պաշտպանողներ, 131: Դատարկացեալ աթոռ, 280: Դիմել աշխարհական ատենի, 92, 102: Եկեղեցական իրաւաբանութիւն, 90: Անձ, 96, 117: Ապաստանարան, 158: Թաղում, 199: Ստացուած, մուտք եւն. 204: Եկամտեկեղեցականի, 120: Եկեղեցի, ընկերութիւն է, 40: Իբր ապաստանարան, 159: Մտնելէ արգելեալ, 245: Եպիսկոպոս յօտար թեմի, 277: Տիրոջական, 278: Թեմէն հեռացող չգեղուցանող, 282: Հարձակալ, 282: Անուանեալը կամ առաջարկեալը ի վարչութիւն ընդունիլ, 285: Եթէ զայս ընդունողն եպիսկոպոս է, 287: Նկատմամբ դատակնքոյ, 301: Իշխանութիւնը դատակնքէ արձակելու, 305:

Եպիսկոպոսական զարդ, 240: Նոյնն օտար թեմի մէջ գործածող, 277: Երկրայութիւն, տ. Տարակոյս: Երկիւղ կ'արդարացնէ դատակնքէ, 300: Զաղիք մեղք, 112, 210: Զարնող, 86: Զեկուցումն մեղակցին անուր խնդրող խոստովանահօր, 140: Պարագլխոց, 156: Հրապուրող խոստովանահօր, 209: Թեմէն հեռացող եպիս. 282: Զրկումն դատակնք չէ, 296: Զրուցատար, 94: Էջմիածնական եկեղեցի, 78: Ընդունող զհերետիկոս, 56: Զեպիսկոպոսանուանեալ, 285: Ընթեռնուլ հերետիկոսութեան պաշտպան գրքերը, 62: Արգելեալ գրքերը, 70: Ընթրեաց կոնդակ, 49 ծան. 1: Ընծայագիր, 229: Տուեալ ի ժողովոյ կանոնիկոսաց, 280, 283: Ընկերութիւն գաղտնի, 154: 292: Թագաւոր եւ թագուհի նկատմամբ դատակնքոյ, 301: Թաղումն բանադրելոյ, 199: Անարժանի, 244: Թանձր, տ. Տգիտութիւն: Թափօր իբր ապաստանարան, 160: Թռակ, 177: Թուղթ Առաքելական, 101: Ընդդէմ ասոր դիմել յաշխարհական ատեան, 102: Ասոր հրատարակումն ար-

զելուլ, 103: Խարդա-
խեալ, 106: Նոյնը գործա-
ծել, 196:

Ժողով կանոնիկոսաց, 280,
283:

Ժողովորդապետ օտարին
հպատակը կարգող, 281:
Բռնաւոր, 289:

Ինչք եկեղեցական անձի, 117:
Եկեղեցական, 120: Հռո-
մայ եկեղեցւոյ, 123: Օ-
տարացընել, 203:

Իշխանութիւն արգելեալ
գրքեր կարդալու, 65:
Գատակնքէ արձակելու,
303:

Իրաւարանութիւն եկեղե-
ցական, 96: Գործադրու-
թիւնն արգելուլ, 117:

Իրաւունք եկեղեցւոյ, 97:
Եկեղեցականի, 119:

Լուսաւորեալք, 51:
Լրագիր, 67:

Խարդախել Առաքելական
Թուղթը, 106: Չայս գոր-
ծածել, 196:

Խոստովանահայր մեղակցին
անունն հարցընող, 138:
Հրապուրող, 209:

Խոստովանութեան առթիւ
հրապուրող, 209: Խոր-
հրդական, 210: Հաղոր-
դութեաննկատմամբ, 275:

Խորհուրդն Ապաշխարու-
թեան Սահմանադրու-
թիւնը, 110, 259:

Խորհրդատու, 84, 89, 94, 126:
Խուզումն հերաց, 96:
Խոսող, 125:

Կարուած, 87:
Կախակայութիւն, 315:
Կամակար, տ. Տգիտութիւն:

Կայսր եւ կայսրուհի, 301:
Կանոնական կարգադրու-
թիւն, 97: Արտօնութիւն,
141: Արգելք, 230:
Կանոնիկոսք, 222, 285:
Կարգ, տ. Չեռնադրութիւն:
Կարգադրութիւնք քահա-
նայապետի, 83:
Կարգինալ, 85, 301:
Կէտ մահու, 130, 303:
Կղերական, 143, 187, 189:
Վերջին օծումն տալ յան-
դրգնող, 175: Հաղորդուող
բանադրելոյ հետ, 185:
Վմուսնանալ յանդգնող,
189: Հռոմ կեցող, 239:
Կոնդակ, 34 ծան, 1:
Կուսանք, 163: Վմուսնա-
նալ յանդգնող, 189:
Կուսաստան, 162:
Կրօնաւոր, իբր եկեղեցական,
96: Վերջինք տալ յան-
դրգնող, 177: Մտուանեալ
Աբբայ ընդունող, 222:
Չեռնադրեալ առանց տի-
տղոսի, 233: Արտաքսեալ,
234: Նկատմամբ դատա-
կնքոյ, 301:

Հալածող, 87:
Հաղորդակցութիւն բանա-
դրելոյ հետ, 180: Ի յան-
ցանս յանցաւութեան,
180, 201: Յաստուածայ-
ինս, 185:
Հաղորդութիւն իբր Թոշակ,
177:
Հաճութիւն Առաքելական,
203:
Համալսարան, 85:
Համաստուածեան, 51:
Համառօտագրութիւն, 67:
Հայ կաթողիկեայ, 253:
Հանդիսատես մենամարտի,
152:
Հասարակավար, 154:

Հարկաւորութեան դիպու-
Հարձակալ, 282: [ած, 177:
Հարնախօսութիւն, 190:
Հաւանող, 56, 80, 151:
Հաւատադրութ, 50:
Հաւատացող, 55:
Հեթանոս, 51: Ասոր
գրուածքները, 69:
Հերետիկոս, 52:
Հերետիկոսութիւն, 52: Ա-
սոր արձակումը, 59: Հե-
րետիկոսութեան պաշտ-
պան գրքեր, 60:
Հերձուած կատարեալ, 77:
Անկատար, 79:
Հերձուածող, 76:
Հին կաթողիկեականք, 78:
Հոգեմոլ, 51:
Հոգեվար, տ. Կէտ մահու:
Հպատակ քահանայապետին,
80: Նկատմամբ ձեռնա-
դրութեան, 228:
Հռոմայինքերը, 123: Հռոմ
կեցող կղերական, 239:
Երթալու արգելեալ, 306:
Հռոմէական եկեղեցի, 124:
Հռոմէական քահանայա-
պետն Սահմանադրու-
թիւնը, 285:
Հրամայող, 88:
Հրապուրումն ի խոստովա-
նութեան, 209:
Հրատարակել օրէնք ընդդէմ
եկեղ. իրաւարանութեան
գործադրութեան, 93:
Ընդդէմ աղատութեան
եկեղեցւոյ, 99: Հրատա-
րակել խարդախեալ Ա-
ռաք. Թղթեր, 109:
Հրեայ, 51:
Հրեայեալ բրիտոնեայ, 51:

Չեռնադրութիւն առանց
տիտղոսի, 224: Առանց
բարերարութեան, 227:
Ուրիշին Թեմին մէջ, 227:

Ուրիշին հպատակը, 227:
Չեռնադրութեան ար-
գելք, 230: Կրօնաւորի ա-
ռանց տիտղոսի, 233: Ի
բանադրելոյ եւայն ընդու-
նիլ, 236: Հռոմ բնակող
կղերականի, 239: Ոստ-
մամբ, 250: [141:
Չեռն միսլ եկեղեցականի,
Չերակալող, 87:

Մահուան կէտ, 130, 303:
Մասնեան, 153:
Մեղակց, 115: Ասոր ար-
ձակումը, 110: Ասոր ա-
նունը խնդրել, 138:
Մեկնութիւն «Առաք. Ա-
թուոյ» Սահմանադրու-
թեան, 41—49:
Մենամարտութիւն, 148:
Մերժող, 87:
Միանձունք, 144:
Մշտտեւ պատիժ դատա-
կնիք չէ, 296:
Մոլորութիւն, 52:
Մոռացութիւն, 298:
Մուտք եկեղեցական, 268:

Յաղթելի, տ. Տգիտութիւն:
Յամառութիւն 59, 297:
Յայտարարութիւն վասն Ա-
րեւելեայց, 253:
Յանդգնութիւն, 129, 161,
178, 190:
Յանձնարարականութիւն, տ.
Ընծայագիր, Վկայագիր:
Յանուանե բանադրեալ, 183:
Յանցաւորութիւն, 183:
Յարձակող, 125:
Յարող հերետիկոսաց, 55:
Յափշտակութիւն եկեղեցա-
կանի ստացուածոց, 117,
120, 266: քահանայապե-
տական երկիրներու, 124:
Եկեղեցական ստացուա-
ծոց, 266:
Յունական եկեղեցի, 78:

Նախադասութիւն գատա-
պարտեալ, 134:
Նենգեալ Առաք. թուղթ,
196: Տես Խարդախել:
Ներկայանալու պարտք, 130,
304:
Ներողութիւն, 170:
Նզովք, 310:
Նիւթակրօն, 51:
Նշխար Սրբոյ, 178:
Նովին գործով, 309:
Նոտար, 94:
Նորնծայ, 144:
Նուիրակ, 101, 147:
Շահավաճառութիւն ներու-
ղութեան, 170: Պատա-
րագցուաց, 172: Արեւելք
առաքելութիւն ընողնե-
րու, 284:
Շարժական, 204:
Ողջախօսութիւն, 189:
Ոնչականք, 154, ծան. 4:
Ոնչացուցմունք, 47:
Ուխտ դնելու ստիպել, 269:
Ուխտագրութիւն կրօնաւո-
րի, 235:
Ուղղակի, 91, 95:
Ուսուցանող, 132, 275:
Ուրացող, 50: Ասոր գիրքը,
60: Կրօնաւոր, 235:
Ուրացութիւն, 50: Արձա-
կումը, 59:
Պահել արգելեալ գրքերը,
73, 74:
Պահող արգելեալ գրքերը,
73: Իբր բանտարկող, 87:
Հռոմայ երկիրները, 125:
Պայման դատակնթոյ, 296:
Պաշտամունք, 186, 246:
Պաշտպան բողոքման, 84:
Պաշտպանող հերետիկոսաց,
58: Արգելեալ գրոյ, 75:
Բողոքման, 84: Արգելեալ
նախադասութեանց, 133:

Պաշտպանութիւն աշխար-
հական, 119:
Պաշտօն, տ. Պաշտամունք:
Պատարագցու ժողովել, 172:
Պատիժն ընկերութեան հար-
կաւոր է, 39: Եկեղեցին
նոյնը դնելու իշխանու-
թիւն ունի, 40: Պատիժք
կը մնան, 47:
Պարագլուխ գաղտնի ընկե-
րութեան, 156:
Ռամկապետականք, 154:
Ռուսական եկեղեցի, 78:
Սաղմ, 191
Սահմանդր. «Առաք. Աթո-
սոյ», տ. Առաքելական,
եւայլն:
Սիմոնականութիւն ի բարե-
րարութիւնս, տեսակները,
165, 168: Վանք մտնելու
առթիւ, 169:
Սուրբ Գիրք, 72, 220: Տե-
ղիք, 200:
Սպանող, 86:
Ստացող Հռոմայ երկիրները,
125:
Ստացուած, տ. Եկեղեցական:
Ստիպել զգատաւոր, 94: Ի
թաղել զանարժան, 199:
Չկին վանք մտնելու, 269:
Չկին ամուսնանալու, 272:
Ստորագրող ստութեամբ, 109
Վախճան «Առաք. Աթո-
սոյ», Սահմանդր. 44:
Վաճառաշահութիւն, տ.
Շահավաճառութիւն:
Վանք, 170: Իբր ապաստա-
նարան, 160: Վանաց փա-
կարանք, 162, 164: Վա-
նաց վարչութիւն, 251:
Վանաց ստացուածքն
յափշտակել, 266: Մտնե-
լու ստիպել զկին, 269:
Վեհերոտ, տ. Տգիտութիւն:

Վերջին Օծումն, 175:
Վիժել, 191:
Վկայագիր, 230:
Վճիռք, 98:
Վնասել, 104, 202:
Վտանգ մահու, տ. Կէտ
մահու:
Տարածութիւն «Առաք. Ա-
թոսոյ», Սահմանդր. 46:
Տարակոյս, 299: [297:
Տգիտութեան տեսակները:
Տեղեր կամ կալուածներ, 87:
Սուրբ տեղ, 200:
Տիտղոս ձեռնադրութեան,
224: Առանց ասոր կրօ-
նաւորաց ձեռնադրու-
թիւնը, 233: [278:
Տիտղոսական եպիսկոպոս,
Տպել Ս. Գիրք. 72, 220:
Արգելեալ գրքերը, 74:
Տրիդ. Ս. Ժողովոյ դատա-
կնիքները, 217, 249: Ասոնց
օրինակը, 266:
Փակարան կուսանաց, 162:
Կրօնաւորաց, 164:
Փոխան-Նուիրակ, 101, 147:

Քահանայի իշխանութիւն
բանադրանքէ արձակելու:
Տես նաեւ Չազիր, Խոս-
տովանահայր:
Քահանայապետ նկատմամբ
դատակնթոյ, 301:
Քաղաքական ամուսնութիւն
եկեղեցականաց, 190:
Քարոզ, 187:
Քարպանարեան, 153:
Քննիչք Ս. Ատենի, 201:
Քորեպիսկոպոս, 232:
Օգնող հերետիկոսաց, 57,
63: Բողոքման, 84:
Օծումն, տ. Վերջին Օ-
ծումն:
Օտարական, տ. Կղերական:
Օտարացուցումն Հռոմայ
երկիրները, 124: Եկեղե-
ցական ստացուածները,
203:
Օրագիր, 67:
Օրինաց մեկնութիւնը, 41:
Օրէնք ընդդէմ եկեղեցւոյ,
98:
Ֆէնեանք, 154:



Յ Ա Ն Կ

Յառաջաբան	Է
Սահմանադրութիւն « Առաքելական Աթոռոյ »	1
Ներածութիւն	39
Ա. ԴԱՍ	
Առանձինն կերպով վերապահեալ բանադրանքներ	59
Բ. ԴԱՍ	
Պարզապէս վերապահեալ բանադրանքներ	131
Գ. ԴԱՍ	
Եպիսկոպոսաց վերապահեալ բանադրանքներ	189
Դ. ԴԱՍ	
Ոչ ումեք վերապահեալ բանադրանքներ	199
Ե. ԴԱՍ	
Էւրանայապետի վերապահեալ կախակայութիւնք	222
Զ. ԴԱՍ	
Վերապահեալ արգելմունք	243
Սահմանադրութեանս զօրութիւնս Արեւելեաց համար	253
Առաքելական Նուիրակատուն Կ. Պոլսոյ	255

Ա. Յ Ա Ի Լ Ո Ւ Ա Ծ

Արտաքոյ Սահմանադրութեան « Առաքելական Աթոռոյ » տակաւին ի գօրութեան դատակնիքներ	265
Ա. Խ Ո Ւ Ի Բ Տ Տ Ր Ի Կ Ն Տ Ե Ա Ն Ս . Ժողովոյ դատակնիքներն	
Ա. ԴԱՍ	
Բանադրանք	266
Բ. ԴԱՍ	
Կախակայութիւնք	277
Գ. ԴԱՍ	
Արգելմունք	282

- Բ. ԽՈՒՄԲ Քննութեան Ս. Ժողովոյն 1872 Դեկտ. 4ին վճռովն ի զօրութեան հրատարակած հին բանադրանք մը 284
- Գ. ԽՈՒՄԲ “Հոռմէական Բանանայապետն” Սահմանադրութեան դատակնիքները:
- Ա. ԴԱՍ Առանձինն կերպով Բանանայապետին վերապահեալ բանադրանք 285
- Բ. ԴԱՍ Առանձինն կերպով Բանանայապետին վերապահեալ կախակայութիւն եւ արգելումս 287
- Դ. ԽՈՒՄԲ Սիւննոդոսաց Ս. Ժողովոյն 1874 Մայիս 13ին Բանանայապետին անուամբ տուած բանադրանքն 289
- Ե. ԽՈՒՄԲ Ապաշխարութեան Ս. Ժողովոյն 1876 Օգոստ. 4ին տուած բանադրանքը 292

Բ. ՅԱՒԵԼՈՒԱԾ

Եկեղեցական դատակնիք:

- Ա. Դատակնքաց վրայ ընդհանրապէս
1. Էութիւն դատակնքոյ 295
 2. Պայմանք դատակնքոյ 296
 3. Ենթակայ դատակնքոյ 300
 4. Արժակումս դատակնքոյ 302
 5. Բաժանումս դատակնքոյ 309
- Բ. Դատակնիք ի մասնաւորի
1. Բանադրանք 310
 2. Կախակայութիւն 315
 3. Արգելումս 319
- Յաւնլ յէջն 259, ի տողն 11 322
- Վրիպակը 324
- Հայելի բանադրանաց 325
- Այբուբենական ցանկ նիւթոց 327



0

hug

2031



« Ազգային գրադարան



NL0028840

